

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՄ
ՀԱՅԵՐԵՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒԿՅԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

ТЕРЕЗА КАРАГУЛЯН

ОРФОЭПИЯ СОВРЕМЕННОГО
АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԵՐԵԶՍ. ՂԱՐԱԳՅՈՒՎՅԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատությունը նվիրված է ժամանակակից հայերենի ուղղախոսությունը: Ուսումնասիրությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում քննարկվում են ուղղախոսության տեսության հարցեր, տրվում է հայոց լեզվի գրական արտասանության կաղմավորման համառոտ ակնարկ, ցույց են տրվում այն տեղաշարժերը, որոնք կատարվել են հայոց լեզվի զարգացման վերջին 50 տարիների ընթացքում, բացահայտվում են արտասանության մեջ առաջացած նոր առանձնահատկություններն ու միտումները, նշվում են գրական արտասանությունից կատարվող շեղումները և այլն: Երկրորդ մասում տրվում է ժամանակակից հայերենի գրական արտասանության համակողմանի նկարագրությունը:

Պատասխանատու խմբագիր:

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Ա Ռ Ա Զ Ա Ֆ Ա Ն

Վերջին ժամանակներս լեզվաբանության բնագավառում մեծ ուշադրություն է հատկացվում լեզվի տարբեր կողմերի նորմավորման հարցերին: Գրական լեզվին հատուկ են ոչ միայն բառային, քերականական, ուղղագրական նորմաներ, այլև արտասանական, որոնք կարող են մշակված լինել առավել կամ պակաս չափով: Եթե գրավոր լեզուն ունի իր ուղղագրական կանոնները, ապա բանավոր խոսքին հատուկ են ուղղախոսական նորմաներ: Եվ որքան բարբառային տարբերակումները մեծ տեղ են գրավում տվյալ լեզվում (իսկ հայերենում դրանք բավականին շատ են), այնքան ավելի կարևոր է դառնում լեզվի միասնական ուղղախոսական նորմաների մշակումը:

Հայ հասարակական կյանքի զարգացման ներկա փուլում հրամայական պահանջ է առաջացել ունենալու հայերենի գրական արտասանությունը կամ ուղղախոսությունը նվիրված ամբողջական ուսումնասիրություն: Ձեռնարկելով այդ աշխատանքին, հեղինակի հիմնական նպատակը և առաջադիր խնդիրն է եղել առավել ամբողջությամբ և կարելույն չափ ճշգրտորեն վեր հանել ու նկարագրել ժամանակակից գրական հայերենի արտասանության հիմնական գծերն ու օրինաչափությունները, այնպես, ինչպես դրանք ներկայանում են մեր լեզվի զարգացման այժմյան փուլում:

Կենդանի լեզվի փաստերը և նոր առաջացած արտասանական երևույթները գնահատելիս հիմք են բնդունվել հայերենի զարգացման հեռանկարներն ու առանձնահատկությունները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արտասանության լիակատար միասնականացումը թեև ցանկալի, բայց անիրագործելի է, գրական արտասանության շրջանակներում տարբերակների կամ զուգահեռ ձևերի առկայությունը համարվում է անխուսափելի և օրինաչափական: Այդ նկատառումով ուսումնասիրության

մեջ զգալի տեղ է հատկացվում արտասանական տարբերակների նկարագրությանը և դրանց գնահատմանը: Հասկանալի է, որ խոսքը բարբառային կամ հասարակաբանական հնչական երևույթների մասին չէ, այլ գրական արտասանության սահմաններում գոյակցող հավասարազոր կամ ոճական արժեք ներկայացնող արտասանական տարբերակների: Արտասանության մոտեցումը գրությանը ընդհանուր առմամբ գրական և ցանկալի երևույթ համարելով, արտասանական տարբերակներից որևէ մեկին նախապատվություն տալիս՝ ընդունվել է կողմնորոշում ղեպի գրային արտասանությունը:

Աշխատանքում մեծ ուշադրություն է դարձվել գրական արտասանության մեջ առաջացած փոփոխություններին, ինչպես և գրական նորմաներից կատարված զանազան շեղումներին և սըխալներին, որոնց քննությունը կարևոր է գրական արտասանության հարցերում ճիշտ կողմնորոշվելու համար:

Հայերենի տեղախոսության նկարագրության համար հիմք է ընդունվել գրական լեզուն տիրապետողների արտասանությունը, ընդ որում՝ մեծ մասամբ միջին և երիտասարդ սերնդինը, որի արտասանությունը ավելի քիչ է ենթարկված տեղային (բարբառի) արտասանական առանձնահատկություններին:

Ժամանակակից գրական հայերենի արտասանական մի շարք երևույթների բացահայտման համար կիրառվել են ինչպես հարցման (անկետային հարցաթերթիկ), այնպես էլ ձայնագրման մեթոդները (մագնիտաֆոն), ինչպես նաև տարիներ շարունակ գրի են առնվել առանձին անհատների, ռադիոյի և հեռուստատեսության օրինակելի հաղորդավարների, ասմունքողների, բեմի վարպետների կենդանի խոսքի հնչական-արտասանական երևույթներն ու առանձնահատկությունները:

Որպես առաջին փորձ, աշխատանքը, անշուշտ, կունենա բացեր և թերություններ, վիճելի դրույթներ: Գիտակցում ենք, որ հատկապես մի շարք նոր հարցադրումներ կարող են հանդիպել առարկությունների: Սակայն կարևոր է այն, որ որոշ հարցադրումներ և տեսակետներ առաջին անգամ արժարժվելով, կդառնան լայն քննարկման առարկա և վերջիվերջո կստանան ճիշտ լուսաբանություն և գնահատում:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՈՒՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Ուղղախոսությունը գրական լեզվի համար ունի գործնական մեծ նշանակություն: Որքան լեզուն մշակված է, կանոնավոր, միասնական իր բոլոր կողմերով, այնքան ավելի լավ է կատարում հաղորդակցման միջոցի հասարակական ֆունկցիան:

Գրական լեզվի կանոնավոր և մշակված ուղղախոսությունը նպաստում է մարդկանց արագ և ճիշտ հաղորդակցմանը: Ուղղախոսական խախտումները խոչընդոտում են խոսքի ճիշտ ընկալումը, շեղում լսողի ուշադրությունը իմաստից, ստիպելով ուշադրություն դարձնել արտասանական անճշտությունների վրա և դրանով խանգարում են խոսքի արագ ըմբռնմանը:

Առանձնապես ականջ են ծակում հրապարակային ելույթների ժամանակ դրսևորվող ուղղախոսական սխալները: Իրոք, առօրյա խոսակցական լեզվում մենք գրեթե ուշադրություն չենք դարձնում արտասանական անճշտությունների վրա, մինչդեռ ամբիոնից, բեմից, ուղիորդով և հեռուստատեսությամբ հնչող խոսքի մեղանշումները ոչ միայն նվազեցնում են կենդանի խոսքի ներգործության ուժը, այլև առաջացնում արդարացի դժգոհություն և վերադրվածություն:

Ցուրաքանչյուր գրական լեզվի էական հատկանիշներից մեկը առավել կամ պակաս չափով մշակված նորմաների առկայությունն է, որով գրական լեզուն տարբերվում է բարբառներից: Գրական լեզվի մյուս փողմերի՝ ձևաբանության, շարահյուսության և բառապաշարի նորմավորման հետ մեկտեղ մեր լեզվի զարգացման ներկա փուլում մեծ կարևորություն ունի նաև գրական արտասանության նորմավորումը:

Գրական լեզվի արտասանական նորմաները հաստատուն և անփոփոխ չեն: Ժամանակի ընթացքում, լեզվի զարգացմանը գուրգրնթաց արտասանական կանոնները նույնպես ենթարկվում են փոփոխությունների: Այն, ինչ ճիշտ և կանոնական էր մի քանի տասնամյակ առաջ, այսօր կարող է ընդունելի չլինել և համարվել շեղում ժամանակակից գրական արտասանությունից:

Գրական լեզվի ուղղախոսության մեջ հաղթահարվում են տեղային խոսվածքների հնչական առանձնահատկությունները, ինչպես նաև արտասանական անհատական երևույթները, հնչյունային լեզուն դարձնելով միասնական միջոց լայն հաղորդակցման համար:

Այսպիսով, ուղղախոսությունը բանավոր խոսքի արտասանական կանոնների ամբողջությունն է, որն ապահովում է պատմականորեն մշակված և գրական լեզվում ամրացած հնչյունական ձևավորման միասնություն:

Քնական է, որ ուղղախոսության նշանակությունը մեծանում է այն դեպքում, երբ հրապարակային խոսքը ձեռք է բերում զարգացման և գործառության լայն շրջանակներ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ հայերեն գրական լեզվի գերը և նշանակությունը մեծացավ, և գրական փենդանի խոսքը հնչեց հասարակական զանազան վայրերում՝ ժողովներում, կոնֆերանսներում, համագումարներում, ուսումնական բարձրագույն հաստատություններում, կինոյում, էստրադայում և ամենից ավելի ռադիոյով ու հեռուստատեսությամբ, առանձնապես զգալի դարձավ լեզվի ուղղախոսական միասնական և հաստատուն նորմաներ ունենալու, ինչպես նաև դրանք հետևողականորեն ուսուցանելու ու կիրառելու անհրաժեշտությունը: Լինելով խոսքի կուլտուրայի բաղադրիչ մասերից մեկը, ուղղախոսությունը այդ քնազավառում ունի կարևոր նշանակություն:

Գրական լեզվի ուղղախոսությունը նրա էական և անքակտելի փողմերից մեկն է:

Ուղղախոսության սահմանների ըմբռնումը լեզվաբանների մոտ տարբեր է: Գոյություն ունեն ուղղախոսության նեղ և լայն ըմբռնումներ: Ըստ նեղ ըմբռնման՝ ուղղախոսություն ասելով հասկանում են բանավոր խոսքի արտասանական կանոնների ամբողջությունը, առանց նկատի ունենալու նույնիսկ շեշտադրությունը: Լայն ըմբռնմամբ ուղղախոսության սահմանների մեջ են ներառվում

արտասանության և շեշտադրության նորմաներից բացի նաև քերականական որոշ ձևերի կազմության, կանոններ, օրինակ՝ արյունով թե՞ արյամբ, բերի թե՞ բերեցի, տվի թե՞ տվեցի, չախի տա՞մ թե՞ պիտի չտամ և այլն¹։

Ուղղախոսության շրջանակների մեջ քերականական տարբերակների հետևողական ընդգրկումը տվյալ ուսումնասիրության մեջ նպատակահարմար չէ, քանի որ դա ավելի շատ վերաբերում է ձևաբանությանը։

Շեշտադրության ուսումնասիրությունը, անշուշտ, կարևոր է այն լեզուների համար, որոնք ունեն ազատ շեշտ (ինչպես, օրինակ, ռուսերենում)։ Թեև շեշտը ուղղակիորեն չի վերաբերում արտասանությանը, այնուամենայնիվ շեշտադրության ընդգրկումը ուղղախոսության մեջ և՛ նպատակահարմար է, և՛ անհրաժեշտ, քանի որ շեշտադրությունը բանավոր խոսքի ձևավորման կարևոր կողմերից է։

Հայերենի ուղղախոսության հարցերի քննության շրջանակների մեջ մենք ընդգրկում ենք արտասանությունը և շեշտադրությունը, այսինքն՝ բանավոր խոսքի այն կողմերը, որոնք սովորաբար չեն արտացոլվում գրության մեջ։ Բնական է, որ շեշտադրության հարցերը այս աշխատանքում մեծ տեղ չեն զբաղեցնում, քանի որ բառային շեշտը հայերենում ունի հաստատուն դիրք և որպես կանոն վերջադիր է։

Ժամանակակից գրական հայերենի ուղղախոսության մեջ նախ և առաջ նկատի է առնվում լեզվի հնչյունային համակարգը։ Այսպես, օրինակ, ժամանակակից արևելահայ գրական լեզվի հնչյունային համակարգին հատուկ է շրթնային, ատամնային, ետնալեզվային պայթականների ու լեզվատամնային կիսապայթականների եռաստիճան հակադրությունը (բ-պ-փ, դ-տ-թ, գ-կ-խ, ը-ն-շ, ձ-ծ-ց), ի տարբերություն արևմտահայերենի կամ որոշ բարբառների, որոնցում նույն կարգի բաղաձայնները հանդես են գալիս միայն հակադրության 1-ին և 3-րդ եզրերով, առանց միջին աստիճանի, այսինքն՝ բ-փ, դ-թ, գ-խ և այլն։ Ընդ որում՝ ձայնեղներն արտասանվում են շնչեղ խուլ և խուլերը՝ ձայնեղ (բ>փ, դ>թ, գ>խ և պ>բ, տ>դ, կ>գ)։ Այսպիսի դեպքերում դուր-տուր-քուր հակադրությունը փոխարինվում է դուր-քուր հակադրությամբ,

¹ Այս հարցերը մենք քննության առարկա չենք դարձրել, ելնում ենք ռուս լեզվաբանների մոտեցումներից։ (Տե՛ս Р. И. Аванесов, усское литературное произношение, М., 1968, էջ 8)։

որտեղ դուր-ի և քուր-ի արտասանությունը նույնանում է որպես քուր, իսկ տուր-ը դառնում է դուր:

Նոսաստիճան հակադրությունը արևելահայերեն գրական լեզվում պահպանվում է և բառավերջում, որը արևմտահայ գրականում և մի շարք բարբառներում արտահայտվում է դարձյալ հակադրության երկու եզրով:

Համակարգային բնույթ ունի հայերենում երկու բաղաձայնով բառ չսկսելու արտասանական կանոնը (բացառությամբ բաղաձայն + յ կապակցության՝ ձյուն, սյուն), ինչպես՝ վ[ը]րան, ա[ը]կար, կ[ը]րկնել, նաև՝ [ը]սկիզբ, [ը]շտապել և այլն: Այս օրինաչափությունը հայ ազգային լեզվի համար ընդհանուր է և վերաբերում է ինչպես արևելահայերենին ու արևմտահայերենին, այնպես էլ հայերենի շատ բարբառներին:

Այնուհետև գրական հայերենի հնչյունական համակարգով պայմանավորված՝ առաջին շարքի ձայնավորներից (ե, ի) առաջ ետևալեզվային պայթականների բմային արտասանությունը ունի պարտադիր երանգի արժեք (հմմտ. գինի և զարուն), որը սովորական ականջով չի ընկալվում, այն դեպքում, երբ Արարատյան բարբառի խոսվածքներում նույն դիրքում տեղի է ունենում ուժեղ քմայնացում (գինի > գ'ինի, կեր > կ'եր, քեռի > ք'եռի և այլն):

Սակայն հայերենի հնչյունային համակարգի առանձնահատկություններով պայմանավորված երևույթների նկարագրությամբ դեռևս չի ավարտվում հայերենի արտասանության կամ ուղղախոսական կանոնների ամբողջությունը: Գրական լեզվի արտասանությունը նկարագրելիս՝ բացի հնչյունական համակարգով պայմանավորված երևույթներից, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև բառամբերի կամ երբեմն առանձին բառերի արտասանությունը, որը անմիջականորեն չի բխում մեր լեզվի հնչյունական համակարգից, կամ պայմանավորված չէ դրանով: Այդ նշանակում է, որ արտասանությունը ավելի լայն հասկացություն է, քան հնչյունական համակարգը, թեև, իհարկե, արտասանության համար էականը և ելակետայինը հնչյունական համակարգն է:

Քերենք մի շատ բնորոշ օրինակ: Հայերենում բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները մի խումբ բառերում տրոշ դիրքերում արտասանվում են շնչեղ խուլ. այսպես՝ հաբբել, կաբգ, կադդալ, դեղձ, աջ արտասանվում են [հարփել], [կարբ], [կարթալ], [դէխց], [աչ]: Սակայն մի շարք այլ բառերի մեջ նույն դիրքերում նշված ձայնեղները փոփոխության չեն ենթարկվում և հնչվում են ըստ գրու-

թյան, օրինակ՝ տա[րբ]երություն, հա[րգ], խա[րդ]ավանք, մա[ղձ], [էջ]:

Նշանակում է, այս երևույթը պայմանավորված չէ հայերենի հնչյունական համակարգով, քանի որ հայերենի ժամանակակից փուլում մի շարք դիրքերում ձայնեղների շնչեղ խուլ արտասանությունը հանդես չի գալիս որպես ընդհանրական հնչյունափոխություն կամ հնչյունական օրենք: Հայերենի հնչյունական համակարգին հատուկ է և՛ [րբ], [րգ], [րդ], [րձ], [րջ], և՛ [րփ], [րք], [րթ], [րց], [րչ] արտասանությունը (հմմտ. հարբել—հա[րփ]ել և ա[րբ]անյակ, կարգ—կա[րբ] և գո[րգ], կարգալ—կա[րթ]ալ և սա[րդ], դեղձ—դե[խց] և բ[ղձ]ական, աջ—ա[չ] և ա[ջ]ակցել և այլն):

Հ հնչյունի անկումը Ի-ից հետո նույնպես համակարգային բերույթ չի կրում, այլ վերաբերում է միայն որոշ բառերի արտասանությանը. օրինակ՝ աշխարհ, խորհուրդ բառերում չի արտասանվում, իսկ առհավիրք, նիւթել բառերում արտասանվում է:

Այսպիսով, ուղղախոսությունը ընդգրկում է հետևյալ հարցերը՝

1. Հնչյունական համակարգով պայմանավորված արտասանական օրինաչափություններ, որոնք ուղղախոսության հիմքն են կազմում:

2. Հնչյունական համակարգով չպայմանավորված, առանձին բառերի կամ բառախմբերի վերաբերող հնչյունական ձևավորման կամ արտասանական կանոններ, որոնք թեև բացարձակ չեն և պայմանավորված չեն հնչյունական համակարգով, բայց չեն էլ հակասում նրան:

3. Արտասանական այնպիսի կանոններ, որոնք ոչ միայն պայմանավորված չեն լեզվի հնչյունական համակարգով, այլև հակասում են հնչյունական համակարգին: Այս կարգի կանոնները վերաբերում են բացառապես փոխառյալ բառերին (հմմտ. սկաֆանդր, սպորտ, «Շկոդա», որոնք արտասանվում են առանց նախահունչ Ը-ի, վալս, Կալման և այլն՝ փափկացված լ արտասանությամբ, Մինսկ, Կուրսկ առանց բառավերջի գաղտնավանկի և այլն):

Աշխատանքում չեն շոշափվում առողանության, այսինքն՝ արտասանության հստակության հարցերը, քանի որ դրանք ուղղակիորեն չեն վերաբերում արտասանությանը: Մեկը կարող է ունենալ պարզ և հստակ արտասանություն, բայց շտիռապետել գրա-

Վան ճիշտ արտասանությանը և հակառակը՝ կարելի է ունենալ գրական լավ արտասանություն, բայց վատ առոգանություն (գրկ-ցիա), այսինքն՝ բառերն արտաբերել անհստակ և անորոշ: Օրինակ, կարելի է շատ պարզ և հստակորեն արտասանել առաջի, վերջի, ձուլն, հույրասիրել, փոխանակ՝ առաջին, վերջին, ձյուն, հյուրասիրել արտասանելու և կոպիտ կերպով խախտել գրական արտասանության նորմաները: Առոգանության հարցերը առանձին քննարկման նյութ են:

Արտասանությանը չեն վերաբերում և արտասանական, լեզվական անհատական արատները, որոնք կարելի է վերացնել միայն բժշկական միջամտությամբ:

Այստեղ չի քննվում նաև կապակցված տեքստի արտասանությունը, ելևէջավորումը և այլն: Մեր ուսումնասիրության առարկան է հնչյունային բառը, հիմնականում ուղիղ ձևը: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրության ոլորտի մեջ ենք ընդգրկում և առանձին բառերի հորովված կամ խոնարհված, հոգնակի ու հոդավոր ձևեր և այլն: Որոշ դեպքերում նկատի է առնվում նաև քառակապակցությունը, ինչպես և նախորդ բառի վերջը և հաջորդի սկիզբը:

Ուսումնասիրության մեջ չենք ընդգրկել հնչյունափոխությանը և առանց հնչյունափոխության կազմվող այն զուգահեռ ձևերը, որոնց արտասանական զուգաձևությունը արտահայտվում է նաև գրության մեջ. օրինակ՝ որոշչի—որոշիչի, կամքի—կամուրջի, հովտի—հովիտի և այլն:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՍԿՋԲՈՒՔՆԵՐԸ

Լեզվական նորմայի գաղափարը սերտորեն կապված է լեզվի համակարգի գաղափարի հետ, որը օբյեկտիվորեն գոյություն ունի լեզվի զարգացման տվյալ փուլում:

Նորման այն միջին մակարդակն է, որը մի կողմից հակադրվում է լեզվի կառուցվածքին, մյուս կողմից՝ անհատական խոսքին: Նորման տվյալ կառուցվածքի փրացումն է: Անհատական խոսքը (լեզվի կիրարկությունը՝ տեղում) ավելի լայն է, քան նորման, քանի որ անհատական խոսքը պարունակում է նաև պատահական, ժամանակավոր, ոչ ավանդական և երբեմն ոչ ճիշտ լեզվական երևույթներ: Այդպիսի երևույթները կարող են լինել նաև

բավականաչափ տարածված և կայուն: Այդ կարգի երևույթների թվին կարելի է դասել հայերենում, օրինակ, փափկացված արտասանությունը, Սմբատ, բամբակ և այլն բառերի Սնբատ, բանբակ հնչումը, ընկեր, ամպ, ճանն, որտեղ բառերի ընգեր, ամբ, ճանջ, որդեղ արտասանությունը, ճիսուն, կտրին արտասանելու փոխարեն ճիցուն, կտրիչ հնչելը և այլն:

Լեզվական նորման լեզվական համակարգի կառուցվածքային հնարավորությունների ավանդական և կոլեկտիվ իրացումների ամբողջությունն է:

Գրական նորմայի համար կարևոր է լեզվական իրացումների գիտակցական ընտրությունը, այսինքն՝ մշակվածությունը, ինչպես նաև դրանց ամրացումը լեզվի նկարագրությանը նվիրված ձեռնարկներում: Գրական նորմայում ընդունվում են լեզվական այն իրողությունները, որոնք գիտակցվում են որպես ճիշտ և օրինակելի:

Գրական նորման պատմականորեն ձևավորված իրողություն է, որտեղ դրսևորվում են լեզվի զարգացման տվյալ դարաշրջանին հատուկ օրինաչափությունները և միտումները:

Ուղղախոսական նորմայում ընդունվում է տվյալ լեզվի հրնչությամբ կազմով պայմանավորված հնարավոր դեպքերից որևէ մեկը, երբեմն երկու և բացառիկ դեպքերում նաև երեք արտասանություն, որը գիտակցվում է որպես ճիշտ և օրինակելի:

Նորմայի մակարդակի հիմնական միավորներից է բառի արտահայտության պլանը: Այստեղ հնչյունները ենթարկվում են ուսումնասիրության ոչ թե որպես հնչույթներ, որ վերաբերում է կառուցվածքին, ոչ որպես հնչյունական շղթայի հաջորդականության միավորներ (դա վերաբերում է անհատական խոսքին), այլ որպես ամբողջական բառի հնչյուններ:

Լեզվի նորմավորման, այսինքն՝ լեզվում գործող նորմաների բացահայտման և կիրառության հարցերը շատ կարևոր նշանակություն են ստացել ժամանակակից լեզվաբանության մեջ:

Նորման հսկում և կասեցնում է լեզվում մշտապես տեղի ունեցող փոփոխությունները, ապահովելով կապը սերունդների միջև: Դա է պատճառը, որ նորման հարաբերականորեն կայուն է, որը պայմանավորված է նրա օբյեկտիվությամբ և հասարակական բնույթով: Իհարկե, սա չի նշանակում, թե նորման մշտապես անփոփոխ է և ենթակա չէ վերանայման: Հենց միայն վերջին տասնամյակների ընթացքում հայերենի գրական արտասանության մեջ տեղի են ունեցել այնպիսի տեղաշարժեր, որոնք ստիպում են վե-

րանայել արտասանական ընդունված որոշ կանոններ և սահմանել նորերը:

Պետք է միաժամանակ նշել, որ արտասանական համակարգի լիակատար միասնականացումը անխրաճործելի է, քանի որ լեզուն որպես անընդհատ փոփոխվող և զարգացող երևույթ, ամեն մի տվյալ դարաշրջանում իր մեջ պարունակում է և՛ մեռնողը, և՛ զարգացողը: Եվ որովհետև լեզվի ամեն մի փոփոխություն ենթադրում է լեզվական իրողությունների ժամանակավոր համագոյակցություն, ուստի նորմայի սահմաններում տարբերակների գոյությունը օրինակափ երևույթ է: Այդ իմաստով ամեն մի նորմա հարաբերական է, քանի որ նա անընդհատ փոփոխվում է:

Ահա ինչ է ասված Պրագայի լեզվաբանական դպրոցի թեզիսներում նորմայի փոփոխության մասին. «Նորմայի զարգացումը կատարվում է հենց տարբերակների շնորհիվ. նրանք, որպես կանոն, անցումային ձևեր են մի որակից դեպի մյուսը: Միևնույն ժամանակ տարբերակների դրական դերը այն է, որ նրանք բավականին հաճախ ոճական տարբերակման միջոց են ծառայում»²:

Լեզվում գոյություն ունեցող արտասանական այն տարբերակները, որոնք արդյունք են տարիքային և սոցիալական տարբերությունների, պետք է համարել օրինաչափ և անխուսափելի:

Արտասանական տարբերակների աղբյուր կարող են ծառայել ուղղագրությունը (ուղղագրության և արտասանության տարբերությունները), բարբառները, ժարգոնները, երկլեզվությունը, զբրական լեզվին տիրապետելու դժվարությունները, քաղաքային հասարակաբանությունները, ինչպես և լեզվական ազդեցությունները: Այսպիսով, արտասանական տարբերակների բնույթը տարբեր է: Դրանց մեծ մասը հանդես է գալիս որպես շեղում արտասանական գրական նորմայից, խանգարում լեզվի մաքրությանը, որի դեմ մշտապես պայքար է մղվում:

Հասարակական հարաբերությունների ներկա ժամանակաշրջանում կյանքը պահանջում է, որ խոսքնք ճիշտ, հասկանալի և արտահայտիչ: Ուղիղ և միատեսակ արտասանությունը խոսքի կուլտուրայի համար ռանի էական նշանակություն:

Ցավոք, պետք է նշել, որ այդ ուղղությամբ մեզ մոտ քիչ բան է արվել: Ժամանակակից հայերենում շատ բարեր չունեն որոշա-

² А. Едличка, О пражской теории литературного языка, ПЛК, 1967, стр. 553.

կի, ճիշտ համարվող արտասանություն կամ հանդես են գալիս մի շարք արտասանական տարբերակներով: Վերցնենք, թեկուզ, առանձեռեկա բառը, որը հնչվում է [տասնէրկու], [տասնըյէրկու], և-ի անկումով՝ [տասյէրկու], [տասէրկու] և այլն: Ո՞րն է սրանցից ճիշտը և հանձնարարելին, որը թույլատրելի (համապատասխան ոճում) կամ մերժելի: Սրանք հարցեր են, որոնք կարիք ունեն քննություն և լուսաբանման:

Մեծ կարևորություն է ստանում այն հարցը, թե ինչ չափանիշներ պետք է դրվեն նորմավորման հիմքում, կամ ինչ հատկանիշներ պետք է նկատի առնվեն նորմավորման ժամանակ: Այս հարցը տեղիք է տվել որոշ տարակարծությունների: Նորմավորման համար հիմք է ծառայում նախ և առաջ այն, ինչ համապատասխանում է լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին, նրա զարգացման միտումներին և լեզվում ընդունված նույնանման իրողություններին: Սա, անշուշտ, ճիշտ կողմնորոշում է, մասնավոր երբ գործ ունենք կրկնակ ձևերի կամ տարբերակների հետ, և նորման որոշելիս, իհարկե, պետք է ընդունել այն ձևը, որը համապատասխանում է տվյալ երևույթի զարգացման միտումներին: Մյուս կողմից՝ պետք է ընդունել նաև այն ճշմարտությունը, որ չի կարելի կանոնական համարել այն ամենը, ինչ համապատասխանում է լեզվի զարգացման միտումներին, այսինքն՝ սխալ կլինի կանոնը բացարձակ ձևով կիրառել և տարածել բոլոր նույնանման դեպքերի վրա: Այսպես, օրինակ, խա[րդ]ախ, հա[րդ]աբել հնչումը ժամանակակից հայերենի համար կանոնական է, իսկ կա[րդ]ալ հնչումը, թեև համապատասխանում է տվյալ երևույթի զարգացման միտումներին, ներկա փուլում կանոնական չէ:

Նորմատիվության մյուս հատկանիշը համարվում է լեզվական ավանդությունը, լեզվական երևույթի հնությունը: Հասկանալի է, որ այս սկզբունքը ևս չի վարող ընդունվել անվերապահորեն, քանի որ մի շարք դեպքերում լեզվական ավանդությունը և լեզվական կիրառությունը կամ գործածությունը գտնվում են հակասության մեջ, որը հնի և նորի մշտնջենական պայքար է: Այդ հակասությունները լուծելիս ումանք գերպատվությունը տալիս են հնին, այսինքն՝ ավանդականին, ումանք նորին՝ լեզվական օգտագործմանը:

Երևույթի հնությունը կամ լեզվական ավանդությունը, անշուշտ, կարևոր չափանիշ է, բայց միշտ չէ, որ դրան կարելի է առավելություն տալ: Երևույթի գնահատման ժամանակ երբեմն ան-

հրաժեշտ է լինում առաջնորդվել նրա զարգացման հեռանկարով, հենվելով լեզվական օգտագործման վրա:

Նորմատիվության համար հաճախ չափանիշ է ընդունվում նաև երևույթի տարածվածությունը: Վիճակագրական ուսումնասիրությունները առհասարակ նորմավորման հարցում շատ կարևոր դեր են կատարում, հատկապես այն դեպքերում, երբ դրանք պայմանավորված չեն հնչյունական համակարգով: Օրինակ, հ-ի արտասանությունը հաճախահոգրական, ընդհանրապես բառերում, վաթսուհի բառի վա[ց]յուն հնչումը և այլն: Սակայն այս սկզբունքի անվերապահ ընդունումը կարող է մեծ սխալների կամ թյուրիմացությունների տեղիք տալ: Հայտնի է, որ լեզվական և՛ բառային, և՛ արտասանական որոշ իրողություններ, թեև ունեն բավականին մեծ տարածվածություն, բայց չեն կարող համարվել կանոնական: Այսպես, օրինակ, ա-ի և դ-ի փոփոխացված արտասանությունը օտար բառերում, ինչպես՝ դ՛իպլոմ, դ՛իրեկտոր, տ՛եխնիկա և այլն. չնայած տարածվածությանը, չի համարվում նորմատիվ, որովհետև դա հակասում է հայերենի արտասանական օրինաչափություններին: Իրոք, լեզվական նորման վիճակագրական երևույթ չէ, և միշտ չէ, որ տարածվածը, հաճախակի կրկնվողը, առօրեականը ճիշտ է և ընդունելի: Լեզվական նորման նախ և առաջ պետք է համապատասխանի տվյալ լեզվի ներքին օրինաչափություններին, բխի սոցիալական, պատմական երևույթների էությունից: Այդ պատճառով նորման չի կարելի դիտել սոսկ որպես վիճակագրական միջին: Նշանակում է երևույթի տարածվածությունը որպես նորմավորման չափանիշ նույնպես չի կարելի ընդունել անվերապահորեն:

Քննելով նորմավորման համար կարևոր բոլոր ցուցանիշները՝ գալիս ենք այն եզրակացության, որ դրանցից ոչ մեկը առանձին վերցրած չի կարող հուսալի հիմք ծառայել լեզվական իրավությունների, մասնավորապես արտասանության, նորմավորման համար: Լեզվական փաստերի գնահատման ժամանակ էական նըշանակություն է ստանում բոլոր հատկանիշների համագրումը, որոնք շատ դեպքերում լրացնում են մեկը մյուսին, ինչպես և դրանց տեղին կիրառումը: Այս հարցում շատ կարևոր է նաև լեզվաբանի և նորմավորողի դերը, որը ելնելով լեզվական կոնկրետ փաստերի բնույթից, գնահատում է դրանք որպես կանոնական կամ ոչ կանոնական:

Այսպիսով, նորմավորման բոլոր չափանիշների հաշվառման

հետ մեկտեղ մեծ կարևորություն է ստանում երևույթի ճիշտ գր-
նահատությունը: Բոլոր դեպքերում նորմավորումը պետք է բխի
տվյալ լեզվի զարգացման էությունից, այլապես, երբ այն չի հա-
մապատասխանում լեզվի ոգուն, մնում է որպես որոշում, իսկ լե-
զուն զարգանում է իր ներքին օրինաչափություններով:

Արտասանական նորման որոշելու ճիշտ ուղին մասսայական
դիտարկումներն ու ղենումներն են, որոնք, փհարկե, չպետք է անց-
կացնել պատահական անցորդների շրջանում: Գրական լեզվի նոր-
ման պետք է սահմանվի գրական լեզվին տիրապետող մարդկանց
լեզվի հիման վրա, միաժամանակ հաշվի առնելով այն հանգա-
մանքը, որ գրական լեզուն տիրապետողների շրջանը ներկայումս
շատ է ընդլայնվել: Այդ շրջանի մեջ են ընդգրկվել մտավորական-
ներից բացի նաև հասարակության մյուս խավերը՝ բանվորներ,
զինվորականներ, գյուղացիներ և այլն:

ՈՒՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերենի ուղղախոսության հարցերը ամբողջությամբ վերց-
ված՝ գիտական հատուկ քննության առարկա երբևէ չեն դարձել:
Այդ հարցերին մեծ մասամբ անդրադարձել են ուղղագրության
հետ կապված, և այդ առումով էլ արվել են առանձին պարզաբա-
նումներ և դիտողություններ մեկ կամ մի խումբ բառերի արտա-
սանության վերաբերյալ: Սակայն հայերենի ուղղախոսության
անկայուն վիճակի մասին միշտ էլ լսվել են տրտույններ և դժգո-
հություններ, հայտնվել են առանձին ցանկություններ և արվել
զանազան առաջարկություններ:

Հայոց լեզվի արտասանության հարցերը ուղղագրության առար-
կա դարձան հատկապես 19-րդ դարի կեսերին, երբ ուղղագրության
մեջ տիրող մեծ անկանոնությունների ու անմիօրինակության պատ-
ճառով խնդիր էր դրվում հայերենի ուղղագրության մեջ բարեփո-
խություն կատարել: Եղան մի շարք առաջարկություններ, որոնք
բոլորն էլ մեծ մասամբ առաջնորդվում էին գրությունը կենդանի
հնչմանը մոտեցնելու սկզբունքով: Այդ կապակցությամբ հայտնի
է բժիշկ Ն. Ռուսինյանի (հեղինակակից էին Օտյանը և Թնկրյա-
նը) «Ուղղախոսութիւն արդի հայ լեզուին» աշխատությունը (1853)¹
նվիրված աշխարհաբարի պաշտպանությանը և հայերենի ուղղա-

գրութեան մեջ որոշ բարեփոխումներ կատարելու հարցերին³։ Ուղղախոսութունն բառը հեղինակն այստեղ չէր գործածում ներկայիս ըմբռնումով, այլ դրանով նա հասկանում էր լեզվի քերականական միասնական նորմաները։ Ռուսինյանին առհասարակ շատ էր մտահոգում բոլոր կողմերով միասնական լեզու ունենալու հարցը։

19-րդ դարի կեսերին ուղղախոսական մասնակի հարցեր են շոշափվում Մ. Թադիադյանի՝ 1840-ին հրատարակած «Այբբենարան»-ում⁴։ Այստեղ, մանուկների համար տրվող բառերի հնչման մի շարք կանոններում հանձնարարվում էր բաղաձայնի ու ք-ի և ն-ի ու չ-ի զուգորդությամբ ավարտվող բառերն արտասանել առանց գաղտնավանկի «որպես բարձր և ոչ թէ բարձր, յերկինս և ոչ թէ յերկինքս, յալիտեանս և ոչ թէ յալիտեանքս»։ Հեղինակի կարծիքով, ը գաղտնավանկով հնչումը «անհմուտ» արտասանություն է և աղավաղում է լեզուն⁵։

Այնուհետև, այստեղ շարադրվում է մի կանոն, ըստ որի բառասկզբի երկու բաղաձայնը պետք է հնչել առանց ք-ի։ Կանոնում ասված է. եթե երկու բաղաձայն նախադասում են մի ձայնավորի, ապա բառը պետք է հնչել իբրև միավանկ, և բերվում են բաղմաթիվ օրինակներ՝ բլուր, բնիկ, բրուտ, գտակ, գնին, գրահ, ժրլատ, թթի, խրատ, ծրար, գնալ, գլան, գրաստ, նույնիսկ՝ զբոս, զգոն և այլն։ «Իսկ եթե երեք, զերկուսն ք-ին յօդեա և զերրորդն տար ի յետագայ. թըմ-բուկ, թըն-ղին, թըր-քուր, խըն-դիր...», — ասված է կանոնում⁶։ Նշանակում է ք-ով արտասանությունը հանձնարարվում էր բառասկզբում միայն երեք բաղաձայն գրվելու դեպքում։

Ինչպես տեսնում ենք, այսպես կոչված «մեկեկեա» վանկանի և երկու բաղաձայնով սկսվող բառերի հնչումը ներկայացվում է ներկայիս արտասանությունից տարբեր։

Շատ տարիներ առաջ որոշակիորեն նկարագրված հնչական այս երևույթները մտածել են տալիս այն մասին, որ հիշյալ ժամանակներում բառասկզբի երկու բաղաձայնի միջև ք-ի հնչումը, մասնավորապես բառավերջի «կես» վանկում, շատ ավելի թույլ է եղել։

3 Ուղղախոսություն ասելով 19-րդ դարի կեսերին հասկանում էին աշխարհաբար ճիշտ խոսելու հմտությունը։ Խոսքը վերաբերում էր ոչ միայն բառերի ճիշտ արտասանությանը, այլև ճիշտ քերականական ձևեր և ճիշտ բառեր գործածելուն։

4 Մ. Թադիադյան, Այբբենարան, Կալկաթա, 1840։

5 Նույն տեղում, էջ 25։

6 Նույն տեղում, էջ 26։

քան հիմա: Գաղտնավանկի լիահունչ արտասանությունը, որպես ժողովրդական արտասանության արտահայտություն, մերժվել է: Այդ մասին անուղղակի վկայություն ենք գտնում նաև Ա. Այտրեյանի մոտ, որը հանձնարարում էր, ելնելով արտասանությունից, տողադարձի ժամանակ գրել ոչ թե դա-ռըն, խա-ռըն, այլ՝ դառն, խառն, նաև ոչ թե՝ խը-րատ, կը-րակ, այլ՝ խրատ, կրակ և այլն⁷:

Հետաքրքրական դիտողություններ ենք գտնում եռաստիճան և երկաստիճան բաղաձայնների արտասանության մասին Ս. Պետերբուրգում հրատարակված հայոց լեզվի մի ձեռնարկում⁸: Այստեղ հեղինակն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ հայերենի եռաստիճան և երկաստիճան հնչյունները նմանաձայն լինելով՝ շփոթվում են իրար հետ և արտասանվում մեկը մյուսի փոխարեն: Հետևանքը լինում է այն, նշում է հեղինակը, որ շփոթություն է առաջանում մի շարք բառերի արտահայտած իմաստների միջև, ինչպես՝ ծեծ—ցեց, տառ—դառ, դեր—տեր—թեր և այլն:

Հայերենի ուղղախոսական հարցերի քննության պատմության մեջ կարևոր է Ա. Այտրեյանի «Քննական քերականությունը»⁹, որի «Ուղղագրություն, առոգանություն, տաղաչափություն» մասում տրված մի շարք նկարագրություններ և կանոններ սերտորեն առնչվում են ուղղախոսական հարցերի հետ:

Թեև աշխատությունը նվիրված է գրական արևմտահայերենի քննությանը, բայց և այնպես շատ երևույթներ, որոնց մասին խոսում է հեղինակը, որպես հայ ազգային լեզվին հատուկ օրինաչափություններ, ընդհանուր են ու հավասարապես վերաբերում են նաև արևելահայերենին և շատ կարևոր են ժամանակակից արտասանության գնահատման տեսակետից:

Նշենք դրանցից կարևորները:

Ը ձայնավորով միավանկ բառ հայերենում չի կազմվում, բացառությամբ ըստ և ընդ նախդիրների:

Հայերենին հատուկ չեն ձայնավորական և բաղաձայնական կրկնություններ: Եթե ձայնավորի և բաղաձայնի կրկնություններ հանդիպում են, ապա դրանք հետևանք են տարբեր ձևությունների կցման կամ հնչյունի սղման. օրինակ՝ երո՜ւրդ, ֆաղաֆֆ, ֆննություն և այլն:

7 Ա. Այտրեյան, Քննական քերականություն..., էջ 360:

8 Ռ***, Նոր այբբենարան հայկական, Ս. Պետերբուրգ, 1856:

9 Ա. Այտրեյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866:

Ր-ով բառ չի սկսվում, բացառությամբ բոպն-ի:

Բ, պ, փ շրթնայիններից առաջ ն-ն փոխվում է մ-ի՝ ամբիծ, ամբավ, ճամբա, ամփոփ և այլն:

Բաղաձայնները իրար հանդիպելիս պետք է նույն կամ նման լինեն, այսինքն՝ ձայնեղի մոտ՝ ձայնեղ, խուլի մոտ՝ խուլ կամ շնչեղ խուլ, ինչպես՝ աստ, ոսպ, ավտ և ոչ՝ ավդ, և հակառակը՝ ազգ, ազդ, ազր և ոչ՝ ազք, ազտ,—նշում է հեղինակը¹⁰:

Այստեղ հանգամանորեն քննված է Բ հնչյունի արտասանությունը տարբեր դիրքերում, այնտեղ, որտեղ այն գրությամբ արտահայտված չէ: Հաշվի է առնված երեք կարևոր դեպք՝ 1) երբ Բ-ն պարտադիր կերպով հնչվում է, 2) երբ Բ-ն չի հնչվում և 3) երբ Բ-ի հնչումը ազատ է¹¹:

Ինչպես հայտնի է, Ա. Այտընյանի քերականությունը իր կարևորությունը հայերենի ուսումնասիրության պատմության մեջ ունի տեղ ունի և մեծ չափով ազդել է հետագա քերականագիտական մտքի վրա, և այն քերականները, որոնք մասնավորապես անդրադարձել են ուղղագրության, առոգանության և տաղաչափության հարցերին (իսկ ուղղախոսության հետ կապված հարցերը շոշափվում էին այս բաժիններում), զգալիորեն հենվել են Այտընյանի ուսումնասիրությունների վրա:

Ստ. Պալասանյանի «Քերականություն մայրենի լեզվի»¹² աշխատության մեջ, որտեղ առաջին անգամ ներկայացվում են արեւելահայերենի լեզվական իրողությունները, «Ստուգաբանություն» բաժնում շարադրվում են ուղղագրական և արտասանական որոշ կանոններ, որոնց մեծ մասը՝ որպես հայերեն ընդհանուր ազգային լեզվի առանձնահատկություններ, նախորդ քերականություններում, հատկապես Այտընյանի հիշյալ աշխատության մեջ, արդեն նկարագրված էին:

Ուղղախոսական հարցեր են շոշափված «Օժանդակիչ ձեռնարկ մայրենի լեզվի հայերեն ուղիղ կարդալ ուսուցանելու» վերնագիրը կրող մի փոքրիկ աշխատության մեջ¹³: Այս ձեռնարկը հարցի ուսումնասիրության համար կարևոր է այն նկատառումով, որ այստեղ տեղեկություններ են տրվում մի շարք ձայնեղ պայթականնե-

10 Նույն տեղում, էջ 339—344:

11 Նույն տեղում, էջ 367:

12 Ստ. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1906:

13 Հ. Գասպարյան, Օժանդակիչ ձեռնարկ մայրենի լեզվի հայերեն ուղիղ կարդալ ուսուցանելու, Թիֆլիս, 1906:

րի դիրքային արտասանության մասին: Օրինակ, նշվում է գ-ի ֆ արտասանելու դեպքերը համապատասխան դիրքերում, ինչպես՝ օգուտ, օգնել, օգոստոս, օգտակար, հիգ, ձիգ, ձագ, սուգ, մուգ, զույգ, նծույգ, կարագ, մարագ, ուրագ, հոգի, էգուց, Սարգիս, Գրիգոր, Մարգար, Մարգարիտ, մարգարե, արգելի, պարգև, կարգ, բազավոր, բագունի, նորոգել, ոգևորել, հոգևոր, հագնել, թագուն (այժմ՝ թաքուն) և այլն:

Հայտնի է, որ Մ. Աբեղյանին մեծապես մտահոգել է հայերենի ուղղագրության անկայուն վիճակը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին: Այդ հարցը նա քննության է առել ամենայն խորությամբ և մանրակրկիտությամբ՝ տպագրելով մի շարք ուսումնասիրություններ: 1892 թ. Թիֆլիսում լույս տեսած «Հայոց լեզվի ուղղագրությունը» աշխատության մեջ, որը գրելիս, ինչպես նշում է հեղինակը, օգտվել է Այտընյանի «Քննական քերականությունից», Աբեղյանը ուղղագրության հետ կապված՝ նրկարագրում է նաև արևելահայերենի ուղղախոսության մի շարք կանոններ¹⁴:

Խոսելով հայոց լեզվի ձայնավորների, երկհնչյունների և բաղաձայնների արտասանական օրինաչափությունների մասին, նա նշում է, որ «Գրական լեզվի մեջ՝ բառի սկզբում գրեթե բոլոր բաղաձայնները պահում են իրենց հատուկ նախնի արտասանությունը, բառի մեջը և վերջը փոփոխվում են: Սովորաբար նուրբ բաղաձայնը դառնում է միջակ, միջակը՝ թավ, իսկ թավը՝ նուրբ»¹⁵:

Ձայնեղ պայթականների փոփոխության երևույթը, որպես արևելահայ գրական լեզվի իրողություն, առաջին անգամ նկարագրում է Մ. Աբեղյանը հետևյալ կերպ. «Բ, գ, դ, ձ, ջ միջակները այ, ոյ երկբարբառներից, ր բաղաձայնից, երբեմն նաև ա, է, ի, ո, օ, ու ձայնավորներից հետո սովորաբար արտասանվում են ինչպես թավ՝ փ, ֆ, ք, ց, չ, օրինակ՝ մարդ (մարք), ծագել (ծաֆել), հոգի (հոֆի), արջ (արչ), վարձ (վարց)»: Այս նույն հնչյունները ճ, մ-ից հետո սովորաբար իրենց հնչումը պահպանում են, բացառությամբ մի շարք բառերի՝ անգամ, հանգչել, կենդանի, խնդիր, ընդունել, ընդարձակ, ընդհանուր, ընդհատել, անդամ, համբերել, համբուրել, որոնցում ձայնեղները դառնում են շնչեղ խուլ¹⁶:

14 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը, Թիֆլիս, 1892:

15 Նույն տեղում, էջ 16—17: Մինչև 20-րդ դարի սկզբները հայ լեզվաբանական գրականության մեջ ընդունված էին նուրբ (այսինքն՝ խուլ), միջակ (այսինքն՝ ձայնեղ) և թավ (այսինքն՝ շնչեղ խուլ) տերմինները:

16 Նույն տեղում, էջ 16—17:

Խուլերի որոշ դիրքերում ունեցած ձայնեղ արտասանությունը Աբեղյանը ներկայացնում է որպես կանոն. «Պ, կ, տ, ծ, և նուրբերը, և, մ երբեմն և Ի նայերից հետո սովորաբար արտասանում են ինչպես միջակ բ, գ, դ, ձ, ջ հնչյունները, օրինակ՝ ամալ (ամբ), ընտանիք (ընդանիք), ընկնել (ընգնել), հարկավոր (հարգավոր), այսպես և բանա-բանդ, գունա-գունդ, խնծոր-խնծոր»¹⁷:

Այստեղ խոսվում է նաև հայերենի մի շարք բաղաձայնների դիրքից կախված կոշտ և փափուկ արտասանության մասին: Օրինակ՝ արդյոք, կարծյոք, կյանք, պատյան, սրբություն, ալյուր բառերում դ, ծ, կ, տ, ք, լ հնչյուններն արտասանվում են ավելի փափուկ, քան դոքա, ծով, կանք, պատան, արթուն, լուր բառերում: Նշվում են հնչյունների փափուկ արտասանության նաև այլ դիրքեր¹⁸:

Անդրադառնալով օտարազգի բառերի տառադարձման հարցերին, Աբեղյանը գտնում է, որ պետք է պահպանել այդ բառերի արտասանական մի շարք առանձնահատկությունները, ինչպես, օրինակ, օտարազգի փափուկ լ-ի, ֆրանսերենի և-ի (gn) հնչումը և այլն: Փափուկ արտասանելու համար Աբեղյանն առաջարկում էր լ-ից կամ և-ից առաջ գրության մեջ ավելացնել յ, օրինակ՝ պայլտո, ամայլգամ, էմայլ, շամպայն, մեղայլ, պոբոմֆեյլ և այլն, և կամ լ-ի վրա դնել փշիկ նշանը, ինչպես ոմանք անում էին¹⁹:

Ինչպես նախորդ քերականական աշխատություններում, այնպես էլ այստեղ արտասանական մի շարք օրինաչափություններ պարզաբանվում են տողադարձի հետ կապված:

Մանրթանալով նշված աշխատության մեջ բերված երկգրություն կամ եռագրություն ունեցող բառերի հարուստ ցանկերին, կարելի է հստակ գաղափար կազմել ժամանակի արտասանական մեծ տարրնթացությունների մասին: Մ. Աբեղյանը բառերի ճիշտ գրությունը որոշելիս մեծ մասամբ ելակետ էր ընդունում դրանց կենդանի արտասանությունը, բոլոր դեպքերում հենվելով այն ձևերի վրա, որոնք լեզվում ցուցաբերում են տարածվելու և ամրանալու միտում. անհրաժեշտության դեպքում հաշվի էր առնում և ստուգաբանությունը:

Մի շարք դեպքերում Աբեղյանը թույլատրելի էր համարում

¹⁷ Նույն տեղում, էջ 16:

¹⁸ Նույն տեղում, էջ 12—13:

¹⁹ Նույն տեղում, էջ 45:

նոր՝ արտասանության վրա հիմնված ուղղագրությունը, հին՝ ավանդական ուղղագրության կողքին, ինչպես՝ ամսալրիշտ-ամբարիշտ, գանկ-գանգ, գաղն-գաղջ, ժանկ-ժանգ, վանկ-վանգ, փունտ-փունդ, թանկ-թանգ, անբարտակ-ամբարտակ և այլն²⁰:

Ուղղախոսական հարցերի լուսաբանման տեսանկյունից շատ կարևոր է Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն»²¹ աշխատությունը, որտեղ հայերենի վանկաչափության և վանկակազմության սկզբունքներից ելնելով քննարկվում և լուսաբանվում են հայերենի շեշտի և արտասանության հետ կապված մի շարք հարցեր: Այստեղ հանգամանալից կերպով քննվում է նաև հայերենի ք հնչյունի վանկակազմիչ գերը և նշանակությունը:

Ուղղագրության հետ կապված հայերենի արտասանական, ուղղախոսական հարցեր են շոշափված նաև Աբեղյանի՝ հայերենի ուղղագրությանը նվիրված մի շարք այլ ուսումնասիրություններում և հոդվածներում:

Բնե շատ համառոտակի խոսեցինք այն աշխատանքների մասին, որոնցում ուղղախոսության հարցերը այս կամ այն չափով շոշափվել են (շատ գեպքերում ուղղագրության հետ կապված), բայց այդքանից էլ դժվար չէր տեսնել, որ հիմնականում Այստեղյանի և ապա Աբեղյանի աշխատություններում է, որ ուղղագրության առարկա են դառնում և ավելի լայն ընդգրկումով նկարագրվում հայերենի արտասանական համակարգի մի շարք իրողություններ:

Մ. Աբեղյանի աշխատություններում և հոդվածներում հայերենի ուղղախոսության մասին տրված տեղեկությունները սերտորեն առնչվում են ուղղագրության հետ, և բոլորն էլ հիմնականում մեկ նպատակ են հետապնդում՝ ճշտել, կանոնավորել և միասնական դարձնել հայերենի ուղղագրությունը:

Ոմանք գտնում են, որ Աբեղյանը հայերենի ուղղախոսությունը չի համարել նրա անհրաժեշտ հատկանիշներից մեկը, կարևորություն չտալով լեզվի ուղղախոսությանը: Սակայն դա ճիշտ չէ: Աբեղյանը, որպես ժամանակի լեզվաբանական առաջավոր գաղափարների կրող և լեզվի զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները ճիշտ լուսաբանող գիտնական, չէր կարող առհասարակ չընդունել լեզվի ուղղախոսության նշանակու-

20 Նույն տեղում, էջ 50—51:

21 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933:

թյունը և կարևորությունը: Բայց Աբեղյանը շատ լավ գիտակցում էր, որ քանի դեռ կանոնավորված չէր հայերենի ուղղագրությունը, խոսք լինել չէր կարող ուղղախոսության մասին: Այդ պատճառով բնական է, որ Աբեղյանին նախ և առաջ պետք է մտահոգեր հայերենի անկանոն և խառնիճաղանջ, բազմաթիվ երկգրություններով լեցուն ուղղագրության խնդիրը (այդ մասին են վկայում Աբեղյանի՝ հայերենի ուղղագրության հարցերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունները)²², քանի որ եթե չկանոնավորվեր և միասնական չդառնար ուղղագրությունը, չէր կարող կանոնավոր և միասնական լինել արտասանությունը:

Առհասարակ գրական լեզուների համար բնորոշ է այն, որ լեզվի մյուս փոքրերի համեմատությամբ ուղղախոսությունը կանոնավորվում է ամենից վերջում:

Ուղղախոսական որոշ հարցեր են շոշափված Գ. Ղափանցյանի մի շարք աշխատություններում: «Արդի հայերենի ուղղագրության խնդիրը» հոգվածում Ղափանցյանը հայտնում է այն կարծիքը, որ ձայնեղների՝ շնչեղ խուլերի վերածվելու պրոցեսը դեռևս չավարտված ետադարձ ուղղություն է վերցրել, և ձայնեղների հին ուղղագրությունը ժամանակին փվերականգնի նաև հին արտասանությունը²³:

1951 թ. լեզվաշինության հարցերին նվիրված ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում²⁴ Ղափանցյանը «Ժամանակակից հայերենի լեզվաշինության խնդիրների շուրջը» թեմայով կարդացած գեկուցման մեջ առաջ է քաշում այն միտքը, որ Բ, Գ, Պ, Ը, Զ ձայնեղների մի շարք դիրքերում ունեցած շնչեղ խուլ արտասանության փոխարեն հին արտասանության վերականգնումը ցանկալի երևույթ է, որ չպետք է խոչընդոտ հանդիսանալ պրաբարյան արտասանության վերականգնմանը, օ-

22 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը: Մեր ուղղագրության մասին, «Արարատ», № 11—12, 1913: Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության, Երևան, 1922: Ուղղագրության ռեֆորմը, Երևան, 1925: Հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի խնդիրը, «Խորհրդային Հայաստան», 1922, փետրվարի 12 (№ 35), փետրվարի 25 (№ 45) և այլն:

23 Գր. Ղափանցյան, Արդի հայերենի ուղղագրության խնդիրը, Տեղեկագիր ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի ուղղագրության և տառերի ձևափոխության հանձնաժողովի, Երևան, 1927, էջ 76:

24 Խորհրդակցության արդյունքները և ելույթները հրատարակվեցին ՀՍՍՀ ԳԱ տեղեկագրի (հաս. բաժ.) 1951 թ. № 5-ում:

րինակ՝ նուր[բ], մար[դ] և այլն, այնպես, ինչպես շենք առարկում հանդես, բարախել բառերի արտասանությունը²⁵:

Այս զեկուցման մեջ Գ. Ղափանցյանը հայտնում է իր տեսակետները նաև հայերենի ուղղախոսության, տառադարձության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Այսպես, նա գտնում է, որ ռուսերենից և ռուսերենի միջոցով արված փոխառություններում, ինչպես ուղիղ, այնպես էլ թեք ձևերում, պետք է պահպանել օտար շեշտագրությունը. պրոֆեսոր, դիրեկտոր, տրանկտոր և այլն, ինչպես նաև՝ պրոֆեսորի, պրոֆեսորից և այլն:

Գ. Ղափանցյանը առաջարկում էր օտար բառերում կրկնակ բաղաձայնները գրության մեջ պահպանել և այդպես էլ հնչել, օրինակ՝ կոլլեկտիվ, կոմմունիստ, կոմմունա և այլն. նույնը վերաբերում էր օտար բառերի վերջին ա-ին:

Գ. Ղափանցյանը գտնում էր, նաև որ ռուսերենի այն փոխառյալ բառերում, որոնց մեջ փափուկ լ կա (բազալտ, բոլշևիկ, ալտ, վալս), պետք է փափուկ լ արտասանել և այն կոշտ լ-ից գրությանը տարբերելու համար վրան դնել հայկական այբուբենի ւ տառը:

Գ. Ղափանցյանի վերոհիշյալ առաջարկություններից շատերը հանդիպեցին լուրջ առարկության:

Հայերեն գրական լեզվի ուղղախոսության հարցերը վաղուց փ վեր մտահոգել են մեր մյուս լեզվաբաններին, որոնք թեև այդ խնդիրը առանձնակի ուսումնասիրության առարկա չեն դարձրել, բայց իրենց տարբեր աշխատություններում և հատկապես ձեռնարկներում, դասագրքերում ներկայացրել են հայերեն գրական լեզվի ուղղախոսության մի շարք կանոններ կամ տվել են ուղղախոսական մասնակի ցուցումներ:

Հայերենի ուղղագրության, մասամբ նաև ուղղախոսության հարցերը զգալի տեղ են գրավում Ա. Ղարիբյանի ուսումնասիրություններում: Ուղղախոսության հարցերը մի շարք աշխատություններում շոշափվում են՝ կապված ուղղագրության, ուղղագրության ուսուցման մեթոդիկայի հետ²⁶:

25 Г. Капанцян, К задачам строительства современного армянского языка, ЗУВЗ ԳԱ տեղեկագիր (հաս. բաժ.), 1951, № 7:

26 Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և ուսուցման մեթոդները, Երևան, 1935: Մայրենի լեզվի մեթոդիկա, Երևան, 1940: Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1938, 1947: Ուղղագրական համառոտ բառարան, Երևան, 1940, (4500 բառ): Հայերեն ուղղագրական նոր բառարան, Երևան, 1945 (12000 բառ),

Ա. Ղարիբջանը մեծ ծառայություն է մատուցել հատկապես հայերենի ուղղագրության կանոնավորման և ամրապնդման գործին, պարբերաբար լույս ընծայելով ուղղագրական մի շարք բառարաններ, որոնք նպաստել են ոչ միայն ուղղագրության, այլև ուղղախոսության կանոնավորմանը և միասնականացմանը:

30-ական թվականներին խիստ մեծ էր ուղղագրական ձեռնարկի պահանջը, որի անհրաժեշտությունն զգացվում էր առանձնապես դպրոցում: 1935 թ. լույս է տեսնում «Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և ուսուցման մեթոդները» աշխատությունը, որտեղ Ղարիբջանի կողմից առաջ են քաշվում հայերենի ուղղագրության և ուղղախոսության համար էական նշանակություն ունեցող մի շարք կարևոր հարցեր:

«Հայոց լեզվի մեթոդիկա» աշխատության մեջ, անդրադառնալով ժամանակակից գրական հայերենի ուղղախոսությանը, Ղարիբջանը նշում է, որ «Հայերեն գրական լեզուն ուղղախոսության գրավոր կանոններ չի ունեցել, բայց մեր դպրոցներում սերնդի-սերունդ մշակվել և ուսուցվել են արտասանության կանոններ, որով և առաջացել է ավանդաբար պահպանվող, այսպես կոչված, դպրոցական արտասանությունը: Դպրոցական արտասանությունը այժմ կազմում է մեր ուղղախոսության հիմունքը, որը պետք է մշակել ու կատարելագործել»²⁷:

Ա. Ղարիբջանի և Գ. Պարիսի 1959 թ. հրատարակած «Դպրոցական ուղղագրական բառարանում» որպես հավելված կցված է 616 բառ պարունակող ուղղախոսական մի փոքրիկ բառարան: Ուղղախոսական այս բառարանը, որը միակն է, շատ կարևոր էր ուղղախոսության միօրինակացման տեսակետից, թեև քննադատելի էր մի շարք բառերի՝ տվյալ ժամանակաշրջանի համար անընդունելի արտասանության պատճառով²⁸:

Ա. Ղարիբջանը ընդհանուր առմամբ կողմնակից է արտասանական ավանդական կանոնների լայն կիրառմանը: Այդ մոտե-

2-րդ հրատ., 1947 թ., որոշ լրացումներով: Ա. Ղարիբջան և Գ. Պարիս, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 1956 (13000 բառ), 2-րդ հրատ., 1959: Ա. Ղարիբջան, Գ. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 1965 (17000 բառ), 2-րդ հրատ., 1968:

27 Ա. Ղարիբջան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջ 335:

28 Մեր աշխատանքը հրատարակության պրոցեսում էր, երբ լույս տեսավ Զ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (Երևան, 1973, «Լույս» հրատ.), ուստի մենք հնարավորություն չունեցանք այս աշխատությանը անդրադառնալու:

ցումն արտացոլվել է և՛ վերոհիշյալ ուղղախոսական բառարանում, և՛ այլ աշխատանքներում:

Ա. Ղարիբյանը բազմիցս ահազանգել է մեր ուղղախոսության անկանոնությունների մասին, հարց դրել անհապաղ և լրջորեն պահվելու ուղղախոսական նորմաների մշակման գործով և այլն²⁹:

Լեզվի մաքրության, խոսքի մշակույթի և մասնավորապես հայերենի ուղղախոսության խնդիրները ամբողջ սրությամբ առաջ են քաշվել նաև Գ. Սևակի աշխատություններում:

Գ. Սևակը նշում է, որ չնայած միասնական գրական լեզվի անվիճելի առկայությանը, մեր լեզվի կենդանի խոսքի, հատկապես գեղարվեստական և հրապարակախոսական կենդանի խոսքի կուլտուրայի մակարդակը դեռևս զգալի չափով ետ է մնում մեր ընդհանուր վերելքից³⁰:

Գ. Սևակը հատուկ ուշադրություն է դարձրել և մեր թատրոնի լեզվի ու նրանում տեղ գտած արատների վրա, որոնք մանրամասնորեն վերլուծված են «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատության մեջ (Երևան, 1948):

Իր աշխատություններում³¹ Գ. Սևակը նկարագրել է հայերենի արտասանական մի շարք օրինաչափություններ, ինչպես և ցույց տվել հայերենի արտասանության մեջ տեղ գտած արտասանական հիմնական թերությունները՝ բարբառային հնչումը, գրային հընչումը և փայնացված հնչումը³²:

29 Ա. Ղարիբյան, Հայերենի ուղղախոսության հարցերի մասին, ՍՄ, 1955, № 8: Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969, էջ 80:

30 Գ. Սևակ, Մեր գրական լեզվի և բեմական խոսքի կուլտուրայի մասին, «Սովետական գրականություն», 1943, № 4—5, էջ 184: Այս մասին նա խոսել է 1943 թ. Սունդուկյանի անվան պետթատրոնի գեղարվեստական խորհրդի բաց նիստում կարդացած «Հայ գրական լեզվի և բեմական խոսքի կուլտուրայի մասին» թեմայով զեկուցման ժամանակ: Զեկուցման շուրջը տեղի է ունեցել մտքերի փոխանակություն, որին մասնակցել են Ս. Կարապետյանը, Արուս Ոսկանյանը, ակադ. Հ. Օրբելին, Ա. Ղարիբյանը, Գ. Աբովը, Արտ. Կարինյանը, Ս. Հարությունյանը և ուրիշները: Զեկուցումը որոշ կրճատումներով տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրի 1943 թ. № 4—5-ում: Այս նիստում ոմանք հարցականի տակ են վերցրել մեր գրական միասնական լեզվի գոյության փաստը, գտնվել են մարդիկ, որոնք հայտարարել են՝ «Շեշտը որտեղ ուզում եք՝ դրեք», «Բառը ինչպես ուզում եք՝ արտասանեք»: Այստեղ առաջ է քաշվել Բ, Գ, Դ, Ը, Ղ ձայնեղների խլացման կանոնը լայնորեն կիրառելու հարցը, որի դեմ ոմանք առարկել են:

31 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939: Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:

32 Հիշատակված վերջին աշխատությունը, էջ 99:

Պետք է, սակայն, նշել, որ բուհական ձեռնարկում նկարագրված արտասանական որոշ նորմաներ և բերված մի շարք օրինակներ ներկայիս գրական արտասանության տեսանկյունից արդեն հնացած են: Այսպես, օրինակ, ա, կ, տ, ծ, և խուլերի ձայնեղ արտասանությունը ձայնորդ հնչյուններից հետո, ինչպես՝ ամպ-ամբ, ընկեր-ընգեր, ցանց-ցանջ, բանտ-բանդ, թանկ-թանգ, երկիր-երգիր, այստեղ ներկայացվում է որպես այնպիսի մի երևույթ, ինչպես ձայնեղների շնչեղ խուլ արտասանությունը (որբ-որփ, երգ-երփ և այլն): Մինչդեռ խուլերի ձայնեղացումը ժամանակակից գրական հայերենի համար արդեն ընդունելի չէ, և առանձին դեպքերը դիտվում են որպես շեղում: Հնացած է նաև բառավերջի ուլի-ն որպես վի արտասանելը՝ դասատվի, ժողովածվի, դասատվական և այլն³³:

Է. Աղայանը «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ, անդրադառնալով լեզվի տարբերակների և ոճերի հարցերին, ներկայացնում է քսան բառի արտասանության վիճակագրության արդյունքները³⁴:

Ուղղախոսական մի շարք կանոններ խոսքային տվյալներով ստուգելու և ճշտելու նպատակով հեղինակը երկու տարվա ընթացքում զրի է առել տարբեր հասակի և տարբեր մասնագիտություն ունեցող մարդկանց արտասանության տվյալները քսան բառի վերաբերյալ, պարզելու համար այդ բառերում ք, գ, դ, ձ, ջ բաղաձայնների ձայնեղ կամ շնչեղ խուլ արտասանությունը: Այդ բառերն են. հարգանք-հարգել, երգ, թագուհի, ներքող, կարագ, նրբանցք, խաղախ, անուղ, վրձին, համարձակ, արձան-արձանագրել, որջ, մեջ, միջոց-միջակ-միջանցք, հաջող-հաջողակ, ընդամենը, մղկտալ, քաղց, առաջարկ, ողջուն:

Ստացված վիճակագրական տվյալների ամփոփումը ուշագրավ է նրանով, որ դրանք մի կողմից օգնում են ճշտելու տվյալ բառերի ուղղախոսությունը, մյուս կողմից բացահայտում են այն տեղաշարժերը, որոնք տեղի են ունեցել նշված բառերի արտասանության մեջ:

Ըստ սերունդների՝ բերված արտասանության տվյալները հաստատում են այն, ինչ սպասելի էր: Այսինքն՝ ավագ սերնդի ներկա-

³³ Նույն տեղում, էջ 97—99:

³⁴ Է. Ք. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 24—29

յացուցիչների մոտ գերիշխում է շնչեղ խուլ արտասանությունը, և որքան տարիքը փոքրանում է, այնքան ավելի բնորոշ է դառնում գրային, այսինքն ձայնեղ արտասանությունը: Այսպես, օրինակ, ընդամենը, մղկտալ, ֆաղց, առաջարկ, ողջույն բառերը 1890--1900 թվերի ծնվածներից 50-ից 50-ը արտասանում են շնչեղ խուլ և խուլ՝ ըն[թ]ամենը, մ[խ]կտալ, առա[չ]արկ և այլն, իսկ 1941—1950 թվականների ծնվածներից ընդամենը բառը 47-ը արտասանում են ձայնեղ, 3-ը՝ խուլ, մղկտալ բառը 42-ը՝ ձայնեղ, 8-ը՝ խուլ և այլն: Բառեր կան, որ մեծահասակների մոտ էլ շատ դեպքերում արտասանվում են ձայնեղ արտասանությամբ, ինչպես, օրինակ, հարգել, հարգանք բառերը 50-ից 34-ը արտասանում են այնպես, ինչպես գրվում են, 16-ը՝ հար[բ]ել, հար[բ]անք:

Ժամանակակից հայերենի ուղղախոսություն հետ կապված որոշ հարցեր են շոշափված մեր մյուս լեզվաբանների առանձին աշխատություններում կամ հոդվածներում³⁵:

Հայերենի ուղղախոսության մի շարք հարցերին նվիրված հոդվածներով և զեկուցումներով լեզվաբանների հետ մեկտեղ հանդես են եկել մեր հասարակայնության տարբեր բնագավառների ներկայացուցիչներ՝ գրողներ, բեմական գործիչներ և դերասաններ, մամուլի աշխատողներ, ուսուցիչներ և այլն, որոնց բոլորին էլ մտահոգում և անհանգստացնում են հայերենի ուղղախոսության մեջ տեղ գտած անկանոնություններն ու թերությունները³⁶:

1946 թ. սալշտպանվել է թեկնածուական դիսերտացիա Գ. Ներսիսյանի կողմից՝ «Հայոց լեզվի ուղղախոսության հիմունքները» թեմայով:

35 Ս. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Երևան, 1955: Ռուսերենի ազդեցության մի քանի դրսևորումները արդի հայերենում, Տեղեկագիր, հաս բաժ., 1946, № 8: Վ. Առափելյան, Բանավոր խոսքը արվեստում, ՍՍ, 1956, № 10: Ռ. Բաղդասյան, Ուղղախոսական խախտումների և նրանց հաղթահարման մասին, ՍՄ, 1955, № 6: Հ. Հարությունյան, Մեր լեզվի այսօրվա հոգսերը, «Գարուն», 1970, № 5: Վ. Վահանյան, Հայոց լեզվի իրավունքը, ՍԳ, 1968, № 4: Վ. Փոսյան, Ընդգեմ աշակերտների բարբառախոսություն, ՍՄ, 1954, № 1 և այլն:

36 Լ. Քալանթար, Խոսքի կուլտուրան մեր թատրոններում, ԽԱ, 1938, № 2: Գ. Դեմիրճյան, Լեզվի կուլտուրան թատրոնում, ԽԱ, 1938, № 1: Ժամանակակից հայ գրական լեզվի զարգացման տեղեկները, ՍԳ և Ա, 1951, № 9: Ալ. Աղամյան, Հնչյունային հայերենի անադարտության մասին, ՍԱ, 1957, № 1: Պաևարե, Լեզուն պետք է հնչի մաքուր և գեղեցիկ (նույն տեղում): Վ. Բաղդասարյան, Հարցեր. որ կարող են լուծվան (նույն տեղում) և այլն:

Հայերենի ուղղախոսության կանոնավորման գործում մեծ դեր են կատարել ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր տերմինաբանական կոմիտեի կայացրած մի շարք որոշումներ:

1933 թ. կազմված հատուկ հանձնաժողովը, որն այնուհետև վերածվեց Հայկական ՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիտարիատին առընթեր հայերեն գրական լեզվի տերմինների և նորմաների կոմիտեի, նախապես որոշելով իր գործունեության ըսկզբունքները և նպատակները, միանգամից մեծ աշխատանք ծավալեց և կարճ ժամանակամիջոցում մի շարք անհրաժեշտ և կարեւոր որոշումներ ընդունեց հայերենի տերմինաշինարարության, ուղղագրության և տառադարձության վերաբերյալ: Այդ որոշումները ուղեցույց հանդիսացան և կարգավորեցին լեզվաշինության բազմաթիվ հարցեր:

Տերմինաբանական կոմիտեն հենց սկզբից հատուկ ուշադրություն դարձրեց հայերենի՝ ժառանգաբար մեզ հասած երկտեսակ գրություն ունեցող, բառապաշարում զգալի թիվ կազմող բառերի վրա: Երկգրություն ունեցող բառերի ուղղագրության կանոնավորումը և միօրինակացումը կարևոր նախապայման էր այդ կարգի բառերի նաև ուղղախոսության միօրինակացման խնդրում:

Տերմինաբանական կոմիտեն մեծ ուշադրություն դարձրեց նաև ռուսերեն և օտար բառերի ու տերմինների, ինչպես և տեղանունների ու անձնանունների հայերեն տառադարձության և շեշտադրության հարցերին:

Բայց պետք է, ցավոք, նշել, որ ուղղախոսական հարցերին տերմինաբանական կոմիտեն իր ժամանակին հատուկ կերպով չանդրադարձավ, համարելով դեռևս վաղ, թերևս ոչ կարևոր, և այդ պատճառով որոշ երևույթներ, մատնվելով ինքնահոսի, բավականաչափ տարածվեցին:

Լեզվաբաններից շատերը թեև ընդունել են հայոց լեզվի միասնական գրական ուղղախոսության գոյության փաստը, բայց միաժամանակ նշել են, որ նա դեռևս չի հասել բացարձակ գերիշխող վիճակի, այդ պատճառով ուղախոսական որոշ հարցեր իր ժամանակին չեն ստացել համապատասխան լուծում: Այս բնագավառում առհասարակ նկատվել է զգուշավորություն: Օրինակ՝ հայոց լեզվի նորմավորման ընդհանուր սկզբունքների մասին տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշման մեջ (հաստատվել է 1955 թ. հուլիսի նիստում) ասված է, որ պետք է «Հայոց լեզվի արտասանության օրենքների համաձայն նորմավորել ուղղախոսությունը,

ճանաչել ու հաստատել այնպիսի կանոններ, որոնք ունեն անվի-
նելի որոշակիություն» (ընդգծումը մերն է — Թ. Ղ.): Նկատի ու-
նենալով մեր լեզվի ուղղախոսության մեջ եղած բազմաթիվ տար-
ընթացություններն ու անմիօրինակությունները և մանավանդ վի-
ճելի ու անորոշ արտասանական մի շարք երևույթներ, խնդիրը հե-
տաձգվել է, թողնվելով ավելի նպաստավոր ժամանակներին: Իսկ
ժամանակը, եթե արտասանական մի շարք իրողություններ, իրոք,
ավելի որոշակի և տիրապետող է դարձնում, մյուս կողմից՝ գրա-
կան արտասանության վրա գիտակցական ներգործության գրեթե
բացակայության պայմաններում ստեղծում է այլ տարրենթացու-
թյուններ:

Գրական մի շարք լեզուների համար ուղղախոսությունը ա-
ռաջնահերթ կարևորություն ունեցող հարց է համարվում և արժա-
նանում է ամբողջ հասարակայնության ուշադրությանը: Օրինակ,
ժամանակակից ռուսական խոսքի և մասնավորապես արտասանու-
թյան նորմավորման և կատարելագործման ուղղությամբ գիտական
լուրջ ուսումնասիրություններ են կատարվում, լույս են տեսնում
հատուկ պարբերականներ և այլն: Երբեմն նույնիսկ մեկ բառի
գրությունը կամ արտասանությունը լայն քննարկման առարկա է
դառնում: Ռուսերենը ունի վաղուց ի վեր լավ մշակված ուղղախո-
սական կանոններ, որոնք նկարագրվում են գրական արտասանու-
թյանը նվիրված հատուկ ձեռնարկներում³⁷, դասավանդվում են
բուհերում որպես հատուկ կուրս և այլն: Բայց այդ չի նշանակում,
թե ռուսաց գրական լեզվում ուղղախոսական տարրենթացույթու-
ններ, անկանոնություններ, շեղումներ և բարբառային արտասա-
նության դրսևորումներ չկան (հմմտ., օրինակ, օյասությունը՝
окажье, որը շատ տարածված երևույթ է ռուսերենում և այլն):
Բայց ուղղախոսական կանոնների հետևողական և պարբերական
ուսուցումը, հասարակության, մանավանդ գրողների աշխուրջ վե-
րաբերմունքը իր դրական արդյունքներն է տալիս:

Մի քանի խոսք ուղղախոսության ուսուցման դրվածքի մասին
դպրոցում: Դպրոցն այն սկզբնական և հիմնական օղակն է, որ-
տեղ յուրացվում են արտասանական ուղղախոսական շատ հմտու-
թյուններ ու սովորություններ: Դպրոցում յուրացրած գիտելիքներն
են, որ խորապես արմատավորվում են երեխայի մեջ և հիմք են
ծառայում դրանց հետագա հարստացման համար: Եվ իրոք, եթե

37 Р. И. Аванесов, Русское литературное произношение, М., 1972.
Ունեցել է հինգ հրատարակություն:

դպրոցականը, ասենք, ուղղագրությունը դպրոցում լավ չի յուրացրել, ապա ամբողջ կյանքում էլ ուղղագրությունից նա կաղում է: Նույնը կարելի է ասել և ուղղախոսության մասին: Այն, ինչ տրվում, ուսուցվում է դպրոցում, այնուհետև շատ դժվարությամբ է փոփոխության ենթարկվում և մեծ մասամբ այդպես էլ պահպանվում է ամբողջ կյանքում: Նշանակում է, հենց առաջին դասարանից սկսած՝ պետք է դպրոցականներին ամենայն հետևողականությամբ վարժեցնել բառերի ճիշտ արտասանությանը: Դպրոցում է, որ երեխան յուրացնում է գրության և արտասանության միջև տարբերություններ ունեցող բառերի հնչումը:

Սակայն, ցավոք, պետք է խոստովանել, որ դպրոցականների ուղղախոսության վրա պետք եղած ուշադրությունը չի դարձվել, մանավանդ մինչև 50-ական թվականները, իսկ այս հանգամանքը դուռ է բացել արտասանական անմիօրինակությունների առաջացման և դարգացման համար: Այս տեսակետից քննադատելի են և մեր դպրոցական հայոց լեզվի դասագրքերից շատերը, որոնց մեջ ուղղախոսության վերաբերյալ կանոններում և ձևակերպումներում աչքի են ընկնում անորոշությունը և անհստակությունը, մի հանգամանք, որը լայն դուռ է բացում արտասանական տարրնթացությունների առաջ:

Հայոց լեզվի դպրոցական դասագրքերում մեծ մասամբ ուղղախոսությունը ներկայացվել է ոչ որպես առանձին բաժին, թեև տրվել են ուղղախոսական որոշ գիտելիքներ՝ կապված գերազանցապես ուղղագրության հետ:

Ա. Ղարիբյանի 1934 թ. լույս տեսած «Հայոց լեզու» դասագրքում (5-րդ դասարանի համար) ուղղագրության բաժնում արտասանական, ուղղախոսական մի շարք կանոններ տրվում են բավականաչափ հանգամանորեն: Այդ կանոնները տեղ են գտել նաև գրքի հետագա հրատարակություններում աննշան փոփոխություններով³⁸:

Ա. Գրիգորյանի «Հայոց լեզու» ձեռնարկում (Երևան, 1957, 8—10-րդ դասարանների համար, 2-րդ հրատ.) ներկայացված է ուղղագրության հետ միասին նաև ուղղախոսության բաժին, որտեղ որոշ գիտելիքներ են տրվում ուղղախոսության և նրա նշա-

³⁸ Մինչև 30-ական թվականները դպրոցներում դասավանդվող 2. Պետրոսյանի «Հայոց լեզվի գործնական քերականություն»-ում (Երևան, 1928) արտասանության մասին շատ քիչ բան է ասված:

նախնական մասին, ինչպես և շարադրվում են հայերենի ուղղախոսության արող կանոնները: Այս և նույն հեղինակի մյուս դասագրքերում հայերենի ուղղախոսության հարցերը ներկայացված են համեմատաբար մեծ ընդգրկումով, թեև դրանցում տեղ են գտել արող անճշտություններ և անհստակ ձևակերպումներ:

Միանգամայն հասկանալի է, որ մեր լեզուն ինքը քիչ դժվարություններ չի հարուցում ուղղախոսական կանոնների նկարագրմանը, բայց դպրոցական դասագրքերում պետք է այդ կարգի դժվարությունները հաղթահարվեն և հասցվեն նվազագույնի:

Առանձին բաժնով է ներկայացված ուղղախոսությունը է. Բ. Աղայանի և Հ. Խ. Բարսեղյանի «Հայոց լեզու» դասագրքում, որտեղ ուղղախոսական կանոնների ձևակերպումները տրված են ավելի հստակ ու որոշակի, բառացանկերով բերվում են կանոնին ենթակա բոլոր բառերը և տրվում անհրաժեշտ բացատրություններ: Այս դասագրքում հաշվի են առնված նաև վերջին տասնամյակների ընթացքում հայերեն գրական լեզվի արտասանության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը³⁹:

39 է. Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, դասագրքեր 5—7-րդ դասարանների համար, Երևան, 1970, 6-րդ հրատարակություն:

Այստեղ կցանկանալինք ուշադրություն հրավիրել մի հարցի վրա:

Ներկայումս ուղղախոսությունը հնչյունաբանության հետ միասին դասավանդվում է 4-րդ դասարանում և ի տարբերություն հայոց լեզվի 5—7-րդ դասարանների դասագրքի, որտեղ ուղղագրությունը և ուղղախոսությունը ներկայացված են առանձին բաժիններով, 4-րդ դասարանի համար նոր ծրագրով կազմված դասագրքում (մտցված է 1969 թվականից, հեղինակներն են է. Բ. Աղայանը և Հ. Խ. Բարսեղյանը) այդ երկու բաժինները նորից միացվել են:

Այսպիսի մոտեցումը մեր կարծիքով նպատակահարմար չէ հետևյալ նկատառումով: Դիտումները ցույց են տալիս, որ դպրոցականների (և ոչ միայն դպրոցականների) մոտ պատշաճ բարձրության վրա չէ խոսքի կուլտուրան, որի կողմնից մեկը բառերի ճիշտ արտասանությունն է: Թեև ուղղագրության և ուղղախոսության միացյալ դասավանդման ժամանակ նույնպես տրվում են ուղղախոսական արող գիտելիքներ, սակայն դրանց միաժամանակյա ուսուցումը զգալիորեն շեղում է և՛ դասավանդողի, և՛ սովորողի ուշադրությունը ուղղախոսական կոնկրետ հարցերից, մասնավորապես որ բառերի ճիշտ գրությունը միշտ էլ ավելի կարևոր է համարվել, քան նրանց ճիշտ արտասանությունը: Միևնույն դրանք առանձին ներկայացվելու և առանձին դասավանդվելու դեպքում հատուկ ուշադրություն է բեռնվում հենց ուղղախոսության վրա, իսկ այդ հանգամանքը նպաստում է, որպեսզի ուղղախոսական գիտելիքները հիմնավորապես յուրացվեն: Եվ ոչ միայն այդ: Մեր կարծիքով, առաջիկայում ուղղախոսական գիտելիքների շրջանակները դպրոցական դասագրքում պետք է լայնացնել, ընդգրկելով մի քանի այլ հարցեր: Այդպիսի մոտեցումը, ինչպես նաև հարցերի հանգամանալից ու խոր ուսուցումը մեծ չափով կարող է նպաստել խոսքի կուլտուրայի բարձրացմանը:

Ծրբեմն ոչ ճիշտ է մատուցվում ժամանակակից գրական արտասանությունը թեկադրության ձեռնարկներում: Այսպես, օրինակ, 1961 թ. հրատարակված մի ձեռնարկում ներկայացված է այնպես, որ ք, գ, դ, ձ, ջ ձայնեղները Համբարձում, արյունարբու, Աբգար, մելամաղձոտ, դպրոցսմերձ, Մարջանիկ, եղջերու, եղջուր, աղջամուղջ բառերում արտասանվում են որպես փ, ֆ, ք, ց, չ⁴⁰: Ուսուցիչներին հանձնարարել, որպեսզի թեկադրության ժամանակ վերոհիշյալ բառերն արտասանեն շնչեղ խուլ արտասանությամբ՝ կնշանակի անտեսել ժամանակի տարածված և ընդունելի արտասանությունը և մյուս կողմից, որ ավելի կարևոր է, արհեստական կերպով դժվարացնել մի շարք բառերի ուղղագրությունը:

Ճիշտ չի ներկայացված այստեղ և ք, ալ, փ շրթնայիններից առաջ մ-ի արտասանությունը, ասվելով, որ այդ հնչյուններից առաջ թեև գրվում է մ, բայց արտասանվում է ն: Եվ տարօրինակ ու զարմանալի այն է, որ դասատուն պետք է միտումնավոր կերպով ք, ալ, փ-ից առաջ մ-ի փոխարեն թեկադրվող նյութի մեջ արտասանի ն, որպեսզի աշակերտները լսելով ն, գրեն մ: Ստացվում է այնպես, որ, օրինակ, «Մի խումբ ճամբարականներով իջանք համբավավոր Փամբակի կիրճը» արտահայտությունը, որ բերված է ձեռնարկում, ուսուցիչը պետք է արտասանի «Մի խումբ ճանբարականներով իջանք հանբավավոր Փանբակի կիրճը», և աշակերտները ք, ալ, փ-ից առաջ ն լսելով, պետք է գրեն մ:

Համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժնի 1969 թ. 2-րդ կուրսի ուսանողների մեջ մեր անցկացրած փորձերը ցույց տվեցին, որ ամենալավ ուսանողների մոտ նույնիսկ պակասում են ուղղախոսական կայուն գիտելիքները, որը հետևանք է այդ բնագավառում եղած ուսուցման բացերի և առհասարակ ուղղախոսական մի շարք հարցերի անտեսման:

Արտասանական միասնական նորմաների մշակման գործում մեծ դեր ունեն կատարելու թատրոնը և հեռուստատեսությունը: Փաստորեն թատրոնը մի դպրոց է, որտեղ մի կողմից պահպանվում են մեր լեզվի արտասանական ավանդույթները, մյուս կողմից մշակվում և կատարելագործվում են արտասանական նոր երեվույթները: Սովետական իշխանության օրոք հասարակության լայն զանգվածները սերտորեն կապված են թատրոնի հետ, որը

40 Ա. Ա. Ամիրջան, Ա. Ա. Մարգարյան, Ավ. Ճափուրյան, Թեկադրության նյութերի ժողովածու, ձեռնարկ 5—8-րդ դասարանի համար, Երևան, 1961, էջ 19—23:

Նրանց համար ահշտ և օրինակելի արտասանության հիմնական ուղեցույցներից մեկն է: Թեև դերասանը խստորեն հետևում է ուղղախոսական նորմաներին, բայց գրական հայերենի արտասանության մեջ դիտվող որոշ տատանումներ և անմիջօրինակություններ, երբեմն նույնիսկ խախտումներ, երևան են գալիս և այստեղ:

Բեմական խոսքը ավելի պահպանողական է և դժվարությամբ է ընդունում արտասանական նորությունները: Բայց բեմական խոսքը մեկուսացած չէ կենդանի հնչումից և զարգանում է դրական լեզվի հետ միասին:

Բեմական արվեստի ներգործուն ուժը պայմանավորված է նաև լեզվով: Ամենատաղանդավոր դերասանը եթե բառը սխալ է արտասանում, ապա թուլացնում է իր արվեստի ներգործությունը: «Լեզուն դերասանի համար նույնն է, ինչ նավագնացի համար բեկեռային աստղը», — ասել է հայ ականավոր դերասան Վ. Փափազյանը:

Կարևոր է նշել նաև, որ ուղղախոսական մի շարք հարցերի գնահատման խնդրում բացակայում է միասնական կարծիքը: Խիստ ահնառու է սուբյեկտիվ վերաբերմունքը առանձին բառերի արտասանության վերաբերյալ: Տարածայնությունները մեծ մասամբ արտահայտվում են ավանդական արտասանությունը պահպանելու կամ նորը ընդունելու հարցում:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Գրական լեզվի ուղղախոսության նորմաները, որպես բանավոր խոսքի արտասանական կանոնների ամբողջություն, մշակվում են պատմականորեն և ուղեկցում են ազգային լեզվի կազմավորմանը և զարգացմանը: Սակայն ուղղախոսության նորմաների մշակման պահանջը առանձնապես զգալի է դառնում այն ժամանակաշրջանում, երբ մեծանում է գրական լեզվի խոսակցական բազան: Հայերեն գրական լեզվի կազմավորմանը զուգընթաց կազմավորվել է և նրա արտասանությունը: Զխորանալով հայ ազգային գրական լեզվի արևելահայ տարբերակի արտասանության ձևավորման ակունքների մեջ, որը առանձին քննության առարկա է, փորձենք համառոտակի նշել արտասանության զարգացման հիմնական փուլերն ու ուղիները:

Հիմք ընդունելով Գ. Զահուկյանի մշակած հայոց լեզվի (գր-
րային շրջանի) պատմության շրջաբաժանումը⁴¹, արևելահայ գրա-
կան լեզվի ուղղախոսության կազմավորումը և զարգացումը կա-
րելի է բնութագրել հետևյալ փուլերով:

Առաջին կամ վաղ աշխարհաբարի ենթաշրջանում, որն ըս-
կըսվում է 17-րդ դարի սկզբներից և տևում մինչև 19-րդ դարի կես-
ները, հին գրական լեզվի (գրաբարի) և բարբառների կողքին գո-
յություն ունեւր «քաղաքական» կամ քաղաքացիական հայերենը
(lingua civilis), որը հայ ժողովրդի համար ընդհանուր հասկա-
նալի լեզու էր: Այս շրջանում արդեն լեզուն զերծ չէր որոշ նոր-
մատիվությունից, որն, անշուշտ, չէր ընդգրկում բանավոր խոս-
քը: Քաղաքացիական հայերենը կամ գրական աշխարհաբարը աս-
տիճանաբար զարգանալով, ծավալվելով և ընդլայնելով իր գոր-
ծառության շրջանակները, սկսում է դուրս մղել գրաբարը որպիս
գրավոր լեզու: Նշանակության և ֆունկցիաների մեծացումը, ինչ-
պես և որպես գրավոր լեզու հանդես գալը նոր գրական լեզվի ա-
ռաջ նորմավորվելու և մշակվելու պահանջներ է դնում: Հասկա-
նալի է, որ այս շրջանում հրապարակային խոսքը դառնում էր
զարգացման ցածր մակարդակի վրա, որի հետեանքով բարբառա-
յին տարբերությունները մեծ տեղ էին գրավում բանավոր խոս-
քում:

19-րդ դարի կեսներից հայ ժողովրդի պատմության արույն
պայմանների հետեանքով կազմավորվում են գրական լեզվի երկու
տարբերակները՝ արևմտահայկականը (Պոլսի բարբառի հիման
վրա) և արևելահայկականը (Արարատյան կամ Երևանի բարբա-
ռի հիման վրա):

Նոր աշխարհաբար գրական լեզվի արևելահայկական տարբե-
րակը մի շարք գծերով պահպանեց հին գրական լեզվի հնչյունա-
կան կերպարանքը, բառապաշարի, բառակազմության հարցերում
նույնպես օգտվեց և հարստացավ գրաբարից, որդեգրելով նուե
գրաբարի ուղղագրությունը: Հայ ազգային գրական լեզվի ուղղա-
խոսական նորմաների կազմավորման համար հիմք ծառայեց մեծ
մասմաբ գրությունը. գրաբարյան բառերի գրապատկերները ուղե-
ցույց հանդիսացան արտասանական տարբեր ձևերից մեկի ընտ-
րության ժամանակ (հմմտ. գրբ. հարսանիք և բրբ. հըրսանիք,

41 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969,
էջ 49—50:

թառնի՛ս, հարսնի՛ք, հարսի՛նք. գրբ. այսօր և բրբ. էսօր, ըսօր-
գրբ. հայր և բրբ. հեր, խեր. գրբ. այս և բրբ. էս, էսի և այլն):
Հատկապես ձայնավորների մաքուր, երկբարբառային հնչումներից
վերծ արտասանության մշակումը կատարվեց զրավոր լեզվի հի-
ման վրա:

Գրական լեզվի արտասանական նորմաների ձևավորման գոր-
ծում զգալի դեր կատարեցին և համաժողովրդական արտասանա-
կան մի շարք օրինաչափություններ. օրինակ, բ, գ, դ, ձ, ջ ձայ-
նեղների շնչեղ խուլ արտասանությունը որոշ դիրքերում (Վար-
դան—Վար[թ]ան, աղջիկ—ա[խշ]իկ և այլն), քառասկիզբը մեկ
բաղաձայնով և բաղաձայնական կուտակումները ը-ով արտասանե-
լու ընդհանուր օրինաչափությունը, մի շարք բառերի հ-ի անկու-
մով ժողովրդական հնչումը (աշխարհ—[աշխար], շնորհակալ—[շնո-
րակալ] և այլն): Գրական լեզվում ընդունվեց զրաբարի բառային
վերջադիր շեշտադրությունը:

Այսպիսով, հայոց լեզվի (արևելահայերեն տարբերակի) ուղ-
ղախոսական նորմաները հիմնական գծերով ձևավորվեցին 19-րդ
դարի կեսերին և ընթացան աստիճանաբար կանոնավորվելու և
միօրինականալու ուղիով:

19-րդ դարի կեսերից սկսվում է նոր գրական հայերենի 2-րդ
ենթաշրջանը, որը տևում է մինչև 1920 թիվը, այսինքն՝ սովետա-
կան կարգերի հաստատումը Հայաստանում:

Ահա այս շրջանից սկսած, երբ բացահայտվել ու մշակվել
էին գրական աշխարհաբար լեզվի զարգացման ուղիները և հեռա-
նկարները, լեզուն զարգացման որոշակի հունի մեջ է դրվում:
Հայերեն գրական լեզուն իր երկու տարբերակներով, որոնք ունեին
իրենց ուրույն կառուցվածքը և արտասանությունը՝ ընդլայնելով
իրենց գործառության շրջանակները, աստիճանաբար ենթարկվում
են նորմավորման և միօրինակացման: Գրական լեզվի ֆունկցիա-
ների ընդլայնման հետ ընդլայնվում է և նրա խոսակցական բա-
զան, որը մեծացնում է բանավոր խոսքի տեսակարար կիշըը հա-
սարակական կյանքում: Ազգային գրական լեզվի ձևավորմանը ու
զարգացմանը զուգընթաց, թեև շատ դանդաղ քայլերով, բայց աս-
տիճանաբար ձևավորվում, կանոնավորվում էր և արտասանու-
թյունը, որը արևելահայ և արևմտահայ տարբերակներում ընթա-
նում էր տարբեր ուղիներով:

Այս շրջանում, իհարկե, չի կարելի խոսել արտասանական
միասնական նորմաների գոյության մասին, քանի որ մասնա-

վորապես գրական արևելահայերենը դեռևս գտնվում էր մշակման և հղկման պրոցեսում:

Արևելահայ գրական լեզվի և նրա արտասանության մշակման գործում զգալի դեր են կատարել հայ մշակույթի երկու կարևորագույն օջախներ՝ լազարյան ճեմարանը Մոսկվայում և Ներսիսյան դպրոցը՝ Թիֆլիսում: Այդ դպրոցներում խոսվող լեզվի մասին լեոն գրում է. «Ուսուցիչները հետևում էին նրանց (աշակերտների) խոսակցություններին, մաքրում էին լեզուն գավառաբարբառներից, օտար բառերից և մշակում էին հարազատ հայերեն, որը գրաբար չէր, բայց գավառաբարբառ էլ չէր, այլ բոլոր տեղերից եկածներին հասկանալի մի լեզու»⁴²:

Պետականություն չունենալը, լեզվի կանոնավորման գործում օրենսդիր մարմնի և առհասարակ որևէ վերահսկողության բացակայությունը դուռ էր բացում ամեն տեսակի կամայականությունների, կրկնակ ձևերի ու գրությունների և լեզվական զանազան անճշտությունների առաջ: Քանի որ հայ ազգային լեզվի կազմավորման և մշակման ուրույն հանգամանքները զգալիորեն հետացնում էին այն վեներանի խոսակցական լեզվից, ուստի բավականաչափ դժվարանում էր և գրական լեզուն յուրացնելու գործը:

Հայ ազգային լեզվի կազմավորման ուրույն պայմանների պատճառով այն, իրոք, բավականաչափ արվեստական էր, ինչպես ասում են, «դպրոցական» և զգալիորեն հեռու՝ կենդանի խոսակցական լեզվից:

Հետագայում, երբ սոցիալական նոր հարաբերությունների շրջանորհվ գրական լեզուն թափանցեց ժողովրդական լայն զանգվածների մեջ և դարձավ նրա սեփականությունը, պրական և ժողովրդախոսակցական լեզվի մեջ եղած անջրպետը թեև աստիճանաբար փոքրացավ, բայց չվերացավ:

Մինչև սովետական կարգերի հաստատումը հայ գրական լեզուն հիմնականում կիրառվում էր որպես գրավոր լեզու: Գրական խոսքն ընդունված չէր ընտանեկան շրջանում: Նույնիսկ մտավորականները՝ ուսուցիչները, գրողները, բեմի աշխատողները, ինչպես և դպրոց հաճախող մատաղ սերունդը ընտանիքներում խոսում էին բարբառով: Հայ գրական լեզուն չի ունեցել սերնդե սերունդ փոխանցվող ընտանեկան ավանդույթներ, որոնք գրական նոր-

⁴² Մեջբերումը արված է Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացից», էջ 59:

մաների յուրացման գործում մեծ դեր են կատարում: Գրական բանավոր խոսքին, որը ունի շատ սահմանափակ կիրառություն, հաղորդակից էր լինում կամ առիթ էր ունենում ունկնդիր լինելու հայ ժողովրդի միայն մի փոքր մասը, այն էլ դեպքից դեպք: Հասարակական զանազան միջոցառումները շատ հազվադեպ էին և խիստ սահմանափակ թվով մարդկանց համար: Գրական լեզուն հասարակության մի փոքր խմբի՝ մտավորականության, կամ ինչպես իրենք իրենց էին կոչում, «գլխավորականների» սեփականությունն էր, իսկ գրական լեզվի արտասանական նորմաները կոչվում էին գլխավորական արտասանության նորմաներ:

Հայ գրական լեզվի՝ արտասանական մեծ զանազանություններ ունեցող արևմտահայ և արևելահայ տարբերակների գոյությունը, ինչպես և 50-ից ավելի բարբառները, իրենց ուժեղ կնիքն էին դնում արևելահայ գրական լեզվի արտասանության վրա: Գրական արտասանությունը մեծ մասամբ միախառնված էր որևէ բարբառի արտասանության առանձնահատկություններով: Թիֆլիսում աշխատող և գործող մտավորականության լեզուն ենթակա էր Թիֆլիսի բարբառի ազդեցությանը, Երևանի մտավորականության լեզվի արտասանության վրա իր ուժեղ կնիքն էր դնում Երևանի բարբառի արտասանությունը: Նույնիսկ Հայաստանի տարբեր շրջաններում գործող ուսումնական հաստատություններում ուսուցումը չէր տարվում ուղղախոսական միասնական նորմաների կիրառությամբ:

Թեև գրական արտասանությունը ձգտում էր համընդհանրության և միօրինակության, սակայն տարբեր կենտրոններ դրսևորում էին իրենց առանձնահատուկ արտասանական գծերը: Բարբառների ուժեղ ներգործությունը մեծ բազմազանություն էր մտցնում և շեշտադրության հարցում:

Հայտնի է, որ 19-րդ դարի կեսերին շատ անկանոն էր հայերենի ուղղագրությունը: «Որքան գրող, այնքան ուղղագրություն», — այսպես էին բնորոշում ժամանակակիցները իրենց ուղղագրությունը: Լիովին խախտվել էին ավանդական ուղղագրության նորմաները: Բազմաթիվ բառեր ունեին երկու և ավելի գրություն: Գրության տարբերություններն ստեղծվել էին արտասանության մեջ առաջացած փոփոխությունների, բառերի արտասանական առարատեանությունների և այլ պատճառներով:

Ահա թե ինչ է գրում այդ մասին մեծանուն լեզվաբան Ա. Այտընյանը. «Ստորին և հետնագույն դարուց հողդողդ ու անհաստատ

ուղղագրությունը, ժամանակին տարտամ և երկատեսակ կամ եռատեսակ կենդանի հնչումը, և նույն ինքն լեզուն որ հնույն ու նորույն մեջ կը ծփեր, կարծես թե օրեօր նորանոր ձևեր կը բուսցընեին. զորօրինակ, արյուն-արուն-արույն, ալուր-ալուր-ալույր, ժանր-ժանդր-ժանտր, մատիդ-մատիտ, պատանդ-պանտանդ և այլն»⁴³։ Այս տողերը վկայում են, որ բառերի երկտեսակ և եռատեսակ գրություններից շատերը արդյունք են եղել բառերի անհաստատ և անկայուն արտասանության։

Իրոք, գրական լեզվի արտասանության մեջ տիրող բազմազանության և անմիօրինակության համար լավագույն ապացույց կարող են հանդիսանալ ուղղագրական բազմաթիվ տարատեսակությունները, որոնք ոչ միայն հավաստում են ժամանակի ուղղագրության անկայուն վիճակը, այլև կենդանի ապացույց են միասնական արտասանական նորմաների բացակայության։

1920 թվականից, երբ Հայաստանում հաստատվում է սովետական իշխանությունը, սկսվում է հայ ազգային գրական լեզվի զարգացման երրորդ ենթաշրջանը՝ ժամանակակից հայերենը։ Ահա այդ ժամանակաշրջանից սկսած հայերեն գրական լեզուն, տնենարով զարգացման բոլոր նախադրյալները, արագ տեմպերով առաջ է ընթանում։

Արևելահայ գրական լեզվի ձեռք բերած հասարակական նոր ֆունկցիաները, և հատկապես պետական լեզվի ֆունկցիան, մեծ չափով նպաստեցին գրական հայերենի ընդհանուր զարգացմանը։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո տեղի տնեցած սոցիալական մեծ տեղաշարժերի շնորհիվ գրական լեզվով խոսողների կազմը արմատապես փոփոխության ենթարկվեց և լայնացավ։ Գրական լեզվին տիրապետեց նախ և առաջ նոր մշտավորականությունը, որը ելել էր բանվորների ու գյուղացիների ժոցից։ Նոր սերունդը կրթվեց և դաստիարակվեց սոցիալական նոր պայմաններում։ Քաղաքի և գյուղի կապը զնալով ավելի սերտացավ, և ժողովրդական լայն զանգվածները հաղորդակից եղան մեր երկրի մշակութային կյանքին։ Ուսումնական հաստատությունների լայն ցանցի տարածման, հանրապետության մինչև հեռավոր անկյունները հասնող թատրոնների, կինոյի, ռադիոյի, գեղարվեստական ասմունքի և հասարակական, կուլտուրական այլ միջոցառումների շնորհիվ գրական լեզուն և նրա ուղղախոսական կա-

⁴³ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 283։

Նոնները թափանցեցին ժողովրդական լայն զանգվածների մեջ, և աստիճանաբար հարթելով և դուրս մղելով բարբառային արտասանական շատ առանձնահատկություններ:

Գրական լեզվին տիրապետողների սոցիալական բազայի ընդլայնման շնորհիվ այն լայնորեն թափանցում է և ընտանեկան շրջանը: (Այստեղ, անշուշտ, խոսքը գրական լեզվի խոսակցական տարբերակի մասին է):

Հայ իրականության մեջ գրական կենդանի խոսքի ավանդույթների անբավարարությունը հատկապես հիմք հանդիսացավ, որ նոր հասարակությունը հենց սկզբից մեծ չափով ապավինեյր գրքին: Սկզբնական շրջանում գրական արտասանության հիմնական ուղեցույցը մամուլը և հրատարակություններն էին: Հրապարակային, կենդանի խոսքը դրանց համեմատությամբ ավելի փոքր դեր ուներ: Նրանք, ովքեր յուրացնում էին գրական լեզուն, բարձիճիշտ արտասանության մասին շատ դեպքերում պետք է կոահիեր գրավոր աղբյուրներից, իսկ այդ պայմաններում, հասկանալի է, արտասանական նորմաները պետք է կրեին ուղղագրության աղբյուրությունը: Այսպիսով, հեղափոխության հաղթանակից հետո լեզվի առաջին ուսուցիչը դարձավ գիրքը, որը մեծապես նպաստեց գրային արտասանության արմատավորմանը և տարածմանը:

Այնուհետև առաջ եկան գրական լեզվի յուրացման այլ ուղիներ: Հանդես եկան ռադիոն, հնչյունային կինոն, որոնք գրական կենդանի խոսքի ունկնդրման և յուրացման գործում հսկայական դեր կատարեցին ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում:

Աստիճանաբար սկսեց փոքրանալ այն մեծ անջրպետը, որը սկզբնական շրջանում գոյություն ուներ գրական լեզվի և խոսակցականի միջև:

30-ական թվականներին և դրանից հետո արտասանական նորմաների հաստատման և միօրինակացման գործում մեծ նշանակություն ունեցավ միջնակարգ կրթության տարածումը:

Ուղղագրության մեջ 1922 թ. կատարված բարեփոխությունը և այնուհետև տեղի ունեցած փոփոխության կոմիտեի ընդունած որոշումները հաստատուն գրություն չունեցող բառերի ուղղագրությունը կայունացնելու մասին՝ նույնպես մեծապես նպաստեցին արտասանության կայունացմանը և բարելավմանը, գրության ու արտասանության մերձեցմանը:

Գրական լեզվի խոսակցական բազայի ընդլայնումը անհրաժեշտություն ստեղծեց ուղղախոսական նորմաների մշակման և կայունացման համար:

Հայ գրական լեզվի զարգացման սովետական փուլի 20—30-ական թվականները աչքի են ընկնում այնպիսի երևույթներով, որոնք պայմանավորված էին Հայաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական նոր իրադարձություններով, սովետական կարգերի հաստատման և ամրապնդման դժվարություններով: Եվ այդ է պատճառը, որ դրանք մի շարք դեպքերում կրում են ժամանակավոր բնույթ: Այդպիսի մի շարք երևույթներ վերացան երկրի ամրապնդման և ժողովրդի կոլտուրական մակարդակի բարձրացման հետ միասին: Դա հիմնականում վերաբերում է լեզվի մեջ նկատվող հեղհեղուկ, անկայուն վիճակին, գրական արտասանությունից կատարված շեղումներին, որոնք արդյունք էին առհասարակ լեզվի նկատմամբ եղած ոչ աշախույժ վերաբերմունքի և անուշադրության:

Այս ժամանակաշրջանում դեռևս բավականաչափ զգալի էր բարբառային արտասանության ազդեցությունը գրական արտասանության վրա:

Ահա թե ինչ է գրում 20-ական թվականներին ակադեմիկոս Գ. Ղափանցյանը այդ մասին. «Մեր բարբառները դեռ այնքան ուժեղ են, որ բոլոր «զպրոցականներին» վրա դնում են փրենց ուժեղ կնիքը արտասանության տեսակետից.... Ով կարող է ասել, որ, օրինակ, մենք բոլորս միակերպ ենք արտասանում դիցուք թե այսպիսի մի նախադասություն. ամեն անգամ ճորի մոռով անցնելիս մենք մեզ զգույշ ենք պահում կամ մենք գնալու յենք»⁴⁴:

Հայտնի է կիրառվում էին տվյալ բառի գրական արտասանությունը, բարբառայինը (երբեմն մի քանի տարատեսակներով) և քաղաքային հասարակաբանական արտասանական տարբերակը (հմմտ. այստեղ, էստեղ, ըստեղ, ըստե, ըստի, էստի, ստեղ, ստի, ստե, ստեն, իստեղ, ճոսդեղ և այլն):

Հեղափոխության առաջին տարիներին շատ անկայուն էր հատկապես փոխառյալ բառերի արտասանությունը (իսկ այդ տարիներին լեզվում, թե՛ բանավոր և թե՛ գրավոր, անհարկի կերպով օգտագործվում էին մեծ քանակությամբ օտար բառեր, որոնցից շատերի համարժեքները հայերենում վաղուց ի վեր կային): Օտար բառերը, որոնք մեծ մասամբ ռուսերենի միջոցով էին ներմուծվում, արտասանության մեջ գերակշիռ դեպքերում պահպանում

44 Գ. Ղափանցյան, Արդի հայերենի ուղղագրության խնդիրը, Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, էջ 64:

էին ուսական արտասանութիւնը, որին հարմարեցվում էր և ռուղագրութիւնը, ինչպես, 'օրինակ' կամուխստ, սավետական, դակումենտ, պրադուկցիա, խառս, պաֆոս, Վաղայանով, վագ-գալ, կատետ, իդեալոգիա, Նելսըն, պրաֆեսըր և այլն: Առհասարակ այս շրջանում չկային օտար բառերի տառադարձման միասնական սկզբունքներ. գրում և արտասանում էին նաև ֆրանսիական հնչմամբ: օրինակ՝ օրիփնալ, էվոլուսիոն, ֆաբրիկասիոն, օպորտունիստ, Արտյուր, ինչպես և՝ Պարիժ—Պարիզ—Բարիզ, Լագարդ—Լաֆարք և այլն:

20-ական թվականների դժվարութիւնները հնարավորութիւն չէին տալիս միանգամից ամուր հիմքերի վրա դնելու դպրոցական և մանկավարժական կրթութեան գործը: Մատաղ սերնդի գրական արտասանութեան և առհասարակ կրթութեան վրա հատկապէս վատ էր անդրադառնում որակյալ դասատուների պակասը: Անգրագիտութեան վերացման վարիքը ստիպում էր ուսուցչի պաշտոն տալ ճշդ կոշմանը անհամապատասխան անձանց, որոնք շունենալով անհրաժեշտ միջավայր և վարժված չլինելով գրական արտասանութեան, առաջնորդվում էին գրքով կամ ավելի ճիշտ գրային կամ տառային արտասանութեամբ, որին երբեմն միախառնվում էին և որևէ բարբառի առանձնահատկութիւնները:

Այնուհետև, հեղափոխութեան առաջին տարիներին, բացի որակյալ դասատուներից, զգացվում էր և անհրաժեշտ գրականութեան պակաս: Եթե նկատի ունենանք նաև այն, որ սկզբնական շրջանում անբավարար էր ռադիոյի, հնչուկային կինոյի և թատրոնի դերը, հասկանալի է, որ գրական արտասանութեան նորմաները մեծ չափով պետք է կրեին գրային արտասանութեան ազդեցութիւնը: Նրանք, որոնք յուրացնում էին գրական լեզուն, գրական արտասանութեան համար հենվում էին մեծ մասամբ ուղղագրութեան վրա, այսինքն գրական արտասանութեան յուրացումը գերազանցապէս կատարվում էր գրքի միջոցով: Հատկապէս բարբառախոսների համար, որոնք զուրկ էին գրական խոսքի ընտանեկան ավանդույթներից, գրային արտասանութիւնը դառնում է շատ բնորոշ:

Գրային արտասանութեան տարածման համար, բացի վերոհիշյալ հանգամանքներից, նշանակութիւն է ունեցել նաև հետևյալը:

Երբ 1922 թվին պետական որոշումով ուղղագրական բարեփոխութիւն կատարվեց, որով ուղղագրութիւնը զգալիորեն մոտեց-

վեց կենդանի հնչմանը, այս փաստը մյուս կողմից առաջ բերեց ընդհանուր ձգտում արտասանությունը մոտեցնելու ուղղագրությանը: Դա հետևյալ ձևով կատարվեց: Հայերենի ուղղագրական համակարգում կային այնպիսի տարրեր, ինչպես, ասենք՝ օ և ո, ե և է (բառամիջուկ), ճ և յ (բառասկզբում), լ, ու և վ, համար յ և ալլը, որոնց առկայությունը հայերենի արտասանության համարկարգով պատճառաբանված չէր, որոնք գոյություն ունեին միայն ավանդապահության հետևանքով: Այդպիսի տարրերով ընդգծվում էր գրության և արտասանության միջև եղած սահմանը: Դրանց հիման վրա կարող էին գրության և արտասանության մեջ եղած մի շարք այլ կարգի հակադրություններ դիտվել բնական: Այն ժամանակ, երբ ուղղագրությունը արտասանությանը մոտեցնելու նպատակով ուղղագրության մեջ կատարվեցին որոշ փոփոխություններ և միատեսակ արտասանության համար ընդունվեց միատեսակ ուղղագրություն (հմմտ. սէր և սեր, յիսուն և հայր, նսւեր և վայրկյան և ալլը), ապա ներքին ձգտում առաջացավ համապատասխանեցնելու կամ հաղթահարելու և այլ կարգի արտասանական դիրքային անհամապատասխանություններ, ինչպես՝ մարգագետին-գորգ, անգամ-հանգույց, հաջող-աշակցել, նվագել-հագենալ, Աղամ-ռադիո և ալլը: (Զուլգերի առաջին եզրերը արտասանվում էին շնչել խուլ հնչյուններով):

Ուղղագրության մոտեցումը կենդանի հնչմանը սովորաբար առաջ է բերում շարժում հակառակ ուղղությամբ, այսինքն՝ բնականորեն ձգտում է առաջանում արտասանությունը մոտեցնելու ուղղագրությանը: Եվ այդ միտումը, որ չէր հակասում լեզվի ներքին օրինաչափությանը, պարարտ հող է գտնում հայերենում⁴⁵:

40-ական թվականներին թեև լեզվաշինարարությամբ զբաղվելու շատ բարենպաստ պայմաններ ու հնարավորություններ չկային 1941 թ. սկսված Հայրենական պատերազմի և հետպատերազմյան տարիների դժվարությունների պատճառով, բայց և այնպես, այս ժամանակաշրջանում գրական լեզվի նորմավորման ուղղությամբ որոշ աշխատանք կատարվեց: Դա վերաբերում է տերմինաբանա-

⁴⁵ 30-ական թվականներին ոմանք տեսնելով գրային արտասանության տարածման ուժեղ միտումը, պայքար էին մղում գրա դեմ, ծայրահեղորեն պահանջելով ձայնիչների խլացման կանոնը կիրառել բոլոր համապատասխան բառերի վերաբերյալ, առանց որևէ բացառության: Այդ սկզբունքով, օրինակ, աղգասիֆ, աղբանյակ, աղգանդ բառերը պետք է արտասանվեին ար[բ]ասիֆ, ար[փ]անյակ, ար[բ]ան[թ]:

կան կոմիտեի մի շարք որոշումներին՝ 1939 թվից սկսած: Այդ որոշումներում տեղ էին գտել նաև օտար բառերի տառադարձությանը և ուղղախոսությանը վերաբերող մի շարք հարցեր:

1946 թվականից յոթնամյա պարտադիր կրթության մասին որոշման ընդունումը, իսկ այնուհետև միջնակարգ և բարձրագույն կրթության ցանցի ընդլայնումը ավելի մեծ հնարավորություններ ստեղծեցին գրական լեզվի տարածման համար քաղաքում և գյուղում: Գրական լեզվի տիրապետումը ավելի ու ավելի գիտակցական ու հիմնավոր է դառնում:

Հայոց լեզուն իր բոլոր կողմերով զգալի վերելք ապրեց 50-ական թվականներից սկսած: Նկատելի կերպով բարձրացավ նաև խոսքի կուլտուրան, ուղղախոսական-արտասանական շատ արատներ զգալիորեն նվազեցին:

Իհարկե, այս չի նշանակում, թե Հայաստանի ամբողջ բնակչությունը կատարելապես տիրապետում է գրական խոսքի նորմաներին: Մինչև հիմա էլ, և ոչ հազվադեպ, քաղաքի շատ բնակիչներից կարելի է լսել բարբառախառն գրական լեզուն, որտեղ միախառնված են բարբառի և գրական հայերենի տարրերը:

Ամենաբնորոշը հայոց լեզվի արտասանության մեջ ներկայումս զգալի թվով տարբերակների առկայությունն է: Եթե դրանց մի մասը, հաճախ գերակշիռ մասը, դուրս է գալիս գրական լեզվի շրջանակներից, իններով հասարակաբանության կամ բարբառի արտահայտություն, ապա հենց գրական լեզվի սահմաններում էլ դարձյալ շարունակում են գոյակցել բառի երկու, երբեմն և ավելի արտասանական սարբերակներ, որոնք արժանի են ուշադրության: Հմմտ. [զըրաբար]-[զըրափառ]-[զըրափար], [համալսարան]-[համալրսարան]-[համասարան], [յէրաժըշտություն]-[յէրաշտություն], [ըստույզ]-[ստույզ]-[ըսփօփէլ]-[սրփօփէլ], [խօրհուրդ]-[խօրուրդ]-[խօրհուրթ]-[խօրուրթ] և այլն:

Եթե այս կարգի բառերին գումարենք և այն բառերը, որոնք ունեն արտասանական զուգահեռ ձևեր՝ ձայնեղ և շնչեղ խուլ արտասանությամբ (օր.՝ մի[շ]ին-մի[չ]ին, ար[ձ]ակ-ար[ց]ակ, ներ[բ]ող-ներ[փ]ող և այլն), ապա դրանց թիվը հայերենի ուղղախոսության համար ներկայումս բավականաչափ զգալի կդառնա:

Պետք է հաշվի առնել և այն հանգամանքը, որ արտասանական մի շարք երևույթներ, հատկապես երկվություններ (թեկուզ և ոչ ցանկալի) մեր լեզվի զարգացման ժամանակակից փուլի համար օրինաչափական են: Այդ վիճակը պայմանավորված է հետևյալով:

Մի կողմից՝ ուղղախոսական մի շարք ավանդական կանոններ խախտվել են և միտում են ցուցաբերում վերանայու, մյուս կողմից՝ երևան են եկել արտասանական նոր առանձնահատկություններ, որոնք դեռևս որոշակիորեն չեն ձևավորվել և կայունացել: Իհարկե, այդ կարգի տեղաշարժեր լեզվում առհասարակ միշտ էլ տեղի են ունենում, որոնցով և պայմանավորված է լեզուների, մասնավորապես հնչյունային համակարգի զարգացումը, բայց հայերենի համար այդպիսի վիճակը առանձնապես բնորոշ է:

20-ական թվականներից հետո հայերենի արտասանական համակարգի զարգացումը ընթացել է հետևյալ ուղղություններով:

1. Գրական արտասանության մեջ դիտվող մի շարք անկանոնությունների և տարընթացությունների վերացում, արտասանության կայունացում և միօրինակացում:

2. Մայրենի բարբառի և արտասանական նեղ, տեղային առանձնահատկությունների նվազում:

3. Գրային (կամ գրջային) արտասանության ծավալում:

4. Արտասանական նոր առանձնահատկությունների առաջացում:

ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ուղղագրության և ուղղախոսության կապը անժխտելի է: Կանոնավոր, միօրինակ, կայուն ուղղագրությունը առաջին գրավականն է կայուն ուղղախոսության:

Հատկապես կարևորություն է ստանում ուղղախոսության և ուղղագրության փոխհարաբերության հարցը համընդհանուր գրագիտության և մշակույթի զարգացման ժամանակաշրջանում: Այդ պատճառով գրական լեզվի և նրա արտասանության նորմաների մասին խոսելիս՝ չի կարելի անտեսել գրի կամ ուղղագրության հարցը, որի հետ սերտորեն առնչվում են գրական լեզվի նորմաները:

Հայերենում ուղղագրության հարցերը առանձնահատուկ նշանակություն են ստանում դարիս սկզբներին՝ ուղղագրության մեջ առաջացած չափազանց հեղհեղուկ, անկայուն վիճակի պատճառով: Աշխարհաբար գրական լեզուն, մի կողմից՝ ժառանգելով գրաբարի ուղղագրությունը, մյուս կողմից՝ իր նոր պահանջներն էր առաջադրում: Այդ պատճառով աշխարհաբար գրական լեզվի ուղղագրության մեջ ստեղծվել էին չափազանց մեծ դժվարություններ:

Սովետական իշխանության առաջին տարիներին ուղղագրության միօրինակացումը և պարզեցումը դարձել էր կենսական հարց։ Այդ պատճառով 1922 թ. մարտի 4-ին Հայաստանի Ժողովուրդի Մ. Աբեղյանի կազմած ժրագրի հիման վրա որոշում ընդունեց հայերենի ուղղագրության բարեփոխության մասին, որով ուղղագրությունը զգալիորեն մոտեցվեց արտասանությանը։

Հայերենի ուղղագրությունը ունեցել է իր որոշակի կանոնները, որոնք կիրառվել են 5-րդ դարից սկսած, բայց արդեն գրաբարյան հին ձեռագրերում երևան են գալիս արտասանության փոփոխությամբ պայմանավորված միևնույն բառի երկու և ավելի գրություններ։

Արտասանության փոփոխության պատճառ էին հանդիսանում հնչյունների փոխազդեցական զանազան երևույթները՝ առնմանումը, տարնմանումը, դրափոխությունը, ինչպես և համաբանությունը, հնչյունների անկումը և հավելումը, բարբառների և այլ լեզուների ազդեցությունները, պատմական հնչյունափոխությունը և այլն։ Կենդանի խոսքում առաջացած բառերի արտասանական տարբերությունները շատ դեպքերում իրենց արտացոլումն էին գտնում և գրավոր լեզվում, որն արտահայտվում էր ավանդական գրության կողքին արտասանությամբ պայմանավորված ուղղագրական նոր տարբերակի առաջացմամբ։ Տեղի էր ունենում ուղղագրական հարմարակում, այսինքն՝ բառի գրությունը հարմարվում էր արտասանությանը։

Արտասանության վրա հիմնված ուղղագրական շատ տարբերակներ առաջացել էին և և մ ձայնորդներից հետո խուլ հնչյունների (պ, տ, կ, ծ, ճ) ձայնեղ (բ, դ, գ, ձ, ջ) արտասանության պատճառով։ Այս փոփոխությունը ըստ երևույթին պայմանավորված է առնմանական ազդեցությամբ, ըստ որի ձայնորդի կողքին գտնվելով՝ խուլները ենթարկվել են ձայնեղացման։ Այդպիսի բառերը 19-րդ դարի վերջերին հայերենում բավականին մեծ թիվ էին կազմում, մտնելով նաև բառարանների մեջ։ Ահա դրանց մի մասը՝ ամպարիշտ-ամբարիշտ, ամպար-ամբար, լամպար-լամբար, անկուշել-անգուշել, անկղ-անգղ, անկոսնել-անգոսնել, զանկված-զանգված, զանկ-զանգ, զանկակ-զանգակ, զանկ-զանգ, դանկ-դանգ, թանկ-թանգ, թանկագին-թանգագին-թանգարան, ժանկ-ժանգ, կանկառ-կանգառ, ճանկ-ճանգ, խորամանկ-խորամանգ, վանկ-վանգ, ցանկ-ցանգ, խունկ-խունգ, ծունկ-ծունգ, կնկուղ-կնգուղ, բանտ-բանգ, ժանտ-ժանգ, ընտել-ընդել, կունտ-կունգ, ընտերք-ընդերք, ընտո-

ծին-ընդոծին, ընտակեր-ընդակեր, սանտր-սանդր, խնծոր-խնծոր, խանծել-խանծել, կոնծել-կոնծել, հնծան-հնծան, ընծյուղել-ընծյուղել, կունծ-կունծ, խնծույթ-խնջույթ, խոնճան-խոնջան, կինճ-կինջ, խոնճանալ-խոնջանալ և այլն⁴⁶:

Նշված տիպի բառերում ձայնեղացած արտասանության առաջացումը չէր հակասում հայերենի հնչյունական համակարգին, քանի որ լեզվում արդեն իսկ գոյություն ունեւ համապատասխան դրութային արտասանություն, այսինքն՝ հին հայերենի համար ն, մ ձայնորդներից հետո ձայնեղ արտասանությունը սովորական էր, ինչպես՝ ամբոխ, անդունդ, զանգատ, բրինձ, տանձ և այլն:

Ձայնորդներին հաջորդող խուլերի ձայնեղ արտասանությունը, որն ընդգրկում էր բոլոր համապատասխան բառերը, վաղուց ի վեր սկսված պրոցես էր և կրում էր համընդհանուր բնույթ, այսինքն՝ հանդես էր գալիս որպես ընդհանրական հնչյունափոխություն: Սակայն միջին դարերից սկսած հակառակ երևույթն է դիտվում: Մի շարք բառեր, որոնք նախապես գրվում և արտասանվում էին ձայնեղ հնչյուններով, ինչպես՝ զանգատ, խխունջ, տենդ, կորեզան, գունդ, բարդի և այլն, սկսում են արտասանվել (նաև՝ գրվել) խուլ՝ զանկատ, խխունն, տենտ, կորեկան, գունտ, բարտի: 20-րդ դարի առաջին քառորդում այս կարգի բառերը շունեին միակերպ արտասանություն, այսինքն՝ արտասանվում էին, օրինակ, ընկեւ և ընգեւ, ընկնել և ընգնել, ընդ որում տարածված էր ավելի շատ ձայնեղ արտասանությունը:

Մինչև 20-րդ դարի 30-ական թվականները, այսինքն՝ մինչև նոր ուղղագրության կայունացումը, ձայնեղ և խուլ պայթականներն ու կիսապայթականները ն, մ ռնգայիններից հետո շատ դեպքերում կայուն գրություն չունեին և անկանոն կերպով գրվում էին մեկը մյուսի փոխարեն:

Բազմաթիվ պատճառներով արտասանության մեջ առաջացած փոփոխություններն իրենց արտացոլումն էին գտնում ուղղագրական տարբերակներում, որոնք մի կողմից՝ նպաստում էին նոր արտասանության արմատավորմանը, մյուս կողմից՝ հեռված լինելով հնչման վրա, այնուհետև դուրս էին մղում արտասանությանը չհամապատասխանող գրությունները: Այսպես՝ քազուն նախնական ձևի փոխարեն առաջ եկավ նոր արտասանությու-

⁴⁶ Այս և հաջորդ օրինակները վերցված են Մ. Արեղյանի «Հայոց լեզվի ուղղագրությունը» աշխատությունից:

նր արտահայտող թափուն գրության ձևը, որը հետագայում դուրս
մղեց ավանդական գրությունը: Կմախ, բուղալ, ագաղաղ նախ-
նական ձևերը փոխարինվեցին կմախ, բուխալ, ագաղաղ՝ արտա-
սանության վրա հիմնված ուղղագրական նոր ձևերով: Սաճառ
բառը, որը գրվում էր նաև սաճառ, սկսվեց արտասանվել սաճո՝
ծաճո, մաճո բառերի համաթանությամբ, որոնք դ հնչյունի հա-
վելումով բարբառներում ունեին ծաճառ, մաճառ ձևերը: Այս դեպ-
քում ևս ուղղագրութունը հարմարվեց արտասանությանը: Բառա-
վորի պայթականից առաջ մի շարք դեպքերում ավելացած է
հնչյունը (օր.՝ արտասուք-արտասունք և այնուհետև՝ արցունք, ար-
մելին-արմունկ, խորուկ-խորունկ, սրտաց-սրտանց և այլն) ուղ-
ղագրության մեջ արմատավորվելով, այնուհետև քաղաքացիական
իրավունք տվեց նոր արտասանությանը:

Արտասանության վրա հիմնված ուղղագրական հարմարակ-
ման արդյունք է ձգել բառից դրափոխությամբ առաջացած զցել
ձևը, որն սկսեց արտասանվել, ինչպես և գոյել՝ ֆցել, բայց բանի
որ բառակցքի ձայնեղի խլացումը գրական լեզվին հատուկ չէր,
ուստի ընդունվեց զցել ձևը (հմմտ. գգալ-քթալ, բրդել-փրթել):

Արտասանությամբ պայմանավորված՝ սեփական բառի փ-ով
գրությունը 20-րդ դարի սկզբներից դուրս է մղում նախնական
սեպհական ձևը: Քննույլ բառը մի շարք բառերի համաթանությամբ
(զգույլ, անույլ, աշխույժ և այլն)՝ ըստ արտասանության գրվեց
նաև քննույլ, որը թեև բավականաչափ տարածվեց, բայց այնու-
հետև դուրս մղվեց:

Ուղղագրական հարմարակման հետևանքով երբեմն միևնույն
արմատը տարբեր բառերում կարող է ունենալ տարբեր գրություն-
ներ: Օրինակ, թանկ և թանկագին բառերի կողքին, որոնք նախա-
պես ըստ արտասանության գրվում էին նաև թանգ և թանգագին.
պահպանվեց և արմատավորվեց արտասանությանը համապատաս-
խանող թանգաբան ձևը:

Մ, և ձայնորդներից հետո ձայնեղ կամ խուլ հնչյուններն ար-
տահայտող տառերը գրելու հարցում միասնական սկզբունք չկի-
րառվեց, որը մասամբ պայմանավորված էր հենց արտասանության
երկվությամբ: Այս կարգի բառերի մեծ մասում ընդունվեց ավան-
դական ուղղագրութունը. ինչպես՝ ծունկ, ցանկ, խունկ, սունկ.
տունկ, ժանտ, խորամանկ, վանկ, թանկ, հանկ, հանն, ամպ,
ամպրոպ, ցանկանալ, ընկեր, ընկենլ, ընկնել, ընկեցիկ, ցնծալ.
անկողին, անկյուն, ըմպել, պանծալ, ծանծաղ, ընկույզ, հանճար.

ընծա, ընտանի, ընկրկել, ընկղմել, ընտիր, անտառ, տնկել, մանկ-
լավիկ, որոնցից միայն մի քանիսը հաղվադեպ գրվում էին նաև
ձայնեղ հնչյունն արտահայտող տառով (անգողին, պանծալ, ըն-
գույզ, ընծա, ընդանիք, բմբել, մանգլավիկ): Արտասանությունը
այնուհետև հարմարվեց գրությունը: Տեղի ունեցավ արտասանա-
կան հարմարակում: Մի խումբ բառերում ընդունվեց ձայնեղա-
ցած ձևը, ինչպես՝ գանգ, ընդերք, գունդ, ժանգ, խնձոր, անգղ,
կնգուղ և այլն:

20-րդ դարի 30-ական թվականներից, հատկապես այն բանից
հետո, երբ վերացվեցին գրության զուգահեռ ձևերը, այս տիպի բա-
ռերի արտասանությունը աստիճանաբար կանոնավորվեց և կայո՞-
նացավ, այսինքն՝ արտասանական նորմայի համար հիմք ծառա-
յեց ուղղագրությունը: Ներկայումս, բացառությամբ ժողովրդախո-
սակցական լեզվում հանդես եկող մի քանի դրսևորումների (օր.
ճանճ-ճան[ջ], ամպ-ամ[բ], ընկեր-ըն[գ]եր և այլն), այդ տար-
ընթացությունը հիմնովին վերացած է: Յանկ, վանկ, տունկ, ան-
տառ, սունկ, պանծալի, ըմպել, ընկույզ և այլն որոշակիորեն և
հաստատուն կերպով արտասանվում են խուլ և մյուս կողմից՝
գանգ, ընդերք, գունդ, ժանգ, խնձոր, անգղ, կնգուղ և այլն նույն-
պիսի որոշակիությամբ արտասանվում են ձայնեղ հնչյուններով,
այսինքն՝ երկու դեպքում էլ արտասանության համար ելակետ է
հանդիսանում բառերի գրությունը:

Ուղղագրական հարմարակման արդյունք էին նաև 19-րդ դա-
րի կեսերին և 20-րդ դարի սկզբներին երևան եկած նվագ, ավագ,
ընծա, Հակոբ, յոթ, բույս, ինչպես նաև՝ դուռ, սեվ, գրեց և այլ
գրության ձևերը (նուագ, աւագ, ընծայ, Յակոբ, եոթ, բոյս, դուռն,
սեավ, գրեաց ավանդական գրությունների կողքին), որոնք արտա-
ցույցում էին արտասանության մեջ առաջացած փոփոխությունը:
1922 թ. ուղղագրական բարեփոխությամբ ուղղագրական տարրն-
թացություններից շատերը միօրինակացվեցին հօգուտ արտասա-
նության:

Ինչ վերաբերում է համապատասխան դիրքերում ձայնեղ բ,
գ, դ, ձ, ջ հնչյունների շնչեղ խուլ արտասանությանը, ապա այս-
պիսի արտասանությունն արտացոլող ուղղագրական տարբերակ-
ները գրականության մեջ խիստ սակավաթիվ էին, ինչպես՝ հեզ-
հեք, թագուն-թափուն, թակարդ-թակարթ, փափագ-փափաֆ: Այս
փաստը ենթադրել է տալիս, որ ձայնեղ բաղաձայնների անձայ-

նացման երևույթը, հակառակ խուլերի ձայնեղացման, ուշ ժամանակների արդյունք է և ավելի կարճատև զարգացում է ունեցել, այդ պատճառով ունի ավելի սահմանափակ ընդգրկում: Այս երեւույթը հատուկ լինելով բարբառներին և ժողովրդախոսակցական լեզվին, այդտեղից էլ մուտք է գործել հայ ազգային գրական լեզվի մեջ և այդ պատճառով տարածվում է մեծ մասամբ ժողովրդագրական բառերի վրա, չխախտելով ավանդաբար մեզ հասած այդ տիպի բառերի ուղղագրական կանոնները:

Այսպիսով, ուղղագրության և արտասանության փոխհարաբերության մեջ կարելի է դիտել երկու իրար հակադիր պրոցես կամ օրինաչափություն: Մի դեպքում՝ արտասանության փոփոխության պատճառով գրությունը հարմարվել է արտասանությանը, այսինքն՝ տեղի է ունեցել ուղղագրական հարմարակում, որն արտահայտվել է ավանդական գրության կողքին՝ արտասանության վրա հիմնված ուղղագրական նոր տարբերակի առաջացմամբ և զուգահեռ գործածությամբ⁴⁷: Նոր առաջացած ձևերը մի շարք դեպքերում դուրս են մղում արտասանությանը այլևս չհամապատասխանող ավանդական գրությունը: Գրության երկվությունները և հեղհեղուկությունը հիմք և հենարան են հանդիսանում արտասանական երկվության համար, մի վիճակ, որն առանձնապես բնորոշ է 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Ուղղագրական հարմարակման փաստերը սկիզբ են առնում դեռևս հայերենի վաղ շրջանից և մեծ չափերի են հասնում դարիս սկզբներին:

Մյուս պրոցեսը, որը հակադիր է առաջինին, հատուկ է նոր ժամանակներին, հայոց լեզվի զարգացման վերջին փուլին և պայմանավորված է ուղղագրության կայունացմամբ ու նորմավորմամբ: Երբ ուղղագրական տարբերակներից մեկը համարվում է կանոնական և մյուսը դուրս մղվում, աստիճանաբար կայունանում է և արտասանությունը, այսինքն՝ արտասանությունը հարմարվում է գրությանը. տեղի է ունենում արտասանական հարմարակում:

Համատարած գրագիտության նոր ժամանակաշրջանում, երբ ուղղագրությունը խստորեն նորմավորված է, պարտադիր՝ հասարակության բոլոր անդամների համար, և ուղղագրական կանոնների խախտումը դիտվում է անգիտություն, գրեթե ուղիներ չկան

⁴⁷ Այսպիսի՝ արտասանությանը հարմարվող գրությունը Այտընյանը անվանում էր «հարմարագրություն» (նշվ. աշխ., էջ 283):

արտասանության վրա հիմնված ուղղագրական նոր տարբերակների առաջացման համար, և ոչ էլ հող կա դրա համար, քանի որ ավանդական արտասանության մեջ առաջացած փոփոխություններն ընթանում են ուղղագրությանը մերձենալու ճանապարհով:

Հայերենի ուղղագրությունը հիմնականում հնչյունական է, որը նպաստում է գրական արտասանության կայունացմանը: Հնչյունական գրությունը ոչ միայն ազդում է արտասանության վրա, այլև գրական լեզուն զգալի չափով զերծ է պահում բարբառների և անհաստների հնչյունական ազդեցություններից:

Գրական արտասանությունը գրագետ մարդկանց արտասանությունն է: Գրագետ մարդկանց գիտակցության մեջ կա գրահնչյունական զուգորդություն, որը համընդհանուր գրագիտության պայմաններում նախադրյալ է հանդիսանում գրային արտասանության տարածման համար:

Գրական լեզուների պատմությունից վերցված փաստերը ցույց են տալիս, որ մի շարք երկրների տարբեր մասերում սկիզբ է առնում և լայն տարածում է ստանում այն արտասանությունը, որը հենվում է ուղղագրության վրա, հակասելով գրական արտասանության ավանդական նորմաներին:

Դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած, մի շարք ռուս լեզվաբաններ, դրանց թվում Բոգորոդիցկին, Շախմատովը, սովետական լեզվաբաններից Վ. Վ. Վինոգրադովը, Լ. Վ. Շչերբան, Վ. Մ. Ժիրմունսկին, Ռ. Ի. Ավանեսովը, Ս. Ի. Օժեգովը և ուրիշներ, օրինաչափական են համարում գրական լեզվի արտասանության՝ գրության վրա հենվելու միտումը:

Մի շարք գրական լեզուների, դրանց թվում ռուսերենի և հայերենի գրական արտասանության մեջ դիտվող տեղաշարժերը զարգացման ներկա փուլում մեծ մասամբ պայմանավորված են գրության ազդեցությամբ: Որոշ դեպքերում, եթե գրությունը արտասանական տվյալ տեղաշարժի առաջացման միակ աղբյուրը կամ գործոնը չէ, ապա բոլոր դեպքերում լրացուցիչ կամ նպաստող գործոն է⁴⁸:

⁴⁸ Грамматика русского языка, т. I, Фонетика и морфология, М., 1960, §. 72:

**ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԳԾԵՐԸ 19-ՐԴ
ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶՐԵՆԵՐԻՆ ԵՎ
ՀԵՏԱԳԱ. ԶԱՐԳԱՑՈՒՄԸ⁴⁹**

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայերենի գրական արտասանական նորմաները թեև հիմնական գծերով ձևավորված էին, բայց դեռևս չկար գրական միասնական արտասանություն, գրական արտասանությունը հեղհեղուկ վիճակում էր՝ ուժեղ կերպով ենթարկված բարբառի ազդեցությանը, որի հետևանքով լեզվում խիստ զգալի էին արտասանական տատանումները:

Որո՞նք էին այս ժամանակաշրջանի ուղղախոսության հատկանշական գծերը, և զարգացման ի՞նչ ընթացք ունեցավ գրական արտասանությունը 20-ական թվականներին հետո:

1. Թեև ձայնավորները մեծ մասամբ ունեին քմայնացումից և երկբարբառային արտասանությունից զերծ հնչում, բայց և այնպես զգալի էին նաև Արարատյան բարբառի մի շարք խոսվածքների ուժեղ ազդեցությամբ պայմանավորված երկբարբառային հնչումները: Դրանք լիովին վերացան, և գրական լեզվում կայունացավ ձայնավորների մաքուր, երկբարբառային հնչումից միանգամայն զերծ արտասանությունը:

2. Մի շարք երկբարբառների գրաբարյան ավանդական արտասանության կողքին (օր.՝ լույս, ֆույր, թույլ, գալլ, մայր, հայր, ալյուր, նյուն, հաբյուր) ակնհայտ էր և բարբառային՝ պարզված ձայնավորով արտասանությունը (լուս, ֆուր, թուլ, գել, մեր, հեւ, ալուր, ծուն, հաբուր), որն աստիճանաբար իր տեղը զիջեց երկհնչյունային հնչմանը:

3. Մի խումբ բառեր, ինչպես՝ զգույշ, աճույշ, ույծ, աշխույծ, գույծ, բույթ, վիրաբույծ, նկույթ, բույն, ճյուղ, կապույտ, սառույց արտասանվում էին առանց յ-ի, որն արտահայտվում էր ուղղագրության մեջ⁵⁰:

⁴⁹ Այս շրջանի արտասանական առանձնահատկությունների նկարագրման համար հենվել ենք հայոց լեզվին նվիրված ուսումնասիրություններում, դասագրքերում, ինչպես և ուղղագրական բառարաններում տեղ գտած արտասանության նկարագրությունների և առանձին դիտողությունների վրա:

⁵⁰ 1930 թ. Նրեանում լույս տեսած ուղղագրական մի բառարանում (Նշ. Ալլան-վերդյան, Նոր ուղղագրական բառարան) հանձնարարվում էր գրել սառույց, նկուր, գուծ, ճուղ, բուն, աշխուծ, վիրաբուծ և ու՝ սառույց, նկույթ, գույծ, ճյուղ,

Նշված բառերից մի քանիսում՝ ուժ, բուք, անուշ, պահպան-վեց և արմատավորվեց ժողովրդական արտասանությունը, որն օրինականացվեց գրությունում և ընդունվեց որպես արտասանական նորմա: Մյուսներում հիմք ընդունվեց ավանդական գրությունը, իսկ նոր առաջացած առանց յ-ի ուղղագրական ձևերը դուրս մղվեցին. արտասանությունը այնուհետև հարմարվեց գրությանը:

4. Վերացան այն երկվություններն ու տարբերացությունները, որոնք գոյություն ունեին գրաբարյան եւ երկբարբառն ունեցող բառերի արտասանության մեջ: Դրանք երևան էին գալիս մերթ ժողովրդական լեզվի ազդեցությամբ՝ երկբարբառի պարզված հընչումը պահպանելու (հմմտ. ցորեան-ցորեն, վառեակ-վառեկ, սեավ-սև, լեառ-լեռ), մերթ գրաբարյան եա-յա արտասանությունը ընդունելու պատճառով (հմմտ. մատեան-մատյան, դդեակ-դդյակ, տենեակ-տենյակ և այլն): Որոշակիորեն կայունացավ որոշ բառերում ե և որոշ բառերում (մեծ մասամբ գրաբարյան փոխառություններ) յա հնչումը: Դեռևս 30-ական թվականներին շատ տարածված էր լեռդ հնչումը (նաև՝ գրությունը)⁵¹, որը տեղի տվեց լյարդ ձևին:

5. Անհետևորդականություն և երկվություններ կային գրաբարյան իւ երկբարբառն ունեցող մի շարք բառերի (մեծ մասամբ հունական փոխառությունների արտասանության մեջ, որը պայմանավորված էր նաև երկակի գրությամբ, ինչպես՝ կյուրակի-կիրակի, հյուպատոս-հիպատոս, լաբյուրինթոս-լաբիրինթոս, Փյունի-կիա-Փինիկիա, շափյուղա-շափիղա, Մյութոս-Միթոս և այլն: Նըշված զուգահեռություններից ընդունվեց և արմատավորվեց այն ձևը, որն ավելի տարածված էր (կիրակի, հյուպատոս, լաբիրինթոս, Փյունիկիա, շափյուղա, Մյութոս):

6. Իա, իե, իա, իու ձայնավորական զուգորդումներով կազմված բառերում նշված ձայնավորները կարող էին արտասանվել որպես յա, յե, յո, յու և՝ իյա, իյե, իյո, իյու, ինչպես՝ [մի]յանալ և մ[յ]անալ, մի[յ]ություն և մ[յ]ություն, թի[յ]ավարել և թ[յ]ավարել, ձի[յ]ով և ձ[յ]ով, Գաբրի[յ]ել և Գաբր[յ]ել և այլն: Այսպիսի զուգահեռ արտասանության գոյությունը հաստատվում է և այն փաստով, որ չափածոյում դրանք հաշվվում էին մի

բայն աշխույժ, վիրաբույժ, ելնելով ժամանակի տարածված արտասանությունից, ինչպես որ նշում է ինքը՝ հեղինակը (էջ 28): Տե՛ս նաև Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 113:

⁵¹ Նշ. Ալլահվերդյան, նշվ. բառարանը:

վանկով ավելի կամ պակաս (հմմտ. մի-յա-նալ և մյա-նալ և ալլն)⁵²։ Գրական արտասանության մեջ կայունացավ այս տիպի բառերի ձայնակապով արտասանությունը։

7. Բաղաձայնները բառասկզբում մեծ մասամբ արտասանվում էին ըստ գրաբարի ավանդական արտասանության, ձայնեղները՝ ձայնեղ, խուլները՝ խուլ, օրինակ՝ բերան, դուռ, գառի, ջուր, ձավար, պանիր, տուն, կրակ, փակել, թոֆ, նահիճ, ծիրան և ալլն։ Բառասկզբի ձայնեղների խուլ արտասանությունը, ինչպես՝ պերան, տուռ և ալլն, որ մասնակիորեն դրսևորվում էր բարբառի ազդեցությամբ, դիտվում էր որպես շեղում գրական արտասանությունից⁵³։

8. Մեծ չափով տարածված էր մի խումբ բառերի բառասկզբի ձայնեղների շնչեղ խուլ արտասանությունը, ինչպես՝ գոնել-ֆրքնել, գցել-ֆցել, գղալ-ֆթալ, բրդել-փրքել, գղակ-ֆթակ, գոնեֆոնե և ալլն, որն իր արտացոլումն էր գտել նաև ուղղագրության մեջ։ Այն բանից հետո, երբ ընդունվեց ավանդական ուղղագրության վրա հենվող գրության մեկ ձև, միօրինակ դարձավ և գրական արտասանությունը։

9. Բառամիջում և բառավերջում ձայնեղ բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնները ձայնավորներից, ալ, ուլ (ոյ) երկհնչյուններից և ւ, դ, երբեմն նաև մ, ն ձայնորդներից հետո սովորաբար արտասանվում էին փ, ֆ, ք, ց, չ, օրինակ՝ որք, ծագել, հոգի, մարդ, փորձ, աղջիկ, արջ, համբերել, անգամ, կենդանի, անդամ, Ադամ, մաղձ, օձ, օղ, ալգի, զուլգ և ալլն⁵⁴։ Նույն դիրքում նշված ձայնեղները կարող էին արտասանվել նաև խուլ՝ պ, կ, տ, ծ, ճ, ինչպես՝ աղջիկախնիկ, դաղձ-դախձ, ամթողջ-ամթոխն⁵⁵։

Հնչյունական փոփոխությունների այսպիսի բնութագրումը Աբեղյանի կողմից միանգամայն հասկանալի է տվյալ ժամանակաշրջանում մեր լեզվում տիրող բարբառների ուժեղ ազդեցության, արտասանական խայտաբղետության և միասնական արտասանության բացակայության պայմաններում։ Արդեն «Հայոց լեզվի տեսության» մեջ Աբեղյանը որոշ սահմանափակում է մտքը-

52 Նշ. Ալլանկերդյան, նշվ. բառարանը, էջ 29։ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 119։ Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 46։

53 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը, էջ 16։

54 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 102։

55 Նույն տեղում, էջ 103։

նում կանոնում, բացառելով վերոհիշյալ ձայնեղների փոփոխության ալ, ույ երկհնչյուններից հետո գտնվելու դիրքը, իսկ ձայնեղների խուլ (ալ, կ, տ, ծ, ց) արտասանության մասին հիշատակվում է անորոշ կերպով⁵⁶:

Հայտնի է, որ այս կանոնին մեծ մասամբ ենթարկվել են այն բառերը, որոնք գործածական էին Արարատյան բարբառում և որոնց կենդանի, ժողովրդական հնչումը նոր գրական լեզվում ընդունվել է որպես արտասանական նորմա: Թեև ժամանակի «դպրոցականները» ձգտել են այդ կանոնին ենթարկել գրեթե բոլոր համապատասխան բառերը առանց վերապահության, սակայն հայտնի է, որ գրաբարյան շատ փոխառություններ չեն ենթարկվում այդ կանոնին:

Առհասարակ պետք է նշել, որ ձայնեղ պայթականների և կիսապայթականների՝ շնչեղ խուլների վերածվելու օրենքը համապարփակ չի եղել, քանի որ հնչյունների այս կարգի փոփոխությունները իրենց ավարտին չհասնելով վերադարձ են կատարել դեպի նախնական արտասանությունը: Այս հանգամանքը բավականաչափ դժվարացնում է հարցի պատմական քննությունը և արտասանության մեջ առաջացած փոփոխությունների մանրամասն նրկարագրությունը, քանի որ վերոհիշյալ կանոնը նկարագրողները սովորաբար բերել են մի քանի օրինակներ միայն, մինչդեռ նույն կարգի շատ բառեր, ինչպես նշեցինք, պահպանում են գրային հնչումը:

Ինչ վերաբերում է նշված դիրքերում Բ, Գ, Դ, ձ, ջ ձայնեղների՝ ալ, կ, տ, ծ, ց արտասանությանը և ալ, ույ (ոյ) երկհնչյուններից հետո ձայնեղների շնչեղ խուլ և խուլ արտասանությանը, ինչպես նկարագրում է Աբեղյանը, ապա կարելի է վստահորեն ասել, որ դա ներկայումս գրական լեզվում լիովին վերացած է (թերևս միայն զույգ բառում ույ-ից հետո Գ-ն արտասանվում է Գ):

Բ, Գ, Դ, ձ, ջ ձայնեղների մի շարք դիրքերում ունեցած շնչեղ խուլ արտասանությունը, որը ներկայացվում էր որպես արտասանական նորմա (որոշ բացառություններով) 20-ական թվականներից հետո աստիճանաբար նվազեց, և ներկայումս այդ փոփոխությունը մի շարք դեպքերում բնութագրվում է սակավաթիվ օրինակներով:

10. Անկայուն էր եռաստիճան և երկաստիճան բաղաձայնե-

⁵⁶ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 102, 104:

րի (բ-պ-փ, գ-կ-ֆ, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ, ղ-խ, ր-ռ, զ-ս և այլն) արտասանությունը, որոնք շատ դեպքերում գրվում և արտասանվում էին մեկը մյուսի փոխարեն: Օրինակ՝ դաբնի-դափնի, թագուն-թափուն, ազաղաղ-ափաղաղ, անհեքեք-անհեղեղ, ամպիոն-ամբիոն, ելակ-ելագ, հաջել-հաշել, գտակ-գդակ, բակ-բագ, բարդի-բարթի, գինձ-ֆինձ, դոդոշ-թոթոշ, բաղդ-բախտ, գծուծ-գձուձ, բջիջ-բեին, թուխպ-թուլպ, կարկաշ-կարկաշ, բոխի-բողի, ձմեռային-ձմեռային, գրաբար-գրաբառ, ձագաբ-ձագառ, աշխարհաբար-աշխարհաբառ, ամառանոց-ամառանոց, պզտիկ-պստիկ, քարտեզ-քարտես և այլն⁵⁷:

Արտասանական այս տարբերությունները վերացան, երբ ընդունվեց այս կարգի տարբերակներից միայն մեկը, որը և հիմք հանդիսացավ միասնական արտասանության համար:

11. Ն, մ, երբեմն նաև Ե ձայնորդներից հետո խուլ պ, տ, կ, ծ, և հնչյունները մեծ մասամբ արտասանվում էին ձայնեղ ք, գ, դ, ձ, ջ, որը դասագրքերում ներկայացվում էր որպես արտասանական կանոն⁵⁸: Պետք է ասել, որ այդպիսի բառերը հայերենում բավականին շատ էին և շատ դեպքերում հանդես էին գալիս ուղղագրական երկգրություններով: Օրինակ՝ ըմպել-ըմբել, վանկ-վանգ, անկողին-անգողին, ընտելանալ-ընդելանալ, անկյուն-անգյուն, անտառ-անդառ, բանտարկել-բանդարգել, երկար-երգար, երկիր-երգիր, հարկավոր-հարգավոր և այլն⁵⁹:

Այդ կարգի ուղղագրական բազմաթիվ տարբերակների կարելի է հանդիպել ժամանակի բոլոր բառարաններում, ինչպես և Ստ. Մալխասյանցի բառահատոր «Հայերեն բացատրական բառարան»-ում (1944—1945):

Նշ. Ալլահվերդյանի ուղղագրական բառարանում ուղղակիորեն ասված է, որ այդ շրջանում նշված դիրքերում ավելի շատ ընդունված էր պ, կ, տ, ծ, և խուլերի ձայնեղ արտասանությունը, ինչպես՝ անընդել, բանդ, խնջույք և այլն⁶⁰: Դա նշանակում է, որ

⁵⁷ Ոմանք կարող են մտածել, որ սրանք սոսկ ուղղագրական տարբերակներ են և արտասանության հետ կապ չունեն: Մինչդեռ իրողությունն այն է, որ այս կարգի ուղղագրական տարբերակները արտացոլում էին և ժամանակի արտասանական տարբերությունները:

⁵⁸ ՏԷՄ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 104: Հ. Պետրոսյան, Հայոց լեզվի գործնական քերականություն, էջ 13:

⁵⁹ Ա. Աբեղյան, Ուղղագրական բառգրքույկ, Թիֆլիս, 1909:

⁶⁰ Նշ. Ալլահվերդյան, նշվ. բառարանը, էջ 27:

պ, կ, տ, ծ, և հնչյունների ձայնեղ կամ խուլ արտասանությունը, հենված լինելով երկտեսակ գրության վրա, հանդես էր գալիս արտասանական ազատ տարբերակների ձևով:

Ուղղախոսական այս կարևոր հարցի կանոնավորումը դարձյալ կապված էր ուղղագրության կանոնավորման հետ: 30-ական թվականներից սկսած հիշյալ վարդի բառերի գրությունը կաշունացվելուց հետո, աստիճանաբար միասնական դարձավ և արտասանությունը, որը հիմնվում էր միմիայն բառերի գրության վրա (հմմտ. հաճ և վանկ): Երևույթը մեծ չափով տարածված լինելու պատճառով մինչև հիմա էլ խոսակցական լեզվում երբեմն կարելի է լսել, երբ արտասանում են ընգնել, ընգեր, որդեղ և այլն, որը համարվում է շեղում գրական արտասանությունից:

12. Զգալի էր նաև պ, կ, տ, ծ, և խուլների ձայնեղ արտասանությունը հատկապես միջձայնավորալին դիրքում (բարբառի ազդեցությամբ), ինչպես՝ զաղիկ, շաբիկ(ք), իրիգուն, գիդեմ, գեղին, մողիկ, պաղիվ, նաև՝ ցերեզը, ձուզը, բուզը, դանազը և այլն: Այսպիսի հնչումները գրական լեզվում ներկայումս դրսևորվում են մասնակի կերպով և դիտվում են որպես շեղում:

13. Ընդունված էր բառավերջում ձայնավորներից հետո ձայնեղների խուլ արտասանությունը, օրինակ՝ բաղ-բառ, փափագ-փափակ-փափաֆ, շարաբ-շարապ և այլն⁶¹: Այս երևույթը մասնատիճանաբար վերացավ: Բառավերջը գրական հայերենում ներկայումս ուժեղ դիրք է, որտեղ շատ որոշակի կերպով դրսևորվում է ձայնեղ և խուլ բաղաձայնների հակադրությունը:

14. Բաղաձայններից առաջ Ե-ն հաճախ արտասանվում էր իբրև ռ, ինչպես՝ առժաթ, բառդ, դառդ, առժիվ, առտ: Առհասարակ Ե և ռ հնչյունների արտասանության մեջ մի շարք դեպքերում հըստակություն և պարզություն չկար: Արտասանության վրա հենվելով գրում էին նաև կռիվ, ագռավ, դռան (դռան) և այլն: Գրական հայերենում Ե-ի և ռ-ի արտասանությունը ըստ գրության գնալով ավելի որոշակի դարձավ, թեև խոսակցականում հիմա էլ երբեմն Ե-ն որոշ բառերում (ոչ բոլորի կողմից և ոչ պարտադիր կերպով) արտասանվում է ռ, օրինակ՝ առջ, բեռդ, խառույկ, վեհնագիր, կրճատել և այլն:

15. Բառամիջում և բառավերջում իսպառ վերացավ խ-ից

61 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը, էջ 17:

առաջ՝ դ կամ խ-ի երկար արտասանությունը, որն արտահայտվում էր ուղղագրության մեջ դիս գրությամբ, ինչպես՝ բղխել, բաղխել, ծղխնի, չրբուղիս, զեղիս, հրաբուղիս, հոգեբուղիս, սանդուղիս: Այս հնչյունակապակցությունն ավելի շուտ արտասանվում էր որպես երկար խ⁶²: Ուղղագրության մեջ դ-ի վերացման հետևանքով հիշյալ կարգի բառերում արտասանվեց մաքուր խ, բխել, բախել և այլն:

16. Մի խումբ բառեր, որոնք բառասկզբում ունեին երկակի գրություն՝ յ-ով և առանց յ-ի (հիմնականում ետ արմատով կազմված)՝ համապատասխանորեն արտասանվում էին հ-ով և յ-ով: Օրինակ՝ ետո- [յէտօ] և յետո- [հէտօ], եսան- [յէսան] և յեսան- [հէսան], ետադարձ- [յէտադարց] և յետադարձ- [հէտադարց], ետամնաց- [յէտամընաց] և յետամնաց- [հէտամընաց]:

Թեև մի քանի տասնամյակ առաջ գերապատվություն էր տրվում յ-ով արտասանությանը և այն հանձնարարելի էր համարվում (ետաձգել, ետագա և այլն), բայց և այնպես արմատավորվեց և ներկայումս էլ ընդունելի է համարվում այս տիպի բառերի հ-ով արտասանությունը (նաև՝ գրությունը, որը ավանդական է): Փոքրթիվ բառերում այդ երկվությունը մինչև հիմա էլ պահպանվում է, ինչպես՝ ետ-հետ, ետև-հետև:

17. Անկայուն էր մի շարք դիրքերում հ-ի (գրվում էր յ) արտասանությունը (նաև՝ գրությունը) բառասկզբում ձայնավորներից առաջ, որը կարող էր ընկնել: Օրինակ՝ հառաջ (յառաջ)—առաջ, հառաջադեմ (յառաջադեմ)—առաջադեմ, հաջող (յաջող)—աջող, հարգո (յարգո)—արգո, հաջորդ (յաջորդ)—աջորդ, Հակոբ (Յակոբ)—Ակոբ, Հիսուս (Յիսուս)—Իսուս, հուշիկ (յուշիկ)—ուշիկ, հորանջել (յօրանջել)—օրանջել, հատակ (յատակ)—ատակ, հիրավի (յիրավի)—իրավի, նաև՝ համբակ—ամբակ, համբառնալ—ամբառնալ և այլն: Զուգահեռ ձևերից կայունացավ մեկը: Առաջ բառում և նրանով կազմված բաղադրություններում հ-ն ընկավ, մյուսներում՝ պահպանվեց:

18. Ա հնչյունը բաղաձայնից առաջ սովորաբար արտասանվում էր խ, օրինակ՝ ողբ—տխալ, եղբայր—եխպայր, խեղճ—խելճ, կեղծ—կելժ: Այստեղ ևս փոքր տեղաշարժ կատարվեց. հ-ից, ծ-ից առաջ դ-ի արտասանությունը պահպանվեց:

62 Սովորություն կար այս շրջանում խ-ի մոտ՝ դ և դ-ի մոտ խ ավելացնել, օրինակ՝ Հաղխբատ, սեղխ և այլն:

19. Բառավերջի և-ով կազմվող գաղտնավանկը, որը թեև մեծ մասամբ ընկել էր, բայց և՛ գրություն, և՛ արտասանության մեջ մի շարք դեպքերում դեռևս դիտվում էր զուգահեռություն, ինչպես՝ եղեգն—եղեգ, յոթն—յոթ, դուցազն—դուցաղ, ըմբռնումն—ըմբռնում և այլն: Այսպիսի երկվությունները աստիճանաբար գրեթե վերացան: [Ըն]-ով բառավերջը պահպանվեց փոքրաթիվ բառերում և անձնանուններում (ուրեմն, Բյուրակն, Վաճագն, այսիճն և այլն):

20. Բավականաչափ ազատ էր Ե-ով կազմված գաղտնավանկի արտասանությունը, որը արտացոլվում էր նաև պոեզիայում (հմմտ. զը-նը-նեկ—զըն-նեկ, մը-րը-րիկ և մըր-րիկ): Այս ազատությունը զգալիորեն սահմանափակվեց:

21. Փոխազդեցական հնչյունափոխության հիմքի վրա առաջացած մի շարք ձևեր հաճախակի իրենց դրսևորումն էին գտնում գրական լեզվում և ունեին նաև գրային տարբերակ, օրինակ՝ անբիծ—ամբիծ, անբավ—ամբավ, անբար—ամբար, սոճի—շոճի, սուջուխ—շուջուխ և այլն: Բ, պ, փ շրթնայիններից առաջ առնմանությունամբ պայմանավորված և-ի արտասանությունը որպես մ, հանդես էր գալիս (և նկարագրվում էր) որպես արտասանական կանոն, ինչպես՝ անպետք—ամպետք, անպայման—ամպայման, անբախտ—ամբախտ և այլն: Տարնմանության հետևանքով մբ-ն արտասանվում, երբեմն նաև գրվում էր նբ, օրինակ՝ ամբարտակ—անբարտակ, ամբարիշտ—անբարիշտ և այլն:

Տարածված էին նաև հնչյունների դրափոխության և հնչյունների հավելման հետևանքով առաջացած մի շարք բառերի զուգահեռ հնչումներ, որը հավաստվում է ուղղագրական տարբերակների առկայությամբ, ինչպես՝ կճեպ—կպեճ, գդալ—դգալ, դատարկ—դարտակ (դարդակ), նախշուն—նաշխուն, կամուրջ—կարմունջ, կանաչ—կանանչ, ճանաչել—ճանանչել, ծանր—ծանդր, մանր—մանդր, թոնիր—թոնդիր, բառաչ—բառանչ, բարբաջանք—բարբանջանք, արտասուք—արտասունք, մագնիս—մագնիստ և այլն: Սխալ արտասանության հետևանքով առաջացած գրային տարբերակները գրավոր լեզվում մերժվելուց հետո գրական արտասանության մեջ կայունանում է ավանդական ձևերի արտասանությունը: Բացառիկ դեպքերում միայն, փոխազդեցական հնչյունափոխության հիման վրա առաջացած բառային տարբերակները խորապես արմատավորված լինելու պատճառով՝ դուրս են մղում ավանդական ձևերը, ինչպես՝ կապեհտ—կարպետ, արտասուի—արտասունի:

Կային նաև հնչյունների ամփոփման կամ միջին ձայնավորի անկման հետևանքով առաջացած մի շարք երկվորթյուններ, օրինակ՝ ավելել—ավլել, կճեպել—կճպել, բաղանիք—բաղնիք, ծոծորակ—ծոծրակ, պակասորդ—պակսորդ, պակասեցնել—պակսեցրնել, համարել—համրել, կապկապել—կապկպել, կաթկաթել—կաթկթել, ծախծախել—ծախծխել, օրորան—օրրան, դադարել—դադրել և այլն, որոնցից մեծ մասամբ կայունացավ և արմատավորվեց ամփոփված ձևը, իսկ որոշ զուգահեռներ իմաստային տարբերակում ստացան (օր.[՝] համարել—համրել, կոտորել—կոտրել, դադարած—դադրած և այլն):

22. Ընթերցման ժամանակ պահպանվում էր գրաբարյան վերջադիր շեշտը: Խոսակցականում ուժեղ կերպով արտահայտվում էր բարբառային վերջնթեր շեշտադրությունը: Բարբառային շեշտադրության դրսևորումները գրական լեզվում գնալով նվազեցին:

Հայերենի արտասանական համակարգում որոշ, թերևս աննկատելի տեղաշարժ կատարվեց 1922 թ. ուղղագրական բարեփոխությանը պայմանավորված: Այսպես, օրինակ, եա, եռ, իւ երկբարբառները արտասանությանը ավելի մոտ լինելով յա, յո, յու երկհնչյուններին, նոր ուղղագրությանը այդպես էլ գրվեցին՝ սենեակ—սենյակ, արդեռք—արդչք, արիւն—արյուն, որոնց արտասանությունը այնուհետև լիովին հավասարվեց հայություն, հայոց, Հայաստան և այլ բառերի յու, յո, յա-ին:

Այնուհետև: Ուղղագրական բարեփոխությանը մի շարք բառերի բառասկզբի յ-ն արտասանությանը մոտեցնելու նպատակով գրվեց հ, ինչպես՝ յիսուն—հիսուն, յեղափոխություն—հեղափոխություն և այլն, և նոր ուղղագրությանը հիշյալ բառերի հ-ն հավասարվեց հայր, հաստ բառերի բառասկզբի հ-ին: Որ յ-ն այդ դիրքում նախապես հ-ից տարբեր հնչում է ունեցել, դա կասկածի ենթակա չէ և հետագայում է, որ արտասանությանը մոտեցել է հ-ին: Սակայն, ինչպես պնդում էին ոմանք, դրանց թվում և բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը, այդ շրջանում (20-ական թվականներ) որոշակիորեն տարբերել են բառասկզբի յ-ի արտասանությունը հ-ից: Արդ, եթե, իրոք, գրական լեզվում բառասկզբի յ-ի և հ-ի արտասանական նուրբ տարբերություն 20-ական թվականներին դեռևս զգացվում էր (որոշ բարբառներում այդ տարբերությունը ավելի որոշակի էր), ապա 1922 թ. ուղղագրական բարեփոխությունից հետո այն միանգամայն հարթվեց և վերացավ:

Խոսելով վերոհիշյալ ժամանակաշրջանում հանդես եկած արտասանական երկվությունների և տարընթացությունների մասին, պետք է նշել նաև, որ դրանք մեծ մասամբ ունեին արտասանական սզգաւ տարբերակի առժեք և հաճախակի իրենց գրեւորումն էին գտնում գրական լեզվում: Դա հաստատվում է այն փաստով, որ բերված բոլոր օրինակները արտացոլվել են գրավոր լեզվում: Անշուշտ, հիշյալ ժամանակամիջոցում կիրառության մեջ են եղել նաև շատ բառերի այլևայլ հնչումներ ևս, որոնք պայմանավորված էին տարբեր բարբառների արտասանական առանձնահատկություններով:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից գրական հայերենի արտասանության մեջ դիտվում են արտասանական մի շարք նոր առանձնահատկություններ կամ նոր ունակություններ, որոնք շոշափելով լեզվի կառուցվածքը, շունեն հնչույթաբանական նշանակություն և վերաբերում են միմիայն նորմայի մակարդակին:

Հայոց լեզվի զարգացման առաջընթացի վրա 20-ական թվականներին սկսած զգալի ազդեցություն են ունեցել մի շարք արտաքին գործոններ, ինչպես՝ գրական լեզվի սոցիալական բազայի ընդլայնումը, գրական խոսքի հաղորդակցման ուղիների մեջ առաջացած փոփոխությունները, գրական լեզվի հասարակական ֆունկցիաների ընդլայնումը, տեղական՝ բարբառային տարբերակվածության նվազումը և աստիճանական հաղթահարումը, կրթական ընդհանուր մակարդակի բարձրացումը, հասարակական կյանքի տեմպերի արագացումը, սովետական բազմազգ ժողովուրդների, հատկապես ռուս ժողովրդի հետ ամենամերձավոր կապերի հաստատումը և ուսաց լեզվի հետ ունեցած սերտ շփումը, օտար լեզուների դասավանդումը դպրոցներում, բուհերում և այլ հաստատություններում և այլն: Այս բոլոր հանգամանքները անխուսափելիորեն խթանել են հայոց լեզվի և մասնավորապես նրա արտասանական համակարգի զարգացումը, արտասանական նորմայում առաջացնելով նոր երևույթներ:

Անշուշտ, արտաքին գործոնները չեն կարող կասեցնել լեզվի այս կամ այն ներքին օրինաչափության ազդեցությունը, կամ ծնել լեզվական նոր օրենքներ, բայց չի կարելի ժխտել նաև այն, որ

արտաքին գործոնները կարող են արագացնել, խթանել կամ ընդհակառակն՝ դանդաղեցնել, արգելակել լեզվի զարգացման այս կամ այն միտումը:

Հայոց լեզվում վերջին 5—6 տասնամյակների ընթացքում առաջացած հնչյունական-արտասանական տեղաշարժերը պետք է դիտել լեզվի ներքին օրինաչափությունների և արտաքին գործոնների փոխհարաբերությամբ:

Հայերենի հնչյունական համակարգում վերջին շրջանում էական տեղաշարժեր չեն առաջացել. հնչույթների համակարգը մընացել է նույնը, սակայն որոշ, և՛ հեշտությամբ դիտվող, և՛ արտաբույստ աննկատելի փոփոխություններ այնուամենայնիվ տեղի են ունեցել⁶³: Այդ փոփոխությունների ուսումնասիրությունը շատ կարևոր է նաև հայերեն գրական լեզվի արտասանության զարգացման ներքին միտումների բացահայտման տեսակետից:

Արդ, ինչպիսի՞ արտասանական նոր առանձնահատկություններ են դիտվում հայերենի զարգացման ներկա փուլում:

1. Հայոց լեզվին ընդհանուր առմամբ հատուկ չեն թե՛ բաղաձայնական և թե՛ ձայնավորների կուտակումները: Այդ պատճառով գրության մեջ հանդիպող մի քանի բաղաձայններ հեշտությամբ արտասանվում են ը ձայնավորով կազմվող զաղտնավանկի միջոցով, իսկ ձայնավորների միջև սովորաբար մտնում է որևէ ձայնակապ:

Արտասանական հատուկ օրինաչափություն ունի բառասկիզբը, որը բնութագրվում է մեկ բաղաձայնի կանոնով: Դրանից ել-

63 Սովետական Միության մի շարք ժողովուրդների լեզուներում՝ ռուս ժողովրդի հետ ունեցած սերտ շփման և մերձավոր կապերի հետևանքով դիտվում է առանձին հնչյունների թափանցման միակողմանի պրոցես: Այսպես, օրինակ՝ ուղմութները փոխառյալ բառերի հետ միասին ռուսերենից ներմուծել է ֆ, ք, ւ հնչյունները, օսեթերենը՝ յ, լ, շ, ւ հնչյունները, չեչեներենը՝ լ, ֆ, ւ, ք, ր հնչյունները և այլն: Նոր հնչյունների (հնչույթների) թափանցումները այս լեզուների հնչյութային համակարգերում փոփոխություն առաջ չեն բերում (տե՛ս Ю. Д. Дешериев, Закономерности развития и взаимодействия языков в советском обществе, М., 1966, էջ 371—376: նաև՝ Ю. Д. Дешериев, И. Ф. Протченко, Развитие языков народов СССР в советскую эпоху, М., 1968): Այս պրոցեսը, ինչպես նշում են վերոհիշյալ հեղինակները, չի վերաբերում հնագիշտ լեզուներին՝ հայերենին, վրացերենին, էստոներենին և այլն, այլ դիտվում է ռուսական ալրուբենն օգտագործող նորագիր լեզուներում: Օրինակ, չեչեներենում, ինգուշերենում, կալմիկերենում գրում են щетка, фабрика, фонарь, թեև այդ լեզուներին հատուկ չեն щ, ֆ և փափուկ ր հնչյունները (մի քանի տասնամյակ առաջ գրում էին панар, пабрика և այլն):

նելով բառասկզբի շփականի և պայթականի կապակցությունը, ինչպես՝ սկ, սպ, սթ, շտ, շպ, զգ և այլն, արտասանվում է նախահոնչը ը ձայնավորի միջոցով, մանավանդ երբ նախորդ բառը վերջանում է բաղաձայնով: Այս փրոդուկցունը հավաստվում է մեր ժողովրդական երգերով և բանաստեղծության չափով, որտեղ նախահոնչը ը-ով կազմված վանկը հավասարակշռություն է ստեղծում բանաստեղծության չափում, պահպանելով ուրիշը:

Նախահոնչը ը-ն չափածոյում գրության մեջ երբեմն վերականգնվում էր, ինչպես նաև այն արտացոլվում էր և այժմ էլ շարունակում է արտացոլվել տողադարձի ժամանակ գրության մեջ, ինչպես՝ ըս-պասել, ըշ-տապել և այլն:

Հակառակ դրան, վերջին ժամանակներս շատ որոշակի միտում է դիտվում այդ կարգի բառերում սկզբի ը-ն չարտասանել: Այդ միտումն առանձնապես զգալի է դպրոցականների և երիտասարդ ու միջին սերնդի շրջանում: Ձայնագրական և լսողական փորձերի արդյունքները հաստատում են հենց այդ: Ո՞րն է դրա պատճառը: Նախ, ը-ի արտասանության որոշ ազատություն է եղել նաև հնում: Այդ մասին վկայում են Ա. Այտընյանը, Մ. Աբեղյանը և ուրիշները:

Այստեղ, անշուշտ, մեծ դեր է կատարում և գրային արտասանության ընդհանուր միտումը, որի նշանակությունը բավականաչափ մեծ է հայոց լեզվի զարգացման ներկա շրջանում: Բացի այդ, հայերենում այժմ լայն գործածություն ունեն ռուսերենից փոխ առնված վերոհիշյալ հնչյուններով սկսվող բազմաթիվ բառեր, որոնք արտասանվում են ռուսերենի նմանողությամբ առանց ը-ի, ինչպես՝ սպորտ, սպիրտ, սկլեռոզ, սկեպտիկ, սկաֆանդր, շտատ, սպարտակիադա, ստրատեգիա, ստեղինգ, սկանդալ, սպեկուլյանտ, ստարտ, ստադիա, սպեկտր, սպեցիֆիկ, սցենար, ստադիոն, ստուդիա, շտաբ, շարտ, շտամպ, շտուրման, ստիլյագ, ստյուարդուսի, մանավանդ անձնաւորներ և տեղանուններ՝ Սպասսկի, Սպարտակ, Ստալին, Շտրաուս, Ստրովն, Շտոկման, Ստոկհոլմ և այլն:

Այս տեսակետից հետաքրքրական և կարեւոր է այն փաստը, որ սփյուռքահայերը, որոնք ռուսերենի հետ սերտ շփում չունեն, շատ պարզորոշ կերպով արտասանում են [ը]սպիրտակ, [ը]սկսել, [ը]շտապել, [ը]սպորտ և այլն:

2. Հայերենում բառասկզբի երկու բաղաձայնները չեն կարող միանալ առանց ձայնավորի: Եթե գրությամբ ձայնավորը չի

արտահայտվում, ապա արտասանության ժամանակ սկզբի երկու բաղաձայնների միջև մտնում է ը, օրինակ՝ մ[ը]շակ, ս[ը]խալ և այլն: Հակառակ այս օրինաչափության, մեր լեզվում այժմ լայնորեն գործածվում են երկու բաղաձայնով սկսվող օտարազգի բազմաթիվ բառեր և մանավանդ հատուկ անուններ, որոնք արտասանվում են գրեթե առանց միջանկյալ ը-ի, օրինակ՝ կրախ, գրամ, կրեպ, գրունտ, կրոս, կրոն, բրաս, տրեստ, կրիզիս, կրուպա, կլիենտ, սխեմա, սխալաստիկ, պրոբլեմ, գրիպ, բլոկ, տրակտոր, տրիբուն, Ռեեստ, Կրակով, Գրոզնի, Դրեզդեն, Ռյոտով և այլն: Այսպիսի հնչումը, անշուշտ, համաժողովրդական չէ, այլ հատուկ է արևելահայ գրական արտասանությանը միայն:

Թեև ընդհանուր առմամբ հայտնի է, որ փոխառյալ բառերը առավել կամ փոքր չափով հարմարվում են մայրենի լեզվի հնչյունական առանձնահատկություններին, բայց որոշ դեպքերում դրանք պատճառ են դառնում կամ խթան են հանդիսանում հնչյունական, արտասանական որոշ տեղաշարժերի:

3. Մի վանկի մեջ մտնող հայերենին խորթ բաղաձայնական մի շարք կապակցություններ, որոնք հատուկ են ռուսերենին, գերմաներենին, անգլերենին և այլն, թափանցելով հայերենի մեջ, առաջացրել են հայերենի վանկերի հնչյունական կառուցվածքների նոր տիպեր: Այսպես՝ հայերենի բառավերջի համար անսովոր մի շարք հնչյունակապակցություններ, ինչպես՝ կտ, գտ, տշ, բֆ, բվ. ոն, նշ, նս, նտ, նզ, լմ, լս, լտ և այլն, այժմ սովորական են փոխառյալ բառերում և արտասանվում են առանց զաղտնավանկի, ~~սկ~~ էֆեկտ, օբյեկտ, սուբյեկտ, ինֆարկտ, Ֆոգտ, մատշ, շ, շաբֆ, տոբֆ, ռեզերվ, ներվ, ցիստեռն, մոդեռն, ռեանշ, կոնֆերանս, ասպիրանտ, ցենզ, ֆիլմ, վալս, վոլտ և այլն:

4. Վերջինիս հետ է կապվում և բառամիջի բաղաձայնական զուգորդումների արտասանությունը: Օտարազգի բազմաթիվ բառերում բառամիջի՝ հայերենի տեսակետից անկապակցելի հնչյուններ (ինչպես, օրինակ, քս՝ բաղաձայնից առաջ, նս, վս, լմ և այլն) վանկավերջում, ստ, սկ՝ վանկասկզբում բաղաձայնից առաջ և այլն) գրական լեզվում արտասանվում են առանց զաղտնավանկի. օրինակ՝ էֆատազ, էֆսկուրսիա, ֆոֆստրոտ, էֆստրակտ, էֆսպրոպրիացիա, կոնսպեկտ, Ավստրալիա, Հելմհոլց, աբստրահում, աբստրակտ, զանգստեր, Ռայխստագ, Վոգենսենսելի և այլն, մի բան, որ հակասում է հայերենի վանկակազմության և բաղաձայնական զուգորդությունների արտասանական ավանդական օրի-

նաչափություններին: Հայերենի օրինաչափությամբ՝ բառամիջում չորս բաղաձայն հանդիպելու դեպքում անհրաժեշտորեն նրանցից երկուսի միջև արտասանվում է ը (բացառությամբ՝ առանցքներ, երդվյալ և ալլն), մինչդեռ օտարազգի բառերը, փնչպես ցույց են տալիս նշված համապատասխան օրինակները, այս օրինաչափությանը չեն ենթարկվում:

Առհասարակ օտար բառերի վանկատումը չպետք է հարմարեցնել հայերենի վանկատման կանոններին, որը մի շարք դեպքերում ստացվում է շատ արհեստական: Այդ բանը շատ ակնբախ կերպով երևում է տողադարձի ժամանակ ատեղծված ը-ով գաղտնավանկի դեպքում, ինչպես՝ Շե-ֆրսպիր, ըս-լավոնական, մինիս-տրոնթյուն, մա-սըշտաբ և այլն:

Եթե օտար բառը հիմնավորապես մտել է հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ, մերվել է լեզվին և յուրացվել ամբողջ ժողովրդի կողմից, ապա այդպիսի բառերը, անշուշտ, կարտասանվեն հայերենի արտասանական օրինաչափություններով: Իսկ եթե բառի օտար լինելը խիստ զգալի է, ապա դրա հայկական ձևով արտասանությունը ստացվում է երբեմն շատ արհեստական, ինչպես երբեմն արտասանում են կոն[ը]սպեկտ, ս[ը]խեմա, նեվ[ը]սկի և այլն: Այս իմաստով շատ հետաքրքրական և ուշադրելի է այն փաստը, որ դեռևս Ա. Այտընյանը գրում էր. «Նույնչափ ավելի խորթ է՝ թե տողադարձի և թե հասարակ գրության մեջ արևմտյան օտար բառերու մեջ ը խառնելով նոր վանկ մ'ավելցրենել. զորօրինակ՝ ըՍպարտա, ըՍթրոմպոլի, ըսլավ, ըՋվիցցերի. դրրամ, Հըռոմ, Գըրիգոր, Քըրիստոս, Քըսերքսես, Կոլտըշմիտ»⁶⁴:

5. Այնուհետև, նկատելի է, որ գաղտնավանկի արտասանությունը հայերենում զնալով դառնում է թույլ և անհաստակ, և առհասարակ զգալիորեն կրճատվում է գաղտնավանկի գործածությունը: Թերևս դրանով կարելի է բացատրել այն երևույթը, որ ներկայումս գաղտնավանկը մի շարք բառերում կամ վերացվել է, կամ նրա արտասանությունը դարձել է ոչ պարտադիր և կամ չունի հաստատուն դիրք:

6. Արտասանական մյուս նոր առանձնահատկությունը վերաբերում է ձայնավորական հանդիպումների արտասանությանը:

Հայտնի է, որ հնում երկու ձայնավորների միջև հորանջից

⁶⁴ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 348:

խուսափելու համար, որպես կանոն, մտել է որևէ ձայնակապ՝ յ, վ կամ՝ Բ. օրինակ՝ Միքայել, Ռաֆայել, Լեվոն, օվազիս, քավոս (այժմ ուսերենի նմանողությամբ՝ օազիս, ֆաոս), դարավուլ, փարավոն, Աբրահամ, գեհեն և այլն⁶⁵։ Բայց արդեն 1892 թվականին Աբեղյանը «Հայոց լեզվի ուղղագրությունը» աշխատության մեջ նշում է, որ հակառակ հայերենի ձայնավորական հանդիպումները արտասանելու օրինաչափության, օտար բառերի երկու կից ձայնավորները կարող են արտասանվել առանց ձայնակապի, ինչպես՝ կլոակ, բոա, կատալաուն, կլոուն և այլն⁶⁶։ 19-րդ դարի վերջերին դիտված արտասանական այս երևույթը, որ հանդես էր գալիս փոքրաթիվ բառերում, ներկայումս արմատավորվել է, դարձել սովորական և վերաբերում է ոչ միայն երկու, այլև երեք ձայնավորներին, ինչպես՝ առբոտա, կաուչուկ, կակաո, աուլ, լոկաուտ, ռաունդ, կոալիգիա, լաուազիե, մաոիզմ, լաոս, Աուստուրից, լաուրա, Բրաունշտայն և այլն։

Օտար բառերում կից ձայնավորներն առանց ձայնակապի հընչելու արտասանական նոր ունակությունը և մանավանդ գրային արտասանության ուժեղ միտումը որոշ տեղաշարժ են առաջ բերել կից ձայնավորների ունեցող մի շարք այնպիսի բառերի արտասանության մեջ, որոնցում ձայնակապը չի գրվում, ինչպես՝ թիակ, միակ, լիակատար, հրեական, քաղաքացիական, գյուղացիական, օդաչուական, քաղքենիություն, ձիարշավ, մարգարեական, հիանալի և այլն։ Այս երևույթը դիտվում է և որոշ փոխառյալ բառերում, ինչպես՝ աթեիզմ, դիետա և այլն։

7. Ակնբախ է դ, տ, ք հնչյունների զգալիորեն քմայնացած արտասանությունը յ կիսաձայնից առաջ, ինչպես՝ առավոտյան, Ավետյան, Գորդյան, Սեվորդյան, արդյունք, արդյունավետ, դուրահավատ, Օթյան, Դավթյան, լաւություն, նաև փոխառյալ բառերում՝ ոադիո, ստուդիա, ստադիոն, կոմեդիա, էտյուդ, բորդյուր, դյուշես, Դյումա և այլն (իո, իա-ն արտասանվում են յո, յա)։ 3-ից առաջ դ, տ, ք-ի փափուկ արտասանությունը բնորոշ է խոսակցական լեզվին։

65 XIX դարի վերջերին Ղ. Աղայանը այդ մասին գրում է. «Ուղղագրության արժանի պետք է համարե մանկավարժը և մեր ձայնավորների միմյանց մոտ չգալը։ Այսպես՝ հայ լեզվին բնական չէ ասել աա, եե, իի, բբ և այլն կամ աի, իա, էի, ոա, բա և այլն... գրում ենք ոա, ուէ, ուի, բայց կարդում ենք ոավա, ուվէ, ուվի կամ, ավելի ճիշտ, կարճ՝ վա, վէ, վի, ինչպես հենց շատերն էլ գրում են» (Հայ մանկավարժներ, Երևան, 1958, էջ 454)։

66 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 49—50։

8. Այնուհետև, արտասանական նոր երևույթ է լ հնչյունի փափուկ արտասանությունը այնպիսի հնչյունադիրքերում, որտեղ նա արտասանվել է կոշտ: Հայերենում լ-ն փափուկ է արտասանվում ե, ի ձայնավորներից և յ կիսաձայնից առաջ, ինչպես՝ ալեհեր, ալիք, ալյուր և այլն և կոշտ՝ մյուս ձայնավորներից և բոլոր բաղաձայններից առաջ, ինչպես՝ սալոր, գլան, բլուր, ալմաստ, շլփիկ և այլն:

Ներկայումս, հայերենի արտասանական այդ օրինաչափությունը հակառակ՝ փոխառյալ բաղմաթիվ հասարակ և հատուկ անուններում ուսերենի նմանողությամբ շատերի կողմից արտասանվում է զգալիորեն փափուկ լ, ինչպես՝ վալս, մուլտ, ալբոմ, բուլճիկ, կուլտուրա, ալմանախ, ամալգամ, բաղալտ, ունս, ալտ, ֆիլմ, ֆիլտր, ֆալսիֆիկացիա, ֆակուլտետ, Բալզակ, Բալմոնտ, Մալտա, Մալցև և այլն:

Հայերենում լ-ի, ինչպես և մյուս բաղաձայնների փափուկ կամ կոշտ արտասանությունը էական կամ իմաստազատիչ հատկանիշ չէ, տրովհետև հայերենում չկան երկու այնպիսի բառեր, որոնք տարբերվեն իրարից միայն լ-ի փափուկ և կոշտ հակադրությամբ, ինչպես ուսերենում (հմմտ. мел «կավիճ» և мелъ «ծանծաղուտ»), որտեղ փափուկ և կոշտ հնչյունները հանդես են գալիս որպես առանձին հնչույթներ և տարբերակում են բառեր կամ բառաձևեր:

Հետևաբար փոխառյալ բառերում լ-ի փափուկ արտասանությունը հայերենում չի շոշափում հնչյութային համակարգը, այլ միայն փոփոխություն է առաջ բերում արտասանական նորմայում: Եվ քանի որ նշված կարգի բառերում լ-ի զգալիորեն փափուկ արտասանությունը գրական հայերենում կարելի է ընդունելի համարել, ուստի այդ նոր առանձնահատկությունը որոշ փոփոխություն է առաջ բերում լ-ի դիրքային տարբերակների հարցում:

Հայերենում ներկայումս ընդհանուր առմամբ շատ ուժեղ է գրային արտասանության միտումը, որը դրսևորվում է ոչ միայն Բ, Գ, Դ, Ա, ջ ձայնեղների հարցում:

9. Հայտնի է, որ Խ-ն հայերենում բառամիջում և բառավերջում, մանավանդ Բ-ից հետո արտասանվում է շատ թույլ կամ բոլորովին չի արտասանվում, օրինակ՝ խորհուրդ, շնորհալի, շնորհակալություն, աշխարհագրություն, արհամարհել, շնաշխարհիկ, ընդհակառակն և այլն:

Արդ, նկատելի է, որ գրային արտասանության ընդհանուր ձգտումը այստեղ ևս արդեն սկսել է որոշ դեր կատարել: Ներկա-

յումս շատերի մոտ գրական լեզվով խոսելիս՝ բավականաչափ պարզորոշ կերպով այս կարգի բառերում և-ն լսելի է:

Արտասանական շատ նոր երևույթներ, թեև ներկայումս շու-նեն համաժողովրդական նշանակություն, դեռևս մրցում են ար-տասանական ավանդական նորմաների հետ և գտնվում են իրենց զարգացման պրոցեսում, բայց և այնպես ուշադրության արժանի ձևն է ածպայսմանորեն պետք է ձեռարկվեն ամենալուրջ գիտական ուսումնասիրություն:

Այժմ, իհարկե, դժվար է ճշգրտորեն որոշել, թե ինչպիսին կլինեն մեր գրական լեզվի ուղղախոսական նորմաները ապագա-յում, բայց պարզորոշ կերպով երևում է, որ հայերեն գրական լեզ-վի զարգացումը ընթանում է մի կողմից՝ նեղ, բարբառային ար-տասանական երևույթներից լիովին ազատագրվելու, մյուս կող-մից՝ արտասանության և գրության մերձեցման ուղիով:

Սրանք են այն հիմնական երկու ուղիները կամ գործոնները, որոնք էական նշանակություն ունեն ժամանակակից գրական ար-տասանության նորմաների ձևավորման գործում: Այս երկու էա-կան գործոնների ազդեցությամբ հայերենի գրական արտասանու-թյունը աստիճանաբար դառնում է ավելի կուռ և միասնական:

ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՑ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Անժխտելի իրողություն է, որ իր զարգացման սովետական փուլում հայերենը մեծ առաջընթաց է կատարել, զարգացել ու հարստացել է բոլոր կողմերով: Մեծ չափով կանոնավորվել, ճշգրտվել և տրոշակի է դարձել գրական արտասանությունը, վե-րացել են շատ տարբերակայինություններ և անմիօրինակություններ, բարբառային դրսևորումներ և այլն: Ոչ ոք այժմ չի կասկածում, որ, օրինակ, գե[ղ]ին, շա[ք]իք, ձ[ու]ն, սառ[ու]յց, ա[խճ]իկ, վան[գ], հար[գ]ավոր, եր[գ]ար, որ[դ]եղ արտասանելը սխալ է, որ պետք է հնչել գետիճ, շապիկ, ձյուն, սառույց, ա[խշ]իկ, վաճկ, հաւկավոր, երկաւ, որաւդ:

Գրական արտասանության տեսակետից խորթ է հնչում և ան-ընդունելի է համարվում բարբառային շեշտադրությունը, ինչպես՝ հաււե՛ւն, աճճա՛ւնք, հաւսա՛նիք, գնա՛ցիմք և այլն:

Ժամանակակից արևելահայերենի ուղղախոսություն մեջ երե-

վան եկող շեղումների հիմնական աղբյուրներն են՝ գիրը, արևմտահայերենն ու բարբառները և այլ լեզուների (հիմնականում ռուսերենի) ազդեցությունը:

Գրական արտասանության նորմաների խախտման պատճառ է հանդիսանում նաև մշտական, թեև ոչ միշտ նկատելի շարժումը և զարգացումը, որը տանում է դեպի գրական լեզվի նորմաների նորացում: Եվ դա է պատճառը, որ նույնիսկ մի սերնդի կյանքում այն, ինչ նորմա է եղել, երբեմն վերածվում է «անճշտության» և գուրս է մղվում գործածությունից⁶⁷:

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերենում գրական արտասանության մեջ երևան եկող բարբառային բնույթի շեղումները բավականին ակնհայտ են: Արտասանական մեծ զանազանություններով՝ արևմտահայ և արևելահայ գրական երկու տարբերակների գոյությունը և բազմաթիվ բարբառները մինչև այսօր էլ որոշ կնիք են դնում արևելահայերենի գրական արտասանության վրա: Ներկայումս ամենից ավելի ըզգալի են Արարատյան և Կարնո (Լենինականի) բարբառներին հատուկ արտասանական որոշ երևույթներ, ինչպես՝ բառակզբի ձայնեղ հնչյունի խլացում, շեշտը առաջ տանելու հետևանքով շեշտագուրի ձայնավորի սղում, բառամիջի խուլ բաղաձայնի ձայնեղացում մի շարք դիրքերում և այլն: Օրինակ՝ [պ]եր[ը]մ են, [ծ]իեռս կո[դ]լվեց, սիր[գ]ս կայնեց, հար[գ]ավոր չի, պայ-

67 Այս իմաստով հետաքրքրական է այն կարծիքը, որ լեզվական արգելված երևույթները ինչ-որ չափով արտացոլում են լեզվի մեջ կատարված փոփոխությունների պատմությունը (տե՛ս В. Матезиус, О необходимости стабильности литературного языка, ПЛК, М., 1967, էջ 380): Իրոք, արգելվում է այն, ինչ արդեն հանդիպում է կիրարկության (узус) ժամանակ և դիտվում ու նկարագրվում է լեզվաբանի կողմից: Վերջինս թեկուզ հետևյալ փաստը: Յա էրկհնչյունի հնչյունափոխության վերաբերյալ Մ. Աբեղյանը գրում էր. «Այս ձևափոխությունը նոր լեզվի մեջ կենդանի չէ, ուստի դպրոցական հայերեն չավարտած մարդիկ սխալ կազմություններ են անում, ինչպես են՝ «գրասենյակային», «հորելյանական», փոխանակ «գրասենեկային», «հորելենական» ևներին»: (Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 199—200): Ինչպես տեսնում ենք, այն, ինչ Աբեղյանը շեղում էր համարում, ընդունվեց և դարձավ կանոնական, մինչդեռ ավանդական կազմությունները դուրս մղվեցին: Այդպիսի շատ փաստեր կան այլ լեզուներում: Բայց, իհարկե, բոլոր մերժված կամ արգելված երևույթները չեն, որ ժամանակի ընթացքում վեր են ածվում նորմայի:

[ձ]առ ժ[բ]ի[դ]ներ, պո[ղբ]ատ սր[դ]եր (փոխանակ՝ բերում են, ձեռքս կտարվեց, սիրտս կանգնեց, հաբկավոր չի, պայծառ ժպիտներ, պո[խ]պատ սրտեր) և այլն:

Խոսելով բարբառային արտասանության մասին, չի կարելի անտեսել ֆաղաֆային հասարակաբանական արտասանությունը, որը տեղի ունի է բարբառային հոգի վրա: Զուտ բարբառայինը աստիճանաբար ետ է մղվում և դրա փոխարեն երևան են գալիս քաղաքային հասարակաբանական մի շարք երևույթներ: Քաղաքային հասարակաբանական արտասանությունը հատուկ են այնպիսի գրծեր, որոնք թեև առաջացել են բարբառային արտասանության հիմքի վրա, բայց տեղայնացած չեն, այսինքն՝ հատուկ չեն կոնկրետ որևէ բարբառի: Դրանք ավելի շուտ բարբառների մեծ մասին կամ համաժողովրդական լեզվին հատուկ առանձնահատկություններ են, կամ պայմանավորված են դրանցով: Այդպիսի արտասանությունը մեծ մասամբ հատուկ է կրթական ցածր մակարդակ ունեցող քաղաքային բնակչությանը⁶⁸:

Փորձենք ցույց տալ քաղաքային հասարակաբանական արտասանությունը բնորոշ մի քանի գծեր, որոնք շեղում են գրական արտասանական նորմայից:

1. Երկհնչյունի պարզեցված արտասանություն, ինչպես՝ ա-րուն, սառուց, կապուտ, ալուր, ձուն, լեն, ծեր, լուս և այլն (փոխանակ՝ արյուն, սառույց, կապույտ, ալյուր, ձյուն, լալն, ծայր, լույս): 2. Հնչյունի հավելում, անկում, դրափոխություն, առնմանում, տարնմանում և այլն: Օրինակ՝ ման[դ]րամասն, հան[դ]րակացարան, ծան[դ]րակշիռ, Հեն[դ]րիկ, առաջի (առաջին), վերջի (վերջին), ուրեմ (ուրեմն), [հ]ելնել (ելնել), բախշել (բաշխել), կպեճ (կճեպ), նախագա (նախագահ), հաշվապա (հաշվապահ), հերթապա (հերթապահ), սրջան (շրջան), հաշվանդամ (հաշմանդամ) և այլն: 3. Բառամիջի ե ձայնավորի փոխարինում ա-ով կամ սղում (փոխարինումը -ով)՝ զզվ[ա]ցնել, զզվ[ը]ցնել, (զզվեցնել), խոս[ա]ցնել, խոսց[ը]նել, նաև՝ խոս[ը]ցնել (խոսեցնել), իջ[ա]ցնել, իջ[ը]ցնել (իջեցնել): 4. Ը ձայնավորի անհարկի արտասանություն բառամիջում բաղաձայնների միջև և բառավերջում: Օրինակ՝ կանգ[ը]նել, վերց[ը]նել, պատ[ը]ծել, քն[ը]նել, ընտ[ը]րել, Մոսկ[ը]վա, մութ[ը] տեղ, պետք[ը] կգա,

68 Տե՛ս Փ. Մ. Филин, О структуре современного русского литературного языка, ВЯ, 1973, № 2, էջ 9—10:

մեղք[ը] չի, ո՛ւմ[ը] տվեցիր, քսան[ը] մեկ[ը] անց հիսուն[ը] ութ[ը] բոպեին: 5. Երկհնչյունի շրջված կամ փոփոխված արտասանություն՝ ձույն, ալուռ, հույթ, սույն, հույրասիրել, համայրա, սեյնակ, հազվագույտ, այրուն, հայրուր, կոյնակ, սալլուտ և այլն (փոխանակ՝ ձյուն, առյուծ, հյութ, սյուն, հյուրասիրել, համարյա, սենյակ, հազվագույտ, արյուն, հարյուր, կոնյակ, սալլուտ): 6. Այլ կարգի շեղումներ՝ հունրվար, սեկտեմբեր, կայնել, տենալ, էթալ, ապրել, ալսինքս, ալժմս և այլն (փոխանակ՝ հունվար, սեպտեմբեր, կանգնել, տեսնել, երթալ, ապրիլ, ալսինքն, ալժմ):

Ներկայումս շատ տարածված են այս, այդ, այն դերանուններով կազմված բառերի մի շարք հնչումներ, որոնք ունեն հասարակաբանական բնույթ, ինչպես՝ ըսենց—լտենց—ընենց, էսենց—էտենց—էնենց, սենց—տենց (թենց) —նենց, ըստեղ—լտեղ—ընդեղ—ստեղ, ըստե—լտե—ընդե, ըսքան—լտքան—ընքան, ըստից—լտից—ընդից և այլն: Վերջին ժամանակներս նկատելի չափով տարածվել են նաև բարբառային էսի, էտի, էնի ձևերը: Գրական արտասանության մեջ ոչ հազվադեպ դրսևորվում է Արարատյան բարբառի ոչ վերջադիր շեշտադրությունը: Օրինակ՝ «Ա՛րմենս Մոսկվա՛յում է», «Բնակա՛րանս ո՛ւզում եմ փո՛խեմ» և այլն: Նույնպիսի շեղումներ են դիտվում նաև օտարազգի բառերում և անվանումներում՝ բժո՛ւրո, Մո՛սկվա:

Ժամանակակից գրական արևելահայերենի ուղղախոսական շեղումների մեջ նկատի պետք է ունենալ նաև արևմտահայերենի արտասանության դրսևորումները: Արևմտահայ գրական լեզուն ունի իր հնչյունական ուրույն համակարգը, ըստ որի ձայնեղ բաղաձայնները բոլոր դիրքերում արտասանվում են շնչեղ խուլ և խուլներ՝ ձայնեղ: Օրինակ՝ գիրք—[ք]իրք, դուրս—[թ]ուրս, ջուր—[չ]ուր և այլն: Ըստ արևմտահայկական արտասանության բառի հնչական կերպարանքը հաճախ այնպես է փոխվում, որ արևելահայի համար դժվար չէ մի բառի փոխարեն մեկ այլ բառ հասկանալը: Այսպես, օրինակ՝ պատ, պար, դաս, գայլ, գլուխ, գող բառերն արևմտահայերենում ունեն [բ]ա[դ], [բ]ար, [թ]աս, [ք]այլ, [ք]լոր, [ք]ող հնչումները, որոնք արևելահայերենում բոլորովին այլ բան են նշանակում:

ԳՐԱՅԻՆ (ԳՐՔԱՅԻՆ) ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրային արտասանությունը, ալսինքն՝ բառերի հնչումը այնպես, ինչպես նրանք գրվում են (հնչումը ըստ տառերի), թեև ընդ-

հանուր առմամբ ցանկալի և դրական երևույթ է, բայց և այնպես գրութունից տարբեր, ավանդական կայուն արտասանութիւն ունեցող մի շարք բառերի արտասանութեան խախտումը և ըստ գրութեան արտասանելը իրավամբ դիտւում է որպէս ուղղախոսական նորմայի խախտում:

Գրային արտասանութեան խնդիրը հայերենի ուղղախոսութեան ներկայիս մասնաբարդ խնդիրներից մեկն է: Բանն այն է, որ ներկայումս շատ ուժեղ կերպով գործող՝ բառերը գրութեան եղանակով արտասանելու համընդհանուր միտումը արդեն հաստատուն կերպով վերականգնել է շատ բառերի նախնական արտասանութիւնը. օրինակ՝ օ[գ]ոստոս, հր[դ]եհ, ե[ղջ]յուր, հա[ջ]ող, ը[ղձ]ական, մեր[ձ]ավոր, հար[գ]ել և այլն, իսկ բազմաթիվ այդ կարգի բառեր չունեն կայուն արտասանութիւն և շատ դժգոհութեամբ դժվար է որոշել, թե՞ դրանցից որը պետք է ճիշտ համարել, ավանդակա՞նը, թե՞ նորը՝ գրութեան համապատասխանը: Այդպիսի բառերի արտասանութեան համար սովորաբար ընդունւում են արտասանական զուգահեռ ձևեր (օր.՝ մի[ջ]ակ—մի[չ]ակ, նվա[գ]ել—նվա[ք]ել, մի[ջ]ազգային—մի[չ]ազգային, ող[ջ]ուն—տ[խ]ուն և այլն), նախապատմութիւնը տալով գրային արտասանութեանը:

Այսուհանդերձ, հայերենում կան զգալի թվով բառեր, ինչպես՝ մարդ, վարդ, կարգ, օձ, օղ, աջ, վերջացնել, երբեք, եղբայր, աղբյուր, բարդ, երգել, խաբել, հագնել, բնդունել և այլն, որոնցում համապատասխան բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների ավանդական՝ շնչեղ խուլ արտասանութեանը հակառակ՝ ըստ գրութեան ձայնեղ արտասանելը արտասանական նորմայի շեղում է և, անշուշտ, մերժելի:

Գրային արտասանութեան տարածման պատճառների և նրա նշանակութեան մասին մենք հանգամանորեն խոսել ենք համապատասխան տեղում: Նշենք նաև, որ ավանդական արտասանութեան շեղումները ավելի շատ երևան են գալիս բարբառախոսների մոտ, որոնք իրենց բարբառին հատուկ արտասանութիւնից խուսափելու համար, գրական լեզվով խոսելիս աշխատում են բառերը հնչել գրութեանը համապատասխան: Եվ ահա, այն անձինք, որոնք գտնւում են իրենց բարբառի ուժեղ ազդեցութեան տակ, կամ որոնք հատուկ է «երկիւնզվութունը», գրական լեզվով խոսելիս հաճախ արտասանում են աղ[ջ]իկ, խն[դ]իր, հար[բ]ել, կար[դ]ալ, ար[դ]են, մար[դ]իկ և այլն, այսինքն՝ այնպես, ինչպես այդ բառերը գրւում են, մինչդեռ բարբառով խոսելիս՝ պահպանում են նույն բառերի ավանդական արտասանութիւնը:

Գրային արտասանության տարածման հարցում որոշ դեր են կատարում և ուսախոսները, որոնք լավ շտիրապետելով հայերենի ուղղախոսական կանոններին կամ հայերենի կենդանի հնչմանը մոտ կանգնած չլինելու պատճառով, հաճախ բառերն արտասանում են բոտ գրության՝ այնպես, ինչպես գրվում են:

ՓԱՓԿԱՅՎԱԾ ԿԱՄ ՔՄԱՅՆԱՅՎԱԾ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ԱՅԼ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի ուղղախոսության ակնառու թերություններից է փափկացված կամ քմայնացված արտասանությունը, որը հանդես է գալիս մեծ մասամբ փոխառյալ բառերում:

Այդպիսի արտասանությունը պայմանավորված է ուսաց լեզվի քմայնացված կամ փափուկ արտասանության ազդեցությամբ: Սա ուսերենի ազդեցությամբ առաջացած ամենաբնորոշ արտասանական շեղումն է, երբ ե, ի ձայնավորներից առաջ դ-ն և ա-ն միջնալեզվային արտասանությամբ հնչվում են փափուկ՝ դ-ն՝ ձ-ի և ա-ն՝ ծ-ի նման, ինչպես, օրինակ՝ [ձ]իրեկտոր, [ձ]իետա, պոլի- [ծ]եխնիկ, [ծ]եխնիկում, [ձ]իպում, պրեզի[ձ]ենտ, ակա[ձ]եմիա, տակ[ծ]իկա և այլն: Այսպիսի՝ փափկացված արտասանությունը ումանք փոխառյալ բառերից բացի տարածում են և հայերեն բառերի վրա, ինչպես՝ ա[ծ]ենակալ, սնո[ծ]իապաշտ, ար[ձ]իական, դաս[ծ]իարակել, [ձ]իակ (դիակ), [ծ]իեզերք, [ծ]իտանական, կամ՝ [Ս]իգրան, Մար[ծ]իրոսյան, Ավե[ծ]իսյան, Ավե[ծ]իկ և այլն, որ ականջ ծակող թերություն է: Ոչ փոխառյալ բառերի փափկացված արտասանությունը ունի խիստ սահմանափակ բնույթ (հատկապես հասարակ անուններում):

Ռուսական կրթություն ստացած և ուսական միջավայրում ապրած մարդկանց մոտ նկատվում է ա-ից, դ-ից բացի նաև այլ հնչյունների փափկացում ևս, ինչպես՝ [ն']երվեր, [ն']ինա, [ս']եկտոր, [Ս']իմա, մա[ն']երա, մա[ն']իֆեստ, մագ[ն']իս, էլեկտրո[ն']իկա, ջա[ն']իկս, Գառ[ն']իկ և այլն: Ռուսախոսների մոտ մի շարք դեպքերում նկատելի է նաև ձայնավորների երկբարձառակերպ արտասանություն հայերեն բառերում, ինչպես՝ չ[իէ], տարբ[իէ]ր, չ[իէ]մ կա[ռ]ող, արվ[իէ]ստ (չէ, տարբեր, չեմ կարող, արվեստ) և այլն, որ միանգամայն խորթ է գրական հայերենի արտասանությանը:

Ի տարբերություն ռուսերենի, հայերենում չկա կոշտ և փափուկ բաղաձայնների հակադրություն, և բաղաձայնները մեծ մասամբ արտասանվում են կոշտ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք գտնվում են յ միջնալեզվային կիսաձայնից առաջ: Այս դեպքում, բնականաբար, նախորդող բաղաձայնները մասամբ քրմայնանում են, օրինակ՝ պառլան, առավոտյան, ոտայուն, արդյոք, լուրջուն և այլն:

Ներկայումս ակնհայտ է դարձել դ, տ, ք-ն յ-ից առաջ ուժեղ քմայնացումով արտասանելու երևույթը, որով տ-ն, դ-ն և ք-ն գրեթե հնչվում են ինչպես ծ, ձ, ց: Օրինակ՝ մա[ծյ]ան, պա[ծյ]ան, առավո[ծյ]ան, հավի[ծյ]ան, [ձյ]ուրին, ար[ձյ]ունավետ, ար[ձյ]ոք (ար[ցյ]ունավետ, ար[ցյ]ոք), [ցյ]ուր, [ցյ]ուրիմացություն (մատյան, պատյան, առավոտյան, հավիտյան, դյուրին, արդյունավետ, արդյոք, քյուր, քյուրիմացություն) և այլն: Շատ տարածված է նաև -ուրյուն ածանցի ք-ն գրեթե որպես ց արտասանելը՝ խոսակցու[ցյ]ուն, թուլու[ցյ]ուն և այլն⁶⁹:

Նկատելի է նաև, որ -երորդ բաղադրիչից առաջ ք ունեցող դասական թվականներում, ինչպես՝ ութերորդ, յոթերորդ, տասներորդ, քսանյոթերորդ և այլն, -երորդ բաղադրիչը սխալ կերպով [յէ]րորդ արտասանվելու պատճառով նախորդող ք-ն քմայնանալով հնչվում է ց կամ ց-ին մոտ մի հնչյուն՝ յո[ցյ]երորդ, ու[ցյ]երորդ և այլն: Այստեղ թերևս որոշ դեր է կատարում և վեցերորդ թվականի համաբանությունը: Նկատելի է նույնիսկ ութենյակ բառում ք-ի քմայնացում՝ [ուցնյակ], որտեղ յ-ի ազդեցությամբ քմայնանում է ոչ միայն ն-ն, այլև ք-ն: Կամ՝ տասներկումատնյա, որ երբեմն նույն հիմունքով հնչվում է տասներկումա[ծ]նյա (գրի է առնվել աշակերտների խոսքից): Այս դեպքում էլ թերևս առկա է տասներկումատնյա՝ ն-ի անկումով ձևի ազդեցությունը:

Ուղղախոսական այս թերության դեմ տարվող պայքարը վերջին ժամանակներս որոշ աղբյուրներ տվել է: Դա նկատելի է բեմական, մանավանդ հաղորդավարական խոսքում:

Բացի արտասանական նշված շեղումներից, գրական հայերեն-

69 3-ից առաջ դ, տ, ք հնչյունների զգալիորեն փափկացված արտասանությունը ներկա փուլում թերևս պետք է իրողություն համարել (հատկապես -ուրյուն ածանցում) և վերջին շրջանում արևելյան գրական հայերենի արտասանության մեջ առաջացած տեղաշարժ: Այսպիսի արտասանությունը ընդունելի է խոսակցական ոճում, բարձր ոճում, որն ավելի ավանդապահ է. հանձնարարելի չէ:

նի արտասանության մեջ դրսևորվում են նաև ուղղախոսական այլ կարգի խախտումներ:

Այսպես՝ ուուսերենում ք-ն ըստ դիրքի արտասանվում է փափուկ (օր.[՝] река, барин) և կոշտ (օր.[՝] рот, опера): Ռուսերենի արտասանական այս օրինաչափությունը, հատկապես ուուսախոս մարդկանց մոտ, երբեմն դրսևորվում է և հայերենում, իհարկե, դարձյալ ավելի շատ փոխառյալ բառերում. օրինակ՝ ա[ռ]ոմատ, դ[ռ]ամա, փնչպես և՛ [ռ]ոպե, կա[ռ]ոտ, հա[ռ]ուստ, դ[ռ]ափան, պա[ռ]բե[ռ]ական, դ[ռ]ա համա[ռ], Ա[ռ]մեն, Ա[ռ]ամ, Ա[ռ]փիկ և այլն, և դրա հակառակը՝ կ[ր]իվ, ձմե[ր]ել, ա[ր]եփեփե, վա[ր]ել: Տարածված սխալ է լրիվ, արհամարհել բառերի չ[ռ]իվ, ա[ռ]համարհել հնչումը:

Մի շարք դեպքերում ք-ն և ու-ն մեկը մյուսի փոխարեն արտասանելու պատճառով աղավաղվում է բառերի իմաստը, քանի որ դրանք հայերենում առանձին հնչույթներ լինելով ունեն իմաստազատիչ հատկանիշ. օրինակ՝ սեք—սեռ, դեք—դեռ, լուք—լուռ, համաք—համառ, առու—առու, վաքել—վառել և այլն:

Այնուհետև, բավականաչափ տարածված սխալ է ոուսերենից փոխ առնված բառերում ոուսերենի նմանողությունը ու-ն և արտասանելը, ինչպես, օրինակ՝ տր[ա]լեյբուս, կ[ա]մուտատոր, պ[ա]լիկլինիկա, [ա]պերաջիա, Մ[ա]սկվա և այլն, փոխանակ ըստ գրության տրոլեյբուս, կամուտատոր, պոլիկլինիկա, օպերաջիա, Մոսկվա արտասանելու: Այսպիսի արտասանության տարածմանը նպաստել է, անշուշտ, ըստ ուսական հնչման պամիդոր, մանտյոր և այլն գրելը, որ ընդունված էր մինչև 50-ական թվականները:

Պետք է ասել, որ ուղղախոսական այս թերության վրա վերջին ժամանակներս նորից ուշադրություն դարձվեց և տերմինաբանական կոմիտեի հատուկ տրոշմամբ⁷⁰ հայերենի նորագույն փոխառությունների գրության և արտասանության մեջ միասնականություն պահպանելու համար օ (ո) ձայնավորի և կամ ք արտասանությունը համարվեց արտասանական կանոնների խախտում և պահանջվեց գրել և արտասանել օ (ո), ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անուններում:

⁷⁰ Նախագիծը կազմել է Հ. Բաբսեդյանը, հաստատվել է 1963 թ. հուլիսի նիստում:

Ուղղախոսական սխալ է, երբ վերջավանկի [օ] (ո) ձայնավորը ռուսերենի հետևողությամբ արտասանվում է Ը, օրինակ՝ դոկտ[ը]ր, սեկտ[ը]ր, ռեկտ[ը]ր, պրոֆես[ը]ր, դիրեկտ[ը]ր, տրանսպ[ը]րտ, կոմպոզիտ[ը]ր, նաև թեքված, ածանցված ձևերում և հոգնակիում՝ ագիտատ[ը]րի, ագիտատ[ը]րական, ռացիոնալիզատ[ը]րական, ռացիոնալիզատ[ը]րի, ագիտատ[ը]րներ, կոմպոզիտ[ը]րներ, ռացիոնալիզատ[ը]րներ, պրոֆես[ը]րներ և այլն, որի հիմնական պատճառը ռուսական արտասանությանը կուրորեն հետևելն է։ Այս կարգի բառերի սխալ արտասանությանը (խոսքը վերաբերում է եզակի թվին, որը սկզբնաղբյուր է և մյուս սխալ ձևերի համար) նպաստում է ռուսական շեշտադրությունը, քանի որ նախավերջին վանկի վրա դրվող շեշտի պատճառով վերջահանգ [օ] (ո)-ն թույլ արտասանվելով հեշտությամբ վերածվում է Ը-ի (ինչպես ռուսերենում), մինչդեռ հայերենին հատուկ՝ վերջադիր շեշտադրությունը ապահովում է և վերջնավանկի ճիշտ արտասանությունը։

Նկատելի է հատուկ անուններում վերջնավանկի ա ձայնավորը Ը արտասանելու երևույթը ևս (երբ շեշտը վերջնավանկի վրա չէ), օրինակ՝ Բաուման—Բաում[ը]ն, Բոուման—Բոում[ը]ն, Հարրիման—Հարրիմ[ը]ն, Բիսմաբկ—Բիսմ[ը]րկ և այլն, որը նույնպես հանձնարարելի չէ։

Ուղղախոսական թերություն է, երբ մի շարք փոխառյալ բառերում ռուսերենի նմանողությամբ [է] (ե) ձայնավորի փոխարեն արտասանվում է ի, ինչպես, օրինակ՝ պ[ի]նիցիլին, պ[ի]սիմիզմ, գ[ի]ֆիցիտային, մ[ի]նինգիտ, կոմբին[ի]զոն, ինտ[ի]լիգենտ, վ[ի]նտիլ, գլից[ի]րին, գ[ի]վինֆեկցիա, փոխանակ՝ պենիցիլին, պեսիմիզմ, դեֆիցիտային, ինտելիգենտ, վենտիլ, գլիցերին, դեզինֆեկցիա և այլն։

Փոխառյալ բառերի շեշտադրության հարցում դիտվում է զգալի անկայունություն և տարընթացություն, հակառակ տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումների, ըստ որի հիմք են ընդունվում հայերենի շեշտադրական կանոնները։

Հատկապես շատ տարածված է փոխառյալ բառերի թեք ձևերի սխալ, այսինքն՝ ոչ վերջադիր շեշտադրությունը։ Այս սխալից զերծ չեն մնում ոչ միայն գրական լեզվին լավ տիրապետող շատ անձինք, նույնիսկ հրապարակային ելույթներում, այլև որոշ հաղորդավարներ և դերասաններ, որոնք արտասանում են կո՛րպուսի, ֆի՛զիկայի, մեխա՛նիկայի, դիսեռտա՛ցիայի, Ֆրա՛նսիայի, Իտա՛լիայի, փո-

խանակ շեշտելու վերջին վանկը՝ ֆիզիկայի՝, կուրպուսի՝ և այլն:

Օտար բառերի ուղիղ ձևերի շեշտադրության մեջ ևս կան զգալի տատանումներ:

Բացի վերոհիշյալ ուղղախոսական շեղումներից և թերություններից, հայերենում, հատկապես հայկական լրիվ կրթություն չըստացած անձանց մոտ, երբեմն դիտվում են ուղղախոսական մի շարք ոչ ցանկալի երևույթներ, որոնք մեծ մասամբ առաջանում են ավելի քաղաքակիրթ ներկայանալու ձգտումից: Դրանք արտասանական աղավաղումներ են, ավելորդ փափկացումներ և այլն: Այսպես, օրինակ, շատ տարածված են համբույր, համբուրել բառերի համ[փյու]ր, համ[փյու]րել արտասանությունները (այսպես են երբեմն հնչում նաև նշանավոր երգիչները և նույնիսկ ասմունքողները)⁷¹: Այնուհետև, հաճախ արտասանում են բարեհամբ[յու]ր փոխանակ՝ բարեհամբույր, քնքու[յ]շ, փոխանակ՝ քնքուշ, ընտան[յա]կան, փոխանակ՝ ընտանեկան, գոն[յա], փոխանակ՝ գոնե⁷² և այլն:

Մի շարք ուղղախոսական սխալներ արդյունք են փոխազդեցական հնչյունափոխության: Օրինակ, ոչ հազվադեպ կարելի է լսել Ս[ը]նդուկյան, [ու]նդունել, [ու]նդունակ, արտաս[ա]լվոր, ներ[ե]ղություն, հայ[ա]ցողություն, արոն[ո]մենտ և այլն, փոխանակ՝ Սունդուկյան, ընդունել, ընդունակ, արտասովոր, ներողություն, հայեցողություն, արոնմենտ: Որոշ բառեր սխալ են արտասանվում այլ բառերի համաբանությամբ. օրինակ՝ սյուն[յ]ակ, պալուս[յ]ակ, աղուս[յ]ակ, երիվա[յ]ր, աշտու[յ]ց, որոնցում յ-ն ավելորդ է (հանդիպում է նաև [սունյակ], [աղուսյակ] հնչյունը), կամ՝ միօրինակացնել, փոխանակ՝ միօրինակացնել: Երբեմն խլացվում է բառասկզբի ձայնեղ հնչյունը. օրինակ՝ [բըցէլ], [բըթնէլ], ճիշտ է՝ [զըցէլ], [զըտնէլ] և հակառակը՝ բառասկզբի խուլ հնչյունն է ձայնեղացվում (և միջինը խլացվում), ինչպես՝ [զըբա], [զըբամ], փոխանակ՝ [կըբա], [կըբամ]: Նրկատելի են դեպքեր, երբ բառամիջում շ-ի կամ ջ-ի փոխարեն արտասանվում է և, օրինակ՝ [զէխճ], [զէխճէլ], [զիճէլ], [զիճում], [խնճույք] և այլն: Այս բառերի հանձնարարելի արտասանությունն

71 Այս սխալը այնքան տարածված է, որ երբեմն սպրդում է գրականության մեջ (օրինակ՝ ՍԳ, № 3, էջ 39: Գ, 1972, № 3, էջ 45):

72 Դոճյա ձևը թեև հնարանություն է, բայց այդպես արտասանողները դրա փոխակցումը չունեն:

է [զէխշ], [զէխշէ], [զիշէ], [զիշում], [խընշույք] (համատ. զեղշ, զեղշել, զիշել, զիշում, խնշույք): Փտել, փտած բառերում հաճախ ա-ի փոխարեն արտասանվում է ք՝ [փըթած], [փըթէլ] և այլն, որը նույնպես հանձնարարելի չէ: Նկատելի են նաև հնչյունի հավելման դեպքեր. օրինակ՝ ճանա[ն]չել, ամա[ն]չել, մանրու[ն]ք և այլն:

Դիտվում են աղավաղումներ՝ առաջացած բաղարկության հետևանքով: Այսպես, օրինակ, վարկարեկել բառը հաճախ արտասանվում է վար[ք]աբեկել, նույն ձևով՝ այլասեւել-ը՝ այլասե[ռ]վել և այլն: Նղբայր բառի թեք՝ Նղբոր, եղբորս, եղբորը և այլն ձևերը եղբայր-ի ազդեցությամբ երբեմն սխալ կերպով հընչվում (նույնիսկ գրվում) են եղբո[յ]ր, եղբո[յ]րս, եղբո[յ]րը և այլն⁷³:

Չնայած հայերենի ուղղախոսության բնագավառում դեռևս գոյություն ունեն զգալի թերություններ, բայց և այնպես չի կարելի շտեմնել առանձնապես վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած բարելավումները, առհասարակ խոսքի կուլտուրայի նկատելի բարձրացումը:

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՈՃՆԻՐ

Խոսելով արտասանական նորմաների մասին, չի կարելի անտեսել արտասանական տարբեր ոճերի հարցը, որոնք սերտորեն կապված են լեզվական ոճերի հետ:

Գրական լեզուն որպես համակարգ իրականում գոյություն ունի բազմապիսի տարատեսակություններով, որոնք դրսևորվում են նաև տարբեր զբաղմունքի տեղ մարդկանց խոսքում: Օրինակ, գրական լեզվով խոսող ուսուցչի, բժշկի, բանվորի, զինվորականի կամ կոլտնտեսականի լեզվում դժվար չէ նկատել որոշ առանձնահատկություններ: Ակնհայտ է և այն փաստը, որ գրական լեզվով խոսող անձնավորությունը բոլոր պարագաներում միևնույն գրա-

73 Գրական արտասանությունից կատարված շեղումները երբեմն կերպար ըստեղծելու խնդրում կատարում են կարևոր դեր՝ հերոսներին այս կամ այն կերպ բնութագրելու համար: Օրինակ՝ Գ. Տեր-Գրիգորյանի «Մենոող ֆլորան» ներկայացման մեջ բացասական գործող անձերից մեկը մի շարք բառեր արտասանում է ընդգծված գրային արտասանությամբ՝ եր[բ]եք, ար[դ]են, վեր[ջ]ին և այլն: Այս փոքր հատկանիշը նրա արտասանությանը տալիս է կեղծ ինտելիգենտական երանգ և օգնում է կերպարի տիպականացմանը:

կան լեզվով չի խոսում: Կառավարության անդամը, դատախոսը կամ ողջունի խոսք ասող աշակերտը հանդիսավոր պահերին օգտագործում են գրական լեզվի մի ոճ, որը ինչ-որ չափով տարբերվում է տանը, բնկերական գրույցի ժամանակ և այլ պայմաններում նրանց օգտագործած գրական խոսքից: Այս տարբերությունները վերաբերում են ոչ միայն բառապաշարին, որն ամենից ավելի է ակնհայտ, քերականությանը, այլև արտասանությանը: Այսպես, օրինակ, եթե ռադիոյի կամ հեռուստատեսային հաղորդումներում հաղորդավարն արտասանում է Վ[օ]լոդյա, կ[օ]նֆետ, Իգ[օ]ր, ապա նույն բառերը այլ պարագաներում նա ամենայն հավանականությամբ կարտասանի Վ[ա]լոդյա, կ[ա]նֆետ, Իգ[ը]ր: Մայրենի լեզվի ուսուցիչը դասարանում արտասանում և սովորեցնում է արտասանել լռությամբ (առանց ք-ի ուժեղ քմայնացման), մինչդեռ անկաշկանդ գրույցի ժամանակ նա հավանաբար արտասանում է լռու[ք']յուն:

Այսպիսով, գրական կենդանի խոսքում երևան են գալիս արտասանական առանձնահատկություններ (կախված այն բանից, թե ով է խոսողը և ինչ պայմաններում է խոսում), որոնք պայմանավորում են արտասանական տարբեր ոճեր⁷⁴:

Հայերենում կարելի է առանձնացնել արտասանական երկու ոճ՝ բարձր (ընտիր) և խոսակցական⁷⁵:

74 1887 թ. լույս տեսած ֆրանսիացի լեզվաբան Պ. Պասսիի «Ֆրանսերենի հնչյունները» ուսումնասիրության մեջ խոսվում է արտասանական չորս ոճերի մասին: Ռուս լեզվաբաններից այս հարցին առաջին անգամ ուշադրություն է դարձրել Լ. Վ. Շերբան, տարբերակելով ուսերենում արտասանական երկու ոճ՝ լրիվ (полный) և խոսակցական (разговорный) (տե՛ս Լ. Վ. Шерба, О различных стилях произношения и об идеальном фонетическом составе слова, Избранные работы по русскому языку, М., 1957, էջ 21—25): Ռ. Ի. Ավանեսովը և նրա աշակերտ Մ. Վ. Պանովը ժամանակակից ուսերենում առանձնացնում են արտասանական երեք ոճ՝ բարձր, չեզոք և խոսակցական (высокий, нейтральный, разговорный): См. у Р. И. Аванесов, Русское литературное произношение, М., 1968, էջ 20., М. В. Панов, О стилях произношения, сб. «Развитие современного русского языка», М., 1963:

75 Քրական հայերենի արտասանական առանձնահատկությունները բավարար չիմք չեն տալիս արտասանության մեջ տարբերակելու երեք ոճ (ինչպես ուսերենում): Հատկապես դժվար է արտասանական չեզոք և խոսակցական ոճերի առանձնացումը: Պայմանականորեն՝ արտասանական չեզոք ոճին կարելի է հատկացնել սեղան, տուն, ծառ և նման բառերի հնչումը, որը բոլոր պայմաններում մնում է նույնը և խոսքին որևէ երանգավորում չի հաղորդում:

Արդ, արտասանական ինչպիսի՞ հասկանիշներով կարելի է բնութագրել այդ երկու ոճերը:

Բարձր ոճում արտասանությունը մեծ մասամբ գիտակցական է-
խոսողը հսկողության տակ է պահում իր արտասանությունը, ջա-
նալով բառերն արտասանել այնպես, ինչպես պետք է կամ հա-
մարվում է ճիշտ: Սովորական խոսակցության ժամանակ խոսողն
իրեն թույլ է տալիս որոշ ազատություն: Այստեղ է, որ բարենը-
պաստ պայմաններ են ստեղծվում հնչյունական սղումների և զա-
նազան ազդեցությունների համար: Օրինակ, ցտեսություն բառը
բարձր ոճում արտասանվում է [ցըտէսություն], խոսակցական ո-
ճում՝ [ստէսութ'յուն], [ստէսթ'յուն], նույնիսկ՝ [ըստէսութ'յուն],
[ըստէսթ'յուն], որը որոշակիորեն սխալ է:

Բարձր ոճում չ կիսաձայնից առաջ դ, տ, ք հնչյունների քմայ-
նացումը շատ թույլ է արտահայտվում և ունի դիրքային պարտա-
դիր երանգի արժեք, ինչպես՝ հավիտյան, մատյան, քնդուն, միու-
թյուն, աթյունաբերություն և այլն, այն դեպքում, երբ խոսակցա-
կան ոճում ակնհայտ է ուժեղ քմայնացումը:

Արտասանության բարձր ոճին հատուկ է օտար մի շարք բա-
ռերի և հատուկ անունների անշեշտ ո ձայնավորի արտասանու-
թյունը ըստ գրության, օրինակ՝ կ[օ]տլետ, Տիխ[օ]ն[օ]վ, Կ[օ]լ-
ցով, «[0]գ[օ]նյով» և այլն. խոսակցական ոճին բնորոշ է ա-ով
և ը-ով հնչումը՝ կ[ա]տլետ, Տիխ[ը]ն[ը]վ, Կ[ա]լցով, «[Ա]-
գ[ա]նյով»:

Ի տարբերություն բարձր ոճի՝ զգույշ, տույժ, աշխույժ, վիրա-
բույժ, վայրկյան, բույն բառերը խոսակցական ոճում ունեն ա-
ռանց չ հնչում:

«Կ» եղանակիչից և «չ» ժխտականից հետո ե-ի և ո-ի [է],
[օ] արտասանությունը բնութագրում է բարձր ոճը, ինչպես՝ կոդ-
բան—[կօխպան], կոքսան—[կօքսան], կորոտա—[կօրօտա], կե-
րազենի—[կէրազէնի], շերազել—[չէրազէլ] և այլն. խոսակցա-
կան ոճին նույն դիրքում հատուկ է [էէ]-ով և [վօ]-ով հնչումը՝
[կըվօխպան], [կըվօքսան], [կըվօրօտա], [կըչէրազէնի], [չըչէ-
րազէլ] և այլն:

Բարձր ոճին բնորոշ է հնչյունների լիահունչ, մաքուր, բաց
արտասանությունը և հստակ առոգանությունը:

Արտասանության բարձր ոճն առաջին հերթին պահպանվում է
ասմունքում, հաղորդավարական և բեմական խոսքում⁷⁶ և առհա-

⁷⁶ Բեմական խոսքում արտասանական ոճերը կարող են օգտագործվել որպես
արտահայտչական միջոց:

սարակ հատուկ է խնամքով արտասանութեանը (մայրենի լեզվի ուսուցչին և այլն)։ Բարձր ոճում է, որ պարզորոշ կերպով արտահայտվում են հասարակայնորեն ընդունված և ճանաչում գտած արտասանական նորմաները։

Հայերենում արտասանական խոսակցական ոճը ավելի լայն գործառնություններ ունի, և նրա առանձնահատկությունները հաճախ հանդես են գալիս նաև հրապարակային ելույթներում և պաշտոնական խոսքում։

Անշուշտ, արտասանական ոճերը մեկը մյուսից խիստ սահմանազատված չեն, նրանք սերտորեն կապված են իրար հետ, և արտասանական որոշ երևույթներ մի ոճից թափանցում են մյուսի մեջ։

Նշենք նաև, որ ինչպես խոսակցական, այնպես էլ բարձր ոճում կարող են դրսևորվել արտասանական ազատ տարբերակի արժեք ունեցող զուգահեռներ, ինչպես՝ ո[ղջ]ույն—ո[խչ]ույն, [ը]զգոն—զգոն և այլն։ Սակայն զուգահեռ ձևերը ավելի բնորոշ են խոսակցական ոճին։

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՌԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Սովորաբար կենդանի լեզվի հնչյուններն ավելի շատ են, քան այբուբենի տառերը, այդ պատճառով լեզվի հնչյունական կողմը ուսումնասիրելիս անհրաժեշտ է լինում օգտվել բանավոր խոսքի հնչյուններն արտահայտող հատուկ համակարգից, որտեղ յուրաքանչյուր տառ արտահայտում է միևնույն հնչյունը և յուրաքանչյուր հնչյուն արտահայտվում է միևնույն տառով։ Այսպիսի համակարգը կոչվում է հնչյունական տառադարձություն։ Այդպիսի տառադարձական համակարգից է օգտվում, օրինակ, անգլիերենը, որը կիրառվում է ոչ միայն ուղղախոսական հատուկ բառարաններում, այլև սովորական երկլեզվյան բառարաններում, քանի որ անգլիերենի արտասանությունը շատ է հեռացել ուղղագրությունից։ Ռուսերենը նույնպես դիմում է հնչյունական տառադարձական համակարգի՝ ուղղախոսական նպատակներով։

Հայերենում տառերի և տառերին համապատասխան հնչման տարբերություններն այնպիսին են, որ դուրս չեն գալիս հայերենի տառերով արտահայտված հնչյունների սահմաններից։ Ուրիշ խոսքով, եթե ասենք ք տառին սովորաբար համապատասխանում է ք հնչույթը, ապա գրության և արտասանության տարբերությունը

կարող է արտահայտվել նրանում, որ Բ-ի փոխարեն արտասանվեն փ կամ սյ հնչույթները։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս բառերի հնչումը (եթե այդ տարբեր է գրությունից) արտահայտել հենց հայերենի տառերի միջոցով, առանց դիմելու լրացուցիչ տառերի օգնության։

Այդ նշանակում է, որ հայերենի գրական արտասանությունը նկարագրելիս կամ առանձին բառերի ու բառախմբերի արտասանությունը նշելիս, տառադարձական դժվարություններ չեն ներկայանում, քանի որ, ինչպես ասացինք, հայերենի միևնույն տառով արտահայտված տարբեր հնչյուններ ունեն այբուբենում համապատասխան տառեր։

Հայերենի գրական արտասանությունը նկարագրելիս՝ մենք կիրառում ենք հնչյունական տառադարձության մի շատ պարզ համակարգ, որտեղ ելնում ենք միևնույն հնչյունը ամենուրեք միևնույն տառով արտահայտելու սկզբունքից։ Այդ համակարգը կարելի է բնութագրել հետևյալ կետերով.

1. Բառամիջում և բառավերջում ե-ն և ու-ն ըստ արտասանության գրվում են է և օ։

2. Հայերենի այբուբենի ո և ն տառերը, որոնք բառասկզբում և բառամիջում (բաղադրյալ բառերում) ձայնավորից հետո արտասանվում են [վօ] և [յէ], ըստ արտասանության այդպես էլ գրվում են, ինչպես՝ ուղ—[վօրթ], ամենառակյալ—[ամէնավօրակյալ], երեկո—[յէրէկօ], կապտաբերդ—[կապտայէրիզ]։

3. և տառը, որպես երեք հնչյունների նշանագիր, փոխարինվում է յէվ, որոշ դեպքերում, ըստ արտասանության՝ էվ տառերով, օրինակ՝ հաւեան—[հարէվան], ճաւ—[նայէվ]։

4. Ձայնեղ բաղաձայնների խուլ կամ շնչեղ խուլ արտասանությունը արտահայտվում է համապատասխան տառերով, ինչպես՝ երկարձգել—[յէրկարաձըքէլ], ուղի—[վօրթի], հոգևորական—[հօքէվօրական], ռդբ—[վօխպ]։

5. Չգրվող բայց արտասանվող ր-ն տառադարձության մեջ վերականգնվում է, օրինակ՝ մեղր—[մէղրր], վնաս—[վընաս], եթե գաղտնավանկը լիաճունչ չէ, ապա նշվում է վերևից գրվող փոքր ր տառով, ինչպես՝ հեռապարակ, անզբառքեւ, կոցցեմել։

6. Եթե հնչյունը չի արտասանվում, աւլա համապատասխան տառը չի գրվում, օրինակ՝ աշխարհ—[աշխար], առհամարհել—[արհամարէլ], տույծ—[տուծ]։

7. Եթե ձայնակապը չի գրվում, բայց արտասանվում է, տա-

ռադարձութեան մեջ արտահայտվում է, օրինակ՝ էութիւն—[էյութիւն], Մարի՛ա—[Մարի՛յա]:

8. Հնչյունների փափուկ արտասանութիւնը ցույց տալու համար (ընդունելի կամ ոչ) այդ տառերի վրա դրվում է ապաթարց, օրինակ՝ ալբոմ—[ալ՛բօմ], վալս—[վալ՛ս], Օնեգին—[Օն՛էգին], Նեվսկի—[Ն՛էվսկի], Վասկա—[վաս՛կա], Ռադիո—[ռադ՛յօ], Էսյուդ—[էտ՛յուդ]:

9. Բառի կամ բառաձևի արտասանութիւնը, կամ հնչյունական տառադարձութիւնը անհրաժեշտ դեպքում տրվում է բառի կողքին անկյունավոր (միջակ) փակագծերում: Ավելի հաճախ փակագծերի մեջ է առնվում ոչ թե ամբողջ բառը, այլ տվյալ դեպքում մեզ հետաքրքրող հնչյունը կամ հնչյունները, օրինակ՝ մար[թ], ա[խպ]յուր և այլն:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից գրական հայերենում կա 6 ձայնավոր՝ ա, օ(n), է(ե), ու, ի, ր:

Հայերենի ձայնավորները բերանի խոռոչի արձագանքարանով արտաբերվող մաքուր հնչյուններ են, առանց ռեզոնանսի, մի երևույթ, որ հատուկ է հայերենի որոշ բարբառներին:

Ձայնավորների երկարությունը և կարճությունը հայերենում արժույթային չէ, այսինքն՝ երկար և կարճ ձայնավորների տարբերակում հայերենում չկա, և բառերի տարբերակման մեջ ձայնավորների տևողությունը որևէ դեր չի կատարում: Ձայնավորների երկար և կարճ արտասանությունը խոսքին կարող է հաղորդել միայն զանազան արտահայտչական, հուզական երանգներ, հմմտ. սիրելի՛ս և սիրելի՛ս, սպասի՛ր և սպասի՛ր և այլն:

Սովորաբար շեշտակիր ձայնավորները հայերենում ավելի երկար են, քան անշեշտները, որը հաստատվել է փորձառական ուսումնասիրության տվյալներով, բայց այս տարբերությունը սովորական ականջով ընկալելի չէ, մանավանդ որ շեշտակիր վանկը՝ մյուս վանկերի համեմատությամբ հայերենում կայուն դիրքի պատճառով զգալիորեն չի առանձնանում:

Հայերենի ձայնավորները ըստ նվազող տևողության՝ ունեն հետևյալ հերթականությունը՝ ա, օ, է, ու, ի, ր: Ամենից կարճը, ինչպես տեսնում ենք, ր-ն է, որը շարժուն հնչյուն է, շեշտ չի կրում և հեշտությամբ ենթակա է սղման:

Շեշտակիր և անշեշտ ձայնավորները հայերենում արտասանվում են միատեսակ. հմմտ. մաքո՛ւր—մուրա՛լ, աթո՛ղ—հոսա՛նք և այլն, այսինքն՝ շեշտ չկրելը չի ազդում ձայնավորների որակի

վրա: Շեշտի տակ գտնվելով ձայնավորներն արտասանվում են առավել հնչեղությամբ:

Գրական հայերենում չկան միևնույն ձայնավորների բաց և փակ հնչման տարբերակումներ արժույթային նշանակությամբ, թեև մեր մի շարք բարբառներ ունեն բաց և փակ է: Գրական հայերենի է-ն բաց է:

Հայերենի ա, օ, ու, է, ի ձայնավորները լիաձայն հնչյուններ են, առանց երկբարբառային երանգների, ինչպիսի դիրքում էլ լինեն:

Այս հինգ ձայնավորներից տարբերվում է Ը-ն, որի արտաբերության ժամանակ ձայնալարերը ավելի թույլ են թրթռում, քան մյուս ձայնավորների դեպքում:

Շեշտի տեղափոխության պատճառով առաջացած ձայնավորների սղման ժամանակ ու, ի ձայնավորների փոխարեն արտասանվում է ր (օր.՝ գիր—գ[ը]րի, դուռ—գ[ը]ռան):

Ը ձայնավորը փոխարինում է մյուս ձայնավորներին նաև այլ սղումների կամ անկումների ժամանակ, օրինակ՝ նորա > ն[ը]րա, վերա > վ[ը]րա, մեռուցանել > մեռց[ը]նել, կոտրատել—կոտ[ը]րտել, առկեցուն—առ[ը]ցուն և այլն:

Ձայնավորները կարող են ունենալ երանգային տարբերություններ, որոնք պայմանավորված են նրանց գրաված դիրքով, այսինքն՝ հնչյունների շրջապատով:

Հայտնի է, որ առհասարակ հնչյունի արտաբերումը հարմարվում է կից հնչյունի արտաբերությանը: Այս իմաստով, ձայնավորները գտնվելով տարբեր հնչյունների կողքին, հարմարվում են նրանց, ստանալով այլևայլ արտաբերական երանգներ, որոնք սովորական ականջով մեծ մասամբ ընկալելի չեն: Համեմատիր, օրինակ, ա ձայնավորի արտասանությունը կյանք, լալ, գամ, տալ դիրքերում:

Հայերենում ձայնավորներից շրթնայնացած են օ-ն և ու-ն: Գրական հայերենին հատուկ չեն ու, օ, օն առաջնայնեղվային ձայնավորները (գերմաներենի ու, օ հնչյունների նման), դրանք առկա են հայերենի մի շարք բարբառներում, օրինակ՝ գթգալ, անու, անու և այլն: Այդ պատճառով, այն անձինք, որոնք գրական լեզվով խոսելիս որոշ բառերի արտասանության մեջ գործածում են այդ հնչյունները, որոշակիորեն խախտում են գրական հայերենի արտասանական օրինաչափությունները, ենթարկվելով բարբառի ազդեցությանը:

Հայերենի ձայնավորներից ամենից բացը (լայնը) ա-ն է, ամենափակը՝ ի-ն։ Փակ է և ու-ն։ Լինելով վերին բարձրացման փակ (նեղ) հնչյուններ, ի-ն և ու-ն իրենց հնչեղությամբ ավելի թույլ են, քան մյուս ձայնավորները, մանավանդ երբ նրանց հաջորդում է ա ձայնավորը։ Այդ է պատճառը, որ այս ձայնավորները ավելի շատ են ենթակա փոփոխության և ավելի հեշտությամբ են փորցնում իրենց վանկարար բնույթը։

Հայերենում չկա բառ, որ կազմվի առանց ձայնավորի, ինչպես և չկա բառ, որ կազմված լինի միմիայն ձայնավորներից (եթե նրկատի շունենանք ու շաղկապը, ի նախդիրը, է օժանդակ բայը, ա՛ռ ձայնարկությունը, որոնք մեկ կամ երկու ձայնավոր հնչյուններ են ներկայացնում։ Էի օժանդակ բայաձևը արտասանվում է [էյի])։

Սակավաթիվ բառերում գրության մեջ ձայնավոր հնչյունի տառը արտահայտված չէ, օրինակ՝ հեֆ, սե, Սեռ և այլն։ Այդպիսի բառերում անպայմանորեն առկա է և տառը (կապգիրը), որով արտահայտվում են յ, է, վ հնչյունները¹։

Շատ արմատներ, որոնք շեշտի տեղափոխության պատճառով կորցնում են արմատական միակ ձայնավորը, արտասանվում են չգրվող Ը-ի միջոցով, օրինակ՝ սիրտ—ս[ը]րտի, քուն—ք[ը]-նաբեր և այլն։ Մի շարք բառերի արմատական ձայնավորը, որը շեշտափոխական հնչյունափոխության պատճառով սղվել է, հեշտությամբ վերականգնվում է, ինչպես՝ գ[ը]րկել—գուրկ, ս[ը]րբել—սուրբ և այլն, որոշ արմատներում արմատական ձայնավորը մթագնված է, օրինակ՝ սրսկել, դրդել, փրկել, սպրդել, ցնծուքյուն և այլն։

[Ա] ձայնավոր

[Ա] ձայնավոր հնչյունը հայերենում արտահայտվում է ատառով։ Ա ձայնավորը բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառավերջում, բառամիջում՝ տարբեր բաղաձայնների միջև, ինչպես նաև այլ ձայնավոր հնչյունների գուգորդությամբ, ունի միևնույն արտասանությունը, օրինակ՝ աթոռ, բարակ, քուրա, ամենափմաստուն։

Ա ձայնավորը ժամանակակից գրական հայերենում ետին շարքի ստորին բարձրացման ոչ շրթնայնացած հնչյուն է։ Ա-ի ար-

¹ Նշված օրինակներում և-ը բաղաձայնից հետո գտնվելով, արտասանվում է [եվ]։

տաբերության ժամանակ լեզուն (լեզվարմատը) մեծ չափով ետ է քաշվում և փոքր-ինչ բարձրանում վեր: Լեզվի ծայրը քիչ իջած է: Բերանը ավելի բացված է, քան մյուս ձայնավորների արտաբերության ժամանակ:

[ՈԻ] ձայնավոր

[ՈԻ] ձայնավորը հայերենում արտահայտվում է ու տառով, որը բոլոր դիրքերում ունի միևնույն հնչումը՝ ուրազ, առու, լուր:

[ՈԻ]-ն հայերենում ետին շարքի վերին բարձրացման հնչյուն է և արտահայտվում է շրթնայնացումով, այսինքն՝ շրթունքների ակտիվ մասնակցությամբ, որոնք առաջ են ձգվում, ստեղծելով կլորավուն փոքրիկ անցք: Նույնը տեղի է ունենում օ ձայնավորի արտաբերության ժամանակ, միայն առաջին դեպքում շրթունքները ավելի են առաջ ձգվում և առաջացնում են ավելի նեղ անցք, քան օ-ի արտաբերության ժամանակ: Լեզուն ետ է քաշվում և բարձրանալով վեր՝ մոտենում է փափուկ քիմքին:

[Ի] ձայնավոր

[Ի] ձայնավորը հայերենում արտահայտվում է ի տառով:

[Ի]-ն գրական հայերենում առաջին շարքի վերին բարձրացման հնչյուն է, որի արտաբերության ժամանակ շրթունքները իրարից հեռացած են և ձգված են դեպի կողքերը, լեզուն մղվում է դեպի առաջ, դեպի ատամները, ծայրը շփվում է ներքին ատամնաշարին: Լեզվի միջին մասը ստանալով գմբեթի ձև, բարձրանում է դեպի վոշտ քիմքը, առաջացնելով նեղ անցք՝ օդի հոսանքի համար: Ի-ն ամենից փակ (նեղ) ձայնավորն է հայերենում:

Բաղաձայններից առաջ և բառավերջում ի-ն ունի միևնույն արտասանությունը՝ իսկ, գիշեր, տարի և այլն:

Ձայնավորներից առաջ ի-ն մի շարք դեպքերում փոխում է իր որակը, վերածվելով յ հնչյունի, որն իր արտասանության տեղով շատ մոտ է ի ձայնավորին, օրինակ՝ կրիա, հեփիաթ, Մարիամ արտասանվում են կր[յ]ա, հեք[յ]աթ, Մար[յ]ամ: (Այս մասին մանրամասն տե՛ս «Ձայնավորական զուգորդումներ» բաժնում):

[Է] (ե) ձայնավոր

[Է] ձայնավորը գրական հայերենում առաջին շարքի միջին բարձրացման հնչյուն է, արտահայտվում է երկու տառով՝ է և ե,

նայած դիրքին: Արտասանության եղանակով շատ մոտ է [ի] ձայնավորին, այն տարբերությամբ միայն, որ եթե [ի]-ն արտասանվում է լեզվի վերին բարձրացմամբ, ապա [է]-ի արտասանության ժամանակ լեզուն ավելի քիչ է ձգվում առաջ և լեզվի զրմբեթաձև առաջամասը ավելի քիչ է բարձրանում դեպի կոշտ քիմբը, քան [ի]-ի արտասանության ժամանակ. բերանի բացվածքը [ի]-ի համեմատությամբ ավելի մեծ է: Եթե մի քանի անգամ հաջորդաբար արտասանենք ի—է հնչյունները, ապա կնկատենք նրանց միջև եղած արտասանական տարբերությունները:

Բառասկզբում [է] հնչյունն արտահայտվում է է տառով՝ է-ժան, էջ, բառամիջում և բառավերջում՝ Ե տառով՝ սեղան, բազն: Է տառը բառամիջում և բառավերջում հանդիպում է այն դեպքում միայն, երբ նա արմատի սկզբնատառ է կամ առանձին արմատ, օրինակ՝ վայրէջք, ամենաէական, որևէ, մանրէ, լայնէկրան:

Ե տառը բառասկզբում արտասանվում է [յէ]՝ երեխա, երկու, երկիր, երգ: Բացառություն են կազմում եմ, ես, ենք, եք, նեն օժանդակ բայաձևերը, որոնք արտասանվում են [է]-ով, օրինակ՝ գալիս ենք [էնք], ասում եմ [էմ], տղաներ են [էն] և այլն:

Բառասկզբում Ե տառի [յէ] արտասանությունը ժամանակակից հայերենում ունի հաստատուն և կայուն բնույթ, առանց տարբերակային հնչյունների կամ տատանումների: Այս իրողությունը հատկապես շեշտում ենք հետևյալ նկատառումով: Ինչպես Պալասանյանը, այնպես էլ Աբեղյանը նշել են, որ բառասկզբում Ե-ն արտասանվում է ին՝ իերկիր և այլն, որտեղ ի-ն հանդես է գալիս որպես երկբարբառի տարր, անվանկային թույլ ի²:

Ե տառը գտնվելով ձայնավորներից առաջ, որոշ դեպքերում արտասանվում է որպես յ, օրինակ՝ հրեա—հր[յ]ա, Անդրեաս—Անդր[յ]աս, ամեոբա—ամ[յ]ոբա, ֆեոդալ—ֆ[յ]ոդալ:

Ե տառը բառամիջում արտասանվում է [յէ] այն դեպքում, երբ արմատի սկզբնատառ լինելով, նրանից առաջ կա որևէ ձայնավոր, օրինակ՝ կապտաներիզ, ամենաներկար, ամենաներջանիկ, ինքնատե, վրաներթ, ոկեններիզ, աշխարհամերթ, էլեկտրաեռակցում, կիսանգրափակիչ, կիսանփ, հեշտանե, երկուեքսանի, միեղջյուրանի և այլն:

Երբ բառամիջում Ե-ով սկսվող արմատին նախորդում է որևէ բաղաձայն, ապա Ե-ն, որպես ընդհանուր կանոն, արտասանվում

2 Տե՛ս Սա. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, էջ 94: Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 116, 117:

է [է], օրինակ՝ մեներգ, քայլերգ, շքերթ, ջերմեռանդ, խուռներամ, երփներանգ, բազմերանգ, առերևույթ, հնչերանգ, ապերախտ, բազմերախտ, ապերջանիկ, ռնգեղջյուր, շաքարեղեգ, ծովեզր, լալնեզր, շնչերակ, քներակ, զարկերակ, մակերես, առերես, պարզերես, սներես, բացերես, ուղերթ, վերելք, տարելից, տաղերգու, արևելք, ողբերգություն, քնարերգություն, Միջերկրական և այլն:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս կարգի բառերի արտասանության մեջ կան զգալի թվով բացառություններ, որոնք հատկապես դրսևորվում են աճ ժխտական նախածանցով կազմված բառերում:

Փաստերը ցույց են տալիս, որ մի շարք բառեր որոշակիորեն այդ կանոնին չեն ենթարկվում: Ունկնդիր լինելով օրինակելի հաղորդավարների և դերասանների, ինչպես և գրական լեզվին տիրապետող անձանց արտասանությանը, կարելի է եզրակացնել, որ աճ նախածանցով կազմված բառերի մեծ մասում [է]-ի փոխարեն արտասանվում է [յէ], ինչպես՝ աներևակայելի, աներևակայելիորեն, աներկբայելի, աներկբայորեն, աներկբա, անենթակա, աներկմիտ, աներկյուղ, անեկամտաբեր, անեկամուտ, անենթադատ, աներաժշտական, աներախտիք, աներախտավոր, աներկմաստ, աներկմիտ, աներկմտաբար, անեռանդ և այլն: Աճ նախածանցով կազմվող այս կարգի մի շարք բառեր, սակայն, հաստատուն կերպով արտասանվում են ըստ կանոնի, այսինքն՝ [է]-ով, ինչպես՝ անեզր, աներեր, անեղծ, աներես, աներեսություն, անեփ, անեկ և այլն, որոնցից վերջին շորսում ակնհայտ է ժողովրդական էրես, էփել, էկած արտասանության ազդեցությունը:

Այնուհետև, արտասանական տատանումներ են դիտվում այն բարդություններում, որոնցում բաղադրիչների իմաստը, հատկապես ե-ով սկսվող երկրորդ եզրինը, հստակորեն գիտակցվում է և կոնկրետ է, այսինքն՝ մեծ մասամբ այն բարդություններում, որոնք կցական են, ինչպես՝ քառներկու, երեսուներեք, պարեղանակ, հորեղբայր, մորեղբայր, որոնք հաճախ արտասանվում են քսան-[յ]երկու, երեսուն[յ]երեք, պար[յ]եղանակ, հոր[յ]եղբայր, մոր[յ]եղբայր, քառորդ[յ]եզրափակիչ և այլն: Համեմատիք նաև՝ մակ[յ]երիկամ, գեր[յ]երջանիկ, գեր[յ]երկրային, արթ[յ]եպիսկոպոս և այլն: Հատկապես նոր կազմված բառերում յ-ով արտասանությունը կասկած չի հարուցում, և այդպիսիներում ե-ն [է] հնչելը շատ արհեստական է ստացվում, օրինակ՝ քառորդ[է]զրափակիչ և այլն, մինչդեռ հովվերգություն, քնարերգու, երփներ-

րանգ, մակերես և այլ բառերում այդպիսի տատանում չի նկատվում:

Քանի որ բառամիջում ե տառով սկսվող արմատի [յէ] կամ [է] արտասանությունը հանդես է բերում այնպիսի գծեր, որոնք ընդհանուր են բառամիջի ու արմատահնչյունի՝ [վօ] կամ [օ] արտասանության հետ, ուստի այդ հարցին նորից կանգրադառնանք ո, օ տառերի արտասանությունը քննելիս և կամփոփենք ընդհանուր կերպով: Այդտեղ նկատի կառնվի նաև ե-ի արտասանությունը «չ» ժխտականից և «կ» եղանակիչից հետո:

Շատ տարածված է դասական թվականներում -եռուդ վերջածանցը յ-ով արտասանելու սխալը, օրինակ՝ յոթերորդ, քսաներորդ, վեցերորդ, որ արտասանում են յոթ[յ]երորդ, քսան[յ]երորդ և այլն: Արտասանական այս շեղումը հատկապես բնորոշ է բարդ թվականներին, որոնցում -եռուդ ածանցից առաջ ընկած արմատի վրա դրվող ուժեղ շեշտը նպաստում է, որպեսզի -եռուդ բաղադրիչը փոքր դադարով առանձնացվի և արտասանվի յ-ով՝ [յ]երորդ, օրինակ՝ քսանհինգերորդ, տասնութերորդ, քառասունութերորդ և այլն, որոնք սխալ կերպով հնչվում են քսանհինգ[յ]երորդ, տասնութ[յ]երորդ, քառասունութ[յ]երորդ և այլն: Սրան թերևս որոշ չափով նպաստում է եռուդ դասական թվականի ձևական նմանությունը պայմանավորված համաբանությունը: Ունենք նաև քանի-եռուդ բառը, որտեղ -երորդ բաղադրիչի յ-ով արտասանությունը՝ [քանիյէրորթ] նույնպես ուղղախոսական սխալ է: Այս բառում օրինաչափական է իե-ի միջև արտասանվող թույլ յ-ն (որ գրեթե չի լսվում), որպես ձայնավորական զուգորդության ձայնակապ (հմմտ. նաև՝ տասնեկուներորդ և այլն):

Կայուն չէ այն բարդ թվականների արտասանությունը, որոնց երկրորդ բաղադրիչը երկու կամ երեք է, օրինակ՝ քսաներկու, տասներկու, հիսուներկու, տասներեք, քառասուներեք, ութսուներեք և այլն: Այս թվականներում ե-ն, որ ըստ կանոնի պետք է արտասանվի [է], մեծ մասամբ հնչվում է [յէ]՝ քսան[յէ]րկու, հիսուն[յէ]րկու, տասն[յէ]րկու, տասն[յէ]րեք և այլն: [է]-ով արտասանությունը պահպանում են, կարելի է ասել, գրեթե միայն հաղորդավարները, այն էլ ոչ հետեողականորեն:

Տասներկու, տասներեք թվականների տասն[յէ]րկու, տասն[յէ]րեք հնչմանը նպաստում է նախ և առաջ տասն բաղադրիչով կազմված այն թվականների համաբանությունը, որոնցում բաղաձայնների զուգորդությամբ պայմանավորված՝ հնչվում է ք,

ինչպես՝ տասն[ը]մեկ, տասն[ը]շորս, տասն[ը]հինգ և այլն: Սակայն, եթե նրանցում բառամիջում հանդիպում են երեք բաղաձայններ (հմմտ. տասնվեց, տասնյոթ)³, և Ը-ի արտասանությունը այստեղ պարտադիր է, ապա երկու և երեք-ով կազմված թվականներում դրանք երկուսն են: Այդ պատճառով վանկաբաժանը այս դեպքում անցնում է սև-ի միջև՝ տաս/նեերկու, տաս/նեերեք (հմմտ. նաև՝ տաս/նուր, ոչ տասն[ը]ութ, տաս/նիներ, ոչ՝ տասն[ը]իներ), այնպես, ինչպես արտասանում ենք տասն[է]րորդ, ինն[է]րորդ և ոչ՝ ին[ը]յէրորդ (թեև այդպես արտասանողներ էլ կան)⁴:

Մասնավորապես երկու բաղադրիչով կազմված բարդություններում է-ով արտասանությունը խոշորացված է նաև այն հանգամանքը, որ երկու թվականը բարբառային արտասանությամբ ունի [էրկու] հնչումը: Սվ ահա, բարբառային արտասանությանը չընմանվելու համար, շատերը խուսափողաբար է-ի փոխարեն բառամիջում արտասանում են յէ՝ քսան[յ]երկու, հիսուն[յ]երկու և այլն և ոչ՝ քսան[է]րկու, հիսուն[է]րկու, ինչպես հանձնարարվում է:

Երկու, երեք բաղադրիչների յ-ով հնչումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրանցով կազմված բաղադրություններում, որպես կցական բարդություններում, շատ ուժեղ է երկու

3 Նկատենք, որ այս թվականների (և ոչ միայն այս) արտասանությունը հակասում է բաղաձայնական զուգորդումների արտասանության այն կանոնին, ըստ որի, եթե ե-ն գտնվում է երկու բաղաձայնի միջև, ապա զաղտնավանկը կազմվում է ե-ից առաջ և ոչ հետո: Համեմատիր՝ հոտ[ը]նկայս, մկ[ը]նդեղ, ակ[ը]նդեռ, ձկ[ը]նկիթ և այլն: (Համեմատիր նաև՝ ինն[ը]սուն, ինն[ը]հարյուրերորդ և այլն, որոնցում Ը-ի հնչումը նույնպես հակառակ է այս կանոնին): Ը-ի արտասանությունը ե-ից հետո և ոչ առաջ պայմանավորված է նրանով, որ ոչ հեռավոր անցյալում (20-րդ դարի սկզբներին) 11, 12, 13 և այլն, գրվում էին ու շաղկապով՝ տասնուամեկ, տասնուերկու, տասնուերեք և այլն, որը փոխարինվեց չգրվող Ը-ով:

4 Տասն բաղադրիչով կազմված մի խումբ բարդ թվականների արտասանության մեջ կան մեծ տարբերություններ, որոնք մեծ մասամբ արդյունք ենք լեզվի պատմական զարգացման: Օրինակ, տասնեերկու թվականը հնչվում է [տասնէրկու], որը հանձնարարելի արտասանությունն է (այս հնչումը նույնանում է բարբառային հնչմանը), ապա խոսակցական լեզվին բնորոշ՝ [տասնըյերկու], նաև՝ ե-ի անկումով՝ [տասյերկու]: [Տասնէրկու] հնչումը որոշակիորեն բարբառային է: Կա նաև [տասէրկու] հնչական ձևը, որը նույնպես ընկալվում է որպես ոչ գրական, թեև եթե համեմատելու լինենք ե-ի անկումով, օրինակ, [տասէրօրթ] ձևի հետ (այս ձևը ներկա փուլում նորմայից դուրս չէ), ապա սա ևս պետք է օրինաչափական համարել: Տասնեերեք թվականը հնչվում է [տասնէրեք] (հանձնարարելի արտասանությունը), [տասնըյերեք] և [տասյերեք]: Հանդիպում է նաև [տասէրեք] հնչումը:

և երեք բաղադրիչների անկախ գիտակցումը, մանավանդ ոչ հեռավոր անցյալում դրանք գրվում էին անջատ: Այդ պատճառով երկու, երեք բաղադրիչները արտասանվում են [յէրկու], [յէրէք] և ոչ [էրկու], [էրէք]: Այս հանգամանքները հաշվի առնելով, հիշյալ կարգի բառերում յ-ով արտասանությունը չպետք է համարել ուղղախոսական շեղում, այլ արտասանական խոսակցական տարբերակ:

[0] (Ո) ձայնավոր

[0] ձայնավորը հայերենում ետին շարքի միջին բարձրացման հնչյուն է և արտասանվում է լրիվ շրթնայնացումով: [0]-ի արտասանությունը նման է [ու] ձայնավորի արտաբերությանը, շրթունքները ձգվում են առաջ՝ կազմելով կլորացած ճեղք, որը ու ձայնավորի համեմատությամբ ավելի մեծ է, քանի որ շրթունքները ավելի քիչ են ձգվում առաջ: Լեզուն ետ է քաշվում, բայց ավելի քիչ, քան [ու]-ի արտաբերության ժամանակ և լեզվամեջքի ետին մասը բարձրանում է դեպի փափուկ քիմքը, չհասնելով [ու]-ի արտաբերության աստիճանին: [0]-ի արտաբերության ժամանակ բերանի բացվածքը ավելի մեծ է, քան [ու]-ինը և ավելի փոքր, քան [ա]-ինը: Այդ լավ է երևում, երբ հաջորդաբար, իրար հետևից արտասանում ենք ա-օ-ու:

[0] ձայնավոր հնչյունը հայերենում արտահայտվում է երկու տառով՝ ո և օ: Բառասկզբում [օ] հնչյունը արտահայտվում է օ տառով, օրինակ՝ օր, օրենք, օրրան, բառամիջում և բառավերջում՝ ո տառով՝ կարոտ, հոտ, երեկո, պահածո և այլն: [0] հնչյունը օ տառով բառամիջում արտահայտվում է միայն այն դեպքում, երբ օ-ն արմատի սկզբնատառ է, օրինակ՝ անօրինական, անօգնական, տնօրեն, ոսկեզօծ:

Ո տառը բառասկզբում արտասանվում է [վօ], օրինակ՝ ուրակ, որքան, որոնել և այլն: Բացառություն են կազմում ով, ով-ֆեք բառերը, որոնցում ո-ն արտասանվում է [օ]⁵: Բառամիջում ո-ն արտասանվում է [վօ] այն դեպքում, երբ արմատի ո սկզբնատառին նախորդում է ձայնավոր, օրինակ՝ հոգե[վ]որդի նրբա[վ]ոճ, բազե[վ]որս, արջա[վ]որս, ազգա[վ]ոչնչացում, գազա-

⁵ Հայերենի հին ուղղագրությամբ ո-ով էին գրվում նաև օվկիանոս, օագիս, Օվսաննա բառերը (ովկիանոս, ովագիս կամ ովասիս, Ովսաննա) և ըստ կանոնի վ-ից առաջ ո-ն արտասանվում էր Օ:

[վ]որսում, դժվարա[վ]որս, ամենա[վ]որակյալ, ամենա[վ]որ-
դորմելի, ամենա[վ]որոշակի, խաղա[վ]ոճ, հնա[վ]ոճ, մի[վ]ո-
տանի և այլն: Մնացած դեպքերում բառամիջի ռ-ն և՛ որպես ար-
մատի սկզբնատառ, և՛ որպես միջնատառ, ըստ ընդհանուր կա-
նոնի արտասանվում է [օ], օրինակ՝ կողով—[կօղօվ], շարորակ—
շար[օ]րակ, պարզորոշ—պարզ[օ]րոշ, քնորդի—քնո[օ]րդի,
հայրդի—հայ[օ]րդի, կողսկր—կող[օ]սկր, միջնորմ—միջ-
ն[օ]րմ, առողջ—առ[օ]ղջ, սարգոստայն—սարգ[օ]ստայն, բա-
րորակ—բար[օ]րակ, ձկնորս—ձկն[օ]րս և այլն:

Այս կանոնից շեղվում է ան- նախածանցով կազմվող մի
խումբ բառերի արտասանությունը, օրինակ՝ անողնաշար, անող-
նաշարավոր, անոտնահարելի, անոխակալ, անողջախոհ, անողջա-
միտ, որոնք արտասանվում են [վօ]-ով: Բայց սա ընդհանուր օ-
րինաչափություն չէ, քանի որ ան- նախածանցով կազմված որոշ
բառեր արտասանվում են [օ]-ով, ինչպես՝ անողորմ, անողորք,
անորոշ և այլն:

Նկատի ունենալով ան- նախածանցով կազմված նաև արմա-
տական և սկզբնատառ ունեցող բառերի արտասանությունը, կարե-
լի է անել որոշ հետևություններ: Ան-ով կազմված բառերի արտա-
սանության մեջ ակնհայտ է հետևյալ երևույթը: Եթե ան- ժխտա-
կան նախածանցին հաջորդող բաղադրիչները անկախ վերադու-
թյուն ունեն, որոշակիորեն գիտակցվում են, ունեն որևէ կոնկրետ
իմաստ և ներկայացնում են ան- նախածանցով ձևի ուղղակի հա-
կադրությունը, ապա այդ դեպքերում ան-ին հաջորդող ե-ն և ռ-ն
արտասանվում են ոչ թե [է] և [օ], այլ [յէ] և [վօ]: Օրինակ՝
եկամտաբեր—ան[յէ]կամտաբեր, երկմտաբար—ան[յէ]րկմտա-
բար, երկմիտ—ան[յէ]րկմիտ, ենթակա—ան[յէ]նթակա, երկբայե-
լի—ան[յէ]րկբայելի, երկյուղ—ան[յէ]րկյուղ, ողջախոհ—ան-
[վօ]ղջախոհ, ռիսակալ—ան[վօ]խակալ, որոգայթ—ան[վօ]րո-
գայթ, ողջամիտ—ան[վօ]ղջամիտ, ողնաշար—ան[վօ]ղնաշար, ող-
նաշարավոր—ան[վօ]ղնաշարավոր, ոտնահարելի—ան[վօ]տնա-
հարելի և այլն: Համեմատիր նաև՝ աներագ, աներգ, աներկիր, ան-
երջանիկ, անելի, անեռանդ, անես (ես-ը շունեցող), աներանգ,
աներասան, աներգիկ, աներխա, անոխ, անոն և այլն⁶: Մինչդեռ

⁶ Նշենք, որ ան- ածանցի հավելումով հաճախ գոյականը վեր է ածվում ածա-
կանի (օր.՝ որոգայթ—անորոգայթ), և այդ իմաստով երկու եզրերի հակադրությու-
նը պայմանական է:

վերոհիշյալ պայմաններից եթե որևէ մեկը առկա չէ, ապա ան-ով կազմված նույն կարգի բառերը մեծ մասամբ արտասանվում են բառամիջի ե-ի և ո-ի արտասանության ընդհանուր կանոնով, այսինքն՝ [է] և [օ]։ օրինակ՝ անողորմ, անողոք, անօրոշ, անեղծ, անօրսալի, աներեք, անեզր, աներևույթ, աներևույթ, աներևութա-նալ և այլն։ Դրա բացատրությունը տվյալ դեպքում դժվար չէ։ Այսպես՝ ողորմ, ողոք, օրսալի, երևութանալ բաղադրիչները ժամանակակից հայերենում ինքնուրույն կիրառություն չունեն, հետևաբար հակադրություն չկա։ Եղծ, երեք բաղադրիչների անկախ գոյությունը որոշակիորեն չի գիտակցվում։ Եզր, երևույթ բաղադրիչների բառային ինքնուրույնությունը թեև պարզ է, բայց սրանց արտահայտած իմաստը փոխկրեալ չէ։ Այնուհետև, մեր լեզվի ներկա փուլում անկախորեն գործածվող որոշ բառը չի հանդիսանում անօրոշ-ի դրական ձևը, այսինքն՝ նրա ուղղակի հակադրությունը (ասենք՝ որոշ—անօրոշ), քանի որ չունի «որոշակի» իմաստը (անորոշ դերանուն է, օր.՝ որոշ աշխատակիցներ և այլն)։

Իհարկե, այստեղ դժվար է որոշակի կանոն սահմանել, քանի որ տարբեր դեպքերում տարբեր հանգամանքներ են դեր կատարում մեկ կամ մյուս արտասանության համար։ Այսպես, օրինակ, անեփ, աներես բառերում, թեև եփ-ը և երես-ը շատ որոշակի գիտակցվում են, բայց արտասանվում են ան[է]փ, ան[է]րես, որովհետև այստեղ էլ առկա է ժողովրդական էփեյ, էրես ձևերի ազդեցությունը (հմմտ. նաև՝ սևերես—[սէվէրէս], պարզերես—[պարզէրէս])։

Ան-ին հաջորդող արմատի ո սկզբնատառը մի շարք ժողովրդական բառերում նույնպես օւնի [վօ] արտասանությունը։ Օրինակ՝ անոսկոր (Միսն անոսկոր չի լինի), անոտ (անոտ ու անձեռ), անօրդի (Գնում է անօրդի մի ծեր կնկա մոտ) և այլն։ (Հմմտ. նաև՝ շանօրդի, ձեռոտտ, տերօղորմյա, որոնցում ո-ն արտասանվում է [վօ])։

Իհարկե, կան նաև տատանումներ. դրանց պատճառը փոխադարձ ազդեցություններն են, հատկապես այն դեպքերում, երբ միևնույն արմատից կազմված որևէ ձև անկախ կիրառվում է և կոնկրետ է, մյուսը՝ ոչ։ Օրինակ, աներևակայելի, աներևակայելիորեն, աներկրա, անօրոնելի բառերը հաճախ արտասանվում են նաև [յ]-ով և [վ]-ով, թեև հակադրություն չկա։ Դա պետք է բացատրել երևակայել, երկրայել, օրոնել ձևերի ազդեցությամբ։ Որոշ չափով տատանվում է և անելանելի, անօրսալի բառերի ար-

տասանութիւնը նույն հիմունքով: Այսպիսի դեպքերում, անշուշտ, նախապատվելի է [է]-ով հնչումը: Անորակ բառի ան[օ]րակ արտասանութիւնը պայմանավորված է լավորակ, բարձրորակ, վատորակ՝ [օ]-ով արտասանվող գուգահեռ ձևերի համաբանությամբ: Մյուս կողմից որակ բառի հակադրության առկայութիւնը հիմք է հանդիսանում, որպեսզի անորակ-ը հաճախ հնչվի ան[վօ]րակ:

Այսպիսով, ան- նախածանցին հաջորդող ե-ի և ո-ի [յէ] և [վօ] արտասանութիւնը մի շարք բառերում պետք է կանոնական համարել:

Այստեղ երևան է գալիս «կ» եղանակիչին և «չ» ժխտականին հաջորդող ե-ի և ո-ի արտասանութիւն հարցը ևս:

Կանոնը պահանջում է «կ» եղանակիչից և «չ» ժխտականից հետո ե-ն և ո-ն արտասանել [է] և [օ]՝ եզակի և հոգնակի թվի բոլոր դեմքերում, ներառյալ նաև անորոշ դերբայը՝ «չ» ժխտականի համար: Օրինակ՝ կորոշեմ—[կօրօշէմ], կորոշես—[կօրօշէս], կորոշի, կորոշենք, չորոշել, կորոշեմ, կորոշես, կորոշենք, չորոշել, կորսամ, կորսա, կորսանք, չորսալ, կոզեորվի, կոզեորվեմ, կոզեվորվենք, չոզեորվել, կոչնչացնեմ, կոչնչացնի, կոչնչացնենք, չոչնչացնել, կորոզեգրի, չորոզեգրի, կորոզնի, չորոզնի, կերգի—[վէրքի], չեքգի—[չէրքի], կերագի, չերագի, կերկարացնեմ, կերկարացնենք, չերկարացնենք և այլն: Ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ այս կարգի բառերում ե-ի և ո-ի՝ [է] վամ [օ] արտասանութիւնը խոսակցական ոճում լիովին բացառվում է: Խոսակցականում արտասանվում է կ[ըվ]որոշենք, կ[ըվ]որոշնենք, վ[ըվ]ոչնչացնի, չ[ըվ]ոչնչացնել, կ[ըյ]երգի, չ[ըյ]երգի, կ[ըյ]ե-րագենք, կ[ըյ]ենթադրենք և այլն⁷:

Նշված տիպի բառերը մեծ մասամբ [յ]-ով և [վ]-ով են արտասանվում նաև հրապարակային խոսքում, գրական լեզվին լիովին տիրապետող անձանց կողմից: Ըստ կանոնի՝ [է] և [օ] արտասանութիւնը պահանջվում է միայն ընթերցման ժամանակ, այն էլ, կարելի է ասել, հազվադեպ: Մեր հաղորդավարներից ոմանք, տեքստի ընթերցման վրա նախապատրաստական որոշ աշխատանք տանելուց հետո միայն, աշխատում են պահպանել ընդ-

7 Բացառութիւն են կազմում շերեալ, չեփել, կեփի, կերեա, կերես, չեկավ, չեկա և նման բառաձևերը, որոնցում է-ն սովորական է հնչում ժողովրդական էփել, էրեալ, էկավ ձևերի ազդեցությամբ: Այս բառերը գրական արտասանութիւն ձգտումով երբեմն հնչում են [կըյէփի], [կըյէրէվա] և այլն:

հանուր կանոնը և «կ»-ին, «չ»-ին հաջորդող ե-ն և ո-ն արտասանել [է] և [օ]:

Այս երկվությունը սերտորեն կապված է «կ» և «չ» եղանակիչների արտասանության հետ: Եթե դրանք արտասանում ենք կը և չը, ապա դրանցից հետո բնականաբար ե-ն և ո-ն հնչվում են [յէ] և [վօ]:

Այս տեսակետից հետաքրքրական է հայ ժամանակակից բանաստեղծների մոտեցումը վերոհիշյալ տիպի բառերի հնչմանը, որոնց [յէ]-ով և [վօ]-ով արտասանությունը բանաստեղծական շափում տողը մեկ վանկով երկարացնում է կամ կարճացնում. ինչպես՝ [չը-վօխ-պալ] և [չօխ-պալ], [կը-յէ-րա-զի] և [կէ-րա-զի]:

Թեև մենք չկարողացանք այսպիսի բառերի օգտագործումը չափածոյում մանրամասն քննել, բայց այն օրինակներն էլ, որ հիմա կնշենք, արտացոլում են այստեղ դրսևորվող արտասանության անկայունությունը: Օրինակները ցույց են տալիս, որ հնչման երկու եղանակն էլ բանաստեղծության մեջ կիրառվում է, թերևս նայած այն բանին, թե տվյալ տողում ինչ է պահանջում բանաստեղծության շափը:

Սակայն ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ զրավոր խոսքում, տվյալ դեպքում չափածոյում, մեծ մասամբ հաշվի է առնվում կանոնական արտասանությունը: Օրինակ՝ Եվ մի՞թե, մի՞թե, մի՞թե շերգեց [չէրթէց] / Եվ շողջունեց [չօղջունէց] իմ սիրտը խնդուն / Այն առաջուտը—այն խոր մթնում, / Խոր խավարում այն —արևն այն կեզ (Չարենց): Կամ՝ Կերգեմ [կէրթէմ] քո կոիվր մեծ, / Աշխատանքդ հզոր, անծիր,— / Այս պոեմս—քո կամքը երգեց, / Այս պոեմս—դու երգեցիր (Չարենց): Բերենք օրինակներ մեր օրերի բանաստեղծներից. Միայն կարենանք՝ անփույթ մի խոսքով / Մի արարքով / Չեղծել [չէղծէլ], չաղարտել սուրբ խոյակները, / Նրանց պահպանել միայն կարենանք, / Որ եթե այցի գնանք անցյալին, / Լուռ ծնրադրելու քարեր ունենանք (Ս. Կապուտիկյան): Մենք կերթեկեմ [կէրթէվէկէնք] աստղոտ հեռվում, / Բայց կապրենք հավերժ սեզ լեռներում (Ա. Գրաշի) և այլն:

Ահա նմուշներ, որոնցում ե-ն և ո-ն արտասանվում են [յէ] և [վօ]. Ու հողմերը թե գան՝ / Ինձ խլեն քո ձեռքից. / Ես կարթնանամ ծառ իմ, / Կորուսում [կըվօրօտում] մեկից (Ռ. Դավոյան): Թող ես չթաղվեմ հայրենի հողում՝ / շիրիմների մոտ իմ նախնիքների, / Սիրեցյալս թող մահս չողբա [չըվօխպա], / չմաղվեմ վրաս արցունք սզվորի (Ա. Գրաշի) և այլն:

Այդ հարցի վերաբերյալ մենք անկետային մեթոդով մի ստուգում անցկացրինք Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժնի երկրորդ կուրսի ուսանողների մեջ: Հիստոներկու ուսանողի մենք հանձնարարեցինք պատասխանել այն հարցին, թե ինչպես են նրանք արտասանում աներևակայելի, հորեղբայր, անենթակա, քսաներկու, տասներեք, կողջունի, չերգի, կորոնեմ, չողբալ, կորոշի, չորսացի, կորսամ բառաձևերում ե-ն և ո-ն: Պատասխաններից պարզվեց, որ 52 հոգուց 31-ը նշված բոլոր 12 բառն էլ արտասանում են [վ]-ով և [յ]-ով: Մյուս պատասխաններում բացակայում էր միօրինակությունը: 11 հոգի, օրինակ, նշել էին, որ քսաներկու և տասներեք բառերն արտասանում են [է]-ով, 9 հոգի հորեղբայր բառն են արտասանում [է]-ով և այլն: «Չ» ժխտականից և «կ» եղանակիչից հետո բոլոր 52 պատասխաններում էլ նշված էր [յ]-ով և [վ]-ով արտասանությունը:

Ունկնդրման և ձայնագրման մեթոդները կիրառելիս, երբ ուսանողները (և ոչ միայն ուսանողները) անգիտակցաբար արտասանում էին մեզ հետաքրքրող բառերը նախադասության մեջ, մենք առավել ևս համոզվեցինք այն բանում, որ հատկապես «չ» ժխտականով և «կ» եղանակիչով վերոհիշյալ կարգի բառերը բանավոր խոսքում գերազանցապես ունեն [վօ]-ով և [յէ]-ով հնչում:

Հանգամանորեն քննելով հարցը, ինչպես և հաշվի առնելով օրինակելի ճառախոսների, բեմի վարպետների և առհասարակ գրական մաքուր լեզվով խոսող անձանց հնչումը, եկանք այն եզրակացության, որ «կ» եղանակիչից և «չ» ժխտականից հետո ո-ի և ֆ-ի՝ [օ] և [է] արտասանությունը ներկա ժամանակաշրջանում կիրառելի է միայն արտասանական բարձր ոճում, մինչդեռ խոսակցական ոճի համար ընդունելի պետք է համարել նույն բառերի [վօ]-ով և [յէ]-ով արտասանությունը: Ուրիշ խոսքով՝ կորոշի, կորոշենք, չորոշենք, չորոշի, չորոշած, կեզրափակենք, կեզրափակի, չերգի, կորոտա և այլ բառաձևերի կ[ըվ]որոշի, կ[ըվ]որոշենք, չ[ըվ]որոշենք, չ[ըվ]որոշի, չ[ըվ]որոշած, կ[ըյ]եզրափակենք, կ[ըյ]եզրափակի, չ[ըյ]երգի արտասանությունը չպետք է համարել շեղում գրական արտասանությունից, այլ արտասանական տարբերակ խոսակցական ոճում: Մի շարք բառեր, ինչպես՝ որդենլ, որդնտել, եռալ, որոնք մեծ մասամբ հատուկ են խոսակցական ոճին, երբեք չեն արտասանվում առանց [վ]-ի և [յ]-ի, օրինակ՝ կ[ըվ]որպնի, կ[ըվ]որդնոտի, չ[ըվ]որդնի, կ[ըյ]եռալ,

շ[ւ]յ[ն]եռաց, շ[ւ]յ[ն]եռալ և այլն: Կ[օ]րդնի, Կ[է]ռա նման ձևերը արհեստական են:

Հապավումներում, լինեն դրանք տառային, թե վանկային, ե-ն և ո-ն որպես սկզբնատառեր հանդես գալիս՝ նաև բաղաձայնից հետո արտասանվում են [յէ] և [վօ], օրինակ՝ ԿԵՄ [լըյէմ], ՈՒԵՖԱ [ույէֆա], ԿՈՄԵՐԻՍ [կօմյէրիս], ԿՈՄԵՐԻՍԱԿԱՆ [կօմյէրիտական], ԲԱՆԵՐԻՍՊԱՐՈՅ [բանյէրիտըպրօց], ՀԱՅՈՍԿԵՐՀԱՆ [հայվօսկէրշառ] և այլն:

[Ը] ձայնավոր

[Ը] ձայնավորը հայերենում շատ գործածական հնչյուն է, սակայն միշտ չէ, որ բառի մեջ այն ունի իր գրային արտահայտությունը, այսինքն՝ միշտ չէ, որ ք հնչյունին համապատասխանում է ք տառը: Շատ դեպքերում, հատկապես բաղաձայնական կուտակումներում, ք-ն թեև չի գրվում, բայց արտասանվում է:

[Ը] ձայնավորը ժամանակակից գրական հայերենում միջին շարքի միջին բարձրացման հնչյուն է, որն իր կազմավորմամբ միջին տեղ է գրավում առաջին շարքի և ետին շարքի ձայնավորների միջև: [Ը]-ի արտասանության ժամանակ շրթունքները թեթևակի ձգվում են դեպի կողքերը, լեզուն ամբողջությամբ բարձրանում է դեպի բերանի վերին մասը՝ փափուկ և կոշտ քիմքերի մեջտեղը, լեզվի առջևի մասն իջած է դեպի ստորին ատամնաշարը և շփվում է ատամնաբներին: [Ը] ձայնավորի արտասանության ժամանակ բերանի բացվածքը ավելի փոքր է, քան [է]-ի դեպքում: Դա արտասանական ապարատի համար այն դիրքն է, որը նա ունենում է հանգստի վիճակին մոտենալիս: Այսինքն՝ [ը]-ն արտաբերվում է արտասանական օրգանների չեզոք դրվածքի ժամանակ:

[Ը] հնչյունը ք տառի արտահայտությամբ կարող է լինել բառասկզբում՝ Ընկեր, Ընտիր, Ըղձալի, Ըմբոստ, բառամիջում, երբ արմատի սկզբնատառ է՝ դասընկեր, ամենաընտիր և բառավերջում՝ Ընդհակառակը, խառը, սառը, ինքը և այլն: [Ը] ձայնավորը առանց տառային արտահայտություն ունենալու կարող է արտասանվել բառասկզբում՝ ստ, սկ, սպ, շտ և նման հնչյունազուգորդություններից առաջ, օրինակ՝ [ը]սկիզբ, [ը]սպասել և բառամիջում՝ բաղաձայնների միջև՝ ս[ը]ր[ը]սկել, պատ[ը]րվակ և այլն: Բառավերջում [ը] արտասանելը, երբ գրությամբ արտահայտված չէ, ուղղախոսական շեղում է, ինչպես՝ հինգ[ը] անգամ:

Երբեմն ռուսերենի նմանողությամբ [ը] է արտասանվում օտար բառերի վերջին փակ վանկի ու-ի և ա-ի փոխարեն, որը իրավամբ դիտվում է շեղում հայերեն գրական արտասանությունից. օրինակ՝ ագիտատոր—ագիտատ[ը]ր, տրանսպորտ—տրանսպ[ը]րտ, հոգնակի թվում՝ պրոֆեսորներ—պրոֆես[ը]րներ, սեկտորներ—սեկտ[ը]րներ, ինչպես և՝ Բաուման—Բաում[ը]ն, Կաուֆման—Կաուֆմ[ը]ն և այլն։ Վերջին երևույթը ավելի քիչ է տարածված և դիտվում է հատկապես ռուսախոսների շրջանում։

[Ը]-ն չի կարող նախորդել մեկ այլ ձայնավորի։ Գրությամբ [ը]-ն կարող է արտահայտվել միայն ն, մ, դ և ս հնչյուններից առաջ, օրինակ՝ բնկնել, բմպել, բղծալ. ս-ից առաջ հանդիպում է միայն բառ բառում⁸։

Հայերենում չկան բառեր, որոնք արտասանվեն միմիայն չգրվող [ը] ձայնավորի միջոցով. բացառություն են կազմում նմանաձայնական ձայնարկությունները՝ չրբխկ, ճրռռ, խրշշ, տրզզ և այլն, որոնցում [ը]-ն գրվում է այլ ձայնավոր չլինելու պատճառով։ Ը-ն տառադարձության մեջ արտահայտվում է թուրքական ծագման մի շարք հատուկ անուններում՝ Կզըլ-Կում, Կզըլ-Օրդա (ավելի ճիշտ է Կըզըլ-Կում, Կըզըլ-Օրդա), Մսըր, Պըլը Պուտի, Գըզըլնըֆ։ Համեմատիր նաև՝ աղըղեեեեե, դըզըլբաշի, ֆոֆ-սազըզ, Աղըշկա և այլն։ Ը-ն պետք է գրել նաև այն դեպքերում, երբ ք չգրելով բառը կարող է սխալ արտասանվել, օրինակ՝ Բուլանըխ, ճըրթալ։ Անցընել բայում (ներգործական սեռ) ր-ն ըստ արտասանության գրվում է, ի տարբերություն անցնել-ի (չեզոք սեռ)⁹։

Օտար բառերի տառադարձության ժամանակ որոշ դեպքերում չգրվող ր-ն արևմտահայերենի ընդօրինակմամբ է և փոխարինում է օտար բառերի ձայնավորներին ըստ մոտավոր արտասանության, ինչպես՝ Նասըր, Նյույորքըր, Հերըլդ, Հարփըրզ, Դինըր, Քերընբախ, Բընըցյանու, Ուոսըրման և այլն, մի բան, որ հակասում է հայերենում ընդունված տառադարձական կանոններին¹⁰։

Սակավաթիվ օրինակներում, երբ ր-ն արտասանվում է բա-

8 Բարբառում ր-ն կարող է նախորդել նաև լ-ին՝ բլնել, բլել, ու-ին՝ բոխել, տ-ին՝ բռնել և այլն։

9 Գաղտնավանկի ր-ն երբեմն կարող է գրվել չափական ստեղծագործություններում՝ բանաստեղծության չափը պահպանելու նպատակով։

10 Արևմտահայերենում մի շարք դեպքերում ր-ի գրությունը ընդունված է, օրինակ՝ Այտընյան, Չալըխյան, Հաճըն, և մենք այս կարգի հատուկ անուններում գրում ենք ք արևմտահայերենի ընդօրինակմամբ։

ռասկզբում, ձայնորդ (նաև՝ դ) և պայթական (նաև՝ կիսապայթական) հնչյունների զուգորդությունից առաջ, մյուս դիրքերի համեմատությամբ առավել լիահունչ է, ինչպես՝ ընկնել, ընծա, ըմբիշ, ըղձալ, ընդմիշտ, բայց ընդհանուր առմամբ ը-ն ավելի սուղ է և ավելի թույլ է հնչում, քան մյուս ձայնավորները, ներառյալ նաև այն դեպքերը, երբ ը-ն ունի իր գրային արտահայտությունը:

[Ը]-ն գրական հայերենում շեշտ չի կրում:¹¹ և որպես ձայնավոր հնչույթ, մյուս ձայնավոր հնչույթների համեմատությամբ ավելի սուղ է, այսինքն՝ ավելի կարճ: Զգրվող ը-ն կարող է հեշտությամբ իր տեղը փոխել (եթե դրա համար բարենպաստ պայմաններ կան), երբեմն բոլորովին դուրս ընկնել կամ ավելանալ, փոխարինվել ա-ով, օրինակ՝ ընկճ[ը]վել և ընկ[ը]ճվել, պատժ[ը]վել և պատ[ը]ժվել, կ[ը]րկնել և կ[ը]րկ[ը]նել, գերբ[ը]նական—գերբ/նական, ծան[ը]ր—ծանրանալ, աստ[ը]ղ—աստղալից, ձեռ[ը]նտու—ձեռն[ը]տու—ձեռնատու, դռ[ը]նբաց—դռնաբաց, ձեռ[ը]նհաս—ձեռնահաս և այլն: Ը-ի համար մի շարք դեպքերում կա և՛ արտասանելու, և՛ չարտասանելու հնարավորություն:

Բանաստեղծները ը-ի գործածության հարցում բավականաչափ ազատ են: Այդպես է եղել առաջ, այդպես է և հիմա: Եթե պետք է, բանաստեղծական չափի համար ավելացվում կամ սղվում է գաղտնավանկը (իհարկե, այնտեղ, որտեղ դա հնարավոր է), որով մի վանկով ավելանում կամ պակասում է տողը (Այս մասին մանրամասն տե՛ս «Գաղտնավանկ» բաժնում):

Ը-ի հավելումները հատկապես բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին:

Լ-Ի ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական այբուբենի և տառը մի կապգիր է, որն արտահայտում է [լ], [է], [վ] հնչյունների կապակցություն: Օգտագործվում է և շաղկապի, ինչպես նաև բառամիջում ու բառավերջում [էվ] կամ [լէվ] հնչյունագրորդությունը արտահայտելու համար, օրինակ՝ հաբեան [էվ], բարեել [էվ], կարեւոր [էվ],

¹¹ Բարբառներում շեշտը կարող է ընկնել ը-ի վրա, օրինակ՝ սը՛րտըմբ (սրտում): Հմմտ. նաև՝ շը՛ պիտի խոսես:

տերև [էվ], ժեն [էվ], առետուր [էվ], առջև [էվ], դե[էվ], նաև [յէվ], Կարաև [յէվ]¹²,

և տառն արտասանվում է [էվ] բաղաձայնից հետո, ինչպես՝ ակ, արև, ուղևոր, կարևոր: Ձայնավորից հետո և-ն արտասանվում է [յէվ], օրինակ՝ նաև, թեև, նիկողաև, Սերգեև, Գանիև: Այս դեպքում յ-ի արտասանությունը պայմանավորված է երկու ձայնավորների հանդիպումով (նա-յ-էվ), որոնց միջև տվյալ դեպքում յ-ն կատարում է ձայնակապի դեր:

և բաղադրիչով կազմված բառերը մեծ մասամբ չունեն հաստատուն արտասանություն. և-ի հնչումն այս բառերում տատանվում է [յէվ]-ի և [էվ]-ի միջև: Այդպիսի բառեր են, օրինակ, թերևս, դեռևս, այլևս, այլևայլ, այլևայլություն, ինչևէ, ինչևիցե, ովևէ, ովևիցե, երբևէ, երբևիցե, որևէ, որևիցե, թեպետև, թեկուզև, իբրև, իսկույնևեթ, մեկևկես և այլն: Դրանց մի մասում և-ն արտասանվում է մեծ մասամբ [յէվ], ինչպես՝ ովևէ, ովևիցե, թեկուզև, դեռևս, մեկևկես, մյուսներում՝ ավելի շատ [էվ], քան [յէվ], օրինակ՝ այլևս, այլև, ինչևէ, ինչևիցե, թեպետև և այլն:

Այդ տատանումները շատ պարզորոշ կերպով բացահայտվեցին վիճակագրական մի փոքր փորձի տվյալներում: 24—62 տարեկան 25՝ զրական լեզվին լիովին տիրապետող անձանց մոտ և-ով կազմված մի խումբ բառերի արտասանությունը տվեց հետևյալ պատկերը:

	[յէվ]	[էվ]
թերևս	19	6
դեռևս	25	—
այլև	7	18
այլևս	7	18
ինչևէ	10	15
ինչևիցե	8	17
ովևէ	25	—
ովևիցե	25	—
թեպետև	8	15
թեկուզև	25	—

Իսկույնևեթ բառը հնչվեց երեք եղանակով՝ իսկույն[յէվէթ] (18 մարդ), իսկույն[յէվյէթ] (5) և իսկույն[էվէթ] (2):

¹² Բառամիջում [էվ]-ը արտահայտվում է եվ (ոչ՝ և) տառերով, եթե վ-ն արմատի սկզբնատառ է, օրինակ՝ նոգեվիճակ, գերեվաբեյ, ոսկեվազ, տաբեվերջ: Բա-

Տատանումների պատճառը ակնհայտ է, քանի որ և-ով կազմված բառերի բաղադրիչները ոչ հեռավոր անցյալում (դրանց մի մասը՝ մինչև 30-ական թվականները) գրվում էին մեծ մասամբ անջատ, օրինակ՝ իսկույն և եք (այնուհետև՝ իսկույն և եք)¹³, քեպեա և, դեռ ևս, այլ և, քեկուզ և և այլն: Հասկանալի պատճառներով այս կարգի բառերի մի մասում [յէվ] հնչումը ավելի բնորոշ է մեծահասակներին, որոնց մոտ դեռևս ուժեղ է և-ի անկախ գիտակցումը, մինչդեռ, օրինակ, դպրոցականների մոտ գերակշռում է [էվ] արտասանությունը:

և տնուր ուսական մի շարք ազգասուններում ուսերենի նըմանողությունը արտասանվում է [յէվ], ոչ [էվ], թեև հաջորդում է բաղաձայնի և ըստ կանոնի պետք է արտասանվի [էվ], օրինակ՝ Աստաֆե—[Աստաֆյէվ], Պրոկոֆե—[Պրոկոֆյէվ], Աֆանասե—[Աֆանասյէվ]:

ԶԱՅՆԱՎՈՐԱԿԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչև բուն հարցին անցնելը պարզենք մեր աշխատանքում գործածվող զուգորդում (կամ հնչյունագույնագորդում), զուգորդելիություն և կապակցություն (կամ հնչյունակապակցություն), կապակցելիություն տերմիններին տրվող իմաստը:

Զուգորդում (կամ զուգորդություն) ասելով հասկանում ենք հնչյունների՝ մեկը մյուսին զուգորդելը, որոնք կից են, բայց չեն արտասանվում մեկ վանկի սահմաններում: Օրինակ՝ պաշտպան բառում՝ ունենք շտպ հնչյունների զուգորդում, մաքսվել բառում՝ զուգորդվում են բավ բաղաձայնները, համախառնակա՞ն բառում՝ ախ ձայնավորները: Զուգորդելիություն ասելով հասկանում ենք

ռասկզբում [յէվ] հնչյունագույնագորդությունը հատուկ անուններում և նրանցից կազմված բառերում արտահայտվում է եվ տառերով (և տառը մեծատառ չունի), օրինակ՝ Եվրոպա, Եվրոպական, Եվստախյան, Եվդոկիմով, Եվգենյա: Եթե եվ-ով սկսվող բառը դառնում է բարդ բառի երկրորդ բաղադրիչ, ապա բառամիջում գրվում է նույնությամբ, բայց արտասանվում է ըստ կանոնի [էվ], օրինակ՝ հնդեվրոպական:

¹³ Իսկույն և եք բառը (գրությունը ըստ 1968 թ. ուղղագրական բառարանի) ներկայումս հանդիպում է նաև անջատ գրությամբ՝ իսկույն և եք. հմտ. սկզբից և եք, այսօր և եք, վաղը և եք: Նպատակահարմար է ընդունել միասնական անջատ գրություն:

հնչյունների մեկը մյուսին զուգորդելու, հաջորդելու հնարավորությունը: Օրինակ, հր, գր, ստ, ակ բաղաձայնները բառասկզբում կարող են իրար զուգորդել, իսկ բգ, բն, գծ հնչյունները՝ ոչ:

Կապակցություն տերմինն օգտագործում ենք կից հնչյունները միասնաբար, մեկ վանկի սահմաններում արտասանվելու դեպքում: Օրինակ՝ պաշտպան բառում ունենք շտ հնչյունների կապակցություն և, ինչպես ասվեց, շապ հնչյունների զուգորդություն, միջանցք բառում առկա է նցք հնչյունակապակցությունը:

Ձայնավորների կապակցության մասին բնականաբար ճիշտ չի լինի խոսել, քանի որ մեկ վանկի սահմաններում հանդես եկող կից ձայնավորները վեր են ածվում երկհնչյունների, օրինակ՝ օվկիանոս—[օվ-կյա-նոս], օրիորդ—[օր-յօրթ]:

Կապակցելիություն տերմինը նշանակում է հնչյունների միասնաբար, մեկ վանկի սահմաններում արտասանվելու կարողությունը: Օրինակ՝ շտ, ստ, մալ, րք հնչյունները կապակցելի են մ' վանկավերջում, և՛ բառավերջում (հմմտ. հաշտ—հաշտվել, հաստ—հաստլիկ, ամալ—ամալհովանի, հաբք—հաբքվել), իսկ աւ, աշ, ծր, կր, կղ, կն հնչյունները անկապակցելի են (հմմտ. պատ[ը]սպարել, պատ[ը]շգամբ, կարծ[ը]ր, ոսկ[ը]ր, արկ[ը]ղ, ակ[ը]ն և այլն)¹⁴:

Ձայնավորական զուգորդումներ արտահայտությունը տվյալ դեպքում պայմանական է, որովհետեւ բացի իրար զուգորդող ձայնավորների առանց փոփոխության հնչումից, այստեղ նկատի է առնվել նաև կից ձայնավորների երկհնչյունային և ձայնակապով արտասանությունը: Այլ խոսքով, տվյալ դեպքում հիմքը ձայնավորների գրությունն է:

Ժամանակակից հայերենում գրությամբ արտահայտվող ձայնավորական զուգորդումների արտասանության մեջ երևան են գալիս մի շարք առանձնահատկություններ:

Օտարազգի բառերում կարելի է հանդիպել գրեթե բոլոր հնարավոր ձայնավորական զուգորդումներին: Դրանցում կից ձայնավորները մեծ մասամբ երևան են գալիս պարզ կամ մեր կողմից պարզ գիտակցվող բառերում, օրինակ՝ ռադիո, մեկուեռ,

¹⁴ Հայ լեզվաբանական գրականության մեջ հանդիպում է հնչյունակապակցություն տերմինը՝ գործածված իրար հաջորդող, բայց տարավանկ (ոչ մեկ վանկի սահմաններում արտասանվող) հնչյունների վերաբերյալ, օրինակ՝ ազդվել, մառդկանց և այլն (տե՛ս Ա. Խաչատրյան, Հայերենի ք ձայնավորի հնչույթայնություն հարցը, ՊՔՀ, 1966, № 4, էջ 147):

լեզեռն, պոեմ, ստրատեգիա և այլն, ինչպես նաև երկու ձևույթների սահմանագծում՝ ռադիոկոառույ, միկրոգաւիզմ, էլեկտրաւնալիզ և այլն: Մինչդեռ գրութեան մեջ արտահայտւող ձայնավորների զուգորդումը բուն հայերեն բառերում մեկ ձևույթի սահմաններում հանդես է գալիս սակավաթիվ դեպքերում և արտահայտւում է իա, եա, իո զուգորդումներով, օրինակ՝ հնէիաթ, կրիա, հրեա, օրիորդ և այլն, որոնք արտասանութեան ժամանակ իրացւում են յա, յո երկհնչյուններով՝ [հէքյաթ], [կըրյա], [հըրյա], [օրյօրթ]:

Ժամանակակից հայերենում շկան երկբարբառներ, այսինքն՝ երկու ձայնավորի այնպիսի կապակցութիւն, որն արտասանվի մեկ վանկի սահմաններում:

Ձայնավորների զուգորդումները հայերեն բառերում գերազանցապես երեան են գալիս երկու ձևույթների սահմանագծում, օրինակ՝ լիութիւն, միօրինակ, վստահելիորեն, ձիեր, ամենաուժեղ և այլն:

Հայոց լեզվին ընդհանուր առմամբ հատուկ շեշտ ձայնավորական զուգորդումներ, այդ պատճառով իրար հանդիպող ձայնավորների միջև սովորաբար արտասանւում է ձայնակապ, որը ա-ից և ո-ից հետո գրւում է (գնալի, երեխայական, բարոյական, տղայի), իսկ մյուս ձայնավորներից հետո թեև չի գրւում, բայց շատ դեպքերում արտասանւում է:

Ձայնավորական զուգորդումների արտասանութեան պատկերը ամբողջութեամբ պարզելու և համապատասխան հետեւութիւններ անելու նպատակով ստորև քննւում են այն բոլոր ձայնավորական զուգորդումները, որոնք հանդիպում են հայերենում:

Կրկնակ ձայնավորների արտասանութիւնը

Ոչ փոխառյալ բառերում կրկնակ ձայնավորները կարող են հանդիպել միայն բաղադրյալ ձևերում, երկու բաղադրիչների սահմանագծում, ինչպես՝ ամենաառողջ, համաավստրալիական, գիտաւթեխտական, արմաթացիներ, հնչարտաբերական, օղաշուրթիւն, լիիրավ, հրեերեն, կռեերեն և այլն, որոնք արտասանւում են առանց ձայնակապի կամ թույլ ձայնակապով:

Ի տարբերութիւն սրա, կրկնակ ձայնավորները կարող են հանդես գալ օտարազգի նաև պարզ բառերում (մեկ ձևույթի մեջ) և արտասանվել ձայնավորի տեղութեամբ, ինչպես՝ պերպետուտմ-

մոքիլե, վակուում, Տրանսվալ, Մագերեբի, Վատեռլոո, Լոո, Հաագա, Հաագե, Քաաբի, Սաադի, Գավրիիլ, Մոռ և այլն:

Կրկնակ ձայնավորները օտարազգի (կամ մի բաղադրիչով օտարազգի) բարդ բառերում արտասանվում են զգալի հորանջով (արտասանության ընդհատումով), ինչպես՝ միկրոօրգանիզմ, հիդրօդերևութաբանական, միկրոօբյեկտ և այլն: Նույն սկզբունքով են արտասանվում կից ա ձայնավորները ոչ փոխառյալ բառերում՝ ամենաառաջվոր, հակաառողջապահական և այլն:

Քանի որ հայերենի հնչական ոգուն առհասարակ խորթ է ձայնավորների տեղությունամբ արտասանությունը, ուստի տարածված մի շարք բառերում գրության մեջ արտահայտվող կից ձայնավորները խոսակցական լեզվում հաճախ հնչվում են կարճ, ինչպես՝ կռօպերատիվ, կոռդիհնա: Գրական արտասանությունը պահանջում է օտար բառերում կրկնակ ձայնավորների տեղությունը պահպանել և արտասանել ըստ գրության:

Աի, առ, առ, աե ձայնավորական զուգորդումների արտասանությունը

Այս զուգորդությունները հանդիպում են միայն օտարազգի բառերում, բացառությամբ ամենա-, համա-, ենթա- և այս կարգի ալլ բաղադրիչներով կազմված այն բառերի, որտեղ ա-ին կարող են հաջորդել ի, ու, է, օ, ինչպես և ը ձայնավորները (օր.՝ համաիրանական, ամենատրախ, ամենաընտիր և այլն), որոնք արտասանվում են հորանջով:

Աի.— Հանդիպում է հաճախակի, ինչպես՝ մոզաիկա, արխաիկ, արխաիզմ, նաիվ, նովոկաին, կոկաին, ռուբաի, նաիրի, նաիրյան, Պորտ-Սաիդ, Կարաիբյան, Ուկրաինա և այլն: Այս Դառերում ձայնակապը թեև չի գրվում, բայց արտասանվում է՝ մոզա[յ]իկա, արխա[յ]իկ, արխա[յ]իզմ, նա[յ]իվ, նովոկա[յ]ին, կոկա[յ]ին, ռուբա[յ]ի, նա[յ]իրի, Պորտ-Սա[յ]իդ, Կարա[յ]իբյան և այլն: Զայնավորային այս զուգորդության մեջ յ ձայնակապի արտասանությունը այնքան որոշակի է, որ հակառակ հայերենում օտար բառերի ուղղագրության կանոնի, երբեմն սպրդում են սխալներ, և նույնիսկ շատ հեղինակավոր աղբյուրներում ըստ արտասանության գրվում է յ, ինչպես՝ մոզայիկա, արխայիկ, նայիրի և այլն:

Որոշ դեպքերում ի-ն ա-ից հետո կարող է արտասանվել յ, օրինակ՝ Տաիլանդ—Տա[յ]լանդ: Խոսակցական լեզվում նույնպես

դա պատահում է, որտեղ ի-ն թույլ արտասանվելով վեր է ածվում յ-ի, օրինակ՝ ուկրաինական—ուկրա[յ]նական, նաիրի—նա[յ]-րի և այլն:

Առ, առ.—Ձայնավորական այս զուգորդումները, ի տարբերություն նախորդի (աի), արտասանվում են առանց ձայնակապի, օրինակ՝ քառս, աղբտա, Բիլբառ, լառս, կակառ, Մառ և այլն¹⁵։ Առ զուգորդությունը հանդիպում է ավելի հաճախակի, ինչպես՝ ռառունգ, առւլ, կառունաս, Ձառւջիկառւ, ֆառւնա, մառւղեր(իստ), առւտ, Բառւման, Պառւլ, լառւրեատ, կառւլուկ, լառւրա, առւդիտորիա, առւդիենցիա, առւդիտոր, Սառւդյան, Դառւզավա, Քեյսիթառւն, Հառւպտման, Բելլառւսկաս, Բառնառւլ, Բրառնինգ, լոկառւտ, նոկառւտ, բոյսկառւտ, բլոկհառւզ և այլն:

Ան.—Այս զուգորդության արտասանությունը տատանվում է [ա'է] թույլ ձայնակապով արտասանության, [աէ] երկբարբառակերպի և [այ] երկհնչյունի միջև։ Օրինակ՝ աերողինամիկա, աերոստատ, աերոբազա, աերոբենզին, աերոդրոմ, աերոպլան բառերն արտասանվում են [ա'է] ըոստատ, [ա'է] ըողինամիկա, [ա'է] ըոբազա, [ա'է] ըոբենզին, [ա'է] ըողրոմ, [ա'է] ըոպլան, առանց ձայնակապի՝ [աէ] ըողինամիկա, [աէ] ըոստատ, [աէ] ըոբազա, [աէ] ըոբենզին և՛ [այ] ըողինամիկա, [այ] ըոստատ և այլն։ Այս տիպի բառերի արտասանությունն ակնհայտորեն ունի տարբերակային բնույթ։ Գերադասելի է ձայնակապով արտասանությունը, որը առավել մոտ է հայերենի հնչական ոգուն։ Մաեսառա բառում ե-ն գտնվելով շեշտի տակ, փոփոխության չի ենթարկվում. աե-ն արտասանվում է ձայնակապով՝ մա[յ]ե'ստրո:

Իա, իռ, իու, իե ձայնավորական զուգորդումների արտասանությունը

Իա.—Շատ տարածված զուգորդություն է, հատկապես օտար բառերում։ Հայերեն պարզ բառերում իա-ն արտասանվում է [յա]։ Այդ բառերն են՝ հեթիաթ, կրիա, բամիա, օվկիանոս, դաստիարակ,

¹⁵ Հնում փոխառյալ բառերում առ կից ձայնավորների միջև մտնում էր և կամ յ ձայնակապը, օրինակ՝ Մենեկառոս, Դանառոս, Շմառն, փարառն, նիկողայոս, լիկայոն կամ լիկառն։ 20-րդ դարի սկզբներին դեռևս քառս բառը գրվում և արտասանվում էր քառս։ Հմմտ. նաև՝ կալուադիե, ալմմ՝ Լաուադիե։ Որոշ անձնանուններ ներկայումս էլ գրվում և արտասանվում են ձայնակապով և առանց ձայնակապի, օրինակ՝ Մենեկառոս և Մենեկավոս (վերջին ձևը հնաբանություն է)։

խաւիար, փասիան, անձնանուններից՝ Մարիամ, Անանիա, Ազարիա, Բունիաթ(յան), Եղիազար(յան), Երեմիա, Զաքարիա, Սուքիա(յան), Բենիամին, տեղանուններից՝ Սիսիան: Ուստիան, Արփիար անձնանուններում ի-ն պահպանվում է:

Իա-ն արտասանվում է որպէս [յա] օտարազգի բազմաթիւ բառերում, օրինակ՝ քիմիա—[քիմյա], ավիացիա—[ավյացյա], սիտուացիա—[սիտուացյա], մալարիա, պարտիա, սոցիալիզմ, պրոլետարիատ, ֆեդերացիա, Գերմանիա, Ռուսիա, Դանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Բուլղարիա, Հունգարիա, Շվեդիա, միլիարդ, կոլեգիա, կամպանիա, միլիցիա, մատերիա, էներգիա, ինֆորմացիա, աուդիտորիա, կոալիցիա, Ուրմիա, լաբորատորիա, ստուդիա, ակադեմիա, ասոցիացիա, ագիտացիա, ուտոպիա, դիսերտացիա, բակտերիա, բիլիարդ, վարիանտ, դեկլարացիա, ֆունկցիա, հարմոնիա, հիստերիա, փոնցեսիա, դեմագոգիա և այլն:

Իա զուգորդության ի-ն եթե շեշտված է, ապա իա-ն արտասանվում է ոչ թե [յա], այլ [իյա]՝ Մարի'ա—[Մարի'յա], Անաստասի'ա—[Անաստասի'յա], Լի'ա—[Լի'յա], Ֆիզիոտերապի'ա—[Ֆիզյոտէրապի'յա], «Ռոսի'ա»—[Ռոսի'յա], Ներալգի'ա—[նէվլալգի'յա] և այլն. այսինքն՝ ձայնակապով:

Օտարազգի բառերում իա զուգորդութունը չի փոխվում [յա]-ի, երբ ի-ն գտնվում է բառասկզբում (առաջին վանկում). Այստեղ որոշիչ նշանակութուն ունի շեշտը: Այս դեպքում ձայնավորների միջև արտասանվում է թույլ յ ձայնակապ, օրինակ՝ ցիան, դիագրամ, դիալեկտիկա, դիալեկտիկական, դիալոգ, Դիանա, դիամետր, դիագնոզ, դիաբետ, դիաֆրագմա, ֆիասկո, Նիագարա, Բիայնա, նաև՝ բիրիլական և այլն:

Իա զուգորդությանը հայերեն բաղադրյալ բառերում (բաղադրիչների սահմանագծում) մեծ մասամբ արտասանվում է ձայնակապով, օրինակ՝ թիակ—[թիյակ], թիավարել—[թիյավարէլ], միակ—[միյակ], միայն—[միյայն], նաև՝ միապետութուն, միավոր, միավորել, միասեռ, միաձայն, էջմիածին (մի արմատով կազմված այս կարգի բազմաթիւ բառեր կան հայերենում, որոնք արտասանվում են նույն սկզբունքով), լիակատար, լիաբերան, լիամետրած, լիաձայն, լիազոր, լիազորել, հիասքանչ, հիանալի, հիացում դիակ, դիակառք, սնոտիապաշտ, ծիածան, ձիարուծական, ձիագող, հիասթափվել, ձրիակեր և այլն:

Այս բառերից որոշ չափով տարբերվում են -ական, -աբառ, -անալ, -ացում, -ացնել, -ավոր ածանցներով կազմված բառերը:

Այդպիսի բառերում իա զուգորդության մեջ յ ձայնակապը զգալիորեն թույլ է արտասանվում, օրինակ՝ քաղաքացիական, գյուղացիական, որդիական, արդիական, դրացիական, լուսեցիական, կանացիական, զարիքալիական, քաղքենիական, լեզիանալ, լրկտիանալ, խնամիանալ, փղղիանալ, այրիանալ, բերրիանալ, գոլորշիանալ, լիանալ, արիանալ, աղիանալ, սպիանալ, արիաբար, որդիաբար, լկտիաբար, ճրիաբար, գոլորշիացում, գոլորշիացնել, բերրիացնել, ջրարբիացնել, գերանդիավոր, ձիավոր և այլն:

Ձայնակապը որոշակիորեն չի արտասանվում առանց հոդակապի բարդության երկու բաղադրիչների սահմանագծում, օրինակ՝ լիարյուն, լիարժեք, լիառատ, միաղգի, միանձնյա, միանձնուհի, միաշքանի, միամյակ, միանդամ, միանդամանի, միանգամից, միանգամայն, ձիարշավ, ձիագի և այլն:

Իո (իօ).— Այս զուգորդությունը հանդիպում է օտար բառերում, բացառությամբ հայերեն օրիորդ—[օրյօրթ] բառի¹⁶, և արտասանվում է [յօ], ինչպես՝ ռադիօ—[ռադյօ], ռադիոհանգույց—[ռադյօհանգույց], մեդալիոն—[մէդալյօն], դոմինիոն—[դօմինյօն], մարիոնետային—[մարյօնէտային], միլիոն—[միլյօն], նաև՝ իդիօմ, Մարիօ, Բրաբիօն, Դիոնիսիօս, աքսիօմա, պիօներ, պիոներական, չեմպիօն, տենդենցիոզ, ֆրակցիօն, Օվիդիօս, ստացիօնար, գիլիօտին, պերիօդիզացիա, միլիցիօներ, ինտերնացիօնալ, մելիօրացիա, մելիօրատոր, էվոլյուցիօնիզմ, նացիօնալիզմ, ռացիօնալ, ռացիօնալիզմ, ստադիօն, ֆիզիօլոգ, ֆիզիօլոգիա, ակցիօներ, ֆիզիոտերապիա, դեզինֆեկցիօն, ամբիօն, ինֆեկցիօն, ավիացիօն, դիսերտացիօն, մարմարիօն, կոնցեսիօներ, պանսիօն և այլն: Ընդունելի է նաև տարբերակային [էօ] արտասանությունը:

Մի շարք բառերում, մեծ մասամբ, երբ իս զուգորդությունը բառատկզբում է կամ միավանկ բառ է, ի—յ փոփոխություն տեղի չի ունենում, այլ ի-ից հետո արտասանվում է թույլ ձայնակապ, ինչպես՝ Իռլանտա, լիօն, Ռիօն, Վիսլետա, Դիոնիսիօս, Ռիօ-դե-ժաննյո, միոկարդ, տրիօլետ, բիոլոգիա, բիոֆիզիկա, իօն, իօնացում, կիօսկ, պրիօմ, սիօնիզմ, ինչպես նաև՝ տրիօ, Անտիօք: Թույլ ձայնակապով են արտասանվում այն բառերը, որոնցում ի-ին հաջորդում է —առեն ածանցը, օրինակ՝ վստահիօրեն, օրինակելիօրեն, բազմակողմանիօրեն, անդառնալիօրեն: Լիովին, հետիոտն, աղիօղորմ բառերում յ-ն գրեթե չի հնչվում:

16 Խոսքը պարզ բառերի մասին է:

Բարդության երկու բաղադրիչների սահմանագծում իր զուգորդությունն արտասանվում է առանց ձայնակապի՝ միօրյա, միօրինակ, միօրինակություն, միօրեություն:

Երբ ի-ով վերջացող բառերը ստանում են ով վերջավորությունը, իր ձայնավորների միջև արտասանվում է լիահունչ ձայնակապ, ինչպես՝ ձիով—ձի[յ]ով, ուղիով—ուղի[յ]ով, թբիլիսիով—Թբիլիսի[յ]ով և այլն:

Իու.—Հանդիպում է գերազանցապես օտար և մի շարք հայերեն բաղադրյալ բառերում:

Օտար բառերում իու-ն արտասանվում է [յու], ինչպես՝ կոնսիլիում—կոնսիլ[յու]մ, հերբարիում—հերբար[յու]մ, Մարիուս—Մար[յու]ս, Սիրիուս, ակվարիում, սիմպոզիում, օպիում, կալցիում, բարիում, լացիում, ցելսիուս և այլն: Իու-ն կարող է արտասանվել և [իու]: Այս բոլոր բառերում շեշտը նախորդում է ի-ին, հակառակը լինելու դեպքում՝ ի-ն փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ տրիումֆ, տրիումֆիալ:

Հայերեն այն բառերում, որոնցում ի վերջնահնչյունին կցված է -ույթյուն ածանցը, իու զուգորդությունը արտասանվում է թույլ ձայնակապով, օրինակ՝ լիություն, միություն, արիություն, քաղքենիություն, բարիություն, վաղեմիություն, քաղաքացիություն, գյուղացիություն և այլն:

Բարդության բաղադրիչների սահմանագծում իու-ի միջև ձայնակապ չի արտասանվում, օրինակ՝ միութանի:

Իու-ն հիմքի և վերջավորության սահմանագծում հանդիպում է հազվադեպ, օրինակ՝ ձիուց և այլն, որն արտասանվում է ձայնակապով¹⁷:

Իե.— Բացառությամբ հայերեն տիեզերք բառի, որտեղ ի, ե ձայնավորների միջև արտասանվում է ձայնակապ՝ տի[յ]եզերք, այս զուգորդությունը հանդիպում է օտարազգի բառերում: Մի շարք բառերում իե-ն արտասանվում է [յե], օրինակ՝ օրինետացիա—օր[յե]նտացիա, Վիետնամ—Վ[յե]տնամ, ֆելիտոն—ֆել[յե]տոն, կարիերա—կար[յե]րա, պրեմիերա—պրեմ[յե]րա, Զուլիետա, հիգիենիկ, լիլիենթալ: Որոշ բառերում իե-ն արտասանվում է [իյե], օրինակ՝ պիես—պի[յ]ես, հերոզիֆ—հի[յ]երոզիֆ,

¹⁷ Հազվադեպ հանդիպում են նաև այսպիսի ձևեր՝ «Գիրք ճանապարհիում» (ՍՀ, 8/9, 1969, 4), որտեղ գոյականի կրկնակի թեքումը շատ անսովոր է և դժվարացնում է բառաձևի արտասանությունը: (Հմմտ. նաև՝ «Վենիսյան ուղիովում» և այլն):

Վիեննա—Վիյեննա, Հենրիետա—Հենրի[յ]ետա, Հաջիե—Հա-
ջի[յ]ե, Կլիենտ—Կլի[յ]ենտ, Տարիե—Տարի[յ]ե, Ուրիե—Ու-
րի[յ]ե, Մարիետա—Մարի[յ]ետա և այլն:

Պետք է ասել, որ այս զուգորդության արտասանությունը մի
շարք դեպքերում խիստ տատանվում է [իյե]-ի, [յե]-ի և [եյե]-ի
միջև օրինակ՝ Մար[իյե]տա, Մար[յե]տա և Մար[եյ]տա, օ-
ր[իյե]նտացիա, օր[յե]նտացիա և օր[եյ]նտացիա, Վ[իյե]ննա,
Վ[յե]ննա և Վ[եյ]ննա, Ուր[իյե]լ, Ուր[յե]լ և Ուր[եյ]լ և այլն:

Ինչ զուգորդությունը առկա է ի-ով վերջացող միավանկ բա-
ռերի հոգնակի թվում, օրինակ՝ թիեր, ձիեր և արտասանվում է
ձայնակապով:

Եա (էա), եո, եու (էու), եի (էի) ձայնավորական զուգորդումների արտասանությունը

Եա.— Այս զուգորդությունը մի շարք հայերեն և օտար բառե-
րում արտասանվում է [յա]: Հայերեն բառերն են՝ հրեա—հր[յա],
Անդրեա—Անդր[յա]ս, միջօրեական—միջօր[յա]կան, առօրեա-
կան—առօր[յա]կան: Մնացած հայերեն բառերում եա (էա)-ն ար-
տասանվում է ձայնակապով, որը զգալի է հատկապես է-ից հետո,
ինչպես՝ էակ—է[յ]ակ, էպես—է[յ]պես, էական—է[յ]ական,
անէանալ—անէ[յ]անալ, անէական—անէ[յ]ական. բուսական—
բուս[յ]ական, մարգարեական—մարգարե[յ]ական, հրեական,
քրեական, հրեասեր, քնեած, կորեացի, կորեական, քաղդեական,
այժմեական, հասցեագրել, հնէաբանական, խաբեական, պաշտո-
նեական, բազեակիր, մանրէաբան, հասցեատեր, թեական: Քվեա-
րեալ բառն արտասանվում է մի քանի տարբերակներով՝ [քրվեար-
կել], [քրվյարկել], [քրվեարկել], [քրվե'արկել]. [քրվյարկել]
արտասանությունը¹⁸ ոչ միայն անբարեհունչ է, այլև օրինաչափա-
կան չէ: Եա ձայնավորները այստեղ հանդես են գալիս երկու հիմ-
նական ձևերի սահմանագծում, հետևաբար երկհնչյունային
եա—[յա] արտասանությունը ճիշտ չէ: Այդ պատճառով գերադա-
սելի է [քրվե'արկել] թույլ ձայնակապով արտասանությունը, որը
և ավելի տարածված է:

Օտար բառերում, եթե ե-ն գտնվելով ա-ից առաջ շեշտված չէ,
նույնպես վեր է ածվում յ-ի, օրինակ՝ իդեալ—իդ[յ]ալ, իդեալա-

18 է. Բ. Աղայան, Հ. Խ. Բաբսեղյան, Հայոց լեզու (4-րդ դասարանի համար),
Երևան, 1971, էջ 90:

կան—իզ[յ]ալական, իդեալիզմ—իդ[յ]ալիզմ, նեապոլ—ն[յ]ապոլ, լատրեատ—լատր[յ]ատ, ռեակցիա—ռ[յ]ակցիա, ռեալ—ռ[յ]ալ, սեանս—ս[յ]անս: Ե-ն շեշտված լինելու դեպքում՝ փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ Գվինեա՝, Էրիտրեա՝, Դորոթեա՝, բակալեա՝, էպոպեա՝, ասամբլեա՝, Սեդեա՝, Դուլսինեա՝, իդեա՝, Կորեա՝: Այս դեպքում երկու ձայնավորների միջև արտասանվում է ձայնակապ: Երկու ձևությների միջև սահմանադիծը պարզորոշ կերպով գիտակցվելու դեպքում, եա-ն, ինչպես օտար, այնպես էլ հայերեն բառերում արտասանվում է հորանջով, օրինակ՝ ռեակտիվ, ռեակտոր, ռեակտորաշինություն, ռեաբիլիտացիա, ռեկեյսին, ափեափ, հոգեառ, տորեագոր:

Նո (նո).— Այս զուգորդությունը հանդիպում է գրեթե միայն օտար բառերում (եթե չհաշվենք ե և է վերջացող բառերի գործիական հոլովը՝ բոպեով, բագեով, աշտեով, մանրեով, որոնց մեջ եո-ն արտասանվում է ձայնակապով). արտասանվում է [յո], ինչպես՝ ֆեոդալական—ֆ[յո]դալական, քամելեոն—քամել[յո]ն, ամեոբա, իդեոլոգ, իդեոլոգիա, Բարդուղիմեոս, Նապոլեոն, Ֆրագեոլոգիա, Գեոգի և այլն, կամ փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ թեոքիա, թեոքետիկ, թեոքեմ, Կլեոպատրա, Թեոդոսիա, Բեովտիա, թեոլոգիա, խորեոգրաֆիկ, լեգեոն, լեո, Քեոպս, լեոնարդո, պալեոլիթ, ֆեոդ, լեոպոլդ, էոլյան, տրեոնին, Գեդեոն, մետեոք, մետեոքիա, Բոռնեո, դեոլոգ, գեոլոգիա, նեոկանտական, նեոֆաշիստական, ռեոստատ, Մոնտեվիդեո, ձեոն: Օրեօր արտասանվում է առանց ձայնակապի:

Նու (էու), էի (էի).— Հանդիպում են թե՛ հայերեն և թե՛ օտար բառերում: Ձայնակապը է-ից հետո առհասարակ արտասանվում է շատ որոշակիորեն, օրինակ՝ էոլություն—է[յ]ություն, էի—[էյի], էինք—[էյինք], չէիր—[չէյիր]: Մյուս դեպքերում շատ թույլ է կամ բոլորովին չի արտասանվում, օրինակ՝ պաշտոնեություն, մարգարեություն, խաբեություն, հրեություն, հրեուհի, Սեուլ, Ալեուսյան, աթեիստ, աթեիստական, պանթեիստ, կոֆեին, ապարտեիդ: Բարդուղյունը արտասանվում է բաղադրիչների միջև զգալի դադարով և առանց ձայնակապի, օրինակ՝ բացեիբաց:

Ուա, ուի, ուո, ուե ձայնավորական զուգորդումների արտասանությունը

Ուա.— Այս զուգորդությունը թե՛ հայերեն և թե՛ օտար բառերում արտասանվում է առանց ձայնակապի: Հայերեն բառերում հան-

դրպում է, երբ արմատի ու վերջնահանջունին կցվում է ա-ով բս-կըզվող ածանց, օրինակ՝ օգաշուական, տիրացուական, գնշուական, վաշխառուական, երկուական, ծաղրածուական, ջաղուական, կապալառուական, թեկնածուական, օգաշուավոր և այլն և դերանուններով կազմված երեք բարդութուններում՝ այսուամենայնիվ, այնուամենայնիվ, օտար բառերում՝ բուրժուա, բուրժուական, բուդուար, տրոտուար, պենյուար, ակտուալ, տուալետ, լուարա, էլյուար, դոնժուանական, Բենուար, մեմուար, Խուան-խե, դուալիզմ, դուալիստական, ամպլուա, նյուանս, ինտելեկտուալ, էվակուացիա, ինդիվիդուալիզմ, Ասուան, նիկարագուա, դուաշ, էդուարդ և այլն:

Ուի, ուո, ուե.— Հանդիպում են օտար բառերում (ոչ հաճախակի), արտասանվում են առանց ձայնակապի, օրինակ՝ սյուիտ, ինտուիցիա, կազուիստիկա, Ուիտնի, Ուինստոն, լուիզա, վակուոլ, Ուորֆ, վիրտուոզ, Գուրուտներ, սիլուետ, մենուետ, դուետ, Սուեզ, Սուետին, Ուելս, Վենեսուելա:

Ու-ին ի կարող է զուգորդել, երբ ու վերջացող բառը ստանում է ի հոլովական վերջավորությունը, օրինակ՝ ժողովածուի, օգաշուի, Այս դեպքում, որպես կանոն, ու-ից հետո հնչվում է յ:

Ներկայումս, երբ կից ձայնավորների արտասանությունը հայերենում առանց փոփոխության դարձել է սովորական, ու-ն հաջորդող ձայնավորներից առաջ թե՛ հայերեն և թե՛ օտար բառերում, որպես կանոն, պահպանում է իր որակը և փոփոխության չի ենթարկվում:

Ոա, ոու, ոի, ոե ձայնավորական զուգորդումների արտասանությունը

Ոա, ոու.— Այս զուգորդությունները, որոնք հանդիպում են միայն օտար բառերում, արտասանվում են առանց փոփոխության, օրինակ՝ կուալիցիա, օազիս, կլուալ, կլուոն, լուուրենս, Դուուսեթ, Զուուլ, Շուու, Օուեն և այլն:

Ոե, ոի.— Արտասանվում են ձայնակապով, օրինակ՝ պոեմ—պո[յ]եմ, պոետ—պո[յ]ետ, պոեզիա—պո[յ]եզիա, պոեկտ—պո[յ]եկտ, ալոն—ալո[յ]ե, Միրոն—Միրո[յ]ե, Շկոն—Շկո[յ]ե, էլիպսոիդ—էլիպսո[յ]իդ, մետալոիդ—մետալո[յ]իդ, եվրոպեոիդ, մոնդոլոիդ, բանտոիդ, ալկալոիդ, ստոիկ, ստոիկյան, գերոին: Ո և ի ձայնավորների միջև ձայնակապը այնքան որոշակի է ար-

տառասանվում, որ նույնիսկ երբեմն սխալաբար իր արտահայտությունն է գտնում նաև ուղղագրության մեջ, ինչպես՝ գերոյին, բանտոյիդ և այլն, թեև հայտնի է, որ օտար բառերում չձայնակապը չի գրվում:

Ի մի բերելով ձայնավորական բոլոր զուգորդումների հնչումը ինչպես հայերեն, այնպես էլ հայերենում հանդիպող օտարազգի բառերում, կարելի է եզրակացնել հետևյալը: Գրության մեջ արտահայտվող ձայնավորական զուգորդումները արտասանության ժամանակ իրացվում են երեք եղանակով. 1. ձայնակապով արտասանություն, 2. առանց ձայնակապի արտասանություն և 3. երկհնչյունային արտասանություն:

1-ին եղանակ: Ձայնակապով արտասանվում են՝

ա) Հայերեն այն բառերը, որոնցում ի և ն վերջացող արմատին կցվում է ձայնավորով սկսվող ածանց կամ ա հոդակապը, օրինակ՝ թիակ, լիություն, հիանալ, միավորել, միապետություն, ձիաբուծական, սնոտիապաշտ, հասցեատեր, մարգարեական, ռեզիական, աղիանալ, ձիավոր, անդառնալիորեն և այլն (բացառությամբ միջօրեական, առօրեական բառերի, որոնցում եա-ն վերածվում է յա երկհնչյունի)¹⁹: Ինչպես համապատասխան ձայնավորական զուգորդումների քննության ժամանակ նշվեց, այս կարգի բառերից շատերում կից ձայնավորները միանում են ձայնակապային թույլ տարրի միջոցով:

բ) է և որևէ այլ ձայնավորի զուգորդումը, օրինակ՝ էակ, էական, անէական, էություն, մանրէաբան, էի, էիք և այլն:

գ) Օտար այն բառերը, որոնցում կան աի, աե, ոի, ոե կից ձայնավորները, օրինակ՝ մոզաիկա, մաեստրո, ստոիկ, պոետ,

19 Մի քանի տասնամյակ առաջ, ինչպես նշում է Մ. Աբեղյանը (Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 118), ի-ն հաջորդ ձայնավորի հետ ձայնակապով միանալուց բացի կարող էր թույլ արտասանվելով վերածվել յ-ի, օրինակ՝ միաեալ—[միյանալ] և [մյանալ], ձիեալ—[ձիյոլ] և [ձյոլ]: Այս երևույթը իր արտացոլումն է գտել չափածոյում, որտեղ միայն, միաեալ և նման բառերը ըստ բանաստեղծության չափի կարող են արտասանվել և մ[յ]այն, մ[յ]յանալ, մեկ վանկով պակասեցնելով վանկերի թիվը: Օրինակ՝ Քեզ կամիմ միաեալ [մյանալ] / Ո՞վ մայր բռնություն (Հովհ. Հովհաննիսյան): Թումանյանի մոտ նույնպես՝ Ձորագետն է միայն [մյայն] մըրափած վշշում (օրինակները վերցված են Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն» աշխատությունից): Ներկայումս հայերենի ոչ փոխառյալ բառերում ի-ի վերածումը յ-ի երկու ձևությամբի սահմանազգծում արտասանական նորմայի շնորհիվ է (օր.¹ ձրիակեր—[ձրյակէր] և երևան է գալիս գերազանցապես աբազախոսության ժամանակ:

ինչպես նաև այն բառերը, որոնցում ձայնավորական զուգորդության առաջին ի կամ ե ձայնավորները շեշտ կրելու պատճառով յ-ի չեն վերածվում, ինչպես՝ իղե՛ա և այլն:

դ) Բոլոր հայերեն և օտարազգի՝ ձայնավորով վերջացող այն բառերը, որոնք ստանում են ձայնավորով սկսվող հորովական, ինչպես նաև հոգնակերտ եր վերջավորությունը, ինչպես՝ ըոպեի, ժյուրիի, Մանեի, հավաքածուի, կենդուրուի, Թբիլիսիի, ըոպեից, ըոպենով, ըոպեում, ձիու, ձիով, ձիեր և այլն:

2-րդ եղանակ: Առանց ձայնակապի արտասանվում են՝

ա) Կից ձայնավորները անհսկական բարդություններում, ինչպես՝ լիուլի, օրեօր, լիիշխան, լիիրավ, միիշխանություն, միուժանի, միանդամ, միանգամից, միանգամայն, միանձնահի, միօրինակություն, միաշքանի, միօրյակ, միամյակ, միանձնյա, միանհայտ, միանկյուն, միականանի, բացեիբաց, ծայրեիծայր, ափեափ, ձիագի, արուէգ, երկուաշքանի, ձիւնթաց, այսուամենայնիվ և այլն:

բ) Ու վերջացող հայերեն այն բառերը, որոնց կցվում է ձայնավորով որևէ ածանց, օրինակ՝ երկուական, թեկնածուական, գնչուական, օղաչուական, քսուություն, աղղուություն և այլն:

գ) Այն բարդ բառերը (հայերեն և օտար), որոնց երկու հիմնական ձևությունների (արմատների) սահմանագծում (ներառյալ և հոդակապով վերջացող առաջին բաղադրիչը) հանդիպում են երկու ձայնավորներ, օրինակ՝ ձիաուժ, ջերմափոխային, լատինաամեներիկյան, հնչաարտաբերական, հեռուստաանտեննա, էլեկտրաէներգիա, միկրոէլեկտրաշարժիչ, հիդրոէլեկտրակայան, սպեկտրանալիզ, հիդրոսպիտ, կինոարվեստ, պոլիէթիլեն, միկրոօբյեկտ, ուղիղալիք, միկրոաշխարհ, կինոապարատ և այլն:

Այս օրինաչափությանն են ենթարկվում նաև հարադիր այն բարդությունները, որոնց բաղադրիչների սահմանագծում կան ձայնավորներ, օրինակ՝ ուշի ուշով, օրը օրին, մի առ մի և այլն:

դ) Ամենա-, հակա-, համա-, ենթա- և այս կարգի այլ բաղադրիչներով կազմված բառերը, ինչպես՝ ամենաէական, ամենաընդունակ, հակաիմպերիալիստական, համափրանական, ենթաարևադարձային և այլն:

ե) Օտարազգի պարզ կամ պարզ դիտվող բառերում հանդիպող առ, ոռ, առ, ուռ, եռ, եռ, ուի, ուե, ուռ, օռ և այլն ձայնավորական զուգորդումները, օրինակ՝ կակառ, կռալիցիա, կռուչուկ, մեմուար, լեգեոն, Սեուլ, սյուիտ, մենուետ, վիրտուոզ, Շոու և այլն: Հասկանալի է, որ նշված կից ձայնավորները չեն արտասանվում

մեկ վանկի սահմաններում, այլ նրանց միջև անցնում է վանկաբաժան, ինչպես՝ կակաո, կոկաին, մեմուար և այլն:

Օտար բառերում հանդիպում են առանց ձայնակապի արտասանվող նաև երեք կից ձայնավորներ, ինչպես՝ Օուեն, մադիզմ, զոռանասնապահական, Բրաունշտայն, Լաուազիե և այլն:

3-րդ եղանակ: Մի շարք ձայնավորական զուգորդումներում, ինչպես՝ իա, իո, իու, իե, եա, եո, ի-ն և ն-ն վեր են ածվում յ-ի: Այդ փոփոխությունը տեղի է ունենում սահմանափակ թիվ կազմող հայերեն բառերում, ինչպես՝ Մարիամ, փասիան, հեռա, օրհույ և այլն և մեծ թվով օտար բառերում, օրինակ՝ բիլիարդ, ֆիլիա, միլիոն, հեքթարիում, Ֆելիետոն, իդեալ, ամեոբա և այլն: Ամենից շատ հանդիպում է իա զուգորդումը:

Մեկ վանկի սահմաններում հանդես եկող ձայնավորների վերածումը երկհնչյունի պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից հայերենում երկբարբառներ չկան:

Սակայն պետք է ասել, որ հաճախ օտարազգի բառերում վերոհիշյալ ձայնավորական զուգորդումների արտասանությունը հստակորեն չի արտահայտվում և տատանվում է երկհնչյունների ու երկբարբառակերպների միջև: Օրինակ, պիոներ, իդեալ, սեանս, իդիոմ, Տարիել, Մարիոն, ռեակցիա և այլն բառերում կից ձայնավորներն արտասանվում են որպես երկհնչյուն՝ [պյօնէր], [իդյալ], [սյանս], [իդյօմ] և որպես երկբարբառակերպ՝ [պեօնէր], [իդեալ] (կամ [իդեալ]), [սեանս] (կամ [սեանս]), [իդեօմ], [մարեօն], [ռեակցյա] և այլն: Դիտվում է նաև հետևյալ արտասանությունը՝ [պիօնէր], [իդեալ] և այլն, այսինքն, երբ այս ձայնավորների միջև հնչվում է թույլ յ: Նույնիսկ իա կապակցության ժամանակ, որն այդքան տարածված է և հեշտությամբ վերածվում է յա-ի, դարձյալ որոշ դեպքերում (թերևս նաև գրության ներկայիս ուժեղ ազդեցության հետևանքով) երևան են գալիս տատանումներ, այսինքն՝ միշտ չէ, որ իա-ն յորոշակիորեն արտասանվում է յա: Դրանում համոզվելու համար համեմատենք երեսայական և սիրիական կամ օլիմպիական բառերում յա-ի և իա-ի արտասանությունը: Եթե երեսայական բառում յա-ն հաստատուն կերպով, միշտ և բոլորի կողմից արտասանվում է յա, ապա սիրիական բառում իա-ն բացի յա արտասանվելուց, երբեմն կարող է արտասանվել և էա, այս դեպքում ի-ն չի վերածվում մաքուր յ կիսաձայնի, այլ արտասանվում է ի-ին մոտ մի հնչյուն՝ անվանկային կարճ ի:

Նշանակում է իա, իո, իե, իու, եա, եո ձայնավորների գրական

արտասանության սահմաններում կարող են լինել արտասանական ազատ տարբերակներ, ինչպես, օրինակ՝ օլիմպիադա—օլիմպ[յա]-դա, օլիմպ[իա]դա և օլիմպ[ի'ա]դա հերբարիում—հերբար[յու]մ, հերբար[իու]մ և հերբար[ի'ու]մ, օպիում—օպ[յու]մ, օպ[իու]մ և օպ[իու]մ և այլն:

Պետք է ասել, որ վերոհիշյալ կից ձայնավորների երկբարբառակերպ արտասանությունը ավելի շատ հատուկ է բարձր ոճին, մինչդեռ խոսակցական ոճը սովորաբար բնորոշվում է երկհնչյունային արտասանությամբ:

Երբեմն այսպիսի բառերի արտասանությունը կախված է այն բանից, թե ինչպես է ընկալվում բառն ըստ կազմության: Օրինակ, ռեակցիա բառն արտասանվում է ռ[յա]կցիա (նաև՝ ռ[եա]կցիա), իսկ ռեակտիվ, ռեաքիվիտացիա բառերը ռե և ակտիվ բաղադրիչների գիտակցման պատճառով ավելի շուտ արտասանվում են առանց եա-ի փոփոխության:

Որոշ դեպքերում բառի արտասանությունը պայմանավորված է բառի տարածվածության և արմատավորվածության աստիճանով, այսինքն, թե օտար բառերը որքանով են մերվել հայոց լեզվին: Որքան ավելի է տարածված և արմատավորված բառը, այնքան ավելի է նա ենթարկվում հայերենի արտասանական օրինաչափություններին: Այդ պատճառով այն փոխառյալ բառերում, որոնք հայոց լեզվում գործածվում են վաղուց ի վեր, երկհնչյունների արտասանությունը ավելի որոշակի է. օրինակ՝ ֆեոդալ—ֆ[յո]դալ, մոմիա—մոմ[յա], քամելեոն—քամել[յո]ն, ամեռա—ամ[յո]բա, օվկիանոս—օվկ[յա]նոս, միլիոն—միլ[յոն], որոնցում հստակորեն [յա], [յո] է հնչվում, այնպես, ինչպես՝ հեֆիաթ, օրիոդ բառերում:

Փոփոխության ենթակա ձայնավորական զուգորդումներում եթե ի-ն և ե-ն շեշտ են կրում, ապա պահպանում են իրենց որակը և շեն վերածվում յ-ի, օրինակ՝ Գեորգի'ու Դեժ, Կլե'ա, Դորոթե'ա, իդե'ա (բայց՝ իդեալական—իդ[յա]լական կամ իդ[եա]լական) և այլն: Այս դեպքում արտասանվում է յ ձայնակապը (իդե[յա])²⁰:

Ինչ վերաբերում է նախորդող ու ձայնավորով կազմված ձայնավորական զուգորդումներին, ապա ըստ հայերենի ավանդական

20 Գալանտեհա բառը սխալ կերպով արտասանվում է գալանտեր[յա], շեշտը գրվելով առաջին ե-ի վրա, մինչդեռ ճիշտ շեշտադրությամբ բառը կարտասանվի գալանտեր[է'յա]:

օրինաչափության, [ու]-ն պետք է վերածվի [վ]-ի: Օրինակ՝ մի քանի տասնամյակ առաջ արտասանում էին ինտելեկտուալ—ինտելեկտ[վ]ալ, լուիզա—լ[վ]իզա, էվակուացիա—էվակ[վ]ացիա, բուրժուական—բուրժ[վ]ական, ինդիվիդուալ—ինդիվիդ[վ]ալ, տրոտուար—տրոտ[վ]ար²¹: Այդպես են արտասանում ումանք նաև այժմ: Բայց ներկայումս ու-ն կից ձայնավորից առաջ, որպես կանոն, ընդունված է արտասանել [ու], առանց փոփոխության, ինչպես՝ բուրժուազիա, մեմուար, դոնտ և այլն: Վանկատման ժամանակ մենք կունենանք ոչ թե բուրժ-ուա[վա]-կան, այլ՝ բուր-ժու-ա-կան, մե-մու-ար, լու-ա-րա և այլն: Այս կանոնը ներկայումս տարածվում է նաև բոլոր հայերեն բառերի վրա, ինչպես՝ դասատուական, թեկնածուական, տեղեկատուական, դասատուի, թեկնածուի, տեղեկատուի և այլն, որոնք, ոչ հեռավոր անցյալում գրվում և արտասանվում էին վ-ով՝ դասատվական, թեկնածվական, տեղեկատվական, դասատվի, թեկնածվի, տեղեկատվի և այլն: Այժմ այսպիսի արտասանությունը հնացած է և նույնիսկ, կարելի է ասել, ձեռք է բերել հասարակաբանական ուրող երանգ:

Ձայնավորական զուգորդումների քննությունը հանգեցնում է այն հետևությանը, որ կից ձայնավորների և սրանց հետ կապված ձայնակապի գրություն և արտասանության հարցում կարևոր նըշանակություն ունի բառի կառուցվածքը, որով և մեծ մասամբ պայմանավորված է արտասանության եղանակը:

Այս տեսակետից ուշադրավ է հատկապես կից ձայնավորներն ունեցող բարդ բառերի արտասանության օրինաչափությունը:

Բարդության՝ ձայնավորով վերջացող առաջին բաղադրիչի և ա հոդակապի միջև ձայնակապ սովորաբար արտասանվում է, օրինակ՝ թիավարել, լիակատար, բազեակիր: Առաջին բաղադրիչը ա, ո ձայնավորներով վերջանալու դեպքում այս ձայնավորների և հոդակապի միջև ձայնակապը նաև գրվում է, օրինակ՝ կաթսայատուն, բարոյագիտական, քահանայապետ և այլն: Բարդության՝ ձայնավորով սկսվող երկրորդ բաղադրիչից առաջ լինի ա հոդակապը, թե ձայնավորով վերջացող արմատ, որպես կանոն, ձայնակապ չի արտասանվում, ինչպես՝ ձիարշավ, ձիառժ, միան-

²¹ Հայերենում գրաբարից եկող շատ բառեր կան, որոնցում ու-ն ձայնավորից առաջ վերածվել է վ-ի, ինչպես՝ նուարդ—նվարդ, նուր—նվեր, լեզուի—լեզվի և այլն:

դամանի, միամյակ, միանգամից, միաչքանի, արեւափ, ամսեամիս, արուէգ, հոգեառ, լիարյուն, լիարժեք, կինոարվեստ, ջերմախոնային, արեւելասիական, լատինաամերիկյան, հեռուստաաւստեննա, հնչարարներական և այլն: Ինչպես կարելի է տեսնել, այսպիսի բարդություններում ա, ո ձայնավորներից հետո ձայնակապ ոչ միայն չի արտասանվում, այլև չի գրվում:

Սրանք գերազանցապես անիսկական բարդություններ են (մեծ մասամբ՝ կցական), որոնց բաղադրիչների սահմանագծում հանդիպող ձայնավորների միջև ստեղծված հորանջը լիովին պահպանվում է, և ինչպիսի ձայնավորներ էլ որ հանդիպելու լինեն, ձայնակապ չի գրվում և չի արտասանվում:

Այս կարգի բարդություններում մեծ թիվ են կազմում միմիայն օտարազգի կամ օտարազգի և հայերեն արմատներով կազմված բարդությունները, ինչպես՝ ռադիոակտիվ, միկրոօրգանիզմ, կինոօպերատոր, հիդրոէլեկտրակայան, ռադիոէլեկտրիֆիկացիա, միկրոէլեկտրաշարժիչ, սպեկտրոանալիզ, աերոակումբ, ռադիոարդյունաբերություն, ռադիոունկնդիր, հիդրոինքնաթիռ, կինոակնարկ և այլն:

Ուրեմն, ձայնակապ երբեք չի արտասանվում, նաև չի գրվում հոգակապից հետո, այլ կարող է արտասանվել միայն հոգակապից առաջ: Լավ օրինակ է ձիառւծ բառը, որտեղ զուգորդում են երեք ձայնավորներ: Այստեղ ձայնակապը ըստ վանոնի արտասանվում է հոգակապից առաջ, այսինքն՝ առաջին արմատի վերջին ձայնավորի և ա հոգակապի միջև, իսկ հոգակապից հետո՝ հոգակապի և հաջորդող ձայնավորի միջև ձայնակապ չի արտասանվում (ծի[յ]առւծ)²²:

Հենց այս ընդհանուր օրինաչափությամբ է պայմանավորված աւենա-, հակա-, ենթա-, վերա-, նախա-, ինքնա-, կիսա-, համա- բաղադրիչներով և ձայնավորով սկսվող արմատներով կազմված բաղադրությունների և՛ գրությունը, և՛ արտասանությունը:

22 Այս հանգամանքը նկատի ունենալով թերևս կարելի է անել այն հետևությունը, որ ո, ա ձայնավորներից հետո գրվող յ ձայնակապը բարդ և ածանցավոր բառերում ոչ թե ինքնուրույնաբար ավելացած հնչյուն է (ինչպես, օրինակ՝ Սադայել, Միքայել և այլն), այլ գրաբարի բառավերջի ա, ո ձայնավորներից հետո գրվող համը յ-ն (տղաչ, երեխաչ, երեկոչ, ընծաչ), որը հենց այդ պատճառով հանդիպում է միմիայն հոգակապից առաջ, այսինքն՝ որպես արմատահնչյուն, բայց ոչ երբեք հոգակապից հետո (հմտ. ընծաչել, կաթսաչատուն, երեկոչանալ, երեխաչաբար, հաճոչակատար, բայց՝ լատինաամերիկյան, ջերմախոնային, ձիառւծ և այլն):

Ինչպես հայտնի է, վերոհիշյալ բաղադրիչներից հետո ձայնավոր հաջորդելու դեպքում ձայնակապ չի գրվում և չի արտասանվում, ինչպես՝ ամենատոժեղ, ամենաառողջ, ամենաթուրազ, ամենաընտիր, ամենաէական, ամենախմաստուն, ամենաօրինաական, հակաազգային, հակաօդային, հակաիմպերիալիստական, հակաատոմային, հակաառողջապահական, հակաախտահանիչ, հակաօրինական, ենթաարևադարձային, վերապահօրվագրում, կիսաանապատային, կիսաուղիղ, համաուկրաինական, ինքնաապահօրվագրում և այլն: Այս բառերում երկու բաղադրիչների կից ձայնավորների միջև առաջանում է զգալի դադար, որը հեշտացնում է արտասանությունը: Դադարի պատճառը վերոհիշյալ բառերի առաջին բաղադրիչների ինքնուրույնության գիտակցումն է և երկրորդական, զգալիորեն ուժեղ շեշտի կրումը: Այդ դադարը այնքան զգալի է, որ ոմանք երկու բաղադրիչների միջև կարողանում են նույնիսկ խցկել միջանկյալ բառեր: Օրինակ՝ Նա մեր ամենա-, ես կասեմ, ուժեղ ֆուտբոլիստն է և այլն, իսկ ավելի հաճախ այդ բաղադրիչների միջև կարելի է լսել ք-ը-եր կամ ուրեմն-ներ:

Հայերենում սովորական են երկու բառերի վերջին և առաջին ձայնավորների հանդիպումները, որոնք արտասանվում են հորանջով՝ ձայնի ընդհատումով, ինչպես, օրինակ՝ բարի առավոտ, մարտի ութին, պիտի ազատեմ, արի արախանանք, գնա առաջ, հետո իմացավ, հեռու ընկավ և այլն: Եթե հանդիպում են վերջահար անշեշտ բառեր կամ մասնիկներ, որոնք հիմնական բառի հետ շեշտի միջոցով կազմում են արտասանական միասնություն, ապա այս դեպքում մեծ մասամբ կարիք է զգացվում ձայնակապի, օրինակ՝ նա [յ]էլ, հիմա [յ]էլ, դու [յ]ես և այլն:

Ի վերջո նշենք, որ ձայնավորական զուգորդումների միջև ձայնակապի արտասանությունը, այնտեղ, որտեղ գրային արտահայտություն չկա, ընդհանուր առմամբ թուլացել է, որը կարելի է բացատրել ինչպես գրային արտասանության ուժեղ միտումի ազդեցությամբ, այնպես էլ կից ձայնավորները մի շարք դեպքերում առանց ձայնակապի արտասանելու արտասանական նոր ունակություն առաջացմամբ:

ՁԱՅՆԱԿԱՊ

Երկու և ավելի կից տարավանկ ձայնավորների արտասանությունն ժամանակ առաջանում է արտասանության ընդհատում, օգի ազատ հոսք: Արտասանական այս դժվարությունը կամ ընդհա-

տումը լեզվաբանության մեջ ստացել է հորանջ (hiatus) անվանումը: Հորանջը լեզուներում վերացվում է զանազան միջոցներով՝ առաջին հերթին ձայնակապի, ապա տարավանկ ձայնավորները երկբարբառի կամ երկհնչյունի վերածվելու, մի ձայնավորի մեջ երկու ձայնավորների ձուլման, բառավերջի ձայնավորի և հաջորդող բառի սկզբնաձայնավորի ձուլման (crasis) ճանապարհներով և այլն:

Այս միջոցներից հայերենում շատ տարածված է ձայնակապը, մի շարք դեպքերում առկա է և ձայնավորների ձուլումը մեկ ձայնավորի մեջ (կամ ձայնավորներից մեկի անկումը), օրինակ՝ հակ(ա)ազգային, ենթ(ա)արևադարձային, կը ասի>կասի, կը ռւտեմ>կուտեմ, ինչպես և որոշ ձայնավորների (ի, ե) վերածվելը յ-ի ալլ ձայնավորից առաջ:

Ձայնակապի առաջացումը պայմանավորված է նրանով, որ արտաբերական օրգանները ձգտում են մի հնչյունից մյուսին անցնել ամենակարճ ճանապարհով, և այդ պրոցեսում առաջանում է անցումային հնչյուն, որը կարող է արտասանվել շատ որոշակի և որոշ դեպքերում արտացոլվել նաև գրության մեջ, ինչպես հայերենի յ-ն ա, ո և հաջորդող ձայնավորների միջև:

3 ձայնակապը թեև չի գրվում, բայց շատ որոշակիորեն է արտասանվում է-ից հետո, ինչպես՝ է[յ]ական, է[յ]ություն, է[յ]ի, է[յ]իր և այլն: Մի շարք դեպքերում ձայնակապը երկու ձայնավորների միջև համեմատաբար ավելի անհստակ է արտասանվում, օրինակ՝ միակ, լիակատար, լիություն, այժմեական, ձիավոր և այլն: 1922 թ. ուղղագրական բարեփոխությանը, երբ պահանջվում էր յ գրել այնտեղ, որտեղ այն լսվում է, գրում էին եյական, բայց՝ միակ²³:

Ժամանակակից հայերենում յ-ից բացի այլ ձայնակապ չի կիրառվում: Լեզվի հին շրջանում որպես այդպիսին հանդես են եկել նաև վ(ւ)-ն և և-ն, օրինակ՝ փարավոն, Աբրահամ, գեհեն²⁴:

23 Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայոց լեզվի գործնական քերականություն:

24 Ձայնակապի, կամ ինչպես ասում են անցումային հնչյունի (переходный звук, глайд) հավելումը երկու ձայնավորների (և ոչ միայն ձայնավորների) միջև տարածված երևույթ է լեզուներում: Այսպես, օրինակ, ռուսերենում и և а ձայնավորների միջև մեծ մասամբ արտասանվում է j (йотовый переход), որն իր արտացոլումն է գտել նաև գրության մեջ, օրինակ՝ Италия (հմմտ. Italia), Индия (հմմտ. India), Мария (հմմտ. Maria) և այլն: Ռուսերենում երբեմն ձայնակապը արտասանվում է առանց գրային արտահայտության, օրինակ՝ фиалка, скорпион, океан արտասանվում են փи[j]алка, скорпи[j]он, оке[j]ан

Ներկայումս ժողովրդախոսակցական լեզվում երբեմն վիճայնակապով արտասանվող սո[վ]ու[զ], կա[վ]ուր, կա[վ]ուչուկ և նման ձևերը հին ավանդույթի արտահայտությունն են և հասարակաբանական բնույթ ունեն:

[3] կիսաձայնը իր կազմավորմամբ շատ մոտ է [ի] ձայնավորին: Այս երկու հնչյունների արտաբերման ժամանակ լեզվամեջքի միջին մասը բարձրանում է դեպի կոշտ քիմքը, բայց [յ] կիսաձայնի դեպքում այն ավելի է բարձրանում, քան [ի]-ի արտաբերման ժամանակ, և կոշտ քիմքի ու լեզվամեջքի միջին մասի միջև ստեղծված նեղվածքի միջով օդը դուրս հոսելիս շփվում է նեղվածքի պատերին և առաջ բերում աղմուկ: Մինչդեռ [ի]-ն արտասանվում է առանց օդի համար ստեղծված արգելքի: Նթե փորձենք [յ]-ի արտաբերությունը երկարացնել, ապա այն վեր է ածվում [ի]-ի: [3] կիսաձայնը տարբերվում է [ի] ձայնավորից իր ոչ վանկարար բնույթով: [3]-ն ավելի թույլ է, քան [ի]-ն:

[3]-ն և [ի]-ն մի շարք դեպքերում արտասանության մասնազատված չլինելով կարող են գործածվել մեկը մյուսի փոխարեն: Հատակ արտասանության ժամանակ, այնտեղ, որտեղ պետք է արտասանվի [յ], անփույթ, ոչ հստակ արտասանության դեպքում կարող է հնչվել [ի]: Նշանակում է, երկհնչյուններ ունեցող բառերում առաջացած արտասանական նուրբ տարբերությունները պայմանավորված են և՛ [յ] կիսաձայնի գրաված դիրքով, և՛ խոսողի եռանդուն կամ թույլ արտասանությամբ:

3 տառով արտահայտված հնչյունի առանձնահատկությունը ոչ միայն այն է, որ կարող է հեշտությամբ վերածվել անվանկարար [ի]-ի, օրինակ՝ մյուս և մ[ի]ուս, այլև այն, որ մի շարք դեպքերում, երբ այն հանդես է գալիս որպես ձայնակապ, կարող է և շարտասանվել²⁵:

Բառի ձայնակապով կամ առանց ձայնակապի արտասանությամբ՝ նրա հնչական պատկերը էապես չի փոխվում: Օրինակ,

և այլն: Բայց ուսերենում այս երևույթը այնքան էլ օրինաչափ չէ: Օրինակ՝ Խ-ից առաջ յ չի արտասանվում, ինչպես՝ строить, клеить և այլն: Այս հարցում շատ հետևողական է եղել հայերենը, թեև վերջին հարյուրամյակի ընթացքում տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր:

25 Այդ մասին Հ. Աճառյանը գրում է. «Այդ յ ձայնը գրության մեջ չի մտնում, ըստ որում հաճախ հնչումն էլ պարտադիր չէ, կամայական է, այսպես, հնչում ենք ուտելու յէ, երթալու յէ, բայց ավելի՝ ուտելու է, երթալու է և այլն» (Լիակատար բերականություն հայոց լեզվի, հ. 6, 1971, էջ 255):

միանալ, շիակատար, միավոր, միասնական, միամիտ, հիանալի, լիազոր, ձիով, լիովթյուն, միովթյուն, մարգարեական, հրեուհի, աթերստ, կլիենտ, պոեմ, կոֆեին և այլն բառերը կարելի է արտասանել մի[յ]անալ, լի[յ]ակատար... և մ[ի]անալ, լի[ի]ակատար և այլն: Եվ դա հասկանալի է, քանի որ [յ]-ն տվյալ դեպքում իմաստազատիչ նշանակություն չունի և արտասանվում է հայերենի արտասանական բազայի առանձնահատկություններով պայմանավորված: Օրինակ, ռուսերենում СТОН, ВОИН, ТВСО բառերն արտասանվում են առանց о, а և հաջորդ ձայնավորի մեջ անցումային որևէ հնչյունի, մինչդեռ հայերենում ա-ից և ո-ից հետո ձայնակապի արտասանությունը (ինչպես և զրուկությունը) պարտադիր է²⁶:

Առհասարակ նկատելի է, որ հայերենում ձայնակապը ավելի որոշակի է արտասանվում հիմքի և վերջավորության միջև, ինչպիսիք ձայնավորներն էլ, որ իրար հանդիպելու լինեն: Այսպես, օրինակ, եթե բառամիջում, երկու հիմնական ձևությունների սահմանագծում կրկնակի իր-ն արտասանվում է առանց ձայնակապի կամ շատ թույլ ձայնակապով, ինչպես՝ լիիրավ, լիիշխան, ապա սպիի, Մերիի ձևերում վերջավորությունից առաջ անհրաժեշտաբար արտասանվում է յ: Նույնը վերաբերում է և մյուս ձայնավորներին:

Նշանակում է, երբ ձայնավորով վերջացող բառին (կամ հիմքին), հայերեն, թե օտար, կցվում է ձայնավորով սկսվող վերջավորություն, ապա երկու ձայնավորների միջև, որպես կանոն, արտասանվում է յ: Այստեղ արդեն բացառություն չկա:

Ու-ով վերջացող բառերը ի վերջավորություն ստանալիս պետք է արտասանել ույի, բացառությամբ միավանկ և որոշ թվով երկվանկ բառերի, որոնց սեռականում ու-ն փոխվում է վ-ի, օրինակ՝ ձու—ձվի, լու—լվի, առու—առվի, կատու—կառվի: Այս կարգի որոշ բառերի սեռականում կան տատանումներ, օրինակ՝ ածու—ածուի և ածվի, բու—բվի և բուի: Այս դեպքերում արտասանությունը ըստ գրության է:

Հայերենում ձայնակապ է արտասանվում նաև այն դեպքե-

²⁶ Խոսելով ձայնավորների միջև ձայնակապի ներմուծման մասին, Հ. Աճառյանը գրում է, որ յ է արտասանվում բոլոր տիպի զույգ ձայնավորների միջև և և այդ հիմունքով, օրինակ, Ֆրանսիա բառը հնչվում է Ֆրանսի[յ]ա, Ֆրանսի[յ]այի, Ֆրանսի[յ]այում և այլն (նշվ. աշխ., էջ 255): Նշենք, որ ժամանակակից արևելյան գրական հայերենի տեսանկյունից այդպիսի արտասանությունը նորմայի շեղում է:

րում, երբ ձայնավորով վերջացող դերբային կամ բառին հաջորդում են է, էր և եմ, ես, ենք, եք, եմ օժանդակ բայաձևերը (որոնցում ե-ն արտասանվում է [է]) կամ էլ մասնիկը, ինչպես՝ բերելու [յ]է, բերելու [յ]եմ, բերելու [յ]էր, նա [յ]է, տղա [յ]է, ուսուցչուհի [յ]էր, դու [յ]էլ, նա [յ]էլ և այլն: Ի տարբերություն դրա՝ էի, էիր, էիք, էիք, էիք ձևերից առաջ ձայնակապ չի արտասանվում. չենք հնչում, օրինակ, ուտելու [յ]է[յ]ի, գնալու [յ]է[յ]ի, տղա [յ]է[յ]ի, այլ՝ ուտելու է[յ]ի, գնալու է[յ]ի, ասելու է[յ]ի, տղա է[յ]ի և այլն (համտ. երեկո [յ]էր և երեկո է[յ]ինք անցկացնում):

Նշանակում է, մեկ բառում, ներառյալ հնչյունային բառը (նախահար կամ վերջահար անշեշտ բառերով կամ մասնիկներով՝ հիմնական բառի հետ արտասանական մի ամբողջություն կազմող բառերը), կարող է հնչվել միայն մեկ ձայնակապ²⁷:

Նախահար ժխտական օժանդակ բայից հետո, որը կրում է շեշտ, ձայնակապ նույնպես չի արտասանվում, օրինակ՝ չի՛ ասում, չի՛ օգնում, չի՛ ուտում, չի՛ իմանում և այլն:

Ե Ր Կ Հ Ն Ջ Յ Ո Ի Ն Ն Ե Ր²⁸

Ժամանակակից հայերենի երկհնչյուններն են՝ այ, ոյ, ույ, եյ, յա, յո, յու, յե, յի, որոնք կազմված են ձայնավորից և [յ] կիսաձայնից: [Յ] կիսաձայնը իր արտասանական առանձնահատկություններով թեև մոտենում է ձայնավորներին, մասնավորապես [ի]-ին, բայց դրանից տարբերվում է և՛ արտասանությամբ, և՛ ֆունկցիայով, հանդես գալով որպես ինքնուրույն հնչույթ: Ել-նելով [յ] հնչույթի արտասանական առանձնահատկություններից, որով նա առանձնանում է ինչպես ձայնավորներից, այնպես էլ բաղաձայններից, այն անվանվել է կիսաձայն:

Մ. Մանուկյանը գտնում էր, որ ժամանակակից հայերենում (աշխարհաբարում) ձայնավորի և [յ]-ի կապակցություններում

²⁷ Այստեղ ըստ երևույթին նշանակություն ունի ոչ միայն ձայնակապերի հանգամանքը, այլ այն, որ յ-ի կրկնվող արտասանությունը անբարեհնչություն է ստեղծում բառում: Համեմատիր, օրինակ, Թիվային (նավատորմի), ռեյսային, «Առաջիկայից պրես» բառերը, որոնցում իայ, եայ, իեյ հնչյունազուգորդություններում ձայնավորների միջև (իա, եա, իե, որոնց հաջորդում է յ) ձայնակապ չի արտասանվում:

²⁸ Այս տերմինը հայերենում գործածվում է պլամանականորեն, քանի որ այն լեզվաբանական հասկացություն չէ:

հանդես է գալիս ոչ թե յոտ [յ] հնչյունը, այլ անվանկային [ի]-ն. որը նշանագրվում է յ տառով: Նա գրում է. «Մեր նոր լեզվի մեջ այս բաղաձայնական ի ձայնավորը կամ յ-ն միանում է թե նախորդ վանկային ձայնավորի հետ, որով կազմվում են ընկճող երկարաբառներ՝ այ, ոյ, ույ, էյ, և թե հաջորդ վանկային ձայնավորի հետ, որով կազմվում են բարձրացող երկարաբառներ՝ յա, յո, յու, յե, յի:

Մեր վանկային ի ձայնավորը և անվանկային կամ բաղաձայնական (կիսաձայն) յ ձայնավորը իսկապես միևնույն հնչյունն են. երկուսի արտաբերության տեղը միևնույնն է, և երկուսն էլ միևնույն որակն ունեն և իրարուց տարբերվում են միայն իրենց ուժով. յ հնչյունը թույլ ի ձայնավոր է»²⁹:

Ինչպես երևում է մեջբերումից, Մ. Աբեղյանը ընդունում էր ժամանակակից հայերենում երկբարբառների գոյությունը, այն պատճառաբանությամբ, որ վերոհիշյալ հնչյունակապակցություններում յ-ն արտասանվում է անվանկային ի:

Սակայն, ինչպես ցույց է տալիս կենդանի հնչումը, վերոհիշյալ կապակցությունները մեր լեզվի զարգացման ներկա փուլում այլևս չունեն երկբարբառային հնչում, այսինքն՝ յ տառով արտահայտվում է ոչ թե անվանկարար [ի]-ն, այլ [յ] (յոտ) հնչյունը, որը միանալով ձայնավորներին կազմում է երկհնչյուններ: Եթե արտասանության բնույթով [յ]-ն մոտենում է ձայնավորներին, ապա իր ֆունկցիայով այն գերազանցապես բաղաձայն է:

Երկհնչյունների արտասանական որոշ տարբերություններ կան նայած այն բանին, թե [յ] հնչյունին հաջորդում է բաղաձայն, թե՞ ձայնավոր, օրինակ՝ հայր, փայտ, գույն և՛ հալոց, Հայաստան, հյուսիս, մալիս: Առաջին օրինակներում [յ]-ն մոտենում է անվանկարար [ի]-ի արտասանությանը, բայց չի վերածվում այդ հնչյունին, մինչդեռ երկրորդ դեպքում մենք ունենք մաքուր [յ] հնչյունը: Սակայն այս նրբին տարբերությունները սովորական ականջով դժվարությամբ են ընկալվում և էական նշանակություն չունեն:

Հայերենում երկհնչյունները հիմնականում արտասանվում են այնպես, ինչպես գրվում են: Սակայն մի շարք դեպքերում որպես երկհնչյուններ են արտասանվում նաև որոշ ձայնավորական զուգորդումներ, որոնցում ի-ն կամ ե-ն արտասանվում են [յ]: Սա-

29 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 88:

կազմաթիվ դեպքերում ույ երկհնչյունի յ-ն չի արտասանվում (տե՛ս աստորև):

[Յա] երկհնչյունը գրության մեջ արտահայտվում է ոչ միայն յա-ով, օրինակ՝ մատյան, օթյակ, կյանք, այլև իա-ով, օրինակ՝ հեթիաթ—հեթ[յա]թ, Սուքիաս—Սուք[յա]ս, քիմիա—քիմ[յա]: [Յա] երկհնչյունը արտահայտվում է նաև եա զուգորդությամբ, օրինակ՝ հթեա—հր[յա], իդեալ—իդ[յա]լ:

[Յօ] երկհնչյունը արտահայտվում է բացի յո-ից (արդյոք, յոթ) նաև իո (օր.՝ օրիորդ—օր[յօ]րդ, ռադիո—ռադ[յօ], միլիոն—միլ[յօ]ն) և եո գրությամբ (օր.՝ ֆեոդալ—ֆ[յօ]դալ, ամենբա—ամ[յօ]բա):

[Յէ] երկհնչյունը բացի յե կամ ե տառերով արտահայտվելուց (օր.՝ երկու, ես, հայերեն), արտահայտվում է նաև իե զուգորդությամբ, ինչպես՝ ֆելիետոն—ֆել[յէ]տոն, կարիերա—կար[յէ]-րա և այլն:

[Յու] երկհնչյունը արտահայտվում է նշված տառերով (օր.՝ արյուն, սյուն, հայութուն) և իու-ով, օրինակ՝ կալցիում—կալց[յու]մ, բարիում—բար[յու]մ և այլն:

Գտնվելով երկու ձայնավորների միջև, յ-ն, որպես բաղաձայն, ըստ վանկակազմության օրենքների, արտասանական միասնություն, այսինքն՝ երկհնչյուն է կազմում հաջորդ ձայնավորի հետ. օրինակ՝ ծառա-յել, գո-յանալ, հա-յութուն:

Եթե երկհնչյուններին նախորդում է որևէ բաղաձայն, լինի դա բառասկզբում, թե բառամիջում, ապա երկհնչյունը իրեն է միացնում նախորդող բաղաձայնը, արտասանական միասնություն կազմելով նրա հետ. օրինակ՝ սյուն, բյուր, կյանք, եռամ-սյակ, հրդ-վյալ, օսպ-նյակ, սե-նյակ:

Մի շարք դեպքերում երկհնչյունների և ձայնակապով կամ առանց ձայնակապի արտասանվող ձայնավորական զուգորդումների միջև տեղի են ունենում փոխանցումներ: Օրինակ՝ քաղաքացիական, գյուղացիական, տիեզերք, միասին, միացյալ, միասնական, կլիենտ և նման շատ բառերում, հատկապես արագախոսության ժամանակ (և ոչ միայն արագախոսության) ձայնավորական կապակցությունը կարող է վեր ածվել երկհնչյունի, արտասանվելով՝ քաղաքաց[յա]կան, գյուղաց[յա]կան, մ[յա]ցյալ, մ[յա]սնական, տ[յէ]զերք, կլ[յէ]նտ և այլն: Եվ հակառակը՝ կարող են երկհնչյունները արտասանվել որպես ձայնավորական

Սակավաթիվ դեպքերում գրության մեջ արտահայտվող ույ-ը արտասանվում է ու, օրինակ՝ աշխույժ—[աշխութ], զգույշ—[զգութ], ճկույթ—[ճկութ], տույզ—[տութ], վիրաբույժ—[վիրաբութ], անասնաբույժ—[անասնաբութ] և այլն։ Այս բառերի յ-ի անկումով արտասանությունը, որը բնորոշ է խոսակցական ոճին, զրական արտասանական տարբերակ է³⁰։

Ժամանակակից գրական հայերենում կա 30 բաղաձայն հըն-
չույթ՝ բ, գ, դ, պ, կ, տ, փ, ֆ, թ, զ, վ, ֆ, դ, խ, ջ, ե, չ, ն, ծ, ծ,
ց, հ, մ, ն, ր, ռ, լ, յ, որոնցից ն, ծ, ց, ջ, ե, չ բաղաձայնները հա-
մարվում են բարդ կամ կիսապալթական (կոչվում են նաև պալ-
թադիական)։

Նուաշարք հակադրություն՝ հանդես են գալիս Բ-Ա-Վ, Գ-Կ-Բ, Դ-Ա-Բ, Ծ-Ծ-Գ, Զ-Ե-Զ հնչյունները, որոնք տարբերակվում են ձայնեղություն-խուլություն-շնչեղություն էական հատկանիշների հիման վրա և ձայնեղություն-խուլություն երկշարք հակադրությամբ՝ Գ-Ա, Ժ-Ղ, Դ-Խ, Վ-Ֆ հնչյունները:

Ձայնեղ բաղաձայնների շարքն են կազմում բ, գ, դ, ձ, շ, զ, ժ, վ, ղ և ձայնորդներ մ, ն, լ, ր, ո, յ հնչյունները: Ձայնորդներից բացի մնացած բոլոր ձայնեղները ունեն իրենց համապատասխան խուլներ՝ պ, կ, տ, ծ, և, ս, շ, ֆ, խ: Շնչեղ են փ, ք, ֆ, ց, չ հնչյունները, որոնք բնութագրվում են շնչի՝ հագագի առկայությամբ:

Զայնորդ հնչյունների արտաբերության ժամանակ, ի տարբերություն մյուս բաղաձայնների, գերիշխում է ձայնը, և այդ է պատճառը, որ որոշ լեզուներում ձայնորդները ձայնավորների նման վանկարար հնչյունի դեր են կատարում: Ինչպես հայերենում, այնպես էլ այլ լեզուներում, ձայնորդները ի հայտ են բերում արտասանական որոշ առանձնահատկություններ: Այսպես, օրինակ՝ ձայնորդների մեծ մասը ցուցաբերում է նախորդող բաղաձայնների հետ կապակցված արտասանվելու որոշ ընդունակություն:

127

Դա հատկապես բնորոշ է յ ձայնորդին, որը արտասանական աերտ միասնություն է կազմում նախորդող բոլոր բաղաձայնների հետ և՛ բառասկզբում, և՛ բառամիջում. օրինակ՝ գլուղ, պլուրե, երդ/վյալ, խար/տյաշ, խեղա/թյուրել, լուս/նյակ, ալ/ծյամ, ի/լյու-գիա, Դոբրո/լյուբով և այլն: Ընդ որում, յ-ն կարող է կապակցվել նախորդող նաև երկու բաղաձայնի հետ, ստեղծելով բառասկզբում կամ վանկասկզբում երեք բաղաձայնի կապակցություն, որը հանդիպում է օտար բառերում. օրինակ՝ Սկյութիա, Բրյուսել, ին/ֆլյացիա, ժոն/գլյոր, դամո/կլյան և այլն:

Կապակցվելու հատկություն ունի նաև Ե-ն (մասամբ նաև Լ-ն և Ն-ն), որը հաճախ իրեն է միացնում նախորդ բաղաձայնը. օրինակ՝ քամա/հրանք, ա/զրեգատ, ա/զրարային, պա/տրիկ, հեմո/գլոբին, բա/կլա: Դա դրսևորվում է նաև բառասկզբում՝ հրապարակ, տրամաշափ, զլանակ և այլն:

Միանգամայն հակառակ երևույթ է դրսևորվում, երբ Ե, Ո, Ն, Լ ձայնորդները գտնվում են բառավերջում կամ վանկավերջում: Այս դեպքում նախորդող բաղաձայնների և նշված հնչյունների միջև անհրաժեշտաբար, որպես կանոն, արտասանվում է ը, լի-նի հայերեն, թե օտար բառ. օրինակ՝ դուտ[ը]ր, համ[ը]ր. գամփ[ը]ռ, բուռ[ը]ն, ցիկ[ը]լ, նույնը և բառամիջում, երբ նըշված հնչյունները երկու բաղաձայնի միջև են՝ կոտ[ը]րվել, շատ[ը]րվան, ակ[ը]նկալել, բոցկ[ը]լտալ, ջենտ[ը]լմեն և այլն³¹:

Ձայնորդ հնչյունների արտասանական առանձնահատկությունների հետ ընդհանրություններ ունեն ղ, խ շփականները:

Ինչպես բառասկզբը, այնպես էլ բառավերջը հայերենի բաղաձայնների համար ուժեղ հնչյունադիրք է, այսինքն՝ այս դիրքում, միմիայն բառավերջով պայմանավորված՝ բաղաձայնները փոփոխության չեն ենթարկվում: Բառավերջի բաղաձայնների՝ մի շարք դեպքերում կրած փոփոխությունը բացատրվում է ոչ թե նրանց դիրքով (բառավերջում գտնվելով), այլ նախորդող հնչյուններով (տե՛ս «Բառավերջ»):

Բառասկզբում և բառավերջում կարող են հանդես գալ գրեթե բոլոր բաղաձայնները: Բացառություն է կազմում Ե հնչույթը, որը բառասկզբում հանդիպում է միայն բառում³²:

31 Ձայնորդների ցուցաբերած հիշյալ առանձնահատկությունները մոտավոր նմանությամբ դրսևորվում են նաև այլ լեզուներում (Նմատ. ռուս. ВОПЛЕ—ВОПЛЕ СМОТ—СМОТ և այլն):

32 Բանաստեղծական լեզվում կան այլ օրինակներ՝ բախճանի, բաշկալան (և ոռշնական), բաբբի և այլն:

Որոշ հնչյունադիրքերում մի շարք բաղաձայնների կրած փոփոխությունները հայերենում, ինչպես կտեսնենք համապատասխան հաֆցեի քննության ժամանակ, մեծ չափեր չեն ընդգրկում:

ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենին առհասարակ հատուկ չէ միատեսակ բաղաձայնների կրկնությունը³³, այդ պատճառով կրկնակ բաղաձայնները բուն հայկական բառերում հանդիպում են կամ ձայնավորի սղումով կազմված ձևերում, ինչպես՝ բջշահյութ (բջիջ բառից), Մասսի (Մասիս անունից), զննել (զնին արմատից) և կամ երկու ձևությոնների սահմանազերծում, այսինքն՝ բարդության և ածանցման, ինչպես նաև հապավման ժամանակ, օրինակ՝ երկկողմ, աննպաստ, քաղղեկ: Երկու նույնական բաղաձայնի հանդիպման պատճառ կարող է լինել և ձայնավորի անկումը կամ նույնանման վանկերից մեկի ամփոփումը, օրինակ՝ օրորան—օրրան: Այդ նշանակում է, որ կրկնակ բաղաձայնները ոչ փոխառյալ բառերում կարող են հանդես գալ միմիայն բառամիջում: Ինչ վերաբերում է բառասկզբի և բառավերջի գրության մեջ արտահայտվող կից բաղաձայններին (ոչ միայն ուղիղ ձևերում), ապա դրանք որպես կանոն արտասանվում են զաղտնավանկով, որը բխում է հայերենի բառասկզբի և բառավերջի արտասանական ընդհանուր օրինաչափություններից, օրինակ՝ գ[ը]գվել, գ[ը]զվել, կ[ը]կու, կ[ը]կորցնի, ին[ը]ն, լույս[ը]ս, հույս[ը]ս, մատ[ը]դ (արտասանվում է մատ[ը]տ): Մեկ ձևությոնի սահմաններում, ներառյալ և բառավերջը, կրկնակ բաղաձայններ կարող են հանդիպել միմիայն օտարազգի բառերում, ինչպես՝ մասսա, վիլա, ֆինն: Կրկնակ բաղաձայնները հայերենում չեն կարող արտաբերվել մեկ վանկի սահմաններում՝ ոչ բառասկզբում (վանկասկզբում), ո՛չ էլ բառավերջում (վանկավերջում):

Այդ է պատճառը, որ օտարազգի բառերի վերջում հանդես եկող կրկնակ բաղաձայնները հայերեն տառադարձելիս գրել են մեկը: Ներկայումս տառադարձության ժամանակ բառավերջի կրկնակ բաղաձայնը հաճախ պահպանվում է, օրինակ՝ ստրեպտոկոկկ, հեկտոմետր, Կանն, Գրիմմ, գալլ, Մանն և այլն: Եթե առաջնորդ-

³³ Հնում փոխառյալ բառերում մեծ մասամբ պահպանվել է կրկնակ բաղաձայններից մեկը, ինչպես՝ Փիլիպպոս—Փիլիպոս, Թադդոս—Թադևոս, Մաթթևոս—Մաթևոս և այլն:

վենք հայերենի բառավերջի արտասանական օրինաչափությամբ, ապա այս բառերը պետք է արտասանենք ստրեպտոկոկ[ը]կ, հեկ-տոկատ[ը]տ, Գրիմ[ը]մ և այլն, որը ընդունելի չէ։ Այդ պատճառով նպատակահարմար է օտարազգի բառերի բառավերջի կրկնակ բաղաձայնները հայերենում մեկով տառադարձել։

Ինչ վերաբերում է բառամիջին, ապա այստեղ կրկնակ բաղաձայնները բաշխվելով կից վանկերի միջև, արտասանվում են տևողությամբ, ինչպես՝ մաս/սա, տոն/նա, ար/բա, Բուդ/դա, այբ/բեն և այլն։

Նայած այն բանին, թե կրկնակ բաղաձայնները բառամիջում պայթականներ են, այսինքն՝ վայրկենային հնչյուններ, թե ոչ պայթականներ՝ ձայնորդներ և շփականներ, նույնանման երկու բաղաձայնների արտաբերումը իրացվում է տարբեր եղանակով։ Կրկնակ ձայնորդների և շփականների արտաբերության ժամանակ հնչյունը արտաբերվում է (ի տարբերություն մեկ շփականի կամ ձայնորդի) երկար՝ տևողությամբ, օրինակ՝ վիլլա, մասսա, թշալ, դզզալ և այլն։ Հատկապես ձայնորդ հնչյունները, որոնցում ձայնը գերիշխում է, երկարացման մեծ հնարավորություն ունեն, օրինակ՝ տոննա, տաբուական, բերրի, դռալ, զննել, նոյյան։ Կրկնակ պայթականները, որպես վայրկենային հնչյուններ, չեն կարող արտաբերվել հնչյունի տևողությամբ, այդ պատճառով դրանք արտաբերվում են փակվածքի տևողության երկարաձգմամբ։ Առաջին պայթականի համար առաջացած փակվածքը չի պայթում, քանի որ երկրորդ պայթականի հնչման համար հարկավոր է նույն փակվածքը։ Պահումը երկարում է, որից հետո տեղի է ունենում երկրորդ պայթականի պայթումը, այսինքն՝ երկարաձգվում է պայթականի հպման և պայթման միջև ընկած դադարի տևողությունը, օրինակ՝ աբբա, Բուդդա։

Այսպիսով, եթե շփական բաղաձայնների տևողությունը ունի և՛ ակուստիկական, և՛ արտաբերական նշանակություն, ապա պայթականներինը՝ միայն արտաբերական։

Կրկնակ բաղաձայնների արտաբերումը չի իրականացվում միևնույն աշխատանքի կրկնությամբ։ Բաղաձայնի արտաբերումը կրկնում ենք, եթե ուզում ենք, օրինակ, շեշտել բառի ուղղադրությունը։ Կրկնակ բաղաձայնների արտասանության ժամանակ սովորականից ավելի է պահվում արգելքը՝ փակվածքը կամ նեղվածքը։ Օրինակ՝ տա-ի արտասանության ժամանակ լեզվի ծայրը ավելի երկար է սեղմված պահվում առամներին։

Երկար հնչյուն է առաջանում նաև նույնօրգան բաղաձայնների արտաբերման ժամանակ: Եթե հանդիպում են երկու նույնօրգան պայթական, ապա առաջինի հպումը չի ավարտվում պայթյունով, այլ միանում է երկրորդ պայթականի հպմանը: Առաջանում է երկար հպում, որն ավարտվում է պայթյունով, օրինակ՝ վառքար, երկգրություն, այղաեղ, Գրակհոս, այնպես, ինչպես արտասանվում է այբբեն և այլն: Նույնօրգան պայթական և կիսապայթական բաղաձայններն արտասանվում են այնպես, ինչպես կրկնակ բաղաձայնները. օրինակ՝ աղծա, առճա, առծա, աբչա կարտասանվեն ինչպես՝ աճճա, աճճա, աժժա, աչչա և այլն³⁴:

Այն դեպքում, երբ նույնօրգան բաղաձայններից երկրորդը ռնգային է, երկար բաղաձայն չի առաջանում (օր.՝ մատնել, նեպման):

Կրկնակ բաղաձայնները առավել հստակությամբ են արտասանվում ձայնավորների միջև գտնվելիս (օր.՝ բեռտա, հովվի): Եթե նրանց հաջորդում է որևէ բաղաձայն, ապա կրկնակ բաղաձայններից հետո կարող է արտասանվել ը, օրինակ՝ ուղղ[ը]վել, քնն[ը]վել³⁵: Եթե նախորդ հնչյունը կապակցելի է, ապա գաղտնավանել չի կազմվում, օրինակ՝ գրողմման, կազմման, բնղղեմ և այլն:

Բառամիջում, երկու ձևությանների սահմանագծում հանդիպած նույնանման բաղաձայնները, որպես կանոն, արտասանվում են կրկնությամբ (տեղությունամբ), ինչպես՝ ամաններ, երկկայմանի, երկկերպ, բովված, աննշմար, երեսուրբիչ, մակկոկորդ, հինգգլխանի, Երեաննախագիծ և այլն: Կրկնակ բաղաձայնները ամենից ավելի հստակորեն են արտասանվում հապավումների բաղադրիչների (թեմաների) սահմանագծում, օրինակ՝ Հայքիմմատառ, Մոստովետ, բաղղել: Այս դեպքում կից բաղաձայնները երբեմն կարող են հնչվել որպես երկու առանձին հնչյուններ: Օրինակ՝ բնակկառավարչություն բառում երկու կկ-ն արտասանվում է այնպես, ինչպես բարակ կտոր կապակցության մեջ:

Անգրադառնանք մի քանի կրկնակ բաղաձայնների արտասանությանը առանձնակի:

Ղղ.— Կրկնակ ղղ-ն ուղիղ արմատով կազմված մի շարք բառերում, որոնցում ի-ն սղված է, միշտ չէ, որ երկար է արտասանվում, մանավանդ առօրյա խոսակցության ժամանակ: Օրինակ,

34 Տե՛ս Հ. Անտոյան. նշվ. աշխ., էջ 260:

35 Նշվում է այն գաղտնավանելի ը-ն, որի մասին խոսվում է:

ուղղագիծ, ուղղաթիւ, ուղղագրական, ուղղակի, ուղղահայաց, ուղղանկյուն, ուղղափառ, ուղղախոսական, ուղղություն, անուղղակի, ուղղում և այլն, հաճախ հնչվում են մեկ դ-ով՝ ու[ղ]ակի, ու[ղ]ագիծ, ու[ղ]անայաց և այլն (համտ. ուղեցույց, ուղևորվել և՛ ուղղակի, ուղղահայաց): Այդ է պատճառը, որ դպրոցական թեւադրություններում կրկնակ դ-ի գրության սխալները հազվադեպ չեն: Կրկնակ դ-ի երկար արտասանությունը պահպանվում է գեղարվեստական ընթերցման, օրինակելի և հստակ արտասանության ժամանակ, որը և պետք է համարել դղ-ի համար արտասանական նորմա:

Նն.— Համեմատելով կրկնակ դղ-ի արտասանությունը կրկնակ նն-ի հետ, կարելի է տեսնել, որ վերջինիս արտասանությունը ըզգալիորեն տարբերվում է առաջինից: Եթե կրկնակ դղ-ն հաճախ արտասանվում է նաև որպես մեկ դ, առանց բառի պատկերը փոխելու կամ առանց բառաձանշողական նշանակությունը խախտելու, ապա կրկնակ նն-ն որպես կանոն և միշտ, արտասանվում է երկար (նաև՝ խոսակցական լեզվում), օրինակ՝ քննական, անքննադատ, քննիչ, քննարկել, քննարկում, զննել, զննողական, զննաձող, զննում, Հաննիբալ, Հաննովեր, վաճառ, Սուսաննա, Օվսաննա, Ռուզաննա, դոճնա, Աննա, աննամբերն և այլն: Այս դեպքում առկա է նաև ֆնել և ֆնեկ բայերի և սրանցով կազմված մի շարք այլ բառերի հակադրությունը, որոնցում ն-ի երկար և կարճ արտասանությունը նվազագույն հակադրության մեջ հանդես է գալիս իմաստազատիչ նշանակությամբ, օրինակ, համեմատիր՝ քնած—քնած, քնող—քնող և այլն:

Եթե կրկնակ նն-ին հաջորդում է վ կրավորակերտ ածանցը, ապա ր-ն արտասանվում է վ-ից առաջ, օրինակ՝ քնն[ը]վել, զնն[ը]վել և ոչ՝ քն[ը]նվել, զն[ը]նվել:

Ժողովրդախոսակցական լեզվում, որտեղ ր-ի հավելումները շատ սովորական են, երբեմն արտասանվում են քն[ը]նել, քն[ը]նիչ, քն[ը]նող, այսինքն՝ կրկնակ նն-ն երկարացված արտասանելու փոխարեն, նրանց միջև արտասանվում է զաղտնավանկ, որը ընդունելի չէ: Նույնը տեղի է ունենում և երկու դղ-ով մի շարք բառերի արտասանության ժամանակ, ինչպես՝ ուղ[ը]ղել, անուղ[ը]ղելի և այլն, որոնցում փոխանակ դղ-ն տեղությամբ արտասանվելու, սխալ կերպով նրանց միջև արտասանվում է զաղտնավանկ:

Երկու նն-ն իրար կարող են հանդիպել ձայնավորի սղման

հետևանքով, ինչպես՝ սննդի, սննդամթերք, սննդառության, ծննդավայր, ծննդատուն, ծննդաբանական, քննչական և այլն: Բայց այս դեպքում, քանի որ երկու նմ-ին հաջորդում է բաղաձայն, այդ հնչյունների միջև արտասանվում է ը՝ սն[ը]նդի, սն[ը]նդամթերք, սն[ը]նդառություն, ծն[ը]նդավայր, ծն[ը]նդատուն, ծն[ը]նդաբանական, քն[ը]նչական և այլն:

Կրկնակ նմ-ն, որը հայերենում ամենից շատ է հանդիպում, հաճախ հանդես է գալիս ն-ով սկսվող այն բառերում, որոնք ըս-կըզբից ստանում են ան- ժխտական նախածանցը, օրինակ՝ ան-նման, աննկատելի, աննախանձելի, աննկարագրելի, աններելի, աննպաստ, աննպատակ և այլն: Կրկնակ նմ-ն այս դեպքում կարող է հանդես գալ երկու ձայնավորների միջև՝ աննորմալ, աններելի, աննախանձելի, աններդաշնակ և այլն և կարող է նրան հաջորդել որևէ բաղաձայն: Բաղաձայն հաջորդելու դեպքում ն-ի և բաղաձայնի միջև արտասանվում է ը, օրինակ՝ անն[ը]կուն, անն[ը]պաստ, անն[ը]կարագրելի, անն[ը]շմարելի և այլն:

Ն-ով վերջացող բազմավանկ բառին, երբ ավելանում է -նեք հոգնակերտ մասնիկը, ապա ձևովների սահմանագծում հանդիպած երկու նմ հնչյունները, որպես կանոն, արտասանվում են երկար, ինչպես՝ վառարաններ, բառարաններ, ամաններ, գործարաններ, բաղաձայններ, կանոններ, ամբիոններ և այլն:

Կրկնակ նմ-ն հաճախակի է հանդիպում բառավերջում, երբ ն-ով վերջացող բառին (իսկ այդպիսիները հայերենում շատ են) կցվում է ն հոդը: Դա տեղի է ունենում արտասանական շղթայում, երբ հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, օրինակ՝ Նա տանն է: Ձեր մտքին ինչ է: Դա նրանն է: Նրա կինն է և այլն: Այս դեպքում կրկնակ նմ արտասանվում է այնպես, ինչպես բառամիջում, այսինքն՝ երկար:

Նրբեմն, հատկապես ան- նախածանցով կազմված բազմավանկ բառերում, ան-ը հաջորդող բաղադրիչից անջատ է արտասանվում, ստանալով երկրորդական շեշտ, ինչպես՝ ա՛ն-նկարագրելի՛, ա՛ն-նպատակահարմա՛ր, որը թույլատրելի է:

Րբ.— Կրկնակ րբ-ն մեծ մասամբ արտասանվում է երկար, օրինակ՝ բբբբի, անբբբբություն, անբբբբի, տաբբական, մբբիկ, տաբբալուծել, օբբան: Որոշ բառերում րբ-ի հնչումը հաստատուն չէ, օրինակ՝ եբբորդ, չոբբորդ, անդոբբագիր, անդոբբություն բառերում ր-ն մեծ մասամբ արտասանվում է կարճ: Ժողովրդախո-

սակցական լեզվում տարածված է նաև **բբ-ի** ու հնչումը **բբբորդ**, **չոբբորդ** բառերում: Մբբկածին, մբբկային, մբբկածուփ, մբբկահավ, մբբկաբեր և մբբիկ-ով կազմված այլ բառերում ի ձայնավորի սղման պատճառով երկու **բբ-երի** կողքին է հայտնվում **կ** բաղաձայնը, որի հետևանքով կրկնակ **բբ-ի** միջև ստեղծվում է գաղտնավանկ՝ մբբ[ը]րկածին, մբբ[ը]րկային, մբբ[ը]րկածուփ: Երբեմն վերոհիշյալ բառերում վանկավերջում արտասանվում է երկար **բ՝** մբբ/կահավ, մբբ/կածուփ և այլն, բայց այսպիսի հնչումը նոր երևույթ է, քանի որ կրկնակ բաղաձայնների արտասանությունը վանկավերջում, առանց գաղտնավանկի, հայերենին հատուկ չէ: Մբբիկ—մբբ[ը]րկի սեռականի ձևը հնացած է, զրա փոխարեն այժմ գերազանցապես գործածվում է անհնչյունափոխ մբբիկի ձևը, որն արտասանվում է երկար **բ-ով՝** մբբիկի: Տաբբ, անդորբ, միատաբբ բառերը ըստ բառավերջի կանոնի պետք է արտասանվեն՝ տարբ[ը]ր, անդորբ[ը]ր, միատարբ[ը]ր, սակայն այժմ գերազանցապես հնչվում են երկար **բ-ով**, որը նույնպես նոր երևույթ է:

Սա.— Կրկնակ **սս-ն** հայերենում հանդիպում է գերազանցապես փոխառյալ կամ փոխառյալ արմատով կազմված բառերում՝ մասսա, մասսայական, մասսայաբար, Միսսիսիպի, Միսսուրի, Մասսաչուսետ, միսսիս, էսսե, էսսեիստ:

Երբ երկու **սս-ին** հաջորդում է բաղաձայն, ապա արտասանվում է մեկ **ս**, այդ պատճառով նպատակահարմար է գրել մեկ **ս**, օրինակ՝ Սպասկի և ոչ՝ Սպասսկի, քանի որ այսպես գրելու դեպքում, պետք է որ արտասանվի Սպասբ[ը]սկի, որը հարմար չէ:

Բառամիջում երկու **սս** կարող է արտասանվել ձայնավորի սղման պատճառով, օրինակ՝ Մասիս—Մասսի. այժմ ավելի շատ ընդունված է Մասիսի ձևը:

Երկու սս-ն պարզ բառերի վերջում (փոխառյալ բառերում) սովորաբար չի արտասանվում, օրինակ՝ բոսս, միսս, **ՏԱՍՍ**: Թեքված ձևերում, երբ կրկնակ **սս-ն** ընկնում է բառամեջ, որոշակիորեն այն արտասանվում է երկար, օրինակ՝ **ՏԱՍՍ-ի** հաղորդագրությունամբ... և այլն:

Կկ.— Հանդիպում է հայերեն մի շարք բառերի երկու ձևույթների սահմանագծում և փոխառյալ բառերում: Երկու ձևույթների սահմանագծում կրկնակ **կկ-ի** արտասանությունը շատ որոշակի է, ինչպես՝ երկկողմ, երկկողմանի, երկկայմանի, երկկենցաղ, երկկեղև, երկկարգ և այլն:

Ակկադերեն, Մեբբա (կամ Մեկկա), Մարոկկո, Ռիկկերտ.

Դիկկենսս և այլն օտար անվանումներում և բառերում երկու կ-ն սովորաբար արտասանվում է, բայց ոչ հետևողականորեն: Առհասարակ, որքան բառը ավելի է տարածված, այնքան ավելի պակաս հետևողականությամբ է պահպանվում երկար արտասանությունը: Ուրիշ խոսքով, բառի տարածվածությունը հակադարձ համեմատական է բաղաձայնի երկար արտասանությանը: Օրինակ՝ Դիկկենսս, Բոկկաչչո սովորաբար արտասանվում և երբեմն գրվում են մեկ կ-ով: Նպատակահարմար է գրել մեկ կ՝ ըստ արտասանության:

Տո.— Ձայնավորի սղման պատճառով իրար հանդիպած երկու տ հնչյուններն արտասանվում են որպես երկար տ, օրինակ՝ պտտել, պտտեցնել, պտտահողմ, պտտալծակ, պտտաձող, պտտիչ և այլն: Ժողովրդախոսակցական լեզվում շատ տարածված է պ[ը]տ[ը]տել, պ[ը]տ[ը]տեցնել, պ[ը]տ[ը]տահողմ, պ[ը]տ[ը]տալծակ, պ[ը]տ[ը]տիչ՝ ը-ի հավելումով արտասանությունը, որը բարձր ոճում հանձնարարելի չէ: Երբ կրկնվող տ-ին հաջորդում է բաղաձայն, ապա երկու տ-ի միջև մտնում է ը, օրինակ՝ պտտվնի—պ[ը]տ[ը]տվել:

Երկար տ է արտասանվում բաղադրյալ բառերում, երկու ձևվորյթների սահմանագծում, օրինակ՝ խրատաու, այդտեղ (արտասանվում է այ[տ]տեղ), բայց՝ ամենատ[ը]տիպ:

Ինչպես և մյուս բաղաձայնները, այնպես էլ կրկնակ տ-ն հանդիպում է մի շարք օտար բառերում, մեծ մասամբ հատուկ անուններում, օրինակ՝ Օտտո, Ատտիկա, Ռիտտին, Բրիտտեն, բետտա, բրուտտո, նետտո և արտասանվում է երկար:

Կ.— Հաճախակի հանդիպում է օտար բառերում, ինչպես՝ վիլլա, Սուլլա, Տալլին, Տորիչելլի, Օթելլո, Շիլլեր, Մյուլլեր, դոլլար, բալլադ, Նելլի և այլն: Արտասանվում է մեծ մասամբ երկար: Տարածված հասարակ անունները, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, հաճախ հնչվում են մեկ լ-ով, օրինակ՝ դոլլար, բալլադ և այլն:

Վլ.— Երկու վ-ի գուգորդությունը հանդիպում է ավելի շատ այն դեպքում, երբ բայական վ-ով վերջացող հիմքին կցվում է կրավորական վ ածանցը, օրինակ՝ գրավվել, ապահովվել, բարելավվել, պարգևվել, խորովվել, նզովվել, նույնը և՛ գրավված, թովված, ապահովված, նզովված և այլն: Վ-ի երկար արտասանությունը ընդգծվում է, քանի որ տվյալ դեպքում այն ստեղծում է իմաստազատիչ հակադրություն մեկ վ-ով ներգործական ձևերի հետ,

ինչպես՝ գրավել և գրավվել, ապահովել և ապահովվել, խորովել և խորովվել, հոլովել և հոլովվել, ինչպես և՛ գրաված—գրավված, ապահոված—ապահովված, պարգևած—պարգևված, հոլոված—հոլովված և այլն:

Կրկնակ վվ-ն արտասանվում է նաև ձայնավորի սղումով առաջացած ձևերում, ինչպես՝ հովվի, հովվական, հովվուհի, հովվերգություն, հովվապետ և այլն:

Երբ կրկնակ վվ-ին կցվում է մեկ այլ բաղաձայն, ապա վվ-ի միջև արտասանվում է ը, օրինակ՝ Հովվյան—Հով[ը]վյան (կամ Հովվյան): Գերադասելի է համարվում այժմ առանց ձայնավորի սղման Հովիվյան ձևը:

Կրկնակ վվ-ն հստակորեն է արտասանվում բարդ բառերի բաղադրիչների սահմանագծում, օրինակ՝ արևվառված, հարավվիետնամական: Այս դեպքում ճարավ բառի վ-ն, որը սովորաբար արտասանվում է ֆ, հաջորդ վ-ի հետ միանալով, հնչվում է երկար:

Մմ.— Երկու մ հանդիպում է արմատի մ-ով վերջացող բայանունների թեքման ժամանակ. օրինակ՝ դրռմման, կազմման, համմման, քամման, սեղմման և այլն: Եթե կրկնակ մմ-ին նախորդող բաղաձայնը կապակցելի է, ապա երկու մ-ից մեկը միանում է նախորդող բաղաձայնին, մյուսն անցնում է հաջորդ վանկը, ինչպես՝ կազմ/ման, սեղմ/ման, դրռմ/ման և ոչ՝ կազմ[ը]ման և այլն: Օտար բառերում մմ-ն նույնպես արտասանվում է երկար, ինչպես՝ Յիմմերվալդ, Մուհամմեդ, զամմա, Ջեմմա, էմմա և այլն³⁶:

Պղ.— Բառամիջում հանդիպում է ընդ նախածանցով կազմված մի շարք բառերում, ինչպես՝ ընդդեմ, ընդդիմախոս, ընդդիմախոսական, ընդդիմակաց, ընդդիմանալ, ընդդիմություն և այլն: Այս կարգի բառերում կրկնակ դդ-ն, գտնվելով ն ատամնային հնչյունից հետո, արտասանվում է ոչ թե դ-ի կրկնությամբ, ինչպես, ասենք, այն արտասանվում է Բուդդա բառում, այլ նախորդող ն-ի երկարաձգումով: Բայց այդ էլ միշտ չէ, որ պահպանվում է: Ընդ-ով կազմված կրկնակ դ ունեցող բառերը հաճախ արտասանվում են մեկ դ-ով՝ հատկապես ընդդեմ բառը: Քանի որ դդ-ն երկու ձևությոնների սահմանագծում է, պետք է աշխատել երկար արտասանությունը պահպանել:

Ջջ.— Կրկնակ ջջ-ն արտասանվում է բջջահյուսվածք, բջջային,

³⁶ Իբրև հավանության նշան կամ բարեմադթանք ամեն բացականչության մեջ արտասանվում է երկար մ [ամմէն], որն արտահայտում է իմաստի սաստկացում:

բջջահյուսթ, բջջակորիզ, բջջի և բջիջ բառի՝ ձայնավորի սղումով կազմված այլ բաղադրյալ բառերում: Այս բառերում հաճախ գաղտնավանկ է կազմվում երկու ջ-երի միջև, ինչպես՝ բջ[ը]ջային, բջ[ը]ջահյուսթ և այլն, որը ժողովրդական արտասանության հետևանք է և հանձնարարելի չէ:

Կրկնվող շ, ժ, զ, ք հնչյունները հաճախակի հանդիպում են բնաձայնական բառերում, որոնք շատ որոշակի և ընդգծված ձևով արտասանվում են երկար, օրինակ՝ թշշալ, վշշալ, խշշալ, խշշացնել, դծծալ, բծծալ, վծծալ, դզզալ, բզզալ, խզզալ, խզզացնել, գռռալ, դռռալ, բռռալ, գռռացնել, դռռացնել, մռռալ, մռռացնել և այլն:

Բնաձայնական բառերում կան և պայթական հնչյուններ կրկնություններ, որոնք արտասանվում են պահումը երկարաձգելով, ինչպես՝ կտտոց, կտտացնել, ճքթացնել և այլն: Մկկոց, մկկալ բառերն աբտասանվում են երկու կկ-ի միջև գաղտնավանկով՝ մկ[ը]կոց, մկ[ը]կալ:

Հայերենում, մանավանդ օտար բառերում, հատկապես հատուկ անուններում, կարող են հանդիպել գրեթե բոլոր բաղաձայնների կրկնությունները, օրինակ՝ կծծի, փթթել, քթթել, կեցցե, մեցցո-սոպրանո, պալացցո, Սապպորո, Գաղղիա, Կախխար և այլն, որոնք արտասանվում են նույն սկզբունքներով³⁷:

Կրկնակ բաղաձայններից մեկը կարող է ընկնել, օրինակ՝ կեղծծամ—կեղծամ:

Կրկնակ բաղաձայնների տեղական արտասանությունը օտար բառերում կայուն է այն դեպքում, երբ տվյալ հնչյունները հաճախակի հանդիպում են երկու ձևությանների սահմանագծում և դրանց երկար հնչումը լեզվում սովորական է, այսինքն՝ կա տվյալ հնչյունի երկար հնչման ավանդույթ: Այդպիսին է, օրինակ, և ձայնորդը (հմմտ. վրաններ, ամաններ, անեման և այլն): Եվ թերևս այդ է պատճառը, որ կրկնակ նն ունեցող օտար բառերում երկար հնչումը գրեթե միշտ պահպանվում է նաև խոսակցական լեզվում, ինչպես՝ տոննա, վաննա, Աննա, Սուսաննա և այլն: Ոչ ոք չի արտասանում [տոնա], [վանա], [անա] և այլն: Սակայն այդ նույնը չի կարելի ասել մ-ի, լ-ի և մյուս հնչյունների մասին, ինչպես՝ էմմա, Զեմմա, դոլլա, բալլա, Տալլին և այլն, որոնք

37 Հնարավոր է և երեք նույնանման բաղաձայնի հանդիպում, օրինակ՝ անննչելի, որոնցից վերջին երկուսի միջև արտասանվում է ր (անն[ը]նչելի):

խոսակցականում հաճախ հնչվում են կարճ: Այս հարցում որոշ նշանակություն ունի և հնչյունի բնույթը³⁸:

Բ Ա Ռ Ա Ս Կ Ի Ձ Բ

Յուրաքանչյուր լեզու, բացի իրեն հատուկ հնչյունական համակարգից, ունի հնչյունների զուգորդելիության տվյալ լեզվին հատուկ առանձնահատկություններ, ինչպես և բառակզբի (կամ վանկակզբի) ու բառավերջի (կամ վանկավերջի) կազմության կանոններ, որոնցով, ինչպես և հնչյունական ամբողջ կազմով, պայմանավորված է տվյալ լեզվի հնչական ինքնատիպությունը:

Բառասկիզբը գրական հայերենում բոլոր հնչյունների համար ուժեղ դիրք է: Ինչպես ձայնավորները, որ առհասարակ հայերենում փոփոխության չեն ենթարկվում (եթե նկատի չունենանք շեշտի հետ կապված հնչյունափոխությունը), այնպես էլ բաղաձայնները բառակզբում պահպանում են իրենց բոլոր հատկանիշները գրական արտասանության տեսանկյունից:

Ժամանակակից գրական հայերենում (արևելահայերենում) բառակզբի բաղաձայնների կրած փոփոխությունը դիտվում է որպես շեղում գրական արտասանությունից: Այսպես, օրինակ, եթե ձայնեղ հնչյունների փոխարեն արտասանվում է խուլ, ինչպես՝ պերան, կնացի, աուրս, կամ շնչեղ խուլ՝ փերան, քնացի, թուրս (բերան, գնացի, դուրս), խուլի փոխարեն՝ ձայնեղ, ինչպես՝ բանիր, դեսնել, ջանջ (պանիր, տեսնել ճանճ), այդա այսպիսի հընչումները որոշակիորեն բարբառային կամ արևմտահայկական արտասանության արտահայտություն են:

Բառը հայերենում կարող է սկսվել բոլոր ձայնավորներով և բաղաձայններով, բացառությամբ Ե-ի: Բ-ով հայերենում սկսվում է միայն բառը (Բաֆֆի հատուկ անունը թեև գրվում է Ե-ով, բայց արտասանվում է [Բ]աֆֆի): Օտար ք (ք) հնչյունով սկսվող փոխառյալ բառերը որպես կանոն հայերեն տառադարձվում և ար-

38 Գրության մեջ շարտահայտված բաղաձայնների կրկնությունը (կամ երկարացումը) կարող է արտահայտել իմաստի սաստկացում, որը ավելի շատ հատուկ է բարբառներին և ժողովրդախոսակցական լեզվին, ինչպես՝ վազզեց, ամմեն օր, իճճը ամիս, իճճը օր, սաաաաակ գլխացավ և այլն: Նույն ձևով իմաստի սաստկացում կարող է արտահայտել և ձայնավորների երկար արտասանությունը, օրինակ՝ եփե՛ց, եփե՛ց, մինչև ջուրը քաշեց: Այնքան վազե՛ց, մինչև շունը կտրեց և այլն:

տասանվում են Ռ-ով, օրինակ՝ Ռուբլի, Ռադիո, Ռեկտոր, Ռեկորդ, Ռեժիմ, Ռեանշ և այլն:

Բառասկիզբը (կամ վանկասկիզբը) հայերենում բնութագրվում է մեկ բաղաձայնի կանոնով: Սա հայերենի բառասկզբի հնչական կարևոր առանձնահատկությունն է, ըստ որի բառասկզբում չի կարող արտասանվել երկու բաղաձայն: Հասկանալի է, որ խոսքը այստեղ վերաբերում է արտասանությանը, այսինքն՝ հնչյուններին և ոչ տառերին, քանի որ երկու (և շատ ավելի) բաղաձայն տառերի զուգորդումը գրության մեջ հայերենում բառասկզբում շատ սովորական է: Բառասկզբի երկու և ավելի բաղաձայնները արտասանության ժամանակ իրացվում են սուղ ը ձայնավորով կազմված գաղտնավանկի միջոցով: Այժմյան փուլում սա որոշ բացառություններով (այդ մասին կխոսվի ստորև) հանդես եկող ընդհանուր օրինաչափություն է, որն իրացվում է երկու եղանակով:

Ա. Բառասկզբում, երբ շփական հնչյունին զուգորդում է պայթական, ապա դրանցից առաջ, ըստ ավանդության, արտասանվում է թույլ ր, որը գրության մեջ չի արտահայտվում. օրինակ՝ [ը]սկսել, [ը]սպասել, [ը]ստրուկ, [ը]սթափվել, [ը]զբաղվել, [ը]զգույշ, [ը]շտապել և այլն:

Այս կանոնը հիշատակված է Այտրեյանի, Պալասանյանի, Աբեղյանի մոտ և առհասարակ հայոց լեզվի բոլոր դասագրքերում: Այտրեյանը նշում է, որ բառասկզբում, երբ ս, գ, շ բաղաձայններին հաջորդում են պ, կ, տ, բ, գ, դ, փ, ֆ, ք հնչյունները, ապա դրանցից առաջ արտասանվում է սուղ ր: Աբեղյանը «Հայոց լեզվի տեսության» մեջ այդ կանոնը նկարագրելիս՝ նշում է սկ, սպ, ստ, սփ, սֆ, սք, շպ, շկ, շտ, զբ, զգ զուգորդումները, իսկ «Հայոց լեզվի տաղաչափության» մեջ ավելացնում նաև զմ հնչյունագույն գորդումը:

Մանրամասն քննելով հարցը, կարելի է եզրակացնել, որ ներկայումս այս կանոնին ենթարկվում են սկ, սպ, ստ, սք, զգ, զբ, շտ հնչյուններով սկսվող հայերեն բառերի մեծ մասը: Ընդ որում՝ այսպիսի՝ նախահունչ ը-ով արտասանությունը այդ կարգի բառերի մի մասի համար է միայն ընդհանուր առմամբ ավելի բնորոշ, ինչպես՝ [ը]սկսել, [ը]սկիզբ, [ը]սպասել, [ը]սպիտակ, [ը]սպանել, [ը]սպառնալ, [ը]ստանալ, [ը]ստոր, [ը]ստիպել, [ը]ստվեր, [ը]ստուգել, [ը]ստրուկ, [ը]ստեղծել, [ը]սթափվել, [ը]զգալ, [ը]զգույշ, [ը]զգաստ, [ը]զգեստ, [ը]զգացում, [ը]զ-

քոսներ, [ը]զբաղվել, [ը]շտապ և այլն: Սփ հնչյուններով սկսվող՝ կա միակ սփոփել (սփոփանք, սփոփիչ և այլն) օրինակը, որի արտասանությունը ներկայումս կայուն չէ և [ը]սփոփել հնչմանը զուգահեռ ունի նաև ս[ը]փոփել տարբերակը: Այսպիսի հնչումը հավանաբար պայմանավորված է նաև սփռել, սփռոց բառերի համաբանությամբ: Եթե սփռել և սփռոց բառերը որոշակիորեն արտասանվում են առանց նախահունչ Լ-ի՝ ս[ը]փռել, ս[ը]փռոց, ապա սփյռոք բառը հաստատուն արտասանություն չունի: Այն արտասանվում է մերթ [ը]սփյուռք, մերթ՝ ս[ը]փյուռք (իհարկե, Լ-ն ոչ մի դեպքում ընդգծված չի արտասանվում): Ճիշտ է առաջին ձևը:

Բացի վերոհիշյալ բառերից, կարելի է նշել սք-ով սկսվող [ը]սքանչանալ, [ը]սքանչելի, զմ-ով՝ [ը]զմայելի, [ը]զմայվել, [ը]ջմյունեիա բառերը:

Նույն հնչյուններով սկսվող մի շարք բառեր չեն ենթարկվում այդ կանոնին, այսինքն՝ Լ-ն հնչվում է ոչ թե շփականից առաջ, այլ՝ հետո, օրինակ՝ ս[ը]քողել, ս[ը]քեմ, զ[ը]մրուխտ, զ[ը]մըսել, ս[ը]փրթնել, ս[ը]պաս, ս[ը]պրդել, շ[ը]փոթ, շ[ը]փոթել, շ[ը]փոթվել, շ[ը]փել, շ[ը]պրտել, շ[ը]փանալ, ս[ը]կոթել, շ[ը]պպացնել, շ[ը]պշպացնել, շ[ը]փական, շ[ը]փերթ, ս[ը]տընտու, նաև բարբառային բառերը՝ ս[ը]կել, ս[ը]թար, ս[ը]թրվել և այլն:

Այնուհետև. նկատելի է, որ նախահունչ Լ-ով արտասանվող արմատներով կազմված նոր բառերը, որոնք չունեն հնից եկող ավանդական արտասանություն, միտում ունեն արտասանվելու առանց Լ-ի, ինչպես՝ ստուգաբ, ստուգաթես, ստուգականչ, ստուգաթանում, զգեստապահաբան, զրոսաշրջիկ, սպասք, սպասքապահաբան և այլն: Մեծ մասամբ առանց նախահունչ Լ-ի են արտասանվում և քիչ գործածական, գրքային բառերն ու տերմինները, ինչպես՝ ստեղ, ստեղաշար, սկավառակ, սպեղանի, ստեպ-ստեպ, սկիհ, զգայություն, զգայարան, շտեմարան, սկյուռ, սպունգ, ստոծանի, սպառազեն, ստվար, սպանդ, սպանդանոց, շպար, շպարվել և հաստուկ անունները՝ Ստեփան, Սպանդարյան և այլն:

Ոմանք գտնում են, որ ստ, սկ, սպ և նման հնչյունազուգորդություններով սկսվող բառերը կարելի է արտասանել նախահունչ Լ-ի փոխարեն սկզբի երկու բաղաձայնների միջև արտասանվող Լ-ով, ինչպես՝ ս[ը]տրուկ, շ[ը]տապ և այլն: Իրոք, այդպես արտասանողներ էլ կան, օրինակ՝ [ը]սպանել-ի փոխարեն արտա-

սանում են ս[ը]պանել և այլն: Սակայն դա որոշակիորեն բար-
բառային արտասանություն է:

Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ եթի
սկ, ստ, շտ և համապատասխան հնչյունները բառակերպում իրար
են հանդիպել արմատական ձայնավորի սղման պատճառով, ապա
ը-ն արտասանվում է սղված ձայնավորի տեղում և ոչ սկզբից, օ-
րինակ՝ ս[ը]տեի, ս[ը]տահակ (սուտ-ից), շ[ը]տեի (շիտակ-ից),
զ[ը]տեի, զ[ը]տարյուն (զուտ-ից), շ[ը]քեղ, շ[ը]քախումբ (շուք-
ից), ս[ը]գալ, ս[ը]գավոր (սուգ-ից)³⁹:

Հիշյալ հնչյունակապակցություններից առաջ ը-ի արտասա-
նությունը իր արտացոլումն է գտել ժողովրդական երգերում և շա-
փածոյում, որտեղ նախահունչ ը-ն միանալով սկզբի բաղաձայնին
մի վանկ է կազմում, հավասարակշռելով բանաստեղծության շա-
փը: Բերենք մի քանի օրինակ. «Սիրուն Թամարն ամեն գիշեր / Այն-
տեղ կրրակ է անում, / Եվ ըսպասում է անհամբեր / Այնտեղ՝ մոտիկ
դարանում»: Լրոնց: Մովի խավար ափին / Կանգնեց սև-սև մի ըստ-
վեր...» (Հ. Թումանյան): «Եվ կարկառում է ձենները դողդոջ, / Քսա-
կը փոքրիկ վերցնում երկյուղած, / [ը]Ձգում է այնպես՝ թե աշխար-
հը ողջ / Դանձերը ունի ափի մեջ բռնած» (Ավ. Իսահակյան): «Կեսօրն
անցավ, էլ ինչ մնաց, / Օրը մոտ է մայրամուտին, / [ը]Ստվերները
կամաց-կամաց / Փաթաթվում են արահետին» (Հ. Սահյան):
«[ը]Սպասեմ սակայն, ու ես ավիշով / Իմ տաք ողկույզի / Կտա-
նեմ մարդուն զեպի աստղերը, / Որո՞րտը լույսի» (Վ. Դավթյան):
«Փնտրում էր տերը և [ը]ստուկն անտեր, / Մոզը, վարձակը,
քուրմն ու գյուղացին. / Փնտրում էր, երբ դեռ ինքն էլ չգիտեր, / Հայ
էր, նաիրցի՞, թե՞ ուրարտացի» (Գ. էմին):

Նախահունչ ը-ն հաջորդ բաղաձայնի հետ վանկ հաշվելու
հարցում ժամանակակից բանաստեղծները ավելի հետևողական են,
քան նախասովետական շրջանի բանաստեղծները: Մ. Աբեղյանը
բերում է բազմաթիվ օրինակներ, որոնց մեջ նշված զուգորդու-
թյուններով սկսվող բառերը բանաստեղծական տողում մերթ ար-
տասանվում են սկզբի ը-ով, մերթ առանց ը-ի, նախած թե տվյալ
բանաստեղծության չափը ինչ է պահանջում: Օրինակ, Հովհ. Հով-
հաննիսյանը մի տեղ գրում է «Եվ ըսպասում ենք», մեկ այլ տեղ՝
«Եվ սպասում ենք», մի տեղ՝ ըստվեր, մեկ այլ տեղ՝ ստվեր.
որպես մի վանկանի բառ, ըստ բանաստեղծության չափի⁴⁰:

39 Տե՛ս էդ. Աղայան, Գրաբարի փերականություն, Երևան, 1964, էջ 239:

40 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղափություն, էջ 70:

Հետևելով վերոհիշյալ կարգի բառերի կենդանի հնչմանը, կարելի է եզրակացնել, որ այդ բառերի արտասանության մեջ նախահունչ Ը-ի հարցում տեղի է ունեցել զգալի տեղաշարժ: Այդ տեղաշարժը առանձնապես զգալի է երիտասարդ և միջին սերնդի, հատկապես պատանեկության շրջանում: Եվ ոչ միայն այդտեղ: Ունկնդիր լինելով մեր օրինակելի հաղորդավարների, դերասանների, ինչպես և լեզվի հարցում հեղինակավոր անձանց խոսքին, տեսնում ենք, որ նախահունչ Ը-ի արտասանությունը դարձել է խիստ անհաստատ և անկայուն: Հասարակության զգալի մասը բառասկզբի Ը-ն ամենևին չի արտասանում, մյուս մասը արտասանում է ոչ հետևողականորեն, կամ մի բառում արտասանվում է, մյուսում՝ ոչ, մերթ արտասանում է, մերթ՝ ոչ: Դա առանձնապես զգալի է խոլ հնչյուններից առաջ: Օրինակ՝ ստեղծագործություն, ստեղծագործել, ստեղծաբար, ստեղծել, ստորագրել, ստորագրություն, շտապել, ստիպել, ստանալ և այլն բառերի սկզբում հազվադեպ է Ը հնչվում: Ը-ն ավելի զգալի է, երբ բառասկզբում երեք բաղաձայն կա. օրինակ՝ [Ը]սկսել, [Ը]սկսում ենք, [Ը]սկզբունք, [Ը]ստվերոտ և այլն: Սակայն դարձյալ անհաստատ է:

Նրևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժնի երկրորդ կուրսի 10 ուսանողների հանձնարարեցինք նախադասությունների մեջ կարգալ ստանալ, սպիտակ, զգայաբան, շտապողական, զգուշությամբ, ստորագրություն, զգոն, ստիպված, սպառնալիք, ստեղծագործական բառերը: Արդյունքը այն եղավ, որ հիշյալ բառերից և ոչ մեկը չարտասանվեց նախահունչ Ը-ով⁴¹:

Հաշվի առնելով մեր լեզվի զարգացման վերջին փուլում կենդանի խոսքի մեջ տեղի ունեցած տեղաշարժը, առանց նախահունչ Ը-ի՝ ստեղծագործություն, զգաստ, զգուշ, զբաղվել, սկիզբ, շտապ, սպանել և նման արտասանությունը չպետք է համարել սխալ, ուղղախոսական խախտում, այլ ավանդական արտասանության կողքին արտասանական ազատ տարբերակ, այսինքն՝ կարելի է արտասանել [Ը]շտապել և շտապել, [Ը]սպիտակ և սպիտակ և այլն, առանց խախտելու հայերենի ուղղախոսական նորմաները:

41 Արեմտահայերի մոտ այդպիսի տեղաշարժ ամենևին չի դիտվում. նրանք շատ հաստատուն կերպով արտասանում են սկզբի Ը-ն՝ [Ը]ստանալ, [Ը]շտապել և այլն, ընդ որում, այդ կանոնը, նրանց մոտ պահպանվում է նաև օտար բառերում. օրինակ՝ [Ը]սլավոնական, [Ը]Սլավա, [Ը]Սպարտակ, [Ը]սպորտ և այլն:

Բարձր ոճի, բեմական խոսքի, ասմունքի, ճառախոսության համար պետք է գերադասելի համարել ավանդական արտասանությունը, իհարկե, այնտեղ, որտեղ այն որոշակի է: Խոսակցական ոճում կարելի է ընդունել արտասանական երկու տարբերակ՝ ը-ով և առանց ը-ի:

Նշենք նաև, որ բառակզբում սկ, սպ, շտ, զբ և նման հնչյունակապակցություններից առաջ արտասանվող ը-ն, ինչպես նշել են և անցյալի քերականները, քույլ, սուղ ը է, ռուտի օրինակելի արտասանությունը հակառակ է ընդգծված ը արտասանելը: Այդպիսի արտասանությունը հասարակաբանական երանգ ունի, որից պետք է խուսափել:

Հատկանշական է և այն փաստը, որ վերոհիշյալ կարգի բառերում սկզբի ը-ի արտասանությունը պարտադիր չի եղել և հնում: Եվ այդ է պատճառը, որ չափածոյում, տաղաչափության մեջ նրա սղումը եղել է ազատ: Այս մասին նշում են և՛ Ա. Այտրեյանը, և՛ Մ. Աբեղյանը: Այտրեյանը գրում է. «Դարձյալ ազատ է ը ձայնավորին սղումն՝ որ բառի մը առաջին կես վանկերը շինած է, ինչպես. սպասեցին, կամ ըսպասեցին...»⁴²: Աբեղյանի մոտ կարդում ենք. «Զբ, զգ. զմ, սպ, սբ, ստ, սթ, շպ, շտ կապակցությունները արտասանվում են սկզբից մի ը ձայնավորով: Այս ը-ն խոսքի սկզբում միշտ կարելի է և՛ սղել, և՛ չսղել»⁴³: Իհարկե, խոսքն այստեղ չափածոյում հանդես եկած երկակի արտասանության իրողության մասին է, բայց Աբեղյանը դա դիտում է որպես կենդանի լեզվի իրողություն, որն իր դրսևորումն է գտել բանաստեղծական չափում:

Մ. Աբեղյանը նշում է նաև տողադարձի ժամանակ բառակզբում ը-ով վանկ կազմելու անհարմարության մասին, ինչպես՝ ըշ-տապել, ըգ-գուշանալ և այլն, խորհուրդ տալով գրել ուղղակիորեն շտա-պել, զգու-շանալ և այլն⁴⁴:

Նախահունչ ը-ի արտասանությունը ավելի շոշափելի է կապակցված խոսքում, այն դեպքերում, երբ նախորդ բառը վերջանում է բաղաձայնով: Մինչդեռ, երբ այս կարգի բառերն օգտագործվում են անկախորեն, ը-ի հնչումն ավելի աննկատելի է դառնում: Համեմատիր, օրինակ, Մի քիչ էլ թող ինձ սպասի՝ [ը]սպասի և

42 Ա. Այտրեյան, նշվ. աշխ., էջ 377:

43 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 70:

44 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը, էջ 79:

առանձին՝ սպասի՛ր, կամ՝ հոր ցավ ես զգում՝ [ը]զգում ե՛զ զգո՛ւյշ, զգուշացի՛ր:

Երբ վերոհիշյալ հնչյունագուրդումներին նախորդում է ձայնավորով վերջացող որևէ բառ, ապա այսպիսի դեպքերում երկու ձայնավորների հանդիպման պատճառով առաջացած հորանջը վերացվում է ը-ի սղումով, ինչպես՝ Մի՛ սպասիր: Մի՛ սպանիր: Ի սկզբանե... Նա շտապում է և այլն: Այդ բանը տեղի է ունենում և «կ» եղանակիչով ու «չ» ժխտականով կազմված այս կարգի բառերի արտասանության ժամանակ, օրինակ՝ կսպառնա, կսկսի, չսկսել, չսպառնալ և այլն, որոնցում իրար հանդիպող երկու ը ձայնավորներից մեկը (կը ըսկսի, չը ըսկսի) սղվում է (հմտ. նաև՝ ամենաստույգ և այլն):

Մի շարք դեպքերում, հատկապես երբ սկ, սպ, շտ և այլ հնչյուններից առաջ արտասանվող բառը վերջանում է ս, ժ, շ, ձ, ծ, ց, ջ, ն, չ, բ, պ, փ, դ, տ, ք հնչյուններով, նախահունչ ը-ի սղումը բավականաչափ դժվարանում է, օրինակ՝ մեծ սկիզբ, մեզ ստիպում են և այլն: Երբ ստ-ին նախորդում է գ, ապա կամ պետք է արտասանել մեզ [ը]ստիպում են, կամ՝ մես ստիպում են, այսինքն՝ գ-ի՝ ս արտասանությամբ, որը միանալով հաջորդ ս-ին արտասանվում է որպես մի երկար ս: Պետք է ասել, որ այս կարգի բառակապակցությունները ներկայումս հաճախ հենց այդպես էլ (այսինքն՝ շփականի երկարացումով) արտասանվում են, օրինակ՝ այս ստեղծագործության մեջ և այլն: (Վերոհիշյալ հնչյուններով սկսվող օտար բառերի արտասանության մասին տե՛ս էջ 227):

Բ. Բառասկզբում եթե ունենք երկու և ավելի բաղաձայններ, ապա առաջին երկուսի միջև սովորաբար արտասանվում է չզրվող ը, բացառությամբ նախորդ կետում հիշատակված հնչյուններով սկսվող բառերի, որոնք ը են ստանում բառասկզբից: Իսկ դա նըշանակում է, որ հայերենում բառասկզբում (ինչպես և վանկասկզբում), եթե բառը ձայնավորով չի սկսվում, օրինաչափ է մեկ բաղաձայնի արտասանությունը, օրինակ՝ գ[ը]րադ, վ[ը]հատ, կ[ը]րճատել, չ[ը]ղջիկ, թ[ը]շնամի, տ[ը]ղա, թ[ը]թու և այլն: Այսպիսի դեպքերում ը-ն վանկարար հնչյունի դեր է կատարում, կազմելով գաղտնավանկ, ինչպես՝ բ[ը]-ժիշկ, կ[ը]տ-րել, ն[ը]-կար, գ[ը]-լուի և այլն: Հետևաբար, այս կարգի բառերը, որոնք թեև գրության մեջ ունեն մեկ ձայնավոր, երկվանկանի են: Եվ այդ է պատճառը, որ հոգնակերտ վերջավորություն ստանալիս՝

դրանց ավելանում է —եւր և ոչ —եւր վերջավորութիւնը, որը կցվում է միավանկ բառերի:

Հայերենի բառասկզբի այս ընդհանուր օրինաչափության իրացման ժամանակ սակայն, բաղաձայնների ղուգորդելիությամբ, ինչպես և բառի հնչյունական ամբողջ կազմով պայմանավորված՝ երևան են գալիս արտասանական որոշ առանձնահատկութիւններ:

Այսպես՝ նկատելի է, որ երբ բառասկզբի բաղաձայնին հաջորդում է ր ձայնորդը, ապա երկու բաղաձայնների (բաղաձայնի և ձայնորդի) կցումը տեղի է ունենում առանց զգալի դժվարութիւն: Դա բացատրվում է նրանով, որ անցումը բաղաձայններից դեպի ձայնորդ հնչյունները տեղի է ունենում սահուն կերպով, քանի որ ձայնորդները ընդհանուր առմամբ հեշտությամբ են միանում նախորդող բաղաձայնների հետ (բացառությամբ մ-ի): Զայնորդների այս առանձնահատկութիւնը առանձնապես բնորոշ է ր ձայնորդին: Բ-ն նախորդող և՛ պայթականների, և՛ շփականների հետ ոչ ողակի պայմաններում (այդ մասին տե՛ս ստորև) արտաանվում է ոչ թե լի գաղտնավանկով, այլ ր-ի՝ անցումային շատ աննշան տարրով, որը գրեթե լսելի չէ:

Այս երեւոյթը ավելի հստակ է երևում բառասկզբի հր հնչյունների առկայութեան ժամանակ, ինչպես՝ հրացան, հրապարակ, հրաշագեղ, հրամանատար, հրեշտակ, հրովարտակ և այլն:

Բառասկզբում հր զուգորդութեան միասնաբար արտասանութեան մասին նշել է Մ. Աբեղյանը: Նա գրում է. «Մեր լեզվում միայն հր բաղաձայնները բառասկզբում արտասանվում են առանց ր ձայնավորի, ինչպես՝ հրեշտակ, հրեղեն: Բայց այդ էլ սովորաբար բուն ժողովրդական ձևով արտասանում են և հաճախ բանաստեղծները գրում են հրեշտակ, հրեղեն»⁴⁵:

Կարելի է նախասովետական և ժամանակակից բանաստեղծների չափածոյից բերել մի շարք փաստեր, որոնցում հր կապակցութեամբ սկզբող բառերը բանաստեղծութեան չափում մեծ մասամբ հնչվում են առանց գաղտնավանկի: Նշենք միայն մի քանիսը. «Ժայթքում է անվերջ գիշեր ու ցերեկ/ Կրօնու ահեղ երկաթը հրաշեկ»: «Ահա Միլետից հրեշտակն ուղարկած / Եկավ, ավետիք բերեց իշխանին»: «Հուր հեր գլխին—հրեղեն պսակ / Եվ աշերն են զույգ արեգակ»: Այս տողերում՝ վերցված Հովհ. Հովհաննիսյանի չափածոյից, բնագծված բառերն արտասանվում են առանց

45 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափութիւն, էջ 48:

գաղտնավանկի: Բերենք մի քանի օրինակ մեր օրերի բանաստեղծություններից. «Շատ քաղաքներ կյանք կմտնեն, կծերանան քաղաքներ, /Հրաժեշտ կտա դարը դարին, Երևանը իմն է միշտ (Ալազան): «Հիմա իշել եք դուք հողի վրա /Հրապարակում, այստեղ պինդ ասֆալտին» (Ս. Կապուտիկյան): «Հոգնել եմ ես այս անմոռուն, այս անդադրում հրաժեշտներից, /Կարծրացել եմ սպիի պես, էլ չեմ տխրում հրաժեշտներից, / Նայում եմ ես ճամփաներին, որ տանում են, տանում, տանում/, Տխրում եմ ես նրա համար, որ չեմ տխրում հրաժեշտներից» (Ս. Կապուտիկյան): Այս բոլոր օրինակներում բառասկզբի հր կապակցությունն արտասանվում է առանց ը-ի:

Սակավաթիվ դեպքերում միայն բանաստեղծության չափում հր-ի միջև արտասանվում է գաղտնավանկ: Օրինակ՝ «Եվ պալատներ կերտեցինք հոյակապ ու վիթխարի /Բարձրաբերձ ու վես/, Հրապարակ, որտեղից առաջնորդը մեր դարի / Միշտ նայում է մեզ» (Գ. Սարյան):

Բացի բառասկզբի հր կապակցությունից, ինչպես նշեցինք, այդ երևույթը դիտվում է և մյուս բաղաձայնների և ր-ի զուգորդության դեպքում, ինչպես՝ խրամատ, վրացական, բրածո, դրացի, դրացիական, Քրիստոս, Գրիգոր, գրավական, կրակակետ, լրագրավաճառ, տրամագիծ, տրական, վրիժառու, գրաբար, խախուսել, խախճանք, գրական, գրեթե, գրագետ, գրականագիտական, գրահապատ, դրամագլուխ, վրիպակ և այլն: Սակայն այս հնչյուններով սկսվող բոլոր բառերը չեն, որ արտասանվում են առանց բառասկզբի լիահունչ գաղտնավանկի: Օրինակ՝ հ[ը]րել, հ[ը]րձիգ, հ[ը]րաջք, հ[ը]րեա, գ[ը]րել, գ[ը]րչակ, տ[ը]րվել, վ[ը]րան, վ[ը]րեժ և նման բառերում որոշակիորեն ը է արտասանվում, թեև երկրորդ հնչյունը ր է:

Քննելով բաղաձայնի և ր-ի զուգորդությամբ սկսվող բառերի արտասանությունը, մենք տեսնում ենք, որ այդ կարգի բառերում գաղտնավանկի արտասանությունը պայմանավորված է ամբողջ բառի հնչյունական կազմով և վանկերի թվով: Այսպես՝ եթե բաղաձայնի և ր-ի զուգորդությամբ սկսվող բառում կա միայն մեկ գրվող ձայնավոր, ապա բառն արտասանվում է լի գաղտնավանկով, օրինակ՝ հ[ը]րել, հ[ը]րեշ, Հ[ը]րանտ, գ[ը]րել, գ[ը]րող, բ[ը]րիշ, գ[ը]րավ, վ[ը]րեժ, խ[ը]րոխտ, վ[ը]րան, կ[ը]րել և այլն: Լի գաղտնավանկ է արտասանվում նաև այն դեպքում, երբ բաղաձայն+ր զուգորդությանը հաջորդում է երրորդ բաղաձայնը

(և ավելին), ինչպես՝ հ[ը]րթիռ, հ[ը]րձիգ, խ[ը]րձիթ, կ[ը]րճատել, գ[ը]րվել և այլն: Մնացած դեպքերում բառասկզբի բաղաձայնի և Բ-ի զուգորդության մեջ Ը-ի արտասանությունը շատ թույլ է, օրինակ՝ հրահանդ, հրահանգիչ, հրամանատար, հրաբուխ, հրանոթ, հրաժարական, հրաձգային, հրատարակել, հրոսակային, հրավեր, հրավիրել, Հրաշյա, զրավական, տրամաբանական, լրեական, Վրաստան, խրախույս, զրություն, ծրագիր, վրիժառու, խրատական և այլն:

Նշենք նաև, որ այս հարցում գրեթե նշանակություն չունի բաղաձայնի և Բ-ի միջև սղված ձայնավոր կա, թե ոչ. օրինակ՝ հրաբուխ և հրաման, զրական և զրավական:

Առհասարակ նկատելի է, որ բաղաձայնի և Բ-ի զուգորդությամբ սկսվող բառը որքան երկար է, այնքան ավելի որոշակի է այդ հնչյունների կապակցելիությունը արտահայտվում, օրինակ՝ տրամաբանական, զրականագիտական, հրապարակախոսություն և այլն:

Լիահունչ գաղտնավանկով են հնչվում այն բարդ բառերը, որոնցում ձայնավորի սղումը որոշակիրոն գիտակցվում է, կամ երբ սղված ձայնավորով միավանկ արմատին հաջորդում է ա հոդակապը. օրինակ՝ լ[ը]րաբեր, ս[ը]րամիտ, ս[ը]րածայր, կ[ը]րաջուր, հ[ը]րակայուն, ժ[ը]րաջան և այլն:

Գրական արտասանությունը պահանջում է ը արտասանել այնտեղ, որտեղ այն անհրաժեշտություն է: Տվյալ դեպքում բաղաձայնի և Բ-ի զուգորդելիությունը բառասկզբում, որոշակի պայմաններում, հնարավորություն է տալիս լիահունչ ը շարտասանել, հետևաբար պետք չէ արհեստական կերպով ը հնչել այնտեղ, որտեղ այն իրականում չկա:

Նշենք նաև, որ այս երևույթը ավելի ակնառու է բառամիջում՝ վանկասկզբում, որտեղ բաղաձայնի և Բ-ի կապակցելիությունը ավելի ակնբախ է. օրինակ՝ անհրաժեշտ, անտրամաբանական, ազգազրագետ և այլն:

Իհարկե, կան նաև վերը նշված կարգի բառերի սկզբում լիարժեք ը արտասանողներ էլ, ասենք՝ տ[ը]րամաբանություն, գ[ը]րադարան, հ[ը]րեշտակ և այլն: Բայց պետք է ասել, որ գրական արտասանության տեսակետից այսպիսի արտասանությունը կիրթ հնչում չունի, և լեզվի ժամանակակից փուլում, մեր կարծիքով, այն չպետք է օրինակելի համարել: Այդպիսի՝ ընդգծված արտասանությունը նույնիսկ հասարակաբանական որոշ երանգ ունի:

Այս երևույթը ավելի նվազ արտահայտություններ էր երևան է գալիս բաղաձայնի և ձայնորդներից՝ ա, լ, ն-ի զուգորդության դեպքում, օրինակ՝ հնարամիտ, ցնորամիտ, բնակարան, կռահում, գլորել և այլն, բայց այնքան բնորոշ չէ։

Ուշագրավ է այն փաստը, որ բաղաձայնի և ձայնորդներից մի մասի կապակցելիության մասին նշել են դեռևս Այտրեյանը, Չալրիսյանը և Աբեղյանը։

Ա. Այտրեյանի «Քննական քերականության» «Առոգանություն» բաժնում, որտեղ, ինչպես նշում է հեղինակը, տրվում են բառերն ուղիղ արտաբերելու կանոնները (տարածվում էր միայն ձայնավորների վրա), ր-ի արտասանության մասին ասված է հետևյալը. «Ազատ է ր հնչումը գլխավորաբար երբ բաղաձայնն մը ետքը դուրավ կցելու գիր մը հանդիպի՝ ձայնավորով մը մեկտեղ, ինչպես. պարագլուխ, կլափ, ծոել, կոփվ, կննոել, սակայն ընդհանրապես լավագույն է առանց ր հավելվածո հնչել»⁴⁶ (ընդգծումը մերն է—Թ. Ղ.)։

Այս երևույթի մասին բավականին որոշակի պրոմ է նաև Չալրիսյանը. «Բառի մը սկիզբն տու երկու կամ երեք բաղաձայն կից է, առաջինն ետքը ր կհնչվի. ինչպես՝ տըղա, վրկա, դընեմ, ծընամ, զըլանալ, ժըլատ, ժըխոր, հըմայք, գըզվել, թըթու, չըկամիմ, ցըվախճան, թըշնամի, կըսկիծ։ Բայց ոչ եթե վերջինը ր կամ ա է ձայնավորով, ինչպես՝ դրացի, գրաստ, գոհհիկ, բռանիմ, ճշ-գրիտ, ան-ձեռ»⁴⁷։ Այտրեյանի և Չալրիսյանի բերած օրինակներում, ինչպես տեսնում ենք, հաշվի է առնված ոչ միայն բառասկիզբը, այլ առհասարակ վանկասկիզբը։

Այդ հարցը նրանք շոշափել են նաև տաղաչափության, ինչպես և տողադարձի կանոնները ներկայացնելիս։ Հայտնի է, որ տողադարձի կանոնները սերտորեն առնչվում են բառի արտասանության հետ, քանի որ դրանք հիմնվում են վանկատման կանոնների վրա, իսկ վանկատումն էլ իր հերթին եղնում է բառի ճիշտ

46 Ա. Այտրեյան, նշվ. աշխ., էջ 370։

47 Վ. Չալրիսյան, Քերականություն հայկազնյան լեզվի, Վիեննա, 1885, էջ 500։

Ուշագրավ է այն, որ անցյալի քերականները ր-ի և մյուս ձայնորդների կապակցելիության վերաբերյալ օրինակների թվում նշում են մեկ ձայնավորով այնպիսի բառեր, ինչպես՝ գրաստ, գլուխ, կլափ, կոփվ, ծոել և այլն։ Դրանից կարելի է եզրակացնել, որ բառասկզբի գաղտնավանկը նշված տիպի բառերում (բաղաձայն+ձայնորդ) շատ թույլ հնչում է ունեցել, այդ պատճառով դրանք համարվել են մեկ վանկանի բառեր։

արտասանութիւնից: Տաղաչափության մեջ ի հայտ եկող հնչյունների առանձնահատկութիւնները նույնպէս սերտորեն առնչվում են կենդանի հնչման հետ:

Մ. Աբեղյանը բառասկզբի բաղաձայնների միջև ը ձայնավորի գրության մասին գրում է. «Եթե բառի սկզբի երկու բաղաձայնից երկրորդը նայ է լինում, այդ երկու բաղաձայնի միջեւ եղած ը-ն սուղ է և ը-ի արտասանութունն ազատ է, ուստի կարելի է բաժանել սը-լանալ, գը-րավոր, կը-րակոտ, տը-ղա, գը-նալ կամ սլա-նալ, գրա-վոր, կրա-կոտ, իսկ միավանկներն առանց բաժանվելու են մնում՝ տղա, կրակ, գրել: Ավելի լավ է ընդհանրապէս այդպիսի երկու բաղաձայններն իրարուց չբաժանել և տողագարծը վերջին ձևով անել՝ սլա-նալ, գրա-վոր»⁴⁸:

Բառասկզբում արտասանական սերտ միասնութիւն է կազմում բաղաձայնի և յ-ի կապակցութիւնը, որն առաջացել է երկբարբառը երկհնչյունի վերածվելու հետևանքով, ինչպես՝ գյուղ, բյուր, հյուր, դյուրին, քյուր, կյանք, մյուս, նյարդ, լյարդ, շյուղ, ձյուն, ճյուղ, հյուղ, խյուս, վյուն, փյունիկ, սյուն, ժյուրի, լյումպեն, պյուրե և այլն (հմմտ. բիւր, կեանք և այլն):

Եթե բառասկզբում կան երկու նույն բնութի բաղաձայններ, ապա ը-ի արտասանութիւնը շատ ընդգծված է. օրինակ՝ կ[ը]տակել, գ[ը]դակ, տ[ը]գիտութիւն, տ[ը]կարանալ, գ[ը]սպանակ, շ[ը]շական, ճ[ը]շալ, շ[ը]շակ և այլն:

Եթե բառասկզբում զուգորդում են երեք և ավելի բաղաձայններ, ապա անկախ նրանց բնութից, որպէս կանոն, առաջին երկուսի միջև արտասանվում է լիահունչ ը, օրինակ՝ թ[ը]մբկահար, թ[ը]րծել, հ[ը]րկիզել, վ[ը]րդովել, գ[ը]րպան, հ[ը]րվանդան, կ[ը]րկես, կ[ը]րպակ և այլն:

Բառասկզբում լի գաղտնավանկ է կազմվում նույնական բաղաձայնների միջև, ինչպես՝ ն[ը]նջել, գ[ը]զվել, դ[ը]ղում, կ[ը]կոցել և այլն:

«Կ» եղանակիչին և «չ» ժխտականին ինչպիսի բաղաձայններ էլ որ հաջորդելու լինեն, նրանց միջև արտասանվում է լիահունչ և ընդգծված ը, օրինակ՝ կ[ը]բերի, կ[ը]տիրի, կ[ը]հրի, կ[ը]գրի, շ[ը]բերել, շ[ը]տիրել, շ[ը]հրել, շ[ը]գրել և այլն:

Երբ «ց» (= մինչև) մասնիկին հաջորդում է բաղաձայն, ց-ից հետո նույնպէս արտասանվում է ընդգծված ը և զուգորդվում է

48 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրութիւնը, էջ 79—80:

որոշ դադարով, օրինակ՝ ց[ը]պահանջ, ց[ը]վախճան, ց[ը]մահ։
Դա կարելի է բացատրել «ց» մասնիկի իմաստային ինքնուրույնության գիտակցմամբ։

Այդպես պետք է արտասանվի և ցտեսություն բառը, սակայն վերջինս շատ գործածական լինելով, համառոտվելու և կրճատվելու միտումով պայմանավորված՝ մանավանդ խոսակցական լեզվում, արտասանվում է մեծ մասամբ [ստ]եսություն, կամ [ստէս-թյուն]։

Հայերեն մի շարք բառերի գրապատկերներին նայելով, որտեղ բառասկզբում իրար են զուգորդում մինչև ութ և ինը բաղաձայններ, օտարները, առանց խորամուկ լինելու հայերենի արտասանական առանձնահատկությունների մեջ, տարակուսանք և զարմանք են արտահայտում, համարելով բաղաձայնների այդ շղթան անհաղթահարելի, օրինակ՝ մշտնջենական, բոնցֆամարտ, դժնդակ, ծծմբաթթու, շմշկավոր, կրկնվել, մկրտվել, բոնկվել, նշգրտվել, սրսկվել, ֆրժմջյուն, Մկրաշյան և այլն, մանավանդ բնաձայնական բառերը, ինչպես՝ դրխկդրխկալ, շդրխկդրխկալ և այլն։ Սակայն այդ բաղաձայնական կուտակումները վերաբերում են միայն գրությանը և ոչ արտասանությանը, քանի որ արտասանության ժամանակ դրանց միջև ըստ վանկակազմության կանոնների արտասանվում է չգրվող ր, օրինակ՝ ք[ը]րթմ[ը]նջյուն, Մ[ը]կ[ը]րաշյան և այլն։

Բ Ա Ռ Ա Վ Ե Ր Ջ

Հայերենում բառավերջը մեծ մասամբ բաղաձայնական է, որը բնութագրվում է բաղաձայնների եռաստիճան և երկաստիճան հակադրություններով։ Դա նշանակում է, որ բառավերջում կարող են լինել միևնույն շարքի և՛ ձայնեղ, և՛ խուլ, և՛ շնչեղ խուլ բաղաձայններ (վերջինս՝ բաղաձայնի եռաստիճան լինելու դեպքում), օրինակ՝ գիրգ—գիրկ—գիրք, թագ—թակ—թաք (թաք կենալ), սարդ—սաղավարտ—սաղարթ, հող—հոտ—օղ[օթ], կող—կոխ, ող—ոխ, մազ—մաւ և այլն։ Այստեղ շենք բերում բոլոր բաղաձայնների հակադրությունների համար համապատասխան օրինակներ, քանի որ դա դուրս է մեր նպատակից։ Մենք ուզում ենք հատկապես շեշտել այն իրողությունը, որ բառավերջը հայերենի բաղաձայնների համար ուժեղ հնչյունադիրք է, որտեղ կարող են հան-

դես գալ բոլոր լծորդ հնչյունները, և որտեղ պարզորոշ կերպով բացահայտվում է նրանց իմաստազատիչ՝ հնչույթային արժեքը:

Բառավերջը մի շարք լեզուների համար թույլ հնչյունադիրք է, օրինակ՝ ուռերենի, գերմաներենի և այլն: Ռուսերենում վերջին ձայնեղները, որպես կանոն, արտասանվում են խուլ, այսինքն՝ տեղի է ունենում ձայնեղների և խուլերի չեզոքացում (հմմտ. рог—рок, род—рот և այլն, որոնցում г-ն և д-ն արտասանվում են к և т):

Հայերենն այս տեսակետից նման է ֆրանսերենին, անգլերենին և այլ լեզուների, որոնց մեջ հնչյունների հակադրությունը բառավերջում լիովին պահպանվում է, լիովին դրսևորվում է եռաշարք և երկշարք բաղաձայնների իմաստազատիչ արժեքը, և չեզոքացում տեղի չի ունենում:

Այս տեսակետից մենք չենք բաժանում այն վարժիքը, որ իբր հայերենում գործում է բառավերջի ձայնեղ բաղաձայնների խլացման կանոնը: «Активно действует фонетический закон оглушения конечных звонких смычных (и не только смычных), который является характерным для армянского литературного произношения»⁴⁹.

Ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ հայերենում բառավերջի ձայնեղների խլացման կանոն, այն էլ ակտիվորեն գործող, գոյություն չունի: Այդ մասին որևէ հիշատակություն չկա հայ լեզվաբանական գրականության մեջ, և ոչ էլ այդ կանոնը կարելի է հաստատել կենդանի լեզվից վերցված փաստերով:

Իրողությունն այն է, որ ըստ ավանդական արտասանության, հայերենում բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները որոշ դիրքերում՝ դ, ր երբեմն և ն հնչյուններից, ինչպես և ձայնավորներից հետո մի շարք դեպքերում արտասանվում են շնչեղ խուլ, օրինակ՝ աղջիկ—ա[խ-չ]իկ, ողջ—ո[խչ], վարդ—վար[թ], արդեն—ար[թ]են, մարդ—մար[թ], հագնել—հա[թ]նել, ավագ—ավա[թ], միջատ—մի[չ]ատ, աջ—ա[չ], դադար—դա[թ]ար, օդ—օ[թ], շոգ—շո[թ] և այլն: Իսկ մի քանի դեպքերում ձայնեղը վերածվում է ոչ թե շնչեղ խուլի, այլ խուլի՝ հղբայր—ե[խպ]այր, ողբ—ո[խպ], աղբյուր—ա[խպ]յուր և այլն:

Բերված օրինակներից էլ դժվար չէ տեսնել, որ խլացումը վե-

49 А. Арамян, Некоторые выводы по дистрибутивному анализу смычных литературного армянского языка, «Լրաբեր», 1969, № 5:

րաբերում է ո՛չ թե բառավերջին, այլ որոշակի դիրքերի, այսինքն՝ ձայնեղների՝ որոշակի հնչյուններից հետո գտնվելուն, որը կարող է լինել և՛ բառավերջում, և՛ բառամիջում: Եվ այստեղ բառավերջը չէ էականը. բառավերջը չէ, որ պատճառ է դառնում ձայնեղների խլացման, այլ ձայնեղների Բ, Ղ հնչյուններին և ձայնավորներին հաջորդելը: Դա ապացուցելը շատ հեշտ է, քանի որ նույնիսկ միևնույն արմատը բառավերջում կարող է չխլանալ, պահպանել ձայնեղ արտասանությունը, այն դեպքում, երբ բառամիջում այն խլանում է, ինչպես, օրինակ՝ համերգ[գ], բայց՝ երգել[բ], թագ[գ], բայց՝ թագավոր[բ]: Ուրեմն հնչյունների բառավերջում գտնվելը էական չէ: Շատ բառեր բառավերջում ունեն ձայնեղ արտասանություն, ինչպես՝ գոր[գ], մո[գ], բուր[գ], բոր[բ], հար[գ], անար[գ], անուր[ջ], ուղեր[ձ], որ[ջ], սար[դ], կամուր[ջ], հաղար[ջ], մաղ[ձ], ատաղ[ձ], հո[դ], բա[դ], սա[գ], անհա[գ], անա[գ], քա[ջ], ջո[ջ] և այլն, այն դեպքում, երբ բառամիջում համապատասխան հնչյունները խլանում են, օրինակ՝ թարգմանել—թար[բ]մանել, հարբել—հար[փ]ել, դադարել—դա[թ]արել:

Եվ հետո. եթե «ակտիվորեն» գործեք վերոհիշյալ հնչյունական կանոնը, ապա փոխառյալ բառերը նույնպես պետք է ենթարկվեին այդ կանոնին և խլանային: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս փաստերը, այդպես չէ: Չկա թեկուզ և մեկ փոխառյալ բառ, որի վերջին ձայնեղը գրական լեզվում ենթարկվի խլացման, օրինակ՝ գերբ, սերբ, միտկարդ, լորդ, ակորդ, արսուրդ, մորգ, միկրոբ, զիզգաֆ, դեմագոգ, սիգ, նամարդ, դարդ, դարիբ, աղար և այլն:

Այսպիսով, բառավերջի ձայնեղների խլացման հնչյունական կանոն հայերենում, որպես այդպիսին, գոյություն չունի:

Պատրաստվելով դադարի, բառավերջի ձայնեղ հնչյունները, անշուշտ, նույն հնչեղությունամբ չեն արտասանվում, ինչ բառասկզբում և բառամիջում, բայց դա արդեն այլ երևույթ է:

Բառավերջը իր արտասանական առանձնահատկություններով զգալիորեն տարբերվում է բառասկզբից: Բառավերջում երկու բաղաձայնների կից արտասանությունը սովորական է: Կարող են միասնաբար արտասանվել և երեք բաղաձայններ: Նույն հնչյունների զուգորդությունը բառասկզբում և բառավերջում արտասանվում է տարբեր: Համեմատելու, օրինակ, ն[ը]կար և վաճկ, շ[ը]ֆեղ և հրաշֆ, [ը]ստեղծել և Կարստ և այլն: Եթե բառասկզբում կից բաղաձայնները սովորաբար արտասանվում են չզրվող Բ-ով,

ապա նույն հնչյունները, ինչպես տեսնում ենք օրինակներում, արտասանվում է առանց ը-ի:

Բառավերջում միասնաբար արտասանվող երկու բաղաձայններից առաջինը մեծ մասամբ ձայնորդ է՝ ր, ո, մ, ն, յ կամ շփական՝ շ, ժ, խ, դ, ս, գ, ֆ, վ, հ, որոնք հեշտությամբ են կապակցվում հաջորդ բաղաձայնի հետ, օրինակ՝ վեբ, հաբ, կառ, իդն, անն, վիշտ, ուխտ, ցանց, ցանկ, բժիշկ, դրոշմ, հոբ, դառն[ց], սառ, միրգ[բ], ճանն, ամպ, հարգ, աշակերտ, ազգ, որդ[թ], սերմ, թարմ, հողմ, նոսր, Հայք, խանդ, խաղ, սկիզբ, վազ, զգեստ, ծեղ, հիվանդ, հրաշ, հաշ, աղբ[խպ], հաստ, հասկ, առ, նավթ[ֆթ], մարտ, առջ[չ], իրավամբ, թումբ, այս, այտ:

Քս վերջը հանդիպում է մեծ մասամբ հին ու նոր փոխառություններում, ինչպես՝ ստամոքս, մետաքս, մաքս, դուքս, բոքս, զագս[բս], կոմպլեքս, կոքս, սֆինքս, Ֆեկս և այլն, նաև՝ հոգս[բս], զուգս[բս], Մոկս[բս], ցանքս, որոնք պարզ բառեր չեն: Վերջին բառում միասնաբար արտասանվում են հայերենի համար անսովոր երեք բաղաձայններ՝ նքս:

Այլ է, երբ բառավերջի երկու բաղաձայններից վերջինը ր, ն, դ, ո է: Այս դեպքում երկու բաղաձայնների միջև անհրաժեշտաբար արտասանվում է ը, ինչպես՝ ման[ը]ր, համ[ը]ր, բարձ[ը]ր, ցած[ը]ր, սան[ը]ր, եզ[ը]ր, տետ[ը]ր, դուստ[ը]ր, կղմինդ[ը]ր, հյուս[ը]ն, ուրեմ[ը]ն, այսինք[ը]ն, դաշ[ը]ն, Բյուրակ[ը]ն, Վահագ[ը]ն, հանգուզ[ը]ն, բուռ[ը]ն, սառ[ը]ն, աստ[ը]ղ, կոճ[ը]ղ, արկ[ը]ղ, գամփ[ը]ռ և այլն: (Հայերեն բառերում չկա բաղաձայնի և լ-ի զուգորդությամբ բառավերջ): Բացառություն են կազմում յ կիսաձայնով կապակցությունները՝ յր, յն, յլ, յմ, օրինակ՝ հայր, մայր, քույր, այն, այլ, փայլ, սայլ, կայմ և այլն և ռմ, դմ, զմ կապակցությունները՝ թարմ, սերմ, կողմ, հողմ, կազմ:

Նույն հնչյունների ետևառջությունը փոփոխություն է մտցրնում նրանց արտասանության մեջ. հմտ, հանկառն և ցած[ը]ր, սերմ և համ[ը]ր:

Ուրեմն, հայերենի բառավերջի համար անսովոր են բն, բր, գն, գր, դն, դր, քո, խր, հն, հր, սն, տն, տղ, սղ, վր, մն, մր և այս կարգի այլ հնչյունակապակցություններ, այդ պատճառով դրանց միջև կազմվում է լի գաղտնավանկ:

Բառավերջում ր-ից և ն-ից առաջ ը արտասանելու կանոնը տարածվում է նաև օտար բառերի և հատուկ անունների վրա,

ինչպես, օրինակ՝ լիտ[ը]ր, մետ[ը]ր, ալ[ը]ր, սկաֆանդ[ը]ր, մինիստ[ը]ր, Սե[ը]ր, Հայդ[ը]յն և այլն: Այդպես է արտասանվում և բառավերջի բաղաձայնի և լ-ի զուգորդությունը, որը հանդիպում է միայն փոխառյալ բառերում, ինչպես՝ անսամբ[ը]լ, ցիկ[ը]լ, Գրենոբ[ը]լ:

Բաղաձայնի և ր, ո, ն, դ, օտար բառերում նաև լ, հնչյունների զուգորդությունը վերջացող բառերի ածման ժամանակ, երբ նշված հնչյուններին կցվում է ձայնավոր, բառավերջի գաղտնավանկի ր-ն սղում է: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ բառավերջի ր, ո, ն, դ, լ հնչյունները վանկակազմության օրենքով նոր վանկ են կազմում հաջորդող կից ձայնավորի հետ, իսկ ներանցից առաջ արտասանվող ր-ն վերանում է. օրինակ՝ մեղ[ը]ր—մեղ/րաման, աստ[ը]լ—աստ/ղալից, տետ[ը]ր—տետ/րակ, դաշ[ը]ն—դաշ/նագիր, վագ[ը]ր—վագ/րենավոր, մետ[ը]ր—մետ/րաչափ, լիտ[ը]ր—լիտ/րալին, ցիկ[ը]լ—ցիկ/լալին և այլն: Այդպես են արտասանվում այս բառերը և հոլովման ժամանակ՝ մեղ-րի, աստղի, վագրի, ցիկլի, նեգրի և ոչ՝ մեղ[ը]րի, աստ[ը]ղի⁵⁰: Բացառություն են կազմում կցական բարդությունները, ինչպես՝ մանրապրանֆային, բարձրապրանֆային, բարձրատալրոդական և այլն, որոնցում թեև ր-ին հաջորդում է ձայնավոր, բայց ր-ից

50 Բառավերջի գաղտնավանկում ր-ի սղումը, մեր կարծիքով, կապ չունի շեշտի տեղափոխության հետ կապված հնչյունափոխության հետ, ինչպես որ ներկայացվում է հայոց լեզվի մեր դպրոցական որոշ դասագրքերում, այլ պայմանավորված է ր, ո, ն, դ, և հնչյունների արտասանական առանձնահատկություններով: Շեշտի տեղափոխությունը այս դեպքում որևէ դեր չի կատարում, քանի որ գաղտնավանկը շեշտ չի կրում, օրինակ՝ կա՛րծ[ը]ր—կարծություն: Այդպես է և ռուսերենում, որտեղ շեշտի տեղը թեև մնում է նույնը, բայց «գաղտնավանկը» վերանում է, օրինակ՝ кадѣр—кадровой, жанѣр—жанровой: Իհարկե, ռուսերենում գաղտնավանկի գաղափարը չկա և չի դիտակցվում, սակայն այնտեղ ևս բառավերջում աղմկային հնչյունների և ձայնորդի միջև առաջանում է ձայնավորական ձ ներդիրը, ինչպես՝ муѣр, Пеѣр և այլն (տե՛ս Л. Л. Булакин, Фонетика современного русского языка, М., 1970, էջ 125): Այս տեսակետից վագր և тигр բառերի գր և ջր հնչյունների արտասանության մեջ ր-ի հարցում, մեր կարծիքով, տարբերություն չկա: Երկուսն էլ արտասանվում են «գաղտնավանկով»: Սրանից բխում է այն եզրակացությունը, որ բառավերջի ձայնորդներից առաջ ր-ի արտասանությունը, ինչպես և բառի ածման ժամանակ նրա անկումը (ձայնավոր հաջորդելու դեպքում) ոչ թե հալերենին հատուկ երևութ է, այլ պայմանավորված է առհասարակ ձայնորդների արտասանական առանձնահատկություններով, որոնք պահանջում են որևէ հենարան ձայնավոր իրենցից առաջ կամ հետո:

առաջ ը-ն արտասանվում է՝ ման[ը]րապրանքային և այլն, այ-
սինքն՝ այնպես, ինչպես արտասանում ենք ման[ը]րբուրժուական,
ման[ը]րգյուղացիական բառերը, որոնցում ը-ին հաջորդում է
բաղաձայն:

Այս կարգի բառերում ը, ն, ղ, լ-ից առաջ ը-ն չպետք է ար-
տասանել նաև այն դեպքում, երբ վերջիններս ստանում են հոդ,
օրինակ՝ արկղ[ը]ս և ոչ՝ արկ[ը]ղ[ը]ս, աստղ[ը]դ, ոչ՝ աստ[ը]-
ղ[ը]դ: Գաղտնավանկը գերադասելի է սղել, երբ բառին հաջոր-
դում է օժանդակ բայը, օրինակ՝ Մանք է այդ մասին խոսելը և ոչ՝
Ման[ը]ր է այդ մասին խոսելը:

Բառավերջում հայերենի համար խորթ է մեկ վանկում ար-
տասանվող երկու պայթականի կամ պայթականի և կիսապայթա-
կանի կապակցությունը, ինչպես՝ տկ, կտ, գգ, բկ, բգ, ցկ, տշ, կշ,
կց, շտ և այլն, որոնք հանդիպում են օտար բառերում: (Տե՛ս
«Օտար բառերի արտասանությունը»): Եղակի է տկ բառա-
վերջով ցատկ բառը, որը վերջին շրջանում կազմվել է ցատկել
բայից վերջավորության սղումով: Բառավերջում կամ վանկավեր-
ջում հայերենի համար անսովոր է նաև պայթականի և որևէ բա-
ղաձայնի կապակցությունը: Բացառություն են կազմում նախկի-
նում հոգնակերտ վերջավորություն հանդիսացող ք հնչյունով
կազմված բառերը, ինչպես՝ դեպք, միտք, ոտք, մեջք, աչք, մուտք
և այլն:

Նշենք նաև, որ՝ հայերենում բառավերջում երեք բաղաձայնների
կարող են կապակցվել միմիայն այն դեպքում, երբ վերջինը ք է.
օրինակ՝ միշանցք, կուտք, պարտք, առանցք, վարձք, քղանցք,
ինչք և այլն, որոնց թիվը մեծ չէ: (Միակ ցանքս բառում երեք
հնչյուններից միջինն է ք): Ք-ն բառավերջում կարող է կապակցվել
նախորդող բոլոր բաղաձայնների հետ:

Երեք բաղաձայն հնչյունների կապակցությունը բառավերջում
(բացառությամբ ք-ով վերջացողների) հանդիպում է փոխառյալ
բառերում, ինչպես՝ սֆինքս, տեքստ, ինֆարկտ, Կարստ:

Ինչպես ասացինք, հայերենի համար անսովոր է բառավերջի
պայթականի և որևէ բաղաձայնի կապակցությունը և կարող է հան-
դիպել միայն փոխառյալ բառերում, ինչպես՝ ռիթմ, դիպս, էլիպս,
լինդս, Հոբս և այլն: Պետք է նշել, որ այս կարգի բառերի արտա-
սանությունը առանց գաղտնավանկի իրացվում է միայն նախա-
վերջին պայթականի շնչեղացման շնորհիվ, ինչպես՝ գի[փ]ս,
էլի[փ]ս, Հո[փ]ս և այլն, որը տեղի է ունենում ոչ միայն բառա-
վերջում (հմտ. էլիպսոիդ, Հաբսբուրգ, կապսուլ):

Հայերենին հատուկ չէ նաև բառավերջի լ և որևէ բաղաձայնի կապակցությունը, բացառությամբ լք-ի, որտեղ դարձյալ պահպանված է գրաբարի հոգնակերտ ք վերջավորությունը, ինչպես՝ քայլք, ալլք, վայլք. ելք և այլն: Այդ կապակցությունը նույնպես հանդիպում է փոխառյալ բառերում, օրինակ՝ ալտ, վալս, բազալտ և այլն: Նույնը կարելի է ասել մ-ի և որևէ բաղաձայնի կապակցության մասին, բացառությամբ մք, մպ, մս, մֆ կապակցությունների, օրինակ՝ ալումք, կաղամք, բամք, ամպ, կոմս, տոմս, վամֆ, հումֆ: Հայերենում բառավերջում չկան նաև նշ, նս, նգ, նխ, ինչպես և րվ, րֆ, պֆ, շչ կապակցությունները: Այդպիսի բառավերջ հանդիպում է դարձյալ փոխառյալ բառերում և հատուկ անուններում: (Տե՛ս «Յոթար բառերի արտասանությունը»):

Բաղաձայնով վերջացող բառերին կցվող ստացական ս, դ, և հոդերը հանդես են բերում արտասանական որոշ առանձնահատկություններ: Այստեղ էական է այն, որ բառակազմությամբ սլայմանավորված՝ ս, դ հոդերից առաջ, որպես կանոն, արտասանվում է ր, մինչդեռ նույն հնչյուններով վերջացող մեկ ձևությից կազմված բառերն արտասանվում են առանց ր-ի: Համեմատիր, օրինակ՝ երեխ[ը]ս և՛ ստամոքս, հայր[ը]ս և հաբս: Դա նշանակում է, որ հայերենում բառավերջի միևնույն հնչյունների գաղտնավանկով կամ առանց գաղտնավանկի արտասանությունը պայմանավորված է բառի կառուցվածքով:

Ն-ն, լինի այն հոդ, թե ոչ, բոլոր դեպքերում անկապակցելի է նախորդող բաղաձայնի հետ, այդ պատճառով ն-ից առաջ միշտ արտասանվում է ր, օրինակ՝ մայր[ը]ն, գիրք[ը]ն, հյուս[ը]ն: Հայտնի է, որ կապակցված խոսքում ստացական հոդը և է, երբ հաջորդ բառն սկսվում է ձայնավորով կամ նախահունչ ր-ով արտասանվող սա, սպ, սկ և այլն հնչյուններով, իսկ եթե հաջորդ բառի սկզբում բաղաձայն է, ապա ստացական հոդը մնում է որպես ր, օրինակ՝ Սիրտը վկայում է և Սիրտն ասում է: Ինչպես ըն (նաև՝ ըբ, ըղ) վերջացող բառերին ձայնավոր կցվելու դեպքում ր-ով գաղտնավանկը վերանում է, և ն-ն անցնում է հաջորդ վանկը (օր.՝ դառ[ը]ն—դառնապես), այնպես էլ հաջորդող՝ ձայնավորով սկսվող բառի հետ միասնաբար արտասանվելիս՝ և հոդն անցնում է հաջորդ վանկը, իսկ նախորդող ր-ն ընկնում է, օրինակ՝ սար-նիվեր: Ն-ով վերջացող բառերին և հոդը կցվելու դեպքում (իսկ այդ լինում է այն դեպքում, երբ ձայնավորով սկսվող բառ է հաջոր-

դում) երկու և հնչյունների մեջ ը-ն թուլանալով, գրեթե չի արտասանվում: Այս դեպքում ը-ն դադարում է երկու և հնչյունների միջև հենարան լինելուց, և այդ դերը իր վրա է վերցնում հաջորդող ձայնավորը, օրինակ՝ Բաճն աշնտեղ է հասնում: Մեծ տոճն է հաղթության և այլն:

Արտասանական շղթայում հաջորդող բառը ձայնավորով ըսկըսվելու դեպքում ը-ի սղումը հնարավոր է նաև ս, դ հոգերից առաջ (երբ այդ բառերի միջև դադար չկա), օրինակ՝ սիրաս այրեցին, թեեդ ուժգին և սիրա[ը]ս կրակ ընկալ⁵¹: Բայց սղումը ավելի շատ պահպանվում է տաղաչափության մեջ, օրինակ՝ «Հույսե՛ս ամեն դարձան պատրանք խաբուսիկ / Սեր[ը]ս քնքուշ ծաղկի նման թառամեց» (Ավ. Իսահակյան): Խոսակցականում գաղտնավանկը այս պայմաններում, այնուամենայնիվ, զգալի է, օրինակ՝ գիրք[ը]ս ընկավ, գործ[ը]դ արա և այլն:

Ը-ի սղում տեղի չի ունենում, եթե վերջին բաղաձայնները կապակցելի չեն, ինչպես՝ ցս, ծս, տս, նս, տղ[ատ], փղ[ատ], քղ[թտ] և այլն հնչյունների միջև, օրինակ՝ միտ[ը]դ ընկավ, կարոտ[ը]ս առա:

Եթե ս, դ հոգերը կցվում են երկու և երեք բաղաձայնով վերջացող բառերի, ապա ը-ի սղումը առավել ևս դժվարանում է և դառնում գրեթե անկարելի, օրինակ՝ կուրծք[ը]ս, որջ[ը]դ, վիշտ[ը]ս, պարտք[ը]դ և այլն: Ը-ի արտասանությունը բառավերջում այսպիսի պայմաններում հեշտացնում և սահուն է դարձնում հնչումը: Առհասարակ և հոգից առաջ ը-ի սղումը ավելի հեշտ է կատարվում, քան ս, դ հոգերից առաջ:

Գ հոգը բառավերջում միշտ արտասանվում է տ, լինի բաղաձայնից (ներառյալ և ձայնորդները), թե ձայնավորից հետո, օրինակ՝ աղջիկ[ը]տ, մատիտ[ը]տ, գլխարկ[ը]տ, մատ[ը]տ, մեքենա[ը]տ, վեճարկու[ը]տ, տղա[ը]տ, քուն[ը]տ, տառ[ը]տ, ուսում[ը]տ և այլն: Բառավերջում դ-ի խլացումը հայերենում բացառիկ երևույթ է, այն իմաստով, որ ձայնեղները բառավերջում կամ պահպանվում են նույնությամբ, կամ էլ եթե կրում են փոփոխություն, ապա վերածվում են շնչեղ խուլի, ինչպես՝ հար[դ], հո[դ], բա[դ], վառո[դ], դար[դ], լոմբար[դ], և՛ վարդ[թ], մալդ[թ], որդ[թ], օդ[թ], բուրդ[թ], բերդ[թ] և այլն: Գ հոգը ինչպիսի հնչյունների էլ որ հաջորդելիս լինի, հաստատուն կեր-

51 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 60:

պով արտասանվում է ա (հմմտ. մայրդ[լտ] և մարդ[թ], սերդ[լտ] և սարդ[դ], բյուրոդ[տ] և օդ[թ]):

Հատկանշական է այն, որ հայերենում բացի դ և ս հոդերով վերջացող բառաձևերից, չկա մեկ այլ բառ կամ բառաձև, որի բառավերջը լինի ըտ (քույր[լտ], սեղան[լտ]) կամ ըս (գործներ[լս], խոսք[լս]): Այսպիսի վերջը հատուկ է միմիայն հոդավոր բառաձևերին: Այս տեսանկյունով հարցին մոտենալիս՝ բաղաձայնով վերջացող բառերը հայերենում ըստ էության ստանում են ոչ թե ս, դ, հոդերը, այլ՝ ըս, ըդ, այսինքն՝ քերականական իմաստների կրողները ըս և ըդ են, որոնցով կազմված բառաձևերը հակադրվում են բառերի ուղիղ ձևերին:

Որոշ բառեր և բառաձևեր լիովին նույնանում են գրությամբ, ինչպես՝ սարդ (քո սարը) և սարդ (միջատ), միսս (իմ միսը) և միսս (օրիորդ): Այս ձևերը միմիայն հնչմամբ են իրարից տարբերվում (հմմտ. [սարըտ] և [սարդ], [միսըս] և [միս]), որը պայմանավորված է նրանց արտահայտած իմաստով և բացահայտվում է միայն կապակցված խոսքում:

Հայերենին հատուկ չէ նույնական կամ նույն կարգի բաղաձայնների կրկնությունը բառավերջում: Այդ պատճառով այդպիսի բաղաձայններով վերջացող փոխառյալ բառերը, ըստ տերմինաբանական կոմիտեի հատուկ որոշման, պետք է տառադարձվեն մեկ բաղաձայնով, քանի որ հայերենում բառավերջի արտասանությունը պահանջում է կրկնակ կամ նույն կարգի բաղաձայններն արտասանել գաղտնավանկով, ինչպես արտասանում ենք, օրինակ՝ իմովսան[ը]ն, յուրովսան[ը]ն, ին[ը]ն, անդոր[ը]ր:

Սակայն պետք է ասել, որ այդ որոշումը ներկայումս գրեթե չի կիրառվում, և բառավերջի կրկնակ կամ լծորդ բաղաձայնները գրության մեջ (մանավանդ անձնանուններում) մեծ մասամբ պահպանվում են, ինչպես՝ Կանն, Բոնն, Ռապպ, Ուատտ, Շոտտ, Թելլ, Լոկկ, Վոսս, Կրոնշտադտ, Բրանդտ, Շմիդտ, Հումբոլդտ, ինչպես և՛ ֆինն, բոսս, միսս, բիլլ, տոնն և այլն:

Կրկնակ բաղաձայնների արտասանությունը բառամիջում հայերենին խորթ չէ, օրինակ՝ բեբեի, հոփփի, Մասսի, կեցցե, նոյյան, գործարաններ և այլն: Այդ պատճառով բառի աճման ժամանակ բառավերջի կրկնակ բաղաձայնները ընկնելով բառամեջ և գտնվելով երկու ձայնավորների միջև, արտասանվում են երկար. հմմտ. ֆինն—[ֆինն], բայց՝ ֆիննական—[ֆիննական], գալլ—[գալլ], բայց՝ գալլեր, գալլական—[գալլեր], [գալլական]:

Բառավերջում նույնական բաղաձայնների գրությունը օտար բառերում ունի ձևական նշանակություն, որովհետև դա հակառակ է հայերենի բառավերջի արտասանական օրինաչափություններին: Հայերենին հատուկ չէ բառավերջում կամ վանկավերջում երկար ա, երկար լ, երկար ն, կամ պահումով արտասանված (որ նույնն է՝ երկար) պ, փ, կ և այլն: Այդպես գրվելով, դրանք մեծ մասամբ հնչվում են որպես մեկ հնչյուն, թեև հնարավոր է, օրինակ, շփականները, որոշ չափով և ձայնորդները, արտասանել երկար, ասենք՝ կրոսս, միսս, Մամն, բիլլ, Գրիմմ և այլն:

Նկատելի է, որ գրային արտասանության ուժեղ միտումը վերջին ժամանակներս բառավերջի նույնական բաղաձայնների արտասանության մեջ նույնպես որոշ տեղաշարժ է առաջ բերել: Հենվելով բառերի գրության վրա, նկատվում է ձգտում, բառավերջի նույնանման բաղաձայններն արտասանել որոշ տևողությամբ, մանավանդ շփականները, օրինակ՝ ՏԱՍՍ, ֆիեն, բոսս, բիլլ և այլն:

ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԲԱՌԱՄԻՋՈՒՄ

Շեշտի տեղափոխության պատճառով առաջացած ձայնավորների սղումը, ինչպես և բառաբարդումը և ածանցումը հաճախ պատճառ են դառնում բաղաձայնական կոտակումների առաջաման, որոնք շատ դեպքերում հնչվում են ը ձայնավորով կազմված գաղտնավանկի միջոցով:

Բառամիջում հանդիպում են երեք և ավելի բաղաձայններ բառաբարդման և ածանցման ժամանակ, այսինքն՝ երկու ձևույթների սահմանադժում, հապավումներում, ինչպես և այն դեպքում, երբ բաղաձայնների մեջ սղվել է որևէ ձայնավոր, օրինակ՝ ընդհատել, ամպհովանի, առանցքներ, աբծվախոյակ, աբազործկոմ, ուսմանկհատ, անձկալի, թռչնաբուծական, երգվյալ, ոսպնյակ և այլն:

Նշենք, որ վանկասկիզբը իր արտասանական օրինաչափությամբ համապատասխանում է բառասկզբին և վանկավերջը՝ բառավերջին: Այն հնչյունական զուգորդումները, որոնք հանդիպում են բառասկզբում, հանդիպում են և բառամիջում՝ վանկասկզբում, իսկ վանկավերջը այդ իմաստով մեծ մասամբ համապատասխանում է բառավերջին:

Արդեն նշել ենք, որ հայոց լեզվին հատուկ չեն բաղաձայնական կոտակումներ, որոնք և՛ խոսքի շղթայում, և՛ մի բառի սահմաններում անբարեհունչ են:

Բաղաձայնների կապակցված արտասանության հարցում, բացի այն, թե քանի բաղաձայն (այդ թվում ձայնորդ) են իրար հանդիպում, նշանակություն ունի նաև այն, թե ինչպիսի բաղաձայններ (նաև՝ ձայնորդներ) են իրար հանդիպում:

Հնչյունական զուգորդությունների արտասանության համար էական նշանակություն ունի վանկաբաժանը, որը հայերենում ունի իր հատուկ կանոնները՝ կապված վանկակազմության և բաղաձայնների կապակցելիության հետ:

Հայերենում իրար զուգորդող երեք բաղաձայններից առաջինը կամ վերջինը սովորաբար ձայնորդ է, կամ շփական՝ ր, ն, ղ, շ, ս, գ, խ և այլն: Քիչ չեն նաև այն զուգորդումները, որտեղ երեք բաղաձայններից երկուսը՝ առաջինը և վերջինն են շփական և ձայնորդ կամ երկու ձայնորդ:

Բառամիջում ձայնորդները և շփականները հեշտությամբ կապակցվում են հաջորդող բաղաձայնի հետ, օրինակ՝ արք/շիռ, վառն/կան, հանգ/չել, խոտ/կարան, պաշտ/պան, թմբ/կահար և այլն:

Եթե բառամիջի բաղաձայնական զուգորդության երեք (և ավելի) բաղաձայններից վերջինը ր է կամ այլ ձայնորդ, ապա վերջինս սովորաբար իրեն է միացնում նախորդ բաղաձայնը, ինչպես՝ քաղ/ցրություն, եր/կրային, բեր/կրանք, թոն/դրակեցի, կեն/տրոն, ճամ/պրուկ, ան/դրանիկ, ման/կլավիկ, ընդ/սմին: Այսպիսի դեպքերում վերջին ձայնորդի և նախորդ բաղաձայնի միջև ը արտասանելը ամենևին տեղին չէ:

Բառամիջում ր-ն (մասամբ նաև լ-ն) կապակցված է արտասանվում նախորդ բաղաձայնի հետ նաև այն դեպքում, եթե առկա են միայն երկու բաղաձայն, լինեն դրանք հնչյունափոխ արմատի սկզբում, թե պարզ բառում, օրինակ՝ արտա/դրական, բացա/տություն, ցուցա/դրական, պարզևա/տել, տա/տրակ, Բա/զրատ, շաղա/կրատ, պա/տրանք, պա/տրիկ, բա/կլա, ա/կլատիզ և այլն: Պարզ բառերում հնարավոր է և ոչ կապակցված արտասանություն՝ պատ/րանք, Բազ/րատ, պատ/րիկ, բակ/լա և այլն:

Նույն սկզբունքն է իշխում և օտար բառերում, օրինակ՝ բյուրո/կրատ, դեմո/կրատ, ինչպես և՝ էլեկ/տրական, ագիտ/պրոպ, կոն/ֆլիկտ և այլն:

Ր-ին ն, մ, ղ հնչյունները նախորդելու դեպքում՝ դրանք մրնում են նախորդ վանկում, ինչպես՝ մեղ/րաման, ման/րանալ, համ/րանալ և այլն:

Նթե երկու կից բաղաձայններից առաջինն է Ե, ապա երկու բաղաձայնների միջև անցնում է վանկաբաժան, ինչպես՝ հար/գել, Ար/տակ, Վար/դան:

Հատկապես բնորոշ է յ-ի կապակցված արտասանությունը նաևորդ բաղաձայնի հետ բառամիջում՝ վանկասկզբում, երբ յ կիսաձայնին նախորդում են երկու բաղաձայններ, օրինակ՝ բյուրակ/նյա, բոմ/բյուն, կղ/զյակ, հանգս/տյան, Թոփ/շյան, ան/կյուն, աղ/բյուր, տաս/նյակ, ութ/նյակ, ռսպ/նյակ, Ստամբուլ/ցյան, Դավ/թյան: Յ-ն կապակցված է արտասանվում նախորդ բաղաձայնի հետ նաև աչն դեպքում, երբ յ-ից առաջ միայն մեկ բաղաձայն է՝ պայթական կամ ռնգային, ինչպես՝ որա/կյալ, մենա/կյաց, առաժո/տյան, մա/տյան, մա/նյակ, տասնա/մյակ, բայց ներկայումս տարածված է նաև սեն/յակ, ման/յակ, տասնամ/յակ և նման արտասանությունը:

Բառամիջում շորս բաղաձայնի զուգորդությունը կախող է արտասանվել առանց գաղտնավանկի այն դեպքում, երբ վերջինը յ է (յ-ն չի կարող լինել երկու բաղաձայնների միջև), իսկ առաջին երկուսը՝ կապակցելի: Այս դեպքում վանկաբաժանը անցնում է առաջին երկու հնչյուններից հետո, օրինակ՝ Բայբուրդ/ցյան, հեղ/վյալ, ռսպ/նյակ, Մկրտ/շյան:

Ինչպես բառավերջում, այնպես էլ բառամիջում՝ վանկավերջում կապակցելի են ձայնորդ կամ շփական հնչյունները հաջորդող բաղաձայնի հետ, օրինակ՝ գաղտ/նի, վառն/կան, ընդ/հատել, ամպ/հոփանի, ընկ/նել, չաբղ/վածք, մրս/կան, հաբթ/վել, երկ/նաչին, թաբզ/ման, թմբ/կահար, թռչ/նաբույծ, կրկ/նել, երկ/նել, հաստ/լիկ և այլն: Բառամիջում՝ վանկավերջում կարող է լինել երեք բաղաձայնի կապակցություն, միայն այն դեպքում, երբ վերջինը ք է, օրինակ՝ բոռնցք/ներ, միջանցք/ներ և այլն:

Երկու բաղաձայնների միջև գտնվող Ե, Ա, Ղ, Լ հնչյուններից առաջ, որպես կանոն, կաղմվում է գաղտնավանկ, օրինակ՝ բնկ[ը]ղմել, ընկ[ը]ռկել, Աղ[ը]րբեջան, աղ[ը]նկալել, պատ[ը]րվակ, կոր[ը]նգան, շատ[ը]րվան, ունկ[ը]նդրել, մագ[ը]լցել, բոցկ[ը]լտալ, տրտ[ը]նջալ, մշտ[ը]նջենական և այլն (բացառությամբ կրավորական վ ածանցով կաղմված մի խումբ բայերի՝ գտն[ը]վել և այլն)⁵²:

⁵² Առնչի բառում, որտեղ Ա-ն երկու բաղաձայնի միջև է, Ը-ն արտասանվում է Ա-ից հետո սղված և ձայնավորի տեղում՝ լեռն[ը]ցի: Երեք բաղաձայն լինելու

Վանկավերջում միասնաբար շեն կարող արտասանվել կամ կապակցելի չեն պայթականի և այլ բաղաձայնի զուգորդությունները, ինչպես՝ պս, փշ, տս, տշ, քշ, դգ, քս և այլն, և այդպիսիք լինելու կամ ձայնավորի սղման պատճառով առաջանալու դեպքում, դրանց միջև արտասանվում է ը, օրինակ՝ ապ[ը]ստամբություն, ապ[ը]սպրել, պատ[ը]սպարել, պատ[ը]շգամբ, հափ[ը]շտակել, հանդ[ը]գնություն, թաք[ը]ստոց:

Այն հնչյունազուգորդումները, որոնք հայերենի համար անսովոր են բառավերջում, չեն հանդիպում նաև բառամիջում՝ վանկավերջում, ինչպես՝ նշ, նս, նգ, րվ, մֆ, պֆ, տշ և այլն:

Երբ բառամիջում իրար են հանդիպում երեք բաղաձայն, որոնցից առաջին երկուսը կապակցելի չեն, ապա առաջին երկուսի միջև սովորաբար արտասանվում է ը, օրինակ՝ ալ[ը]նհայտ, եթե առաջին երկուսը կապակցելի են, ապա ը չի արտասանվում, օրինակ՝ Վառդ/գես, թաք/ման:

Ը չի արտասանվում նաև բնիկ հնչյունազուգորդության միջև, ինչպես՝ խոնառն/վել, ճանապարհ/վել, շնորհ/վել, արհամառն/վել: Այս կարգի բառերում արտասանվում է թույլ և, կամ բոլորովին չի արտասանվում, ինչպես բառավերջում (հմմտ. ճանապարհ, շնորհ և այլն):

Եթե վ կրավորական ածանցին նախորդող երկու բաղաձայնները կապակցելի են, ապա գաղտնավանկ նույնպես չի կազմվում: Օրինակ՝ պառտ/վել, կերտ/վել, պառտ/ված, կերտ/ված, հաքթ/վել, հաքթ/ված, դաբձ/վել, ճեղք/վել, հաղթ/վել, բառք/վել, սաբք/վել, գծտ/վել, օծտ/վել, վերց/վել, վարկ/վել, ջառք/վել, հաշտ/վել, թմբ/վել, հնչ/վել, կարն/վել, կառք/վել, դաբս/վել, բունկ/վել, գմալ/վել, ալալ/վել և այլն: Այս ձևերում բտ, քք, րձ, դֆ, դթ, րդ, բֆ, ժտ, բց, բկ, շտ, մբ, նշ, նկ, յլ, բն, բգ, քս հնչյունները կապակցելի են (հմմտ. արտ հաքթ, ուղեծ, ճեղք, հաղթ, սառք, վաբք, հաբց, վաբկ, թումբ, կանչ, վանկ, գալլ, հաբն, բուբգ, ոքս և այլն):

Եթե վ-ին նախորդող բաղաձայնները անկապակցելի են, ապա ը-ն սովորաբար արտասանվում է վ-ից առաջ, օրինակ՝ բնկճ[ը]վել, պատժ[ը]վել, տեսն[ը]վել, մատն[ը]վել, օգտ[ը]վել, զարն[ը]վել, հագն[ը]վել, գտն[ը]վել, հայտն[ը]վել,

դեպքում ը-ն արտասանվում է հիշյալ հնչյուններից հետո և ոչ առաջ, եթե դրանք արմատի սկզբնահնչյուն են, օրինակ՝ առ[ը]ցուն, առն[ը]վազն և այլն:

պճն[ը]վել, բռն[ը]վել, բեռն[ը]վել, խառն[ը]վել, ուղղ[ը]վել, ղնն[ը]վել, քնն[ը]վել, խցկ[ը]վել, լկ[ը]վել, մամլ[ը]վել և այլն:

Պետք է ասել, որ այս կարգի բայերում ր-ի արտասանության տեղի հարցում նկատելի են որոշ տատանումներ, երբ ր-ն արտասանվում է ոչ թե վ-ից առաջ, ինչպես որ պահանջվում է, այլ նախորդող երկու անկապակցելի հնչյունների միջև. օրինակ՝ հայտ[ը]նվել, գտ[ը]նվել, բնկ[ը]նվել, մատ[ը]նվել, որը շեղում է գրական արտասանությունից: Նույն հիմունքով հաճախ արտասանում են օթ[ը]տված, օթ[ը]տվել, քն[ը]նված, քն[ը]նվել, զն[ը]նված, զն[ը]նվել, երբեմն՝ օգ[ը]տվել, հագ[ը]նվել և այլն, փոխանակ օծտ[ը]ված, օծտ[ը]վել, քնն[ը]ված, քնն[ը]վել, հագն[ը]ված, օգտ[ը]ված հնչելու: Ծիշտ են այն ձևերը, որոնցում ր-ն հընչվում է վ կրավորական ածանցից առաջ: Օծտվել, պատծվել, ուղղվել բայերը կաղմվում են ոչ թե օծիտ, պատիծ, ուղիղ բառերից ի ձայնավորի սղումով, այլ՝ օծտել, պատծել, ուղղել բայերից: Այս կանոնից շեղվում են վ ածանցով կաղմված այն բայերը, որոնցում միջին բաղաձայնը ր, ո, դ է: Այս դեպքում ր-ն արտասանվում է նշված հնչյուններից առաջ: Օրինակ՝ սան[ը]րվել, կտ[ը]րվել, մաք[ը]րվել, կոտ[ը]րվել, կերակ[ը]րվել, ման[ը]րվել, սափ[ը]րվել, փշ[ը]րվել, կշ[ը]ռվել, պատ[ը]ռվել, մկ[ը]րտվել, խնդ[ը]րվել (գործածական է խնդ[ը]րվում է ձևը), ծոմ[ը]ռվել, ծամած[ը]ռվել, գայթակ[ը]ղվել և այլն⁵³:

Պատճառական բայերում ցն, ցր հնչյունազուգորդումներին ձայնավոր նախորդելու դեպքում դրանք արտասանվում են առանց ր-ի, ինչպես՝ հիվանդացնել, արքնացնել, հեռացնել, նստեցնել, մերկացնել, հալեցնել, զովացնել, տափացնել, խոսեցնել, ուտեցնել, բարկացնել, ինչպես և՛ հիվանդացրո՛ւ, արքնացրո՛ւ, նստեցրո՛ւ, հիվանդացրի, արքնացրի, նստեցրի և այլն: Երբ ցն, ցր, ցվ հընչյուններին նախորդում է ձայնավոր, ց-ից հետո ր հնչելը, ինչպես տաքաց[ը]նել, հիվանդաց[ը]նել, նստեց[ը]նել, տաքաց[ը]րել, տաքաց[ը]վել, տաքաց[ը]րի և այլն, արտասանական նորմայի խախտում է:

Ցն, ցր, ցվ հնչյուններին բաղաձայն նախորդելու դեպքում ր-ն երբեմն արտասանվում է, երբեմն՝ ոչ, որը կախված է ց-ի և նա-

⁵³ Արևմտահայերենում ավելի ընդունված է սափր[ը]վել, կոտր[ը]վել, մանր[ը]վել հնչումը (տե՛ս Ն. Անադյան, Հիսկատար քերականություն հայոց լեզվի, Դ. 5, էջ 273):

խորդող բաղաձայնի կապակցելի կամ անկապակցելի լինելուց: Օրինակ՝ վերցնել, վերցվել, դարձնել, դարձվել, դարձրել (րձ-ն արտասանվում է [րց]), կորցնել, կորցրել, կորցվել, հարցնել, հարցրել, հարցվել ձևերում ց-ից հետո գաղտնավանկ չի կազմվում, թեև, հատկապես ն-ից առաջ, լսելի է մի թույլ ք, որը ց-ի և հաջորդող ձայնորդի կամ շփականի միջև առաջացած անցումային տարր է:

Հրամայականի ձևերում, մանավանդ երբ վերջին վանկը կրում է ուժեղ շեշտ, անցումային ք-ն շատ ավելի թույլ է հնչվում, օրինակ՝ կորցրե՛ք, կորցրո՛ւ, դարձրե՛ք, դարձրո՛ւ, վերցրե՛ք, վերցրո՛ւ, հարցրե՛ք, հարցրո՛ւ և ոչ՝ կորց[ը]րե՛ք, կորց[ը]րո՛ւ, դարձ[ը]րե՛ք, դարձ[ը]րո՛ւ և այլն: Հասցնել, հասցրել, հասցվել, դիպցնել, դիպցրել, դիպցվել, մտցնել, մտցրել, մտցվել, հագցնել, հագցրել, հագցվել, փակցնել, հրամցնել, բուսցնել, կպցնել և նրման ձևերում սց, պց, տց, գց, կց, մց կից հնչյունները կապակցելի չեն, այդ պատճառով ց-ն անցնում է հաջորդ վանկի սկիզբը և նրանից հետո վանկասկզբի կանոնով արտասանվում է ք՝ հասց[ը]-նել, հասց[ը]րել, հասց[ը]վել, դիպց[ը]նել, դիպց[ը]րել, դիպց[ը]վել և այլն:

Այս բայերում ք-ի արտասանության հարցում հնչյունների կապակցելիությունից և անկապակցելիությունից բացի նշանակություն ունեն նաև այլ հանգամանքներ: Օրինակ, փախցնել բայում խց-ն կապակցելի է, բայց արտասանվում է ք՝ փախց[ը]նել, որում դեր է խաղում համաբանությունը և ժողովրդական բառ լինելու հանգամանքը:

Կերցնել ժողովրդական բառը նույնպես արտասանվում է ընդգծված ք-ով՝ կերց[ը]նել, թեև այստեղ նույն բցն հնչյունագույնորեն է, ինչ վերցնել բայում, որը հնչվում է առանց գաղտնավանկի:

Առհասարակ այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է բառն արտասանել ք-ի սղումով, այն պետք է գերադասելի համարել:

Բառամիջում սա, սկ, սպ, շա, գգ, գբ, սք հնչյուններով բաղկավորվող արմատներն արտասանվում են բառասկզբի վանոնով: Նրանցից առաջ արտասանվում է թույլ ք, եթե նախորդ հնչյունը բաղաձայն է, օրինակ՝ ան[ը]զգույշ, ան[ը]սպասելի, ան[ը]զբաղ, ան[ը]սկիզբ, ան[ը]սպառ, վեր[ը]ստուգիչ, վեր[ը]սկսել, ան[ը]զգամ, գույն[ը]զգույն, ան[ը]ստույգ և այլն: Եթե վերոհիշյալ հնչյուններին նախորդում է ձայնավոր, ապա ք չի արտասան-

վում, օրինակ՝ բանաստեղծ, խաղասկիզբ, ազատասպան, ամենասպառ:

Նշենք, որ բառամիջում ևս, ինչպես բառասկզբում, Բ-ի արտասանության մեջ ներկայություն հետևողականություն չկա: Բառամիջում Բ-ի արտասանությունը հիշյալ հնչյուններից առաջ նույնպես ազատ է, այսինքն՝ կարելի է արտասանել ան[բ]սպասելի և անսպասելի, առանց խախտելու տղջրախոսական նորման: Հատկանշական է այն, որ ժողովրդական բնույթ ունեցող բառերում, ինչպես՝ անզգամ, անզգամություն, Բ-ն որոշակիորեն և պարտադիր շոտասանվում է (ան[բ]զգամ, ան[բ]զգամություն), մինչդեռ նույն ճգգ հնչյունազուգորդությունը, օրինակ, անզգայացում, անզգայանալ, անզգուշորեն բառերում արտասանվում է գրեթե առանց Բ-ի:

Նկատելի է, որ բառավերջում հեշտությամբ կապակցվող մի շարք հնչյուններ (հայերեն և օտար բառերում), բառամիջում՝ վանկավերջում, հնչվում են որոշ դժվարությամբ և կարծես դառնում են անկապակցելի: Այսպես, օրինակ, ֆս-ն, որ հեշտությամբ և առանց տա՝անումների հնչվում է բոֆս, փոֆս, դոֆս, մետաֆս բառերում, բառամիջում՝ վանկավերջում, դառնում է անկապակցելի, օրինակ՝ թաք[բ]ստոց: Օտար բառերում՝ էֆսկուրսիա, էֆսպրես, Օֆսֆորդ, էֆսկավատոր և այլն, ֆս-ի առանց Բ հնչյունը հաղթահարվում է որոշ դժվարությամբ, և այդ պատճառով է, որ ժողովրդախոսակցական լեզվում բառամիջի ֆս հնչյունների միջև հաճախ արտասանվում է Բ՝ էք[բ]սկուրսիա, էք[բ]սկավատոր, էք[բ]սպրես և այլն: Համեմատիր նաև՝ թուխս և՝ փախ[բ]ստական, Կոնֆեթանս, բալանս, բայց՝ ժողովրդական հնչմամբ՝ կոն[բ]սպեկտ, ին[բ]ստիտուտ և այլն: Այսպիսով, ակնհայտ է դառնում այն փաստը, որ բառավերջը ընդհանուր առմամբ հնչյունների կապակցված արտասանության համար ավելի նպաստավոր դիրք է, քան բառամեջը:

Բառամիջում մի ամբողջ շարք բաղաձայններ կարող են իրար հանդիպել հապավումներում, օրինակ՝ ժողկրթբաժին, Հայջրչին, Ուսմանկնեստ, Հայգյուղատնտեսխնիկա, Հայժողտնտխորհ և այլն, որոնք արտասանվում են ըստ հապավման բաղադրիչների և կազմում են գաղտնավանկ անկապակցելի հնչյունների միջև, օրինակ՝ ժող-կ[բ]րթ-բաժին, Հայ-ջ[բ]ր-չին և այլն:

Բառամիջի հնչյունական զուգորդումները մեծ մասամբ իրար համապատասխանում են ձայնեղության և խլության հատկանիշով,

որը հեշտացնում է հնչյունների հաջորդական արտաբերումը: Երբ իրար են զուգորդում արտասանության տեղով նույնական կամ իրար մոտ հնչյուններ, ապա արտասանությունը խիստ դժվարանում է. օրինակ՝ պատճառ, պատճեն, վատքար, մատչելի, այդտեղ և այլն: Այսպիսի դեպքերում նախորդ տ-ն կամ չի արտասանվում, կամ արտասանվում է շատ անորոշ կերպով և կամ պահումը երկարում է: Առհասարակ այս կարգի բառերը հայերենում սակավաթիվ են: Նույն ձևով, երբ դ, տ, ք-ին հանդիպում են ձ, ծ, ց, ջ, ճ, չ կամ նշված հնչյունները՝ մեկը մյուսին, կամ թե, օրինակ, ա-ին հանդիպում է գ և ժ-ին՝ շ, ապա դրանց միջև կարող է ավելանալ ձայնավոր, օրինակ՝ իջեցնել, բաղաձայններից մեկը՝ ընկնել, օրինակ՝ օռպեսզի—[վօրպէզի], երաժշտութուն—[յէրաշտութուն] (խոսակցականում), Մատթեոս—Մաթեոս և կամ դրանց միջև հնչվել ր, օրինակ՝ երաժ[ը]շտութուն, Սրվանձ[ը]տյան և այլն:

Հայերենի համար անսովոր բազմապիսի զուգորդություններ ունեցող օտարազգի բառերի առկայությունը վերոհիշյալ տիպի բառերի հնչման հարցում ազդակի որոշ դեր է կատարում: Հ. Աճառյանը նշում էր, օրինակ, որ կտցել բառը հնչվում է կտ[ը]ցել (տց-ի կից հնչումը դժվար է), մինչդեռ ներկայումս այդ բառը հնչվում է առանց ր-ի՝ կտ/ցել, որտեղ տ-ն թույլ է հնչվում:

Արտասանության տեղով տարբեր հնչյունների հանդիպումը սովորական է, ինչպես՝ պատկեր, ցատկել, փափկել, քակտել, վարձկան, աֆցան, սաստկություն, լացկան և այլն, որոնք արտաբերվում են առանց խոչընդոտի:

Պ Ա Ղ Տ Ն Ա Վ Ա Ն Կ

Ը սուղ ձայնավորով կազմվող գաղտնավանկը հայերենի արտասանական օրինաչափություններից բխող առանձնահատկություն է, որի արտասանությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Անցյալի քերականները հաշվի առնելով ր-ի՝ որպես սուղ ձայնավորի և նրանով կազմված վանկի բնույթը (երբ այն զրոյթյամբ արտահայտված չէ), այն անվանել են գաղտնավանկ: Զգրվող ր-ն բոլոր դեպքերում միևնույն հնչումը չունի, այն տարբեր դիրքերում արտասանվում է տարբեր հնչեղությամբ: Հետաքրքրական է ր-ի մասին Ղ. Աղայանի բնութագրումը: «Դա մի այնպիսի տառ է, որ

մի տեղ գոռում է ցուլի պես և մի ուրիշ տեղ ձայնը կտրում շխուհկան հարսի նման»⁵⁴:

Որոշ դիրքերում Ը-ով կազմված գաղտնավանկը լիարժեք վանկ է, որով տվյալ բառի վանկերի թիվը մեկով ավելանում է, օրինակ՝ գ[ը]լուխ, վ[ը]նաս, պատ[ը]շգամբ, պատ[ը]սպարվել և այլն: Այս դեպքում գաղտնավանկի Ը-ն վանկարար արժեք ունի:

Ինչ վերաբերում է այսպես կոչված մեկնեկես վանկանի բառերին (օր.՝ բարձ[ը]ր, գամի[ը]ռ, աստ[ը]ղ), ապա հնում դրանք, իրոք, ներկայացրել են մեկնեկես վանկ, քանի որ բառավերջում հնչվել է ոչ թե լի գաղտնավանկ, ինչպես որ հնչվում է հիմա (հմտ. ծան[ը]ր), այլ դրա հնչումը եղել է զգալիորեն թույլ: Եվ հենց այդ պատճառով է, որ հոգնակիի կազմության ժամանակ մեկնեկես վանկանի բառերը ստացել են -ե հոգնակերտը և ոչ՝ -ներ, օրինակ՝ դստեր, համեր, եգեր, կոնդեր, աստղեր և այլն, մինչդեռ բառասկզբի գաղտնավանկով բառը ստանում է -ներ հոգնակերտը՝ գ[ը]լուխ—գ[ը]լուխներ: Բացի այդ կա գրավոր վկայություն այն մասին, որ բաղաձայնի և Ը-ի զուգորդությունը բառավերջում պետք է արտասանել առանց գաղտնավանկի (բարձր, ոչ՝ բարձրը), որ Ը-ով արտասանությունը «անհմուտ» արտասանություն է⁵⁵: Նշանակում է բառավերջի լիահունչ գաղտնավանկով արտասանությունը ունի ժողովրդական ծագում, և այդ հնչումն է, որ ժամանակակից գրական հայերենում դարձել է արտասանական նորմա: Ներկայումս «մեկնեկես» անվանումը պատմական նշանակություն ունի միայն, քանի որ ժամանակակից հայերենում բառավերջի «կես» վանկը հնչվում է ամբողջ հնչեղությունով՝ բար-ձ[ը]ր, ծա-ն[ը]ր և ունի լրիվ վանկի արժեք, այսինքն՝ Ը-ն այս դիրքում վանկարար է⁵⁶: Հոգնակիի ձևերում մի շարք դեպքերում հանդես եկող զուգաձևությունները, ինչպես՝ արկղեր և արկ[ը]ղներ, սանրեր և սան[ը]րներ, անգղեր և ան-գ[ը]ղներ և այլն, ավանդական և նոր արտասանության արդյունք են: Զուգաձևությունը առաջանում է այն պատճառով, որ մի կողմից՝ առկա է ավանդական -ե հոգնակերտով կազմությունը, մյուս

54 Ղ. Աղայան, Հայկական հնչյունների մասին, Երևան, 1950:

55 Մ. Թադիադյան, Այբբենարան, Կալիաթա, 1840, էջ 25:

56 Դա հաստատվում է փորձառական ուսումնասիրությամբ, ըստ որի վերջնավանկի Ը-ն ունի արտասանության որոշակի ժամանակահատված, հիմնական տոն և ինտենսիվության մակարդակ (տե՛ս Ռ. Թոխմախյան, Հայերենի բառային շեշտը, թեկնածուական դիսերտացիա, 1972):

Ֆոնոմից՝ ժամանակակից արտասանության վրա հիմնված՝ երկվանկանի բառի հիմունքով –նեւ–ով կազմությունը:

Գաղտնավանկի ը–ն մի շարք դեպքերում ունի հնչյութաբանական արժեք և կարող է նվազագույն հակադրություն կազմել համապատասխան ձևերի հետ, ինչպես՝ որւրս եկավ և դուրս[ը]ս եկավ (հավանեցի), սերտ և սերդ[ըտ] (քո սերը) և այլն, կատաքելով իմաստազատիչ ֆունկցիա: Սակայն երբեմն, բաղաձայնական զուգորդությունների բնույթով պայմանավորված՝ բառամիջում, որոշ դիրքերում հնչվում է մի թույլ ը, որն իր բնույթով վանկարար չէ և գրական արտասանության տեսակետից գաղտնավանկ չի կազմում: Օրինակ՝ վերց ենել, վերցը բել (հմմտ. ց[ը]րել), հաղթեվել, հաղթված (հմմտ. թ[ը]կաց), աստեված (հմմտ. տ[ը]ված), պրծ ենել (հմմտ. ծ[ը]նել), գժտեվել (հմմտ. տ[ը]վել), ծածկեվել, օարբեվել, բարդեվել, դարձենել, հարցենել, տանջեվել, հարկեվել, զարկեվել, պրկեվել և այլն⁵⁷: Այստեղ կից բաղաձայնների միջև ստեղծվում է հնչյունների բնույթից բխող՝ թվաքող գաղտնավանկ, սակայն իրականում այդտեղ գաղտնավանկ չկա: Այդպիսի տպավորություն է թողնում անցումային թույլ ը–ն, որն առաջանում է մեծ մասամբ այն դեպքերում, երբ երեք բաղաձայններից վերջին ձայնորդ կամ շփական հնչյունին նախորդում է պայթական: Թեև վերոհիշյալ բառերում բաղաձայնական զուգորդության առաջին երկու հնչյունները կապակցելի են (հմմտ. հաւց, բախտ, հաստ, հանկաւծ, հոգնատանջ, հաւկ), սակայն այս պայմաններում ստեղծվում է կեղծ գաղտնավանկ, որը ժողովրդական հնչմամբ հեշտությամբ վերածվում է լիարժեք վանկի, ինչպես՝ վերց[ը]նել, վերց[ը]րել, հաղթ[ը]վել, ջնջ[ը]վել, զարկ[ը]վել և այլն⁵⁸:

Կեղծ գաղտնավանկ է առաջանում հատկապես այն դեպքում, երբ երեք բաղաձայնների զուգորդության վերջին վ շփականին նախորդում են շրթնային հնչյուններ, օրինակ՝ կազմեվել, դրոշմեվել, սեղմեվել, զսպեվել, սրբեվել: Այստեղ, թեև վ–ին նախորդող հնչյունները կապակցելի են (հմմտ. կազմ, ուզմ, հաշմ, դրոշմ, մեղմ, ոսպ, սուրբ), վ–ի և նախորդող հնչյունի միջև ը–ի հնչումը բավականաչափ ուժեղ է:

⁵⁷ Sб'и С. Б. Тош'ян, Слогораздел и строение слога в армянском языке, ВЯ, 1969, № 3, էջ 121:

⁵⁸ Նույն տեղում, էջ 123:

Վանկարար Ը-ի բնույթը քննելով, կարելի է տեսնել, որ այն էս, ըստ շրջապատի և դիրքի, կարող է տարբեր լինել: Օրինակ, բառասկզբի երեք բաղաձայններից առաջին երկուսի և բառասկզբի երկու նույնալիսի բաղաձայնների միջև արտասանվող գաղտնավանկը նույն հնչեղությունը չունի, հետևաբար և նույն հաստատունությունը: Օրինակ՝ գլխավոր և գլուխ, հրթիռ և հրաչ, տխրադեմ և տխուր դուզերի առաջին եզրում արտասանված գաղտնավանկը ավելի հաստատուն է, որը ոչ մի կերպ հնարավոր չէ սղել, մինչդեռ մյուս օրինակներում, որոնք սկսվում են երկու նույնալիսի բաղաձայններով, գաղտնավանկը համեմատաբար ավելի թույլ է: Դա հնարավորություն է տալիս մեր բանաստեղծներին տաղաչափության մեջ երբեմն սղելու այդ վանկը: Օրինակ՝ Եվ մեղեդին տխուր մայրենի /Շիրեց մանկության օրեր... (Հովհ. Հովհաննիսյան): Այստեղ տխուր-ը հաշվված է մեկ վանկ:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե առհասարակ հայերենում ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված գաղտնավանկի առաջացումը:

Քննելով գաղտնավանկի առաջացման բոլոր դեպքերը, կարելի է եզրակացնել, որ դրանք կախված են երեք հիմնական պայմանից: Այդ պայմաններն են. 1. վանկակազմությունը՝ վանկի կառուցման հայերենին հատուկ կանոնները, որին վերաբերում են զանազան հնչյունների կապակցելիությունը և անկապակցելիությունը, վանկերի և հնչյունների դիրքը (բառասկիզբը կամ վանկասկիզբը, բառավերջը կամ վանկավերջը), 2. բառակազմությունը՝ բառի (բառաձևի) ձևաբանական կառուցվածքը և 3. հնչյունափոխությունը (ձայնավորների սղումը): Որպես լրացուցիչ գործոններ հանդես են գալիս նաև ավանդությունը և համաբանությունը: Նշենք նաև, որ այս պայմանները հաճախ խաչաձևվում են և մեկը մյուսին լրացնում:

Քննեք այդ պայմաններն առանձնակի:

1. Հայերենի վանկակազմության էական առանձնահատկությունների մասին արդեն խոսվել է «Բառասկիզբ», «Բառավերջ» և «Բաղաձայնական զուգորդումները բառամիջում» բաժիններում: Եզրակացությունն այն է, որ ըստ վանկակազմության կանոնների՝ գաղտնավանկի արտասանության համար էական նշանակություն ունի երկու գործոն՝ բառասկզբի կամ բառամիջում՝ վանկասկզբի արտասանության օրենքը և բաղաձայնական զուգորդությունների կապակցելիություն ու անկապակցելիությունը բառավերջում և վանկավերջում:

2. Բաղաձայնների միջև սուղ ը ձայնավորի արտասանության մյուս պայմանը բառի ձևաբանական կառուցվածքն է, որը պատճառ կարող է դառնալ վանկակազմությանը պայմանավորված գաղտնավանկի արտասանության կանոնների խախտման:

Բառակազմությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ բաղադրյալ բառի երկրորդ բաղադրիչը, անկախ վանկակազմությունից, արտասանվում է այնպես, ինչպես այն կարտասանվեր բառասկզբում: Օրինակ՝ ազտավակտուց բառում, բառի կազմությունից ելնելով, բարդության երկրորդ բաղադրիչի կ է տ հնչյունների միջև արտասանվում է գաղտնավանկ՝ ազտավա/կ[ը]տուց, այն դեպքում, երբ ըստ վանկակազմության երկու բաղաձայններից առաջինը պետք է մնա նախորդ վանկում, երկրորդը անցնի հաջորդին (հմմտ. քակ/տեղ, բակ/տերիա):

Սա ընդհանուր օրինաչափություն է, և սովորաբար այդպես են արտասանվում բաղադրյալ բառերում արմատները, երբ բաղադրիչների հարաբերությունը որոշակի է: Բերենք մի քանի օրինակ, որոնցում միևնույն հնչյունազուգորդումները միևնույն շրջապատում բառակազմությամբ պայմանավորված՝ արտասանվում են տարբեր՝ գաղտնավանկով և առանց գաղտնավանկի. համա-ն[ը]վազ և փառաբանված. համան[ը]ման և փառաբանման. բնա-ն[ը]կար, շարժան[ը]կար և անկար, վանկեր. մանկատ[ը]ներ և մատներ. խելաց[ը]նոր և հիվանդացնել. ջերմատ[ը]ներ և ավտոմատներ. ազդան[ը]շան, Զառն[ը]շան և Քիրմանշահ (հմմտ. նաև՝ շահ[ը]նշահ). հարցագ[ը]րույց և զագրելի. ամենատ[ը]-կար և պատկեր, պատկանել և այլն⁵⁹:

Այսպիսով, բարդության ա հոդակապին կամ ամենա-, վե-րա-, հակա- և նման բաղադրիչներին երկու և ավելի բաղաձայնով սկսվող բառ (կամ արմատ) հաջորդելու դեպքում առաջին երկու բաղաձայնների միջև, բառասկզբի օրենքով, արտասանվում է ը, ինչպես՝ մարդավ[ը]կա, հուշան[ը]վեր, ամենագ[ը]լխավոր, վե-րամ[ը]շակել, հակահ[ը]րդեհային և այլն: Այս հիմունքով է հնչվում բառը (կամ արմատը) նաև ան- նախածանցից հետո, օրի-նակ՝ անկ[ը]րակ, անք[ը]նություն, անք[ը]նին (հմմտ. անգ[ը]-լուխ և անգլերեն): Եթե այս բառերում բառակազմությունը դեր

59 Տե՛ս Վ. Առաքեյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երե-վան, 1955, էջ 42:

չխաղար, ապա սրանք պետք է արտասանվեին անկ/րակ, անք/նություն, որովհետև նկ-ն և նգ-ն կապակցելի են վանկավերջում:

Եթե մեկը, որ լավ հայերեն չգիտե և չի ընկալում, դիցուք, լուսանկար բառի կազմությունը և իմաստը, այս բառը կարող է կարդալ լուսան/կար, ոչ՝ լուսան[ը]կար, ինչպես, ասենք, մի օտար հատուկ անուն՝ Лусанкар:

Բառի կազմությամբ է պայմանավորված բառամիջում նույնական բաղաձայնների արտասանությունը: Երբ բառամիջի արմատը սկսվում է երկու միանման բաղաձայններով, ապա դրանք միջև, որպես կանոն, հնչվում է գաղտնավանկ, այնպես, ինչպես բառակզբում, օրինակ՝ աղաթ[ը]թու, ներծ[ը]ծել, ամենատ[ը]տիպ, անշ[ը]շուկ և այլն: (Համեմատիր՝ տոննա, ալբեբե, վրաննե, աննպատ, զենել, վերաֆենություն, որոնցում արտասանվում է երկար բաղաձայն):

Եթե բառի կազմությունը մթազնված է, և բաղադրիչների հարաբերությունը չի գիտակցվում, գաղտնավանկը կարող է վերանայ: Լավ օրինակ է այդ տեսակետից ֆեռակնոջ և տիկնոջ ձևերի համեմատությունը: Քանի որ տիկին բառի կազմությունը մթազնված է, տի առմատը չի ընկալվում, ուստի, որպես պարզ բառ, տիկնոջ ձևն արտասանում ենք առանց գաղտնավանկի՝ տիկ/նոջ, իսկ ֆեռակնոջ բառաձևը, ըստ բարդ բառերի արտասանության կանոնի՝ գաղտնավանկով՝ քեռա/կ[ը]նոջ⁶⁰:

Համալսարան բառը, որը պետք է ըստ կազմության արտասանվեր համալ[ը]սարան, պարզ բառերի օրինակով արտասանվում է համալսարան, իսկ ավելի հաճախ, խոսակցական լեզվում լ-ի անկումով՝ [համասարան]։ Գերբնախն բառն արտասանվում է ոչ թե գերբ[ը]նական, այլ ավելի շուտ գերբ/նական, կամ գեր/բնական:

Որպես կանոն, լիահունչ և ընդգծված ը է արտասանվում բառավերջում ս, դ, և ստացական հոդերից առաջ, անկախ այն բանից, թե ս, դ, և հնչյունները կապակցելի են նախորդ բաղաձայնի հետ, թե ոչ, օրինակ՝ մայր[ը]դ, գիրք[ը]դ, մայր[ը]ս, գիրք[ը]ս, վերջեր[ը]ս, գիշեր[ը]ս, լավագույն[ը]ս, հօդ[ը]ս ցնդել, քար[ը]ն և այլն: Դա վերաբերում է և դիմորոշ ս, դ հոդերին: Օրինակ՝ Զինվոր[ը]ս, ե՞րբ չեմ հնազանդվել հայրենիքի հրամանին, առաջավորներ[ը]ս, վեցերորդ դասարանցիներ[ը]դ և այլն:

60 է. Աղայան, նշվ. աշխ., էջ 299:

Ս, դ հոգերից առաջ Բ-ի արտասանությունը պայմանավորված է բառակազմությամբ: Դա շատ ակնբախ կերպով երևում է, երբ հոդավոր բառերը համեմատում ենք ս, դ հնչյուններով, բայց ոչ հոգերով վերջացող բառերի հետ: Համեմատությունից պարզվում է, որ ս, դ հոգերից առաջ Բ-ի արտասանությունը կապված չէ հրնչյունների կապակցելիության և անկապակցելիության հետ:

Ստորև բերված օրինակներում, որտեղ ընդգրկել ենք նաև փոխառություններ, Բ-ի արտասանությունը, ինչպես կարելի է տեսնել, պայմանավորված է բառի կառուցվածքով և ունի հնչույթաբանական-քերականական նշանակություն, այսինքն՝ կատարում է իմաստազատիչ ֆունկցիա: Դա ակնբախ է դառնում, երբ համեմատում ենք տարբեր կառուցվածքի երկու եզրերի նույնպիսի հնչյունների արտասանությունը իրար հետ: Այսպես՝ տետրակղ[կըտ], բակղ[կըտ], բամբակղ[կըտ], և սուրճեկտ, ԼՖեկտ, օբյեկտ: Այստեղ կղ-ի միջև զաղտնավանկ է կազմվում, եթե դ-ն (արտասանվում է [տ]) հոգ է, և ք չի արտասանվում, եթե վերջին տ-ն հոգ չէ: Նույն հիմունքով քս-ն բառավերջում ս-ն հոգ լինելու դեպքում արտասանվում է ք-ով, ս-ն հոգ չլինելու դեպքում, որպես բառավերջում կապակցելի հնչյունների՝ առանց զաղտնավանկի. օրինակ՝ միտք[ը]ս, գիրք[ը]ս, վերք[ը]ս և մետաքս, ստամոքս, հոգս[ը]ս, դո՛գս: Հմմտ. նաև՝ հայ[ը]ս և հույս, գիշեր[ը]ս, զինվոր[ը]ս և՛ հաքս, վաքս, որս, նեքս:

Կարելի է բերել նաև օրինակներ, որոնցում նվազագույն հակադրությունների միջոցով (ք և զրո) պարզորոշ կերպով դրսևորվում է Բ-ի հնչույթային արժեքը, այսինքն՝ իմաստազատիչ դերը, ինչպես՝ տակղ—տակ[ըտ] և տակտ⁶¹, աղեր[ը]ս և աղեքս, պար[ը]ս և պաքս, վար[ը]ս և վաքս, չափ[ը]ս և չափս, սերդ—սեր[ըտ] և սեքտ, հոգ[ը]ս չէ և հոգս չէ և այլն: Վերջին երկու բաղաձայնների միջև արտասանվող ք-ն, ինչպես երևում է հակադրություններից, պայմանավորված է ոչ թե հնչյունների անկապակցելիությամբ, այլ կատարում է իմաստազատիչ ֆունկցիա, այսինքն՝ մի բառը (կամ բառաձևը) տարբերում է մեկ այլ բառից (կամ բառաձևից)⁶²:

61 Կտ կապակցությունը հայերենի համար անսովոր է և հանդես է գալիս բացառապես օտարազգի բառերում:

62 Համեմատոր նաև՝ միակ[ը]նություն (մի կին ունենալը) և միակնություն (միաշքանի լինելը):

Վերոհիշյալ օրինակներում գրությամբ նույնական ձևերի հակադրությունը կարող է բացահայտվել միայն բանավոր խոսքում, որովհետև այստեղ է, որ բառը կամ բառաձևը ըստ արտահայտած իմաստի հնչվում է գաղտնավանկով կամ առանց դրա:

Բերենք այլ օրինակներ: Յնոռ («մինչև նոր») և ցնոռ, ցնոռամիտ բառերում բառակզբի ցն հնչյունագույնորումը բառակազմությամբ պայմանավորված՝ արտասանվում է տարբեր: Առաջին դեպքում, ց-ն գիտակցվելով որպես առանձին բաղադրիչ «մինչև» նշանակությամբ, արտասանվում է լիահունչ ը-ով, որին հաջորդում է որոշ դադար՝ ցը/նոր, մինչդեռ երկրորդ դեպքում ց-ի և ն-ի միջև, որպես բառակզբի բաղաձայնի և ձայնորդի կապակցություն, լսելի է թույլ ը: Հնից եկող մի շարք քարացած ձևեր, ինչպես՝ տա-րեցտարի, ռդեցորդի, որոնց բաղադրիչների հարաբերությունը ժամանակակից հայերենի տեսանկյունից պարզ է, արտասանվում են վանկակազմության օրենքներով, այսինքն՝ առանց ց-ից հետո արտասանվող ը-ի:

Բառակզբում լիահունչ և ընդգծված գաղտնավանկ է արտասանվում այն դեպքում, երբ բաղաձայնով սկսվող բառը ստանում է «կ» եղանակիչը և «չ» ժխտականը, օրինակ՝ կ[ը]բերի, կ[ը]-խոսի, չ[ը]բերի, չ[ը]խոսի և այլն:

Որպեսզի պարզ լինի «կ»-ով կազմվող գաղտնավանկի հնչեղությունը, ավելորդ չի լինի այն համեմատել հաջորդող ճռ կամ զբ բաղաձայնների արտասանության հետ, օրինակ՝ կ[ը]հրատարակի, կ[ը]խճրախուսի և այլն: Առաջին դեպքում, ինչպես տեսնում ենք, արտասանվում է ուժեղ գաղտնավանկ, իսկ երկրորդ դեպքում, այն շատ թույլ է հնչվում: Նույն ձևով են արտասանվում և «չ» ժխտականով կազմված բառաձևերը:

Բառակզբի կ, չ և հաջորդող բաղաձայնների արտասանությունը նույնպես պայմանավորված է բառակազմությամբ: Այդ կարելի է տեսնել նույնանման հնչյուններով սկսվող, օրինակ, կխփի բառակի արտասանությունը համեմատելով կխտառ բառի հետ: Առաջին օրինակում, եթե կ հնչյունը որպես առանձին բաղադրիչ չգիտակցվեր, ապա այն կարտասանվեր կ[ը]խ/փի, այսինքն՝ այնպես, ինչպես արտասանվում է կ[ը]խ/տար բառը: Այնինչ, ըստ բառի կազմության, կ-ն առանձնացվում է ը-ի հետ միասին, կազմելով վանկ, իսկ հաջորդող հնչյունները արտասանվում են այնպես, ինչպես նրանք կհնչվեին բառակզբում՝ կ[ը]խ[ը]փի: Այսպիսով, ելնելով բառակազմությունից, բառակզբի կխփ և կխտ

հնչյունների հարաբերակցությունը փոխվում է, իսկ այս վերջինով էլ պայմանավորված է գաղտնավանկի արտասանությունը: (Համեմատիր նաև՝ շ[ը]ք[ը]նել և շ[ը]ք/նաղ, կ[ը]ծ[ը]ծի և կ[ը]ծ/ծի):

Երբեմն բառերի միևնույն բաղադրիչը նրանց ձևաբանական կառուցվածքի տարբերությամբ պայմանավորված՝ արտասանվում է տարբեր: Այսպես, օրինակ, անդր բաղադրիչին, երբ հաջորդում է բաղաձայն, ապա և՛ վանկակազմության, և՛ բառակազմության հիմունքով վանկավերջի դր անկապակցելի հնչյունների միջև արտասանվում է ը, ինչպես՝ Անդ[ը]րկովկաս, անդ[ը]րշիրմյան, անդ[ը]րկասպան, անդ[ը]րբայկալյան և այլն: Այս կարգի բառերի համաբանությամբ և անդր բաղադրիչի անկախ գիտակցմամբ նույն եղանակով են արտասանվում նաև այն բառերը, որոնցում անդր ածանցին հաջորդում է ձայնավոր, ինչպես՝ անդ[ը]րովկիսնոսյան, անդ[ը]րիրանյան, անդ[ը]րաթլանտյան, անդ[ը]րաշխարհ, անդ[ը]րալպյան և այլն, այն դեպքում, երբ ըստ վանկակազմության, վերջին օրինակները պետք է արտասանվեին առանց ը-ի, այնպես, ինչպես արտասանում ենք, ասենք՝ Անդրանիկ, անդրիագործ և այլն: Ստացվում է այնպես, որ այն բառերում, որոնցում անդր բաղադրիչը ունի իմաստային ինքնուրույնություն և նշանակում է աշխարհագրական առումով «այն կողմը» կամ «մի բանից այն կողմը», դրանցում արտասանվում է ը: Հատկառկ դրա, անդր բաղադրիչով կազմված ա հոդակապով բաղադրությունները, որոնցում անդր բաղադրիչի իմաստը հստակորեն չի գիտակցվում, հնչվում են վանկակազմության օրենքով, առանց ը-ի, ինչպես՝ անդրավարտիք, անդրադարձ, անդրադառնալ, անդրահառ, անդրակարմիր, անդրածին և այլն: Համեմատիր նաև նույնպիսի հնչյուններով սկսվող, բայց այլ կազմություն ունեցող անդ[ը]րոշմ բառի արտասանությունը: Նշանակում է միևնույն հնչյունազուգորդությունը տարբեր բառակառուցվածքով պայմանավորված՝ կարող է արտասանվել ոչ միատեսակ:

Հատկանշական է, որ անդր բաղադրիչը, երբ ունի իմաստային ինքնուրույնություն, կրում է երկրորդական շեշտ և զգալիորեն սահմանազատվելով արտասանվում է որոշ գաղաբով. օրինակ՝ անդ[ը]ր/ալպյան:

Երբեմն բառերի հնչյունական կազմի համընկումներ են պատահում հայերեն և օտար բառերում, որոնք ըստ իրենց նշանակության ունենում են տարբեր արտասանություն: Համեմատիր,

օրինակ՝ «կիսմեր»⁶³ ժողովուրդը պահանջում է, որ ԱՄՆ-ը կամբոջացիներին հանգիստ թողնի» (ԵՏ, 18/7, 1970): Այս նախադասությունն մեջ կիսմեր բառը մենք կարդում ենք ոչ թե կ[ը]խ[ը]մեր (օր.՝ նա ջուր կիսմեր), այլ՝ կ[ը]խ/մեր, ելնելով նրա իմաստից, որ բացահայտվում է կապակցված խոսքում:

Այսպիսով, գաղտնավանկի արտասանության հարցում կարեվոր գործոն է բառի կառուցվածքը, որով պայմանավորված է նրա արտահայտած իմաստը:

Սակավաթիվ դեպքերում երկու բառեր իրար համապատասխանում են և՛ կազմությամբ, և՛ հնչյուններով, լինելով նաև գրությունը նույնական: Այս դեպքում գաղտնավանկի արտասանությունը պայմանավորված է միայն բառիմաստով, որը բացահայտվում է կապակցված խոսքում: Այսպես՝ անցնել բայը, որպես չեզոք բայ, ունի իր տրոշակի իմաստները (տե՛ս ԺՀԼԲԲ)՝ «փողոցն անցնե՛ք» և այլն, մինչդեռ ցն-ի միջև գաղտնավանկի արտասանությամբ՝ անց[ը]նել բայը դառնում է նաև պատճառական և ներգործական և նշանակում է «անցկացնել», օրինակ՝ չափն անց[ը]նել և այլն (հմմտ. Երկու շաբաթ անցրճել նրա հետ անդլիական «Սպիտակ» կոշված կղզում, ԳԹ, 21/10, 1969, 4)⁶⁴:

Այդպիսի հակադրություն կա թերևս նաև դարձնել (փոխարկել, վերածել) և դարձ[ը]նել (շուռ տալ, պտտել, պտտեցնել) ձևվերում, որը դրսևորում է պակաս հստակությամբ⁶⁵:

3. Ինչպես հայտնի է գաղտնավանկի առաջացման համար շատ հաճախ պատճառ է դառնում ու, ի ձայնավորների հնչյունափոխությունը կամ ափելի ճիշտ՝ սղումը: Նշենք այն դեպքերը, որոնք վերաբերում են գաղտնավանկի առաջացմանը՝ կապված հնչյունափոխության հետ:

Միավանկ բառերի (փակ վանկում) ի-ն և ու-ն վեր են ածվում ը-ի, ինչպես՝ գիծ—գ[ը]ծավոր, սուր—ս[ը]րամարտ, գիր—գ[ը]րեր և այլն: Այստեղ երկու բաղաձայնների միջև ստեղծվում է գաղտնավանկ, որը պայմանավորված է հայերենում բառասկզբի

63 կիսմեր ձևը սխալ է, հայերենում տառադարձվում է ֆմեր:

64 Այս բայը հայերեն բացատրական նոր բառարանում տրված է ը-ի գրությամբ՝ անցրճել, սակայն հաճախ գրվում է նաև առանց ը-ի:

65 Ա.՝ Այտրեյանի մոտ նշված է կարկտել բայը, որը մի դեպքում արտասանվում է կարկտել (կարկուտ գալ), մյուս դեպքում՝ կարկ[ը]տել (կարկատել) և կռնկի ձևը, որը կարելի է արտասանել կռ[ը]նկի (կռունկի), և կռն[ը]կի (կռնակի), բայց այս ձևերը ժամանակակից արեւելահայերեն գրական լեզվին չեն պատկանում:

արտասանության օրենքներով: Բազմաձևանկ բառերի վերջին փակ վանկի ի-ն և ու-ն սղվում են կամ փոխվում ը-ի: Այս դեպքում ի և ու ձայնավորների կորուստը կամ զաղտնավանկի առաջացումը պայմանավորված է մեծ մասամբ հայերենի վանկակազմության կանոններով, իսկ երբեմն այդ հարցում որոշ դեր է կատարում բառաձևաչման հիմունքը, կամ անհնչյունափոխ ձևի ազդեցությունը, որի մասին կխոսվի ստորև:

Ե՞րբ են բազմաձևանկ բառերի ի, ու ձայնավորները հնչյունափոխության ժամանակ կորչում, և ե՞րբ են նրանք փոխարինվում զաղտնավանկով: Դարձյալ նշենք, որ այս հարցում էական նշանակություն ունեն հայերենի վանկակազմության կանոնները:

Որպես կանոն, ձայնավորները կորչում են այն դեպքում, երբ նրանցից հետո և առաջ գտնվում է մեկական բաղաձայն, օրինակ՝ մաքուր—մաքրասեր, մածուն—մածնաթան, բազուկ—բազկատարած, մամուռ—մամռապատ, բլուր—բլրաշատ, տավիղ—տավղահար, կոշիկ—կոշկակար, պանիր—պանրագործ, կապիկ—կապկանման, ժպիտ—ժպտադեմ, կնճիռ—կնճռոտել և այլն: Այստեղ ձայնավորների սղման պատճառով իրար հանդիպած երկու բաղաձայնների միջև անցնում է վանկաբաժան: Այս կարգի բառերում սղված ձայնավորի տեղը ը արտասանելը, ինչպես երբեմն կարելի է լսել՝ ժպ[ը]տադեմ, պան[ը]րագործ, վճ[ը]ռական, կնճ[ը]ռոտել և այլն, գրական արտասանության տեսակետից անթույլատրելի է:

Այն դեպքում, երբ անհնչյունափոխ ձևում ձայնավորներից հետո կամ առաջ երկու անկապակցելի բաղաձայն է, ձայնավորների փոխարեն, նրանց տեղում ստեղծվում է զաղտնավանկ, ինչպես՝ կամուրջ—կամ[ը]րջակ, ժողովուրդ—ժողով[ը]րդական, ծնունդ—ծն[ը]նդյան, փամփուշտ—փամփ[ը]շտակալ, շշուռ—շշ[ը]նջալ, խորհուրդ—խորհ[ը]րդավոր, շմուշկ—շմ[ը]շկորդ, բժիշկ—բբ[ը]շկել, սրինգ—սր[ը]նգահար, քրտինք—քրտ[ը]նքահար, հանգիստ—հանգ[ը]ստի, բռունցք—բռ[ը]նցքամարտ և այլն: Այս օրինակներում ը-ի արտասանությունը, ինչպես տեսնում ենք, պայմանավորված է երեք և ավելի բաղաձայնների հանդիպումով, որը և պատճառ է դառնում զաղտնավանկի առաջացման⁶⁶:

⁶⁶ Այս իմաստով խիստ պայմանական է, երբ ասում ենք, որ շեշտակորույս ու, ի ձայնավորները փոխվում են ը-ի: Ըստ էության այստեղ ոչ թե տեղի է ունենում ու>ը, ի>ը հնչյունափոխություն, այլ ձայնավորների սղման պատճառով առաջացած երեք բաղաձայնի զուգորդությունը, դրանցից երկուսի անկապակցելի լինելու դեպքում, իրացվում է ը ձայնավորի միջոցով, այնպես, ինչպես այդ տեղի է ունենում բաղաձայնական այլ հանդիպումների ժամանակ:

Եթե սղված ձայնավորին նախորդող երկու բաղաձայնները կապակցելի են, ապա գաղտնավանկ չի կազմվում, ինչպես՝ թռչուն--թռչնաբույծ, թմբուկ--թմբ/կահար, ըմբիշ--ըմբ/շամարտ, Մկրտիչ--Մկրտ/չյան, երգիչ--երգ/չախումբ, մարմին--մարմ/նամարգիկ և այլն:

Բայց մի շարք գեպքերում այս սկզբունքը խախտվում է, և գաղտնավանկ է կազմվում նաև այն ժամանակ, երբ ըստ վանկակազմության կանոնների չպետք է այն կազմվեր, այսինքն, երբ սղված ձայնավորին նախորդում են կապակցելի հնչյուններ: Այդպիսի դեպքում, ինչպես պարզվում է, գաղտնավանկը, որն առաջանում է սղված ձայնավորի փոխարեն, ունի բառաձանաչողական նշանակություն, Օրինակ՝ աղմուկ--աղմ[ը]կել, կորուստ--կոր[ը]սության, հարուստ--հար[ը]ստանալ, պարիսպ--պար[ը]սպապատ, քրքիշ--քրք[ը]շալ, ճարպիկ--ճարպ[ը]կորեն, փախուստ--փախ[ը]ստական, խարիսխ--խար[ը]սխել և այլն: Այս բառերում դմ, բս, բպ, բֆ, խս հնչյունները կապակցելի են վանկավերջում (հմմտ. կողմ, սեղմ, վաբս, դաբս, պաբս/կական, ճաբպ, թուխս, թխս/կան, վաբֆ, բաբֆ և այլն), հետևաբար պետք է, որ ըստ այդմ արտասանեինք աղմ/կել, հարս/տանալ, պարս/պապատ, կորս/տյան, քրք/ջալ, փախս/տական և այլն, այնինչ արտասանում ենք գաղտնավանկով: Գաղտնավանկի արտասանության հարցում այստեղ նշանակություն ունի նաև անվանական ձևերի ազդեցությունը: Այսպես, օրինակ, հարստաճարել, հարստություն բառերում ռստ հընչյունազուգորդությունը արտասանվում է ը-ով՝ հար[ը]ստահարել, հար[ը]ստություն, մինչդեռ հարստես բառի նույն՝ ռստ հընչյունազուգորդությունը՝ առանց ը-ի՝ հարս/տես: (Համեմատիր նաև Հարս/տինգ անձնանվան հնչումը):

Անիվ արմատով կազմված անվակոս, անվակ, անվադոդ, անվագործ, անվահետֆ, անվամեշ, անվաշմուշկ, անվավոր, անվափոկ, անվափոս և այլ բառերի գաղտնավանկով արտասանությունը ([անըվակ], [անըվակոս])⁶⁷, որը հակառակ է և՛ վանկակազմական, և՛ բառակազմական, և՛ հնչյունափոխական կանոններին, որոշակիորեն թելադրվում է բառաձանաչման հիմունքով: Այդ երևույթն ավելի ակնբախ է հեծանվորդ--[հեծանըվորթ], հեծանվավագֆ--[հեծանըվավագը] և նման բառերում: Անվավոր և անվավեր բառերի համեմատությունից պարզ կարելի է տեսնել,

67 Այս բառերում ը-ի արտասանությունը չի կրում հասարակայնորեն պարտադիր բնույթ:

որ անիվ բառից կազմված բաղադրյալ ձևերում ը-ի արտասանությունը պայմանավորված է բառիմաստով: Նույն ձևով անվաճակ, անվաճառ, անվաճո, անվաճոս բառերի՝ առանց ը-ի արտասանությունը և անվհատ—[անվըհատ], անվճար—[անվըճար], անվնաս—[անվընաս] բառերում ը-ի արտասանությունը վ-ից հետո և ոչ առաջ, պայմանավորված է ձևությանների հարաբերակցությամբ, իսկ վերջինով էլ որոշվում է տվյալ բառերի իմաստը⁶⁸:

Հայերեն բացատրական բառարանում անիվ արմատով կազմված բառերի կողքին կա անվաճան բառը, որի բացատրությունը եթե տրված չլինել (առանց վահանի), ապա ան[ը]վաճոր, ան[ը]վամեջ և մյուս նման բառերի կողքին, նրանց նմանակությամբ, կարելի էր հեշտությամբ կարդալ ան[ը]վահան (անիվ հանող): Անվավառ⁶⁹ և անվավեր բառերից առաջինում ը-ի արտասանելը և մյուսում չարտասանելը թելադրված է այս բառերի կառուցվածքով և իմաստով, քանի որ հնչյունների հարաբերակցությունը երկուսում էլ նույնն է:

Ձայնավորների սղման ժամանակ գաղտնավանկի արտասանության հարցում նշանակություն ունի իրար հանդիպած բաղաձայնների բնույթը. օրինակ՝ կսկիծ բառը դառնում է կսկ[ը]ծալ, կսկ[ը]ծալի, թեև ըստ վանկավերջի հնչյունների կապակցելիության՝ պետք է լիներ կսկ-ծալ, կսկ-ծալի (հմտ. հասկ): Այստեղ ը-ի հնչումը բխում է կ պայթականի և ծ կիսապայթականի կողք-կողքի արտասանելու դժվարությունից:

Գաղտնավանկի արտասանության հարցում որոշ առանձնահատկություններ են ցուցաբերում բառամիջում հնչյունափոխված միավանկ արմատ ունեցող մի շարք բաղադրյալ բառեր: Այսպես, օրինակ, գործակ/ցել, գործակ/ցություն, մասնակ/ցել, մասնակ/ցություն, ուղեկ/ցել, ուղեկ/ցություն, աշխատակ/ցել, աշխատակ/ցություն, խմբակ/ցել, խմբակ/ցություն, չափակ/ցություն, ձայնակ/ցել, ձայնակ/ցություն, նվազակ/ցել, նվազակ/ցություն, հարաբերակ/ցել, հարաբերակ/ցություն, ընկերակ/ցել, ընկերակ/ցություն, խոսակ/ցել, խոսակ/ցություն, զրուցակ/ցուհի և նման բաղադրյալ

⁶⁸ Մի քանի տասնամյակ առաջ կարին բառի սեռական կարգի ձևը, որը գրությամբ նույնանում էր կարճ բառի սեռականի հետ (կարգի), արտասանվում էր կար[ը]ճի: Այժմ չի հնչյունափոխվում՝ կարին—կարճի:

⁶⁹ Թեև անիվ բառով կազմված բոլոր օրինակները վերցված են ԺՀԼՐԲ-ից, բայց այդ բառերի հնչյունափոխված ձևերը այժմ հնացած են: Ներկայումս ավելի գործածական են անհնչյունափոխ՝ անիվավառ, անիվագործ և այլ ձևերը:

բառերում Ե-ն չի արտասանվում, թեև այդ հակառակ է բառակազմական սկզբունքին: Այստեղ ավելի զորեղ է արտասանության վանկակազմական հիմունքը, երբ երկու բաղաձայններից մեկը մնում է նախորդ վանկում, մյուսն անցնում հաջորդ վանկին: Այդ պատճառով արտասանում ենք գործակ/ցել, ոչ՝ գործակ[ը]ցել, մասնակ/ցել, ոչ՝ մասնակ[ը]ցել և այլն:

Այն բաղադրյալ բառերը, որոնցում միջին արմատն սկսվում է ձայնավորի սղումով առաջացած բաղաձայն+ք զուգորդությամբ (այդպիսի բառերը բավականաչափ շատ են), ինչպես՝ ցուցա/դրել, ցուցա/դրություն, ցուցա/դրական, արտա/դրական, արտա/դրություն, բացա/տրել, բացա/տրական, բացա/տրություն, համա/դրել, համա/դրական, համա/դրություն, կարգա/դրել, կարգա/դրություն, առաջա/դրանք, պարգևա/տրել, հարկա/դրել, հարկա/դրանք, տրամա/դրել, տրամա/դրություն, վարձա/տրել, վարձա/տրություն, թագա/դրել, թագա/դրություն, բաղա/դրել, բաղա/դրություն, բաղա/դրիչ, մակա/դրել, ստորա/դրել, վերա/դրել, վերա/դրություն, խմբա/դրել, խմբա/դրական, արտա/դրել, ճակատա/գրական, ճակատա/գրեր, թագա/կրություն, բացիլա/կրություն, տեղա/տվություն և այլն, մեծ մասամբ արտասանվում են առանց գաղտնավանկի կամ թույլ գաղտնավանկով: Սակայն ի տարբերություն նախորդ ձևերի (կից/կց արմատով կազմված), այստեղ ձայնավորի կորցրածության պատճառով իրար հանդիպած բաղաձայն+ք հնչյունները, ք հնչյունի արտասանական առանձնահատկությամբ պայմանավորված, որն իրեն է միացնում նախորդող բաղաձայնը, արտասանվում են միասնաբար, դառնալով վանկասկիզբ՝ արտա/դրել, հիմնա/դրել: Այս հանգամանքը, ի տարբերություն կց-ով կազմված նախորդ բառաձևերի (հիմնա. գործակ/ցել), ստեղծում է որոշ հնարավորություն, որպես վանկասկիզբ, վանկասկզբի կանոնով, թույլ գաղտնավանկի առաջացման համար, ինչպես՝ հիմնա/դրել, գործա/դրել և այլն:

Արտասանական այս առանձնահատկությունը վերաբերում է նաև այն բազմավանկ բառերին, որոնք բառամիջում ունեն ռ-ով և ց-ով վերջացող հնչյունափոխված արմատ, ինչպես՝ ծամածռություն, ածխածնային, վերածնություն, բայց ակնբախ չէ⁷⁰: Հատ-

70 Հատկանշական է, օրինակ, որ բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը տաղաչափության մեջ վերածնություն, պարգևատրել, նակատագրի ձևերը դիտում է իբրև քառավանկ և հողածնի բառաձևը՝ իբրև եռավանկ ձևեր, անտեսելով գաղտնավանկերը:

կանշական է և այն հանգամանքը, որ եթե սղման պատճառով հանդիպում են այլ հնչյուններ, ապա գաղտնավանկը արտասանվում է որոշակիորեն, օրինակ՝ հրաձ[ը]գություն, հրաք[ը]խային, շրջանագ[ը]ծի, սրամ[ը]տություն և այլն: Հնչյունափոխվող արմատին բաղաձայն նախորդելու դեպքում գաղտնավանկը լիահունչ է, օրինակ՝ մակդ[ը]րական:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հնչյունափոխության ժամանակ գաղտնավանկի առաջացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Անհրաժեշտ է նշել, որ ի, ու ձայնավորների սղումով կազմված բառերի կամ բառաձևերի մեջ երբեմն հանդես է գալիս արտասանական երկվություն: Բառը մի դեպքում արտասանվում է ըստ վանկակազմության առանց գաղտնավանկի, օրինակ՝ աստղի, պանրի, պառփի, կնճի, վագրի, ըմբշամարտ, երեսնական, կարմրադեղին, աղիղիկ, կարծրանալ, արծվիկ, մարմնամարզիկ, մարմնավորել, դարչնագույն, գերակշռող, հետաքրքրել և այլն, որը և հանձնարարելի արտասանությունն է, և երբեմն, ըստ ժողովրդական արտասանության, սղված հնչյունների փոխարեն հնչվում է բ, ինչպես՝ աստ[ը]ղի, պան[ը]րի, պատ[ը]ծի, կնճ[ը]ռի, վագ[ը]րի, ըմբ[ը]շամարտ, երես[ը]նական, կարմ[ը]րադեղին, արկ[ը]ղիկ, կարծ[ը]րանալ, արծ[ը]վիկ, մարմ[ը]նամարզիկ, դարչ[ը]նագույն, գերակշ[ը]ռող, հետաքրք[ը]րել և այլն, որտեղ ականբախ է անվանական աստ[ը]ղ, պանիր, վագ[ը]ր, ըմբիշ, պատիժ, մարմին և այլն ձևերի ազդեցությունը: Այս երկվությունը ավելի ականբախ է թեքված ձևերում, օրինակ՝ համ[ը]րի, բարձ[ը]րի, վճ[ը]ռի, երկ[ը]րի, մարմ[ը]նի, կշ[ը]ռի և այլն:

Երդմնադրուծ, երդմնազանց բառերը ըստ հնչյունափոխության արտասանվում են գաղտնավանկով՝ երդ[ը]մնադրուծ, երդ[ը]մնազանց և ըստ մե հնչյունների կապակցելիության՝ մեկ վանկով պակաս, առանց ը-ի՝ երդմնազանց, երդմնադրուծ: Դարձյալ գերադասելի է արտասանության վերջին ձևը:

Որոշ բառերում, բաղաձայնների մեջ գաղտնավանկի զրաված տեղը պայմանավորված է ավանդույթամբ: Օրինակ՝ գտնվել, հայտնվել, մատնվել, պննվել բառերում ը-ն պետք է արտասանել ն-ից հետո՝ գտն[ը]վել, հայտն[ը]վել, մատն[ը]վել, պնն[ը]վել և այլն և ոչ ն-ից առաջ, թեև այդպես արտասանողներ էլ կան, ինչպես՝ գտ[ը]նվել, հայտ[ը]նվել, մատ[ը]նվել, պն[ը]նվել և այլն: Այստեղ նշանակություն ունի ավանդությունը: Ավանդաբար

բզկտել, բզկտուի բառերն արտասանվում են բզկ[ը]տել, բզկ[ը]-տուք և ոչ՝ բզ[ը]կտել, բզ[ը]կտուք⁷¹։ Կցկտուք բառն ըստ ավանդության արտասանվում է կցկ[ը]տուք, ոչ՝ կց[ը]կտուք։ Համեմատիր նաև՝ սինլ[ը]քոր, խավարչ[ը]տին, քստ[ը]մնելի։ Վերջին բառը ոմանց կողմից հնչվում է նաև քստմ[ը]նելի։

Ավանդական (ավելի շուտ՝ ժողովրդական) արտասանության վրա է հիմնված իննսուն—[իննըսուն], իննհարյուրերորդական—[իննհարյուրերորթական], իննսունամյա—[իննըսունամյա], իննվանկանի—[իննըվանկանի], տասնմեկ—[տասնըմէկ], տասնըշորս—[տասնըշորս], տասնհինգ—[տասնըհինգ] և նման բառերի հնչումը, որոնցում ը-ն արտասանվում է ոչ թե ճիշտ առաջ (ինչպես ըստ կանոնի պետք է արտասանվեր), այլ ճիշտ հետո⁷²։

Այն բառերը, որոնք ժողովրդական բնույթ ունեն համ բարբառային են, պահպանում են զաղտնավանկը, օրինակ՝ սսկ[ը]վել, պարտ[ը]կել, բնջ[ը]ված, ուոց[ը]նել, պսպ[ը]ղալ, փոկ[ը]վել, ճխ[ը]լել, մղկ[ը]տալ, քջ[ը]ջել, պարզ[ը]կա, խտ[ը]տել, ձկ[ը]ռել։

Հազվագյուտ դեպքերում ժողովրդական ը-ով արտասանությունը դառնում է նորմա ոչ բարբառային բառում, օրինակ՝ սրսկել բառը, որ պետք է արտասանվեր ս[ը]րս/կել (սա կապակցությունը վանկավերջում շատ է հանդիպում՝ հաբս, վաբս, դաբս, որս և այլն), արմատավորվել է ս[ը]ր[ը]սկել ձևով։

Գաղտնավանկի տեղաշարժերը և մի շարք դեպքերում արտասանության ազատությունը պայմանավորված է հենց ը-ի բնույթով, որը մյուս ձայնավորների համեմատությամբ ավելի թույլ և սուղ ձայնավոր է։ Առհասարակ զաղտնավանկի հավելումները բնորոշ են խոսակցական ոճին, օրինակ՝ ճեղք[ը]վել, սարք[ը]վել, զարկ[ը]վել, զարկ[ը]ված, ծածկ[ը]վել, ծածկ[ը]ված, կրթ[ը]վել, թրջ[ը]վել, թրջ[ը]ված, գրկ[ը]վել, գրկ[ը]ված, կրկ[ը]նել, կրկ[ը]նած, տանջ[ը]վել, տանջ[ը]ված, հաղթ[ը]վել, հաղթ[ը]ված, վերց[ը]նել, վերց[ը]րած, քրտ[ը]նել, քրտ[ը]նած, զրկ[ը]վել, զրկ[ը]ված, խրտ[ը]նել, խրտ[ը]նած, խնդ[ը]րել, ընկ[ը]ճել, վճ[ը]ռել, կշ[ը]ռել, պարտ[ը]վել, պարտ[ը]-

71 Այդպես են արտասանվում արևմտահայերենում։

72 Հարադրական ինն հարյուր, ինն հազար, ինն միլիոն թվականներում շատ տարածված է [իննը] արտասանությունը, այն դեպքում, երբ ըստ գրության պետք է հնչվի [ինն]։ Գրությունը արտասանությանը մոտեցնելու նպատակով ավելի հարմար է գրել ինը հարյուր, ինը հազար և այլն։

ված, կրկ[ը]նություն, ճնճ[ը]ղուկ, արծ[ը]վի, երկ[ը]րի, քնք[ը]շորեն, փնճ[ը]ռոտ, աստ[ը]ված, բարձ[ը]րաբլեստ, քսան[ը]մեկ և այլն: Այսպիսի՝ ընդգծված ը-ով արտասանություններ շեղում է գրական արտասանական նորմայից: Ը-ի արտասանությունը ավելորդ է և բացավերջում, երբ այն գրությամբ արտահայտված չէ, օրինակ՝ թարմ[ը] ծաղիկներ, տաս[ը] հոգի, նրա մոտ[ը], հինգ[ը] անգամ, մութ[ը] տեղ, պետք[ը] չի:

Գաղտնավանկի հավելումը երբեմն պայմանավորված է խոսքի տեմպով: Առհասարակ նկատելի է, որ դանդաղ, երկարաձգված տեմպում ը-երի արտասանությունը ավելի զգալի է, քան արագ և սահուն խոսքում:

Ինչպես նշել են մեր անցյալի քերականները, հատկապես Այտընյանը, ը-ի անհարկի հավելումները արտասանության ժամանակ, որով բառը մեկ վանկով ավելանում է, հանձնարարելի չեն: Նա այդ մասին գրել է. «Հիմակվան ժամանակս աններելի համարված է տորաբարձի փատճառով նաև հոն, ը հավելու՝ այր իրոք չի հնչվիլ՝ փա-ռք, գոր-ծք, աստըված, շինըված, օրհնել, Փավըստոս և այլն, ինչպես ստորին դարուց երգահաններն ու տաղաչափները կրենին»⁷³: Խոսքը այստեղ թեև վերաբերում է տողադարձի կանոններին, բայց հիմք է ընդունվում արտասանությունը:

Ը-ն պետք է արտասանել միայն ըստ անհրաժեշտության, ելնելով գրական հայերենի արտասանական օրինաչափություններից և ուղղախոսության պահանջներից: Անհարկի ը-ի արտասանությունը երկարաձգում, ծանրաբեռնում է բառը և արտասանվածքը դարձնում անբարեհունչ⁷⁴:

Այս կապակցությամբ մեզ հետաքրքրեց այն հարցը, թե մեր օրերի հայ բանաստեղծները բանաստեղծական չափում ինչպե՞ս են օգտագործում գաղտնավանկը: Թեթևակի քննությունից պարզ-

73 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 348:

74 Գաղտնավանկային ը-ի արտասանության հարցի մասին 19-րդ դարի վերջերին մի շարք բանավիճային հոդվածներ են տպագրել Ղ. Աղայանը և Ս. Մանգինյանը: Ը հնչյունի ավելորդ արտասանության դեմ առարկելով, մանկավարժ Ս. Մանգինյանը գրում է. «Մեր բանաստեղծները, նույնիսկ պ. Աղայանը, այդ ավելորդապաշտությունը շատ հեռու են տանում, ինչպես այս օրինակից երևում է.

«Ա՛խ, նանի ջան, նանի,
Մեզ մի վերկացրե՛ն»

Մի՞թե ախորժ հայկաբանություն է այդ հնչյունի այսպես ի շար գործ դնելը» (Հայ մանկավարժներ, գիրք Ա, Երևան, 1958, էջ 590):

վեց, որ ներկայումս չափածոյում ը գաղտնավանկի գործածութիւնը բավականին ազատ է, այսինքն՝ երբեմն բառը, ըստ ժողովրդական արտասանութեան, վերցվում է հավելյալ գաղտնավանկով, որը մի վանկով ավելացնում է տողը, իսկ երբեմն էլ, շատ ավելի հազվադեպ, եղած գաղտնավանկն է սղվում:

Այս հարցը առանձին ուսումնասիրութեան է արժանի, հատկապէս տաղաչափութեան տեսանկյունից, ուստի մենք կբավարարվենք միայն փոքրաթիվ օրինակներով՝ վերցված մեր օրերի չափածոյից: Այսպէս. Մոր լցված աչքը որդու գալուն է, / Շեմքի քարին է զրկված [զրկւրված] հարկի, / Ամպոտ երկինք է, ձյունոտ գարուն է, / Կուց-կուց արուն է օրոր հավքի (Հ. Սահյան)⁷⁵: Ի թիվս սրտի, որ ստեղծված էր մարմնին արյուն մղելու համար... (Ս. Կապուտիկյան, հմմտ. նույն բանաստեղծութեան մի այլ տողը՝ Նրա բիրտ մարմնի խորին մի խորքում...):

Այլ օրինակներ. Իմ բախտը բանեց, / Ինչպէս բանում է բախտը ա՛յն խոտի, / որ ճանապարհի եզրին է բուսնում. / Միշտ կոխկըրտվելով՝ / Ծն ցողունի տեղ, ստիպված, արմատ երկարացրի (Պ. Սևակ): Այլ քեզ զարմանք, այ հանելուկ, / Հագին ունի տաքուկ մի քուրք, / Բայց չի շոգում, չի փրտնում [քըրտընում] / Շոգի ձեռքից չի խրտնում [խըրտընում] (էդ. Ավագյան): Բայց մի անգամ, / Այլ քեզ ցավ, / Պատմութիւնը խեղճացավ, / Նրա անուշ / Զրույցին / Դիմադրեց [դիմադրէց] / գետածին (Նանս. Միքայելյան):

Վերոհիշյալ օրինակներում զրկված, մարմնին, երկարացրի, փրտնում, դիմադրեց, խրտնում ձևերում ըստ բանաստեղծութեան չափի հնչվում է գաղտնավանկ, որը գաղտնավանկի կազմութեան և արտասանութեան ուղղախոսական սկզբունքներին անհամապատասխան է:

Երբեմն հակառակ երևույթն է կիրառվում բանաստեղծական չափում, այսինքն՝ սղվում է անհրաժեշտաբար արտասանվող Ը-ն, որով վանկերի թիվը մեկով պակասում է: Օրինակ՝ Սիրտըս գիշեր, / սերըդ վառ աստղ: Այստեղ աստ[ը]դ բառը դիտված է որպէս մեկ վանկ, առանց Ը-ի:

Մի շարք դեպքերում Ը-ի արտասանութեան տատանումները և գաղտնավանկի տեղի անհաստատութիւնը իրենց արտացոլումն

⁷⁵ Այստեղ զրկված բառում Ը-ի հավելումը թերևս պատճառաբանված է, քանի որ բանաստեղծութեան և՛ բովանդակութիւնը, և՛ արտահայտութիւնները ժողովրդական են:

են գտնում տողադարձի ժամանակ, երբ գրության մեջ ը-ն վերականգնվում է: Օրինակ՝ գրում են՝ գըտ-նըվել և գը-տընվել, բը-ռընկված և բըռ-նըկված, պատ-ժըվել և պատըժ-վել և այլն:

Պետք է ասել, որ ներկայումս մամուլում և գրականության մեջ տողադարձի ժամանակ ը-ի գործածության հարցում նկատվում է անթույլատրելի ազատություն: Ոչ հազվադեպ հաշվի չի առնվում բառի ճիշտ արտասանությունը և կամայական կերպով, երբեմն ելնելով միայն տպագրական հնարավորություններից, գաղտնավանկ է ստեղծվում այնտեղ, որտեղ այն չի արտասանվում: Իսկ այդ հանգամանքը, զրի ունեցած ներկայիս ուժեղ ազդեցության պայմաններում, կարող է գրական արտասանությանը մեծ վնաս հասցնել: Բերենք թեկուզ մի քանի այդպիսի օրինակ՝ վերցված մեծ մասամբ մեր մամուլից: Այսպես՝ խաղա-ըսկիզբ (ՍՀ, 17/4, 1970), ժըխ-տըման (ՍՀ, 18/11, 1970), հան-ձընախումբ (ՀՁ, 14/5, 1967), մը-յուս (ՍՀ, 19/4, 1969), գը-տընվեցին (ՀՁ, 8/1, 1969), հըճը-վանք, հատկա-ցընել (ԳԹ, 12/3, 1965), սըփ-յուռք (ԳԹ, 9/7, 1965) և ըս-փյուռք (ԳԹ, 21/10, 1965), Դա-վըթյան (ԵԵ, 27/2, 1971) և այլն:

Ճիշտ չէ նաև փոխառյալ բառերում, գրական արտասանությունը հակառակ՝ տողադարձի ժամանակ գաղտնավանկ կազմելը, օրինակ՝ Շե-քըսպիր, մինիս-տըրություն, մա-սըշտաբ, ավըս-տրալիական, ա-վըս-տրիական, էլեկ-տրոական, ինչպես սովորաբար գրում են (օրինակները մամուլից են):

Ուշադրության է արժանի մի կարևոր հարց ևս: Այդ այն է, որ գաղտնավանկի արտասանությունը հայերենում մի շարք դիրքերում ընդհանուր առմամբ դարձել է ավելի թույլ ու անհստակ⁷⁶: Ամենից հատկանշականն այս տեսակետից այն է, որ մի շարք բառերում գաղտնավանկը միտում ունի վերանալու: Օրինակ՝ տառ, միատառ, անդոր բառերը, որ մի քանի տասնամյակ առաջ արտասանվում էին գաղտնավանկով՝ տար[ը]ր, անդոր[ը]ր, այժմ գերազանցապես հնչվում են առանց ը-ի:

Ժամանակակից հայերենում գաղտնավանկի թուլացումը հետևանք է այն բանի, որ ը-ի՝ լեզվում առկա մի շարք դեպքերում արտասանության ազատությունը խթանվել է արտաքին գործոններով՝ հիմնականում գրային արտասանությամբ և այլ լեզուների, հատկապես ռուսերենի հետ ունեցած սերտ շփումով:

76 Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, ձեռնարկ 8—10 դասարանների գործնական պարապմունքների համար, Երևան, 1957, էջ 61:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ըստ Հ. Աճառյանի վիճակագրության, Բ-ն գործածության հաճախականությամբ բոլոր հնչյունների մեջ բռնում էր հինգերորդ տեղը (ա, ն, ր, ի, ւ...), մինչդեռ էդ. Աղայանի և Ա. Սարգսյանի վիճակագրական հաշվումներով, որոնք կատարվել են վերջին ժամանակներս, Բ-ն գրավում է 6-րդ տեղը, Իսկ այդ նշանակումն է, որ Բ-ի գործածության հաճախականությունը որոշ չափով նվազել է:

Որքան գրական լեզուն ավելի է հղկվում, մշակվում և զտվում ու ազատագրվում բարբառային ու ժողովրդական արտասանական զանազան ազդեցություններից, այնքան Բ-ի հնչումը դառնում է միայն ըստ անհրաժեշտության, այսինքն՝ գաղտնավանկ է՝ արտասանվում այնտեղ, որտեղ հայերեն գրական լեզվի ուղղախոսությամբ պայմանավորված՝ այն պետք է արտասանել:

Բ, Գ, Դ, Ձ, Զ ՁԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՇԱՐՔ ԴԻՐՔՆԻՐԻՄ

Բ, Գ, Դ, Ձ, Զ ձայնեղները ժամանակակից գրական հայերենի մի խումբ բառերում, բառամիջում և բառավերջում ձայնավորներից, ինչպես և ր, դ, երբեմն նաև ն, մ բաղաձայններից հետո արտասանվում են [փ], [բ], [թ], [ց], [չ]: Այդպիսի բառերի արտասանությունը յուրացվում է ավանդաբար և ուսուցվում է դրպրոցներում:

Արդեն համապատասխան տեղում նշել ենք, որ Բ, Գ, Դ, Ձ, Զ ձայնեղների մի շարք դիրքերում ունեցած շնչեղ խուլ արտասանության մեջ տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր: Այդ կարգի մի խումբ բառեր, որ մի քանի տասնամյակ առաջ արտասանվում էին շնչեղ խուլ հնչյուններով, ներկայումս վերստացել են իրենց նախնական՝ ըստ գրության արտասանությունը. օրինակ՝ հաջորդ, հաջորդական, երիտասարդական, ստորոգյալ, զարգանալ, մակարդակ, րդնական, նագար, աղջամուղջ, ադի, օգոստոս, զուգահեռ, արգելի, հարգել, խարդախ, հորձանի, ատաղձ, մերձավոր, նառագայթ, Ադամ, ձերբակալել, մղձավանջ, մաղձ, հրդեհ, ընդօրինակել և այլն:

Ավելի շատ են այն բառերը, որոնք զուգահեռաբար արտասանվում են և՛ ավանդական արտասանությամբ՝ շնչեղ խուլ, և՛ ըստ գրության: Այսպիսի զուգահեռությունը կամ երկվությունը

ներկա փուլի համար շատ բնորոշ հատկանիշ է և միջին օղակ է հանդիսանում ավանդական արտասանությունից գրային արտասանությունը անցնելու ճանապարհին: Այդպիսի բառեր են, օրինակ՝ ներբող—ներ[փ]ող և ներ[բ]ող, նրբանցք—նր[փ]անցք և նր[բ]անցք, ջրարբի—ջրար[փ]ի և ջրար[բ]ի, իջնել—ի[չ]նել և ի[ջ]նել, վարագույր—վարա[ք]ույր և վարա[գ]ույր, անգամ—ան[ք]ամ և ան[գ]ամ, նվագել—նվա[ք]ել և նվա[գ]ել, միջնակարգ—մի[չ]նակարգ և մի[ջ]նակարգ, միջակ—մի[չ]ակ և մի[ջ]ակ (և առհասարակ միջ բաղադրիչով կազմված գրեթե բոլոր բառերը, ինչպես՝ միջանցք, միջազգային, միջամտել, միջոցառում և այլն), ողջույն—ո[խշ]ույն և տղ[ջ]ույն և այլն: Արտասանական երկվություն ունեցող այս կարգի բառերի թիվը բավականին մեծ է, նամանավանդ, եթե այս խմբի մեջ պայմանականորեն մտցնենք նաև այն բառերը, որոնք ընդունված ավանդական արտասանությունը խախտելով երբեմն հնչվում են նաև գրային արտասանությամբ և հակառակը, այն բառերը, որոնք նոր, տարածված և ընդունված գրային արտասանության փոխարեն հնչվում են հնացած արտասանությամբ. օրինակ, մի կողմից՝ կար[դ]ալ, փոր[ձ]առու, վեր[ջ]ացնել, եր[բ]եք, եր[բ]եմն, մյուս կողմից՝ զար[ք]անալ, ճառա[ք]այթ, հար[թ]արանք, տար[փ]երություն, օ[ք]ոստոս, շուր[չ], ը[խց]ական, մեթ[ց]ավոր և այլն:

Գրային արտասանության միտումը ներկայումս այնքան ուժեղ է, որ երբեմն խախտվում է նաև շատ գործածական, ավանդական հաստատուն արտասանություն ունեցող բառերի հնչումը:

Նորմավորման ժամանակ երբեմն դժվար է լինում ճշգրտորեն որոշել այն բառերի սահմանները, որոնք պետք է հնչվեն ավանդական՝ շնչեղ խուլ արտասանությամբ, և նրանց, որոնք պետք է հնչվեն ըստ գրության: Օրինակ՝ Ի-ից հետո ձ-ի ց արտասանությունը ներկայումս, բացի մի քանի բառից, խիստ կերպով տատանվում է, և արտասանական տատանումներն ու երկվությունները դժվարացնում են ուղղախոսական նորմայի որոշումը: Այս դեպքում արդեն ստիպված ենք ընդունել արտասանական ազատ տարբերակներ:

Տեղմինաբանական կոմիտեն ճիշտ ուղղություն է վերցրել այս հարցում, երկվության դեպքում նախապատվությունը տալով գրային արտասանությանը: Այդ որոշման մեջ ասված է. «Նկատի ունենալով հայերենի բաղաձայնների գրային արտասանության

տարածման միտումը, ինչպես նաև լեզվի նորմավորման ուղղա-
խոսական և ուղղագրական ախալների վերացման համար արտա-
սանությունը գրությունը մոտեցնելու նպատակահարմարությունը՝
ուսուցման և ուղիղհեռուստատեսային հաղորդումների ժամանակ
նախապատվությունը տալ այդ բառերի գրային արտասանու-
թյանը»⁷⁷:

Քննենք բ, գ, դ, ձ, ջ-ի արտասանությունը ըստ առանձին
դեպքերի:

Բ-Պ-Փ Բ-ն բառամիջում և բառավերջում ձայնավորներից
և ր, մ ձայնորդներից հետո մի խումբ բառերում արտասանվում
է [փ]:

Ձայնավորից հետո՝ խաբել, խաբեբա, խաբուսիկ, խաբեու-
թյուն, խաբկանֆ, խաբեբայություն, հուսախաբ, շաբաթ, շաբաթ-
օրյակ, երկուշաբթի, իբրև, իբր, Հակոբ, Հակոբյան, Գաբրիելյան
և նշված արմատներով կազմված և այլ բառերում և անձնանուն-
ներում⁷⁸:

Բ-ից հետո՝ ուրբ, ուրբանալ, ուրբանոց, ուրեփյրի, լիւրբ, լրբա-
նալ, լրբություն, նուրբ, նրբանալ, հարբել, հարբեցողություն,
դարբին, դարբնել, դարբնոց, ուրբաթ, ուրբաթախոս, երբ, երբեմն,
երբեմնի, երբևէ, երբեք, սուրբ, սրբել, սրբիչ, սրբապղծություն,
Սրբունի և այլ բառերում:

Հարբուխ բառում բ-ն խոսակցական լեզվում տեղի [փ] հըն-
չումը՝ հար[փ]ուխ, սակայն գրական արտասանությունը պահան-
ջում է արտասանել բ:

Ձայնավորներից և ր ձայնորդից հետո մնացած դեպքերում
պետք է արտասանել [բ], ինչպես՝ երայերեն, բարախել, արեթ,
լոբի, աշխարհաբար, գրաբար (արտասանվում է նաև գրա[փ]ա[ռ]
և գրա[փ]ար, հանձնարարելի է գրային հնչումը), արբանյակ,
արբունֆ, արբշիւ, արյունարբու, արբենալ, արբեցում, զինարբուֆ,
բուրբ, տարբեր, բուրբոֆել, բուրբել, բուրբոս, պարբերաբար,
բարբառ, դերբալ, բարբաշել, անտարբեր, Արբանյան և այլն:

Ձայնավորից և ր-ից հետո բ-ն մնում է անփոփոխ, ինչպես
միջին, այնպես էլ նոր շրջանի փոխառություններում, օրինակ՝
դուրբան, շարբաթ, ազաբ, ցուր, դաբաղ, դաւիթ, շիբ, խաբար,

⁷⁷ Տե՛ս «Բ-ից, դ-ից և ձայնավորներից հետո բ, գ, դ, ձ, ջ տառերի արտա-
սանության մասին» որոշումը («Սովետական դպրոց», 23/7—1969):

⁷⁸ Այստեղ և այսուհետև բերված օրինակներում նշվում են համապատասխան
բոլոր արմատները, բայց ոչ այդ արմատներով կազմված բոլոր բառերը:

շաբաշ, շոբան, Հաբեթ. Արել, գերբ, գոր, սերբ, տուրբին, պոռ-
լեմ, արբիտր, միկրոբ, ուրբանիզմ, կարբոնատ և այլն⁷⁹:

Մի քանի այս կարգի բառերում ակնբախ է արտասանական
երկվությունը, ինչպես՝ ջրաբի, ներբող, ձեռքակալել, ներբան,
ներբանցք, ներակերտ, ինքնախաբեություն: Այսպիսի դեպքերում,
ինչպես ասվել է, նախապատվությունը պետք է տալ զրային ար-
տասանությունը:

Մ-ից հետո բ-ն արտասանվում է [փ] հետևյալ բառերում՝
համբերել, համբերություն, համբերատար, անհամբեր, համբույր,
համբուրել, բարեհամբույր, Մամբրե և այլն: Թամբ, թամբել-
թումբ, թմբել, զամբյուղ, ամբողջ, խումբ, խմբական, խմբագրու-
թյուն, Համբարձում և այլն բառերում պահպանվում է գրային
հնչումը:

Ղ-ին հաջորդող բ-ն մի քանի բառում արտասանվում է [պ],
ինչպես՝ աղբ, աղբանոց, եղբայր, եղբայրություն, աղբյուր, ողբ,
ողբալ, ողբերգություն, ողբանվագ, ողբասաց, Կողբ, Հաղբատ:
(Այս բառերում ղ-ի [խ] արտասանության մասին տե՛ս ստորև):

Բ-ն ղ-ից հետո փոփոխություն չի կրում շեղբ, բողբոջ, կուլբ-
աղբյուս բառերում:

Ձայնավորից հետո բ-ն [պ] է արտասանվում բոքիկ, բոքկա-
նալ բառերում:

Գ-Ք Գ-ն բառամիջում և բառավերջում ձայնավորներից և ր
ձայնորդից հետո մի խումբ բառերում արտասանվում է [ք]:

Ձայնավորից հետո՝ հոգս, հոգի, հոգեբանություն, մաահոգվել,
հոգեւորդի, հոգեհաց, հոգեվարք, հոգևոր, հոգաբարձու, հոգոց,
հոգատար, հոգյակ, հոգնակի, հոգալ, հիգ, հգնածամ, հգնել
(բայց՝ ճի[գ]եր), ձիգ, ձգել, ձգան, ձգձգել, ձգտել, նրագու, ավագ,
շոգ, շոգել, նրագ, մարագ, ուրագ, կարագ, մուգ, մգություն, մգա-
նալ, նորոգ, նորոգել, նորոգում, ձագ, ձագուկ, էգ, իգական,
էգուց, քագավոր, պագ, երկրպագու, երկրպագել, պատարագ, օգ-
նել, օգնական, օգնություն, օգուտ, օգտակար, օգտագործել, Գրի-
գոր, Գրիգորյան (նաև՝ Գրի[գ]որյան), հոգնա, գոգնոց, հագնել,
հագուստ, հագը, Օգսեն, սուգ, սգալ, սգավոր, հոգնել, Մագրաղ,
Արեգնագան, ծեգ, ծագել, արեածագ, միանվագ, գուգել, գուգված,
ոգի, ոգևորել, ոգեկոչություն, նվագ, տեգր և սրանցով (բացի հա-

79 Աբխազ, աբխազական, աբխազերեն բառերում բ-ի [փ] արտասանությունը առնմանության արդյունք է, որը տեղի է ունենում հաջորդող խ-ի ազդեցու-
թյամբ:

տուկ անուններին) կազմված այլ բառերում: Մի շարք բառերում գ-ն [բ] է արտասանվում գաղտնավանկի ձայնավորից հետո, ինչպես՝ ճ[բբ]նել, ճ[բբ]նաժամ, ձ[բբ]տել և այլն: Տգեղ, տգետ բառերի տ[բբ]նել, տ[բբ]նտ հնչումը անթույլատրելի է:

Բ-ից հետո՝ երգ, երգել, կարգ, կարգադրել, կարգապահ, կարգին, կարգ ու կանոն, համակարգ, անկարգ, թարգման, թարգմանել, Գևորգ, Գևորգյան, Սարգիս, Սարգսյան, Պարզև, պարզևատրել, միւրգ, մրգառատ, մրգավաճառ, Մարգարիտ, Մարգար, Մարգարյան, մարգարե և այլն բառերում:

Այս կարգի մի շարք արմատներ հանդես են բերում արտասանական երկվություն, այսինքն՝ միևնույն արմատը մի դեպքում կարող է ունենալ շնչեղ խուլ արտասանություն, մյուս դեպքում, հատկապես նորաստեղծ բառերում՝ գրային: Օրինակ՝ գոգ[բ] և գոգավոր[գ], տգի[բ] և փոքրոգի[գ], երգ[բ] և երգիծանք[գ], երգիծել[գ], ողբերգություն[գ], համերգ[գ], համերգային[գ], համերգասրահ[գ], մեներգ[գ], մեներգիչ[գ], մեներգչուհի[գ], ժամերգություն[գ], եղերերգ[գ], նվագել[բ] (արտասանվում է և գ-ով) և նվագակցել[գ], նվագակցություն[գ], նվագարան[գ], նվագախումբ[գ], նվագածություն[գ], թագավոր[բ] և թագ[գ], թագուհի[գ] և [բ], թագադրել[գ], թագադրություն[գ], թագակիր[գ], լուսնթագ[գ], ավագ[բ] և ավագանի[գ], ձիգ, ձգել[բ] և ջղաձգություն[գ], հրաձգություն[գ], առաձգական[գ], հոգալ[բ] և հոգածություն[գ], ճիգ[բ], ճիգեր[գ] և [բ]:

Երբեմն միևնույն բառը տարբեր իմաստներով կիրառվելիս հնչվում է տարբեր. օրինակ՝ Երեխան նստած էր մոր գոգին[բ] և պատուհանի գոգը[գ]:

Գ-ն ձայնավորից և Ե-ից հետո ավելի մեծ թվով բառերում և հատուկ անուններում պահպանում է գրային հնչումը, ինչպես՝ ագռավ, փափագ, փափագել, մոգ, մոգական, մոգալետ, հեգել, ոռոգել, ոռոգում, ոռոգելի, Գարեգին, Տիգրան, Տիգրանակերտ, Բագրատ, Բագրատունի, Թորգոմ(յան), անհագ, ագահ, ագահություն, հագնել, հագնալ, հագուրդ տալ, անհագուրդ, տոգորվել, Վարագ, Ագուլիս, զուգակցել, զուգահեռ, զուգընթաց, զուգադիպություն, գագաթ գագաթնակետ, ագարակ, արեգ, արեգակ, հագար, ագի, անգուգական, հառագայթ, շագանակ, մագիլ, մագաղաթ, հագագ, հագագային, առագաստ, մեգ, միգամած, սեգ, սիգապանծ, հագնել, օգոստոս, տգետ, արագ, արագավագ, հեգ, ձագար, իգիթ, շոգեկաթսա, ստորոգելի, տագր, վեգ, դագանակ, անագ, դեգերել, մագաղաթ, վարագույր, վարագուրել, եղեգ, նիգ, ստուգել, տագ-

նապ, դրվագ, տուգանք, մզլած, առագաստ, արագիլ, Արագած, բազին, դագաղ, արգելիք, արգելել, արգելակ, արգելարան, արգելավագ, հարգել, հարգարժան, մարգ, մարգախնձոր, աճարգ, անարգանք, անարգել, դրամատուրգ, արգանդ, արգավանդ, գորգ, գիրգ, բուրգ, զարգանալ, զարգացում, արգահատելի, արգահատանք, արգասիք, բարգավաճել, երգիծել, երգիծանք, փոքրոգի, շոգնիարշ, Պարգասիք, շանթարգել, շնչարգելություն, ներգոյական և այլն:

Այստեղ թվարկված մի շարք բառեր դեռևս չունեն հաստատուն գրային արտասանություն և երբեմն, հատկապես ավագ սերնդի կողմից, հնչվում են ավանդական արտասանությամբ: Այդպիսի բառեր են, օրինակ՝ զուգանեռ, զուգընթաց, զուգադիպություն, անզուգական, արեգակ, մարգագետին, վարագույր, թագուհի, գոգավոր, արգելակ, արգելել, արգելակել, մոգական, մոգպետ, արեգ, երկրապագել, երկրպագու, Թուրգոմ և այլն: Տաք բառում գ-ն հնչվում է ըստ գրության, իսկ նույն բառի ժողովրդական տեք տարբերակում՝ [բ]:

Գ-ն [բ] է արտասանվում ն-ից հետո անգամ բառում: Ներկայումս տարածում է ստանում այս բառի գրային արտասանությունը: Հանգչել, հանգցնել բառերում գ-ն արտասանվում է ըստ գրության: Ն-ից հետո գ-ն շատ բառերում անվերապահորեն և հաստատուն կերպով արտասանվում է [գ], ինչպես՝ սրինգ, երանգ, ժանգ, հանգույց, հինգ, հավանգ, հանգ, անգլերեն, հանգամանք, հանգամանորեն, ժառանգ, ժառանգություն և այլն:

Գ-ն յ-ից հետո արտասանվում է [բ] զույգ, մասամբ՝ պատռույգ բառում (մույգ-ը այժմ գրվում է մուրգ):

Գ-ն յ-ից հետո արտասանվում է [գ]՝ ստույգ, անստույգ, առույգ, նծույգ, այգ, այգի, այգաբաց բառերում:

Գ-ն դ-ից հետո փոփոխություն չի կրում. օրինակ՝ հեղգ: Շաղգամ բառում դգ-ն արտասանվում է [խկ]:

Դ-Թ Դ-ն բառամիջում և բառավերջում ձայնավորից և ր, ն ձայնորդներից հետո մի խումբ բառերում արտասանվում է [թ]:

Ձայնավորից հետո դ-ն [թ] է արտասանվում հետևյալ բառերում՝ օդ, օղանցք, օղաչու, դադար, դդում—[դրթում], գդալ—[գըթալ], դադար, անդադար, Թադևոս(յան) և այլն:

Բ-ից հետո դ-ն [թ] է արտասանվում զգալի թվով բառերում, որոնց թիվը ավելի է, քան չփոփոխվողներինը: Այդպիսի բառեր են՝ զարդ, գերդ, զարդարել, բարդ, բարդություն, բարդանալ, բուրդ, բրդեղեն, բրդե, բերդ, բերդախալ, բերդապահ, մարդ, մարդկա-

յին, մարդիկ, մարդկություն, անմարդկային, օրիորդ, օրիորդական, նյարդ, նյարդային (*նակ՝ նյար[դ]ային*), վարդ, վարդաբլուր, վարդենա, վարդապետ, վարդգես, վարդան, վարդունի, հուրդալ(իմենու), հաջորդ, հաջորդել, հաջորդական, ջարդ, ջարդել, ջարդոփշուր, որդ, որդենի, լյարդ, որդի, որդիական, ֆաջորդի, կարդալ, հաղորդել, հաղորդավար (*նակ՝ հաղոր[դ]ավար*), հաղորդում, անհաղորդ, երդում, երդվել, երդմնազանց, երդիկ, դրդել, բրդել, մածնաբրդոշ, բրդուն, արդուզարդ, արդեն, արդյոք, արդյունք, արդյունաբերություն, արդար, արդարություն, անարդար, խորդուբորդ, վրդովել, վրդովմունք, անվրդով, Տրդատ, վաղորդյան, վաղորդայն, որսորդ, որսորդական, տասնորդ, տասնորդական, ձախորդ, կցորդ, ձայնորդ, ֆանորդ, լոզորդ, լծորդ, գնորդ, հետնորդ, հանախորդ, անցորդ, ծանրորդ, վարորդ, խորանարդ, բաժանորդ, փոխնորդ, մնացորդ, նախորդ, հեծանվորդ, չմշկորդ, հանուրդ, պարապուրդ, խառնուրդ, խորհուրդ, խորհրդային, ժողովուրդ, ժողովրդական, հաջորդ, հաջորդական, երկրորդ, երկրորդական, առաջնորդ, առաջնորդել, դեսպանորդ, գնդացրորդ, սավառնորդ, պահնորդ, պահնորդական, սեղանարդ, կոնարդ, ձվարդ և այլն:

Այժմ միտում է նկատվում -որդ, -ուրդ, -արդ վերջածանցներով կազմված բառերում, մանավանդ նորաստեղծ, պահպանել գրային արտասանությանը: Այդ պատճառով նշված ածանցներ ունեցող բառերի արտասանության մեջ նկատելի է որոշ երկվություն, օրինակ՝ Փեղարդ, կորնթարդ, թակարդ, կախարդ, կախարդական, խորանարդ, գմբեթարդ, երիտասարդ, երիտասարդական, որսորդ, որսորդական, պահնորդական, լծորդ, բաժանորդ, մնացորդ, խորհուրդ, ժողովուրդ, խառնուրդ, դեսպանորդ, գնդացրորդ, չմշկորդ, կոնարդ, ձվարդ, սեղանարդ և այլն:

Դ-ն Ի-ից հետո մի շարք բառերում պահպանում է իր հնչյունը, ինչպես՝ սարդ, բարդ (դեզ), արդ, ցարդ, արդի, արդիական, նավասարդ, խլուրդ, անուրդ, խորդ (*կռունկ*), հագուրդ, դղիւրդ, մակարդ, մակարդել, խորդենի, խարդախ, խարդախություն, խարդավանք, լեռդանալ, նարդու (ժաղիկ), սրդողել, սպրդել, հորդուր, հորդորել, հորդորանք, հարդարել, հարդարանք, հարդ, հարդագույն, հարդագող, հաշվեհարդար, տմարդի, տմարդություն, հորդ, հորդել, հորդաբուխ, հորդառատ, հորդամոս, հորդանալ, ապարդյուն, անապարդյուն, մակարդակ, անջրդի, արդուկ, արդուկել, բարդի, դրդալ, դրդոց, դրդյուն, գերդաստան, լորդու, հրդեն, Արդվին:

Սրանցից մի մասը, ինչպես՝ հաղարեւի, խարդախ, հոգ, առդի, աղբիական, մակարդակ, հարդ, ապարդյուն, անջրդի, նավասարդ, Տրդատ և այլն, որոնք մի քանի տասնամյակ առաջ ունեին շնչեղ խուլ արտասանություն, ներկայումս էլ որոշ դեպքում հընչվում են ափանդական արտասանությամբ, սակայն առավել տարածվածը և գերազանսելին գրային արտասանությունն է:

Առանց տատանումների, ըստ գրության են հնչվում միջին և նոր շրջանի փոխառությունները, որոնք բավականաչափ շատ են, ինչպես՝ կոկորդիլոս, դարդ, ֆուրդ, նամարդ, նամարդություն, նարդի, հորդա, Սարդար, բորդո, օրդեր, բիխարդ, արսուրդ, կոկարդ, ավանգարդ, յարդ, կրոսվորդ, կարդինալ, «ֆորդ» և այլն:

Դ-ն ձայնավորներից հետո մնում է անփոփոխ հետևյալ բառերում և հատուկ անուններում՝ սողում-գոմոր, սինոդ, Ադամ, ադամորդի. ադամախնձոր, ադամանդ, հոդ, հոդաբաշխ, հոդավոր, գոդ, գոդել, եդեմ, եդեմական, հոդված, բադ, բադիկ, Բադիկյան, Սադայել, ծղբիդ, գդակ—[գրդակ], Սեդրակ, Սեդրակյան (նաև՝ Սե[թ]րակ, Սե[թ]րակյան), Օդաբաշյան, միջին շրջանի և նոր փոխառություններում՝ սադաֆ, ադաթ, դադր, շոկոլադ (ոչ՝ շոկոլա[թ]), լիմոնադ (ոչ՝ լիմոնա[թ]), մարմելադ, յոդ, սոդա, բալլադ, բարիկադ, բրիգադ, լիդեր, հիբրիդ, ալկալոիդ և այլն:

Դ-ն ն-ից հետո արտասանվում է [թ]՝ անդամ, անդամությամբ, հաղթանդամ, հաշմանդամ (նաև՝ հաղթան[դ]ամ, հաշման[դ]ամ), անդամայոյծ (նաև՝ ան[դ]ամայոյծ), խնդիր, խնդրել, նախանձախնդիր, խնդրառություն, կենդանի, կենդանանալ, կենդանություն, ինչպես և ընդ նախդիրով կազմված մի շարք բառերում՝ ընդամենը, ընդհանուր, ընդհանրական, ընդհանրացում, ընդհանրապես, ընդունել, ընդունելություն, ընդունաբան, ընդունակ, ընդունակություն, անընդունակ և այլ:

Ընդ նախդիրով փաղմված շատ բառերում այժմ ընդունված է գրային արտասանությունը, ինչպես՝ ընդհատակ, ընդհատակյա, ընդհուպ, ընդօրինակել, ընդհատել, ընդհատվել, անընդհատ և այլն:

Ն-ից հետո դ-ն մնացած բառերում արտասանվում է ըստ գրության, ինչպես՝ հանդես, խինդ, հանդուգն, զնդան, ադամանդ, խոշընդոտ, թնդալ, խնդալ, խանդել, ավանդ, Երվանդ, սնունդ, Խոանդ, Եռանդով, Եռանդագին, ֆանդակ, կաշկանդել, հանդերձանք, ցնդել, ցնդաբանել, ծնունդ:

Դ-ն փոքրաթիվ բառերում արտասանվում է [տ]: Դա տեղի է ունենում այդ բառում և դրանով կազմված բարդություններում,

օրինակ՝ այդքան, այդպես, այդօրինակ, այդտեղ, ինչպես նաև խեղդել (խեղդամահ, խեղդուկ, խեղդոտել) և տափեղ բառերում:

Որպես կանոն [տ] է արտասանվում բառավերջի դ հոդը բոլոր բառերում (տղադ[տ], թեկնածուդ[տ], սիրտդ [սիրտըտ], քույրդ [քույրըտ]):

Դ-ն դ-ից և զ-ից հետո փոփոխության չի ենթարկվում, ինչպես՝ անհողողող, դողողալ, դողողջ, բաղաատել, ազդ, մահազդ, ազդակ, Արամազդ:

Ձ—Յ Ձ-ն բառամիջում և բառավերջում ձայնավորներից, ինչպես և բ, դ հնչյուններից հետո մի խումբ բառերում արտասանվում է [ջ]:

Ձայնավորից հետո ձ-ն [ջ] է հնչվում օձ և դրանից կազմված՝ օձագալար, օձաձև, օձապտույտ, օձաձուկ և այլ բառերում: Օձի՞ բառում ձ-ն չի փոխվում:

Բ-ից հետո ձ-ի [ջ] արտասանությունը այժմ սկսել է խիստ տատանվել: Ձ-ն բ-ից հետո [ջ] է արտասանվում հետևյալ բառերում՝ վարձ, վարձել, վարձակ, վարձակալ, վարձով, վարձաճատույց, վարձու (ոչ հազվադեպ գործածվում է այս բառերի նաև գրային արտասանական տարբերակը), որձ, որձաբառ, անցուդարձ, փոխադարձ, հակադարձ, անդրադարձ, վերադարձ, դարձյալ, փորձ, փորձակաճ, անփորձ, փորձել, փորձաճ, արձակուրդ, արձան, արձանագրություն, արձանագործ, արձանագործություն, նախահարձակ, տառադարձություն, դիմադարձություն, իրադարձություն, որձաբար, ամբարձիչ և այլն) հանդես է գալիս որպես արտասանական տարբերակ այս բառերի ավանդական արտասանությանը զուգահեռ: Այդ պատճառով փոքր թվով բառեր կարելի է նշել, որոնցում ձ-ն հաստատուն կերպով հնչվի [ջ], ինչպես՝ փորձ, փորձաճ, հարցուփորձ, վարձ, որձ, բարձր, խուրձ, բայց ոչ անպայմանորեն նաև սրանցով կազմված մյուս բառերը:

Բ-ից հետո ձ-ն պահպանում է գրային արտասանությունը ու-

դերձ, հերձել, հերձվածո, արձագանք, արձագանքել, հորձանք, հորձանուտ, հանդերձանք, հանդերձապահուհի, արվարձան, մերձավոր, մերձակա, տնամերձ, մահամերձ, մերձքալքյան, մերձեցում, մերձֆաղաֆային, մերձափնյա, սահմանամերձ, ձորձ, լորձ, լորձուկ, լորձաքաղանք, հուշարձան, ֆուրձ, ֆրձագգեստ բառերում:

Ձ-ն դ-ից հետո [ց] է արտասանվում դեղձ, դեղձան, դաղձ, դեղձանիկ բառերում, մնացած դեպքերում կանոնավորապես արտասանվում է [ձ], ինչպես՝ գեղձ, նշագեղձ, ջրահեղձ, հեղձուցիչ, շնչահեղձ, փղձկալ, առաղձ, առաղձագործ, մաղձ, մաղձոտ, մեղամաղձոտ, իղձ, ըղձական, ըղձալի, մղձավանջ, մղձավանջային, փղձկալ, փղձուկ, բաղձանք, բաղձալ, բաղձալի, գուղձ:

Ձ-ն ն-ից հետո փոփոխություն չի կրում, ինչպես՝ հնձան, սինձ, անձնական, հանձնարարել, խնձոր, անձկալի, անձուկ և այլն:

Ձ—Ձ Ձ-ն բառամիջում և բառավերջում ձայնավորներից, ինչպես և ր, դ բաղաձայններից հետո արտասանվում է [չ] մի խումբ բառերում:

Ձայնավորից հետո ջ-ն [չ] է արտասանվում հետևյալ բառերում՝ աջ, Աջափնյակ, աչիկ (բայց՝ ա[ջ]ակցել), առաջ, առաջաբան, առաջավոր, առաջնորդ, առաջնակարգ, առաջադիմություն (բայց՝ առա[ջ]իկա, առա[ջ]արկություն), ոջիլ, մեջ, մեջտեղ, մեջք, անընդմեջ, անտատամեջ, ֆաջֆ, վայրէջք և այլն: Մեջ բառի հնչյունափոխված միջ բաղադրիչով կազմված բառերի ավանդական շնչեղ խուլ արտասանությունը այժմ փոքրաթիվ բառերում է պահպանվում, ինչպես՝ միջև, միջակ, միջակետ, միջանկյալ, բայց այն էլ ոչ միշտ: Միջ բաղադրիչով կազմված բազմաթիվ բառեր ներկայումս ունեն ներկակի հնչում, օրինակ՝ միջնակարգ, միջնաբերդ, միջուկ, միջուկային, միջազգային, միջոց, դասամիջոց, միջոցառում, միջնորդական, միջնորդավորված, կենսամիջոց, անմիջապես, միջադեպ, միջավայր, միջամտել, միջատ, ընդմիջում, միջանցք, միջնորմ, միջնադարյան, միջին, միջօրե, Միջերկրական, միջարկություն, միջօրեական, Միջագետք, միջֆաղաֆային, միջդպրոցական, միջոցներ, ի միջի այլոց: Ըստ գրության են ներկայումս հնչվում հաջող, հաջողություն, անհաջող, բարեհաջող, հաջողակ, հաջողվել, հաջորդ, հաջորդական, հաջորդել բառերը:

Իջնել, իջևանել, իջեցում, իջևան, էջմիածին, Նախիջևան բառերը և տեղանունները զուգահեռաբար արտասանվում են [ջ]-ով և [չ]-ով: Գերադասելի է [ջ]-ով արտասանությունը: Իջևան-ի

[2]-ով արտասանութիւնը բաժականաչափ կայուն է, մանավանդ որսլիս տեղանուն:

Տատանումներ կան սեռական հոլովի — ոչ վերջավորութեան արտասանութեան մեջ, ինչպես՝ քոջ, կնոջ, տալոջ, ընկերոջ և այլն, որը ավանդական [2]-ով արտասանութեանը զուգահեռ հընչվում է նաև [2]-ով:

Ձ-ն ձայնավորից հետո [2] է արտասանվում մնացած բառերում, ինչպես նաև միջին և նոր շրջանի փոխառութիւններում՝ քաջ, քաջակորով, էջ, բջիջ, գիջել, գիջում, անգիջում, շեջ, անշեջ, հրշեջ, դաշ, ալոջ, գաշ, թուշ, մարմաշ, ջոջ, քրքիջ, խոխոջ, քուլոջ, օջախ, հաշի, վեջ (վեջը չի), մեջլիս, ջեջիմ, բիջի, Քեմբրիջ և այլն: Զիջում, գիջել, բջիջ բառերում [2]-ի փոխարեն [Ճ] հնչիլը արտասանական նորմայի խախտում է:

Ձ-ն ր-ից հետո արտասանվում է [չ] հետևյալ բառերում՝ վերջ, վերջացնել, վերջաբան, վերջին, անվերջ, արջ, արջո՛ւս, թրջել, թրջոց և ու-ից հետո՝ առջև բառում:

Մնացած բառերում, հատկապես միջին և նոր շրջանի փոխառութիւններում, ջ-ն ր-ից հետո փոփոխութեան չի ենթարկվում, ինչպես՝ երջանիկ, երջանկավետ, երջանկացնել, ապերջանիկ, շուրջ, կամուրջ, մարջան, շրջան, շրջանային, անուրջ, անբջել, ստերջ, բաղաւրջ, մրջյուն, մրջնաթթու, մրջնակեր, մրջնանոց, քուրջ, քրջոտ, լուրջ, ստրջանք, լրջորեն, աշալուրջ, հորջորջել, արջասպան, խարջ, խուրջին, արջառ և այլն: Որոշ տառնումներ կան քուրջ, մրջյուն, արջաւր, երջանիկ բառերի և նրանցով կազմված բաղադրյալների արտասանութեան մեջ:

Ձ-ն դ-ից հետո հաստատուն կերպով արտասանվում է [չ] միայն աղջիկ բառում և պահպանում է գրային հնչումը աղջամուղջ, գաղջ, գաղջանալ, գաղջութուն, գեղջուկ, գեղջիւմի, գեղջկական (կ-ից առաջ գտնվելով՝ ջ-ն և առհասարակ ձայնեղները առնմանութեամբ որոշ չափով խլանում են և դրա պատճառով նաև նախորդող դ-ն, ինչպես՝ գեղ[չ]ուկ, բայց՝ գե[խչ]կական, գե[խչ]կուհի), ողջախոհ, եղջերու, եղջյուր, եղջերաթաղանթ, եղջերավոր, գղջալ, գղջում, շեղջ, շեղջել, շեղջակոյտ, շղջիկ բառերում: Մնացած դեպքերում, ինչպես՝ առողջ, առողջական, առողջութուն, վատառողջ, ողջ, ողջունել, ողջութուն, ողջախոհ, ողջամիտ, ողջույն, ողջագուրվել, ամբողջ, ամբողջացնել, ամբողջական, ամբողջովին և այս արմատներով կազմված այլ բառերում, զգալի են տատանումները ավանդական և նոր՝ գրային արտասանութեան միջև:

Ջ-ն Ե-ից հետո փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ խըն-
ջույք, ննջել, ննջաբան, ջինջ, ջնջել, աճջնջելի և այլն: Խնջույք բա-
ռում [Ճ] հնչելը կանոնական չէ:

Ղ-ի ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻՑ ԵՎ ԿԻՍԱՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Ղ-ն խուլ հնչյուններից առաջ արտասանվում է [խ]: Այս փո-
փոխությունը էապես տարբերվում է բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների կրած
փոփոխությունից նրանով, որ եթե վերջիններիս հնչյունափոխու-
թյունը կրում է պատմական բնույթ, ապա Ղ-ի հարցում գործ ու-
նենք համաժամանակյա հնչյունափոխության հետ: Ղ-ն, գտնվե-
լով խուլ հնչյուններից առաջ, հտընթաց առնմանությամբ, այ-
սինքն՝ հաջորդող խուլ հնչյունների ազդեցությամբ, արտասանվում
է [խ]:

Պ-ից առաջ՝ պողպատ, պղպջակ, պղպեղ, լղպուր, պաղպաջուն,
ծուլպ, կողպ, կողպել, կողպեք բառերում⁸⁰:

Տ-ից առաջ Ղ-ն հնչվում է [խ] ուղտ, ընծուղտ, ուղտապան,
աղտ, կեղտ, կեղտոտ, տաղտկալի, տաղտուկ, գաղտնի, գաղտնիք,
գաղտագողի, գողտրիկ, պղտուր, պղտուրել բառերում:

Կ-ից առաջ Ղ-ն արտասանվում է [խ] նողկալի, նողկանք,
բողկ, մղկտալ, ծաղկել, ծաղկոց, փեղկ, ֆեղկեղկվել, տեղկում,
ողկույզ, փողկապ, շաղկապ, շաղկապել բաղկանալ, կաղկանձ,
կաղկանձել, հղկել, հղկված, խեղկատակ, եղկելի, մեղկ, մեղկու-
թյուն բառերում⁸¹:

Պ, տ, կ հնչյուններից առաջ Ղ-ն կարող է արտասանվել [խ]-ի
նման նաև բառերի կապակցություններում. օրինակ՝ տեղ պանիր,
տեղ տուր, տեղ կա և այլն:

Ղ-ն արտասանվում է [խ] ց-ից կամ [ց]-ի վերածված ձ-ից

80 Պաղպաղակ բառում պ-ից առաջ Ղ-ն չի խլանում:

81 Դպրոցական հայոց լեզվի դասագրքում (Է. Աղայան, Հ. Բաբսեղյան, Հա-
յոց լեզու 5—8-րդ դասարանների համար, 1970) այս խմբից առանձնացվել են
հղկել, խեղկատակ, եղկելի և մեղկ բառերը, որոնցում, ի տարբերություն մյուսների,
Ղ-ն չի փոխվում (էջ 15): Այստեղ թերևս որոշ վերապահություն կարելի է անել
միայն մեղկ բառի համար, որը նվազագույն հակադրության մեջ է մեխիկ-ի հետ:
Թեև առհասարակ հնչույթաբանական գործոնը հնչյունական փոփոխություններում
կատարում է ուղղություն տվող և սահմանափակող դեր, բայց նույնսիկ այս դեպ-
քում Ղ-ի և Խ-ի հակադրությունը որոշակի չէ:

առաջ, ինչպես՝ քաղցր—քա[խ]ցր, քաղցած—քա[խ]ցած, քաղց—քա[խ]ց, քաղցկեղ—քա[խ]ցկեղ, աղցան—ա[խ]ցան, քաղցու—քա[խ]ցու, դեղձ—դե[խց], դաղձ—դա[խց], դեղձանիկ—դե[խց]յանիկ և այլն:

Ղ-ն արտասանվում է [խ] շ-ից և [չ]-ի վերածված ջ-ից առաջ, օրինակ՝ գեղչ—գե[խչ], բաղչա—բա[խչ]ա, բողչա—բո[խչ]ա (բարբառային), աղջիկ—ա[խչ]իկ, ողջույն—ո[խչ]ույն, ամբողջ—ամբո[խչ], առողջ—առո[խչ] և այլն⁸²:

Ղ-ն արտասանվում է [խ] նաև փ, բ, ք շնչեղներինց առաջ, օրինակ՝ հղփանալ, հղփացում, փողփողել, գաղթ, գաղթել, հաղթանակ, անհաղթ, հաղթել, թուղթ, թղթակից, Աղթամար, շղթա, շղթայել, շղթայակապ, կողֆ, նեղֆ, նեղֆել, մեղֆ, աղֆատ, շողֆ, ֆաղֆենի, սանդուղֆ:

Այսպիսով, ղ-ն պ, ա, կ, փ, բ, ք և ց, չ հնչյուններից առաջ հնչվում է [խ]: Այստեղ մի ընդհանուր օրինաչափություն է նրկատվում. այն է՝ խ-ից հետո շնչեղ խույ հնչյունները արտասանվում են խույ: Այսպես՝ հղփանալ, հաղթել, գաղթել, թուղթ, շղթա, կողֆ, նեղֆ, մեղֆ բառերում փ, բ, ք-ն մեծ մասամբ արտասանվում են [պ], [տ], [կ]՝ հ[խպ]անալ, հա[խտ]ել, գա[խտ]ել, թու[խտ], շ[խտ]ա, կո[խկ], ճե[խկ], մե[խկ]:

Ղ-ն [խ] է հնչվում, նաև այն բառերում, որտեղ գրության մեջ ղը, ղգ, ղդ է (բացառությամբ շեղք, բողբոջ, կուղք, աղբյուս և օտարազգի բառերի, օրինակ՝ Բաղդատ և այլն): Ղը-ն արտասանվում է [խպ] աղբ, աղբյուր, եղբայր, ողբ, կողբ, Հաղբատ բառերում և հատուկ անուններում (ա[խպ]յուր, ա[խպ], ե[խպ]այր, ո[խպ], Կո[խպ], Հա[խպ]ատ), ղդ-ն արտասանվում է [խտ] խեղդել բառում՝ խե[խտ]ել և ղգ-ն՝ [խկ] շաղգամ բառում՝ շա[խկ]ամ:

Ղբ, ղդ, ղգ հնչյունագույնգործությունների [խպ], [խտ], [խկ] հնչյունը կարելի է բացատրել հետևյալ կերպ:

Ղ-ից հետո ձայնեղ բ, դ, գ-ն պատմական հնչյունափոխու-

82 19-րդ դարի վերջերին ղ-ն ջ, ն, չ, ձ, ծ, ց-ից առաջ կանոնավորապես արտասանվում էր [խ], ընդ որում՝ ձայնեղները ղ-ից հետո արտասանվում էին շնչեղ խույ, օրինակ՝ աղջիկ—ա[խչ]իկ, դեղձ—գե[խց]: Մ, ց, ն, չ հնչյուններից առաջ ղ-ն արտասանվում էր [խ], ինչպես՝ կեղծ—կե[խծ], քաղցր—քա[խցր], խիղճ—խի[խճ], գեղչել—գե[խչ]ել: Ներկայումս կեղծ, կեղծիք, ստեղծել, խիղճ, խղճալ, խեղճ, խեղճանալ, աղճատել, պղծել և ղն ու ղծ ունեցող այլ բառերը արտասանվում են ըստ գրության:

թյամբ վեր են ածվել փ, ք, ֆ-ի և կից հնչյունների ետագարձ առնմանությունը ղփ, ղք, ղֆ հնչյունագույնություններն էլ՝ խփ, խք, խֆ-ի։ Նախորդելով փ, ք, ֆ հնչյուններին, խ-ն որպես շունչ պարունակող հնչյուն կլանում է փ, ք, ֆ շնչեղների շունչը, վերածվելով պ, տ, կ-ի։ Եվ այդ պատճառով է, որ աղբյուր, աղբ, ողբ և այլ բառերն արտասանում ենք ոչ թե ա[խփ]յուր, ա[խփ], տ[խփ], ալլ՝ ա[խպ]յուր, ա[խպ], տ[խպ]։ Նույն սկզբունքով խեղդել-ը հնչում ենք ոչ թե խե[խթ]ել, ալլ՝ խե[խտ]ել, ջաղ-գամ-ը, ոչ թե շա[խթ]ամ, ալլ՝ շա[խկ]ամ, Վախթանգը՝ Վա[խտ]անգ և ալլն։ Ուրիշ խոսքով՝ խ-ից հետո փ, ք, ֆ-ն ավելի հեշտ է հնչել պ, տ, կ։ Նույն օրինաչափության հետևանքով է, որ թաղ-ֆել (թաղիք-ից) բառը ըստ արտասանության գրվել է թաղկել, և այժմ էլ գրության այդ ձևն է ընդունված։ Այս օրինաչափությունն է դիտվում, երբ խ և շնչեղ խուլ կամ երկու շնչեղ խուլ հնչյուններ հանդիպում են իրար։ Համեմատիք, օրինակ, երկուշաբթի, որ հաճախ հնչվում է երկուշա[փտ]ի (Հմմտ. նաև երկակի գրությունը՝ ախտարք—աղթարք «գուշակության աստղեր»)։

Ինչպես տեսնում ենք, այս կարգի բառերի արտասանության հարցում պատմական և համաժամանակյա հնչյունափոխական երևույթները հանդես են գալիս միաձուլված վիճակում։

Անհրաժեշտ է նաև նշել, որ ներկայումս ղ-ի [խ] արտասանությունը մի շարք դիրքերում փոքր-ինչ տատանվել է, տեղաշարժ է կատարել գրական արտասանության ուղղությամբ։ Նկատելի է, օրինակ, կողֆ, մեղֆ, խեղկատակ, մղկել, եղկելի, մեղկ, մեղֆ, փեղկ, բողկ, շաղկապ, մողկալի, մողկյուն և այս կարգի այլ բառերում խ հնչյունի տրոշ անհատակություն, այսինքն՝ ոչ թե որոշակիորեն արտասանվում է խ, այլ ղ-ի և խ-ի միջև մի անորոշ հնչյուն, որը ոչ խ է, ոչ էլ ղ։ Նկատվում է նաև, որ առհասարակ փոխազդեցական հնչյունական երևույթները զգալիորեն նվազել են, որը պայմանավորված է համընդհանուր գրագիտությամբ և ժողովրդի կրթական մակարդակի բարձրացմամբ։

Ձայնավորից հետո ղ-ն երբեմն արտասանվում է [խ], ինչպես՝ բեղ, բեղեռ, ցնցուղ, որը զուգահեռ է գրային հնչմանը։

Ք—կ

Ք-ն բառավերջում, որպես նախկին հոգնակերտ, հանդես է գալիս բոլոր հնչյուններից հետո, ինչպես՝ ալք, ոտք, ընթացք, խոսք, մեղք, վերք, դեպք, հումք, ալք, վազք և ալլն։ Ք-ն առա-

վել լիահունչ է ր, մ, ն, լ, յ ձայնորդներից հետո, օրինակ՝ վարք, սարք, կարգ[ֆ], բերք, հումք, հանք, վանք, քայլք, տիկնայք և այլն:

Գտնվելով իսկ կամ շունչ պարունակող հնչյուններից հետո, ֆ-ն հաճախ կորցնում է իր շնչայնության հատկանիշը և արտասանվում է կ, կամ կ-ին մոտեցող մի հնչյուն: Ք-ի կրած փոփոխությունը ավելի տրոշակի է արտահայտվում, երբ ֆ-ով վերջացող բառը թեքվում է, կամ նրան հաջորդում է ձայնավորով սկսվող որևէ բառ: Օրինակ՝ աչքեր—աչ[կ]եր, աչքի ընկնող—աչ[կ]ի ընկնող, խմիչքեղեն—խմիչ[կ]եղեն, ընթացքում—ընթաց[կ]ում, միջանցք—միջանց[կ], տղանցք—տղանց[կ], լվացքատուն—լվաց[կ]ատուն, մեղք է—մե[խկ] է, նախքան—նախ[կ]ան և այլն:

Երբ ֆ-ին նախորդում են խուլեր, մանավանդ ս, դարձյալ նկատելի է ֆ-ի շնչայնության նվազում, օրինակ՝ խոսք եմ տվել—խոս[ֆ]կ եմ տվել, պետք է—պետ[ֆ]կ է, ոտքեր—ոտ[ֆ]կեր, ասք—աս[ֆ]կ, այդ դեպքում—այդ դեպ[ֆ]կում, մտքիս—մտ[ֆ]կիս և այլն:

Իհարկե, չի կարելի պնդել, թե պարտադիր կերպով, միշտ և բոլորի կողմից ֆ-ն հիշյալ դիրքերում արտասանվում է կ: Սրանք պարզապես կենդանի լեզվում դրսևորվող հնչյունների հարմարակման երևույթներ են, որոնք ավելի բնորոշ են խոսակցական լեզվին և խնամքով արտասանության ժամանակ կարող են շարտահայտվել:

Բառավերջը ֆ-ի համար թույլ դիրք չէ, որովհետև կ-ի և ֆ-ի չեզոքացում տեղի չի տանում: Բազմաթիվ բառերում կ-ն և ֆ-ն որոշակիորեն արտասանվելով, հակադրվում են խլություն-շնչեղություն հատկանիշներով և պահպանում իրենց հնչույթային արժեքը, օրինակ՝ դուք, տաքիք, բարիք, ոչ ոք, հավաք և բարակ, շապիկ, բակ և այլն: Կան նաև նվազագույն հակադրություններ, օրինակ՝ տակ—տաք, բուկ—բուք, մուգ[ֆ]—մուկ և այլն: Սակայն ֆ-ի արտասանությունը բառավերջում ձայնավորներից հետո մի շարք դեպքերում կայուն չէ և տատանվում է ֆ-ի ու կ-ի միջև: Օրինակ՝ դիցուք—դիցու[կ], քամուք—քամու[կ], քսուք—քսու[կ], վարտիք—վարտի[կ], նավակատիք—նավակատի[կ], ծեծկռուք—ծեծկռու[կ], Միսաք—Միսա[կ], Տեխմաք—Տեխմա[կ], թանաք—թանա[կ], երդիկ—երդի[ք], հորիկ—հորի[ք],

քաշքշուկ—քաշքշուկ[ք], մարդիկ—մարդիկ[ք]⁸³, ընթացիկ—ընթացիկ[ք], վարակ—վարակ[ք], քաշկոտուկ—քաշկոտուկ[ք] և այլն: Նշված օրինակներում ք-ի և կ-ի փոխանցումներն ակնհայտ են. ք-ն կարող է արտասանվել [կ], կ-ն՝ [ք], և այդ է պատճառը, որ այս բառերի մեծ մասի ուղղագրությունը փոփոխվել է, և այժմ էլ մի շարք դեպքերում հաստատուն չէ, օրինակ՝ Միսաֆ—Միսակ, Տեխմաֆ—Տեխմակ, Ավետիֆ—Ավետիկ և այլն:

Բառավերջում ք-ի և կ-ի արտասանական տատանումներն իրենց արտացոլումն են գտնում դպրոցական գրավոր աշխատանքներում, ինչպես նաև երբեմն դրսևորում են բառերի ուղղագրության մեջ: Օրինակ, ոչնչով պատճառաբանված չէ ձեծկոտուֆ և քաշկոտուկ բառերում, մի դեպքում՝ ք, մյուսում՝ կ գրելը (ըստ ուղղագրական 1968 թ. բառարանի): Թերևս ճիշտ է կ-ով գրությունը:

Այնուհետև, նկատելի է, որ հրամայականի հոգնակի ձևերում, քառավերջի ք-ն հստակորեն հնչվելու փոխարեն երբեմն հնչվում է որպես [կ], կամ [կ]-ին մոտեցող մի հնչյուն, օրինակ՝ նաեֆֆ, նայեֆֆ, խոսեֆֆ և այլն:

Այս դեպքում ևս, ինչպես ասվեց վերևում, չի կարելի, անշուշտ, նշված երևույթը ընդհանրացնել, քանի որ դանդաղ, խնամքով արտասանված խոսքում այն կարող է երևան չգալ:

Բառավերջի ձկ կապակցությունը շնչեղանալով դառնում է [ցք]՝ ծածկ—ծա[ցք] և այնուհետև տարնմանությունը արտասանվում ծա[ցկ]: Դա լավ է երևում բառամիջում, օրինակ՝ ծա[ցկ]ել, ծա[ցկ]ոց, ծա[ցկ]ամիտ, ծա[ցկ]ալեզու և այլն: Սակայն ձկ-ի [ցկ] արտասանությունը հասարակայնորեն պարտադիր բնույթ չի կրում և ուղղախոսական նորմա չէ:

Բառավերջում, հոբնթաց առնմանությամբ պայմանավորված՝ ք-ին նախորդող ծ-ն արտասանվում է [ց], ինչպես՝ բացվածֆ, մանվածֆ, գրվածֆ, դառնվածֆ, գործվածֆ, նայվածֆ, փակվածֆ, վիժվածֆ, ֆայլվածֆ, ճեղգվածֆ, խոսվածֆ: Երբ ծֆ-ն ընկնում է բառամեջ, ինչպես՝ գործվածֆեղեն, մանվածֆեղեն և այլն, ապա ք-ի շնչայնությունը նվազում է և հաճախ արտասանվում է գրեթե [կ]՝ գործվա[ցկ]եղեն, մանվա[ցկ]եղեն և այլն:

⁸³ Այս ձևում ք արտասանությունը ավելի շուտ համաբանության արդյունք է. հմտ. ֆաղաֆացիֆ, գյուղացիֆ և այլն:

Վ տառը մի շարք բառերում, փոխառյալ և ոչ փոխառյալ, մեծ մասամբ ըստ հնչյունների հտադարձ առնմանության, երբեմն նաև ձայնափոփոխ հետո բառավերջում (և նույնը բառամիջում) արտասանվում է [ֆ], օրինակ՝ նավթ, նավթալին, ավտո, ավտոմատ, ավտոբուս, տերապետ, ֆարմացետ, եթովպիա, էվկալիպտ, Ավրանդիլ, Ավստրալիա, Եվստախյան, սերկեիլ, մուսավաթ, հաբավ, հաբավային, Աղստե:

Խոսակցական լեզվում երբեմն վ-ն [ֆ]-ին մոտ է հնչվում նաև այնպիսի բառերում, ինչպես՝ ովֆեր, որովհետև և հատկապես բառավերջում՝ փլավ, կտավ, ազնիվ, լրիվ, այնուամենայնիվ, նաև Վեգով, պրիմիտիվ և այլն: Վ-ն հաճախ [ֆ]-ին է մոտենում և թեքված ձևերում, ինչպես՝ գնալով—[գընալօֆ], բերելով—[բէրէլօֆ], նավակով—[նավակօֆ], ինչպես և՛ դարձա[ֆ], չորացա[ֆ], հագա[ֆ], եկա[ֆ] (դարձավ, չորացավ, հագավ, եկավ) և այլն: Այսպիսի հնչում է դիտվում նաև առմունքում: Սակայն, հնչական այսպիսի երևույթները ավելի շատ վերաբերում են կիրարկությանը, քան նորմային:

Նկատելի է նաև հակառակ երևույթը, այսինքն, երբ ֆ-ն է հնչվում [վ], ինչպես՝ պոբոֆել, ասֆալտ, սֆիեֆս, Աֆղանստան, Թիֆլիս, օֆսեթ և այլն:

Հնչյունական այսպիսի երևույթները, որոնք բնորոշ են խոսակցական լեզվին, արդյունք են հնչյունական շղթայում առաջացած հնչյունական հարմարակումների ու փոխազդեցության և երբեմն թափանցելով գրական լեզվի մեջ, հանդես են գալիս որպես արտասանական ազատ տարբերակներ:

Ս—Ձ

Բառավերջը, ինչպես նշվել է, ս և զ հնչյունների համար ուժեղ հնչյունադիրք է, որտեղ նրանք հակադրվում են ձայնեղություն-խլություն էական հատկանիշներով, օրինակ՝ մազ—մաս, կեզ—կես, հույզ—հույս:

Սակայն հայերենում նկատվում են ս-ի և զ-ի որոշ փոխանցումներ բառավերջում դեռևս հին շրջանից սկսած: Այսպես, օրինակ, գրաբարյան մոդեզ-ը դարձել է մոդես և հակառակը՝ ֆառտես-ը՝ ֆառտեզ, նարգես-ը՝ նարգիզ: Ասպարեզ բառն ունեցել է արտասանության վրա հիմնված ուղղագրական նաև ասպարես

տարբերակը: Բառարաններում տեղ են գտել անդալիս—անդալիզ, ուլիմաս—ուլիմագ և գուգահեռաբար ս-ով ու գ-ով գրվող այլ բառեր: Ներկա շրջանում մի շարք դեպքերում նկատելի է վերջինս-ի ձայնեղացում, որը բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին: Այսպես, օրինակ, Վարդգես անձնանունը շատերի կողմից արտասանվում է [Վառթկէզ]⁸⁴: Հատկապես օտար բառերի վերջինս-ն միտում ունի հնչվելու [զ], օրինակ՝ տրուխյութու[զ], սոու[զ], ավտոբու[զ], իշխա[զ], ֆոկու[զ], ատլա[զ], բի[զ], Թիֆլի[զ] և այլն, որը գրական արտասանության տեսակետից ընդունելի չէ:

Հայերեն գրական արտասանությունը պահանջում է բառավերջի գ-ն արտասանել [զ] և ս-ն՝ [ս], ինչպես՝ նարգի[զ], երա[զ], կակա[զ], Հայկա[զ], թու[զ], հույ[զ], պարտե[զ], դեվի[զ], ներո[զ] և՝ մողե[ս], հանդե[ս], ախո[ս], կերպա[ս], լույ[ս], գլոբու[ս], ատլա[ս], Եգիպտո[ս], ավտոբու[ս], տրուխյութու[ս], սոու[ս] և այլն:

Բառամիջում նույնպես գ-ն պետք է արտասանել [զ], ս-ն՝ [ս]: Սկիզբ, ազգ և այլն բառերում գ-ի՝ [ս] հնչումը հնացած է և գրական արտասանական նորմայի խախտում:

Որոշ բառերում, մեծ մասամբ օտար, ետրոնթաց առնմանությունավոր գ-ն և ս-ն կարող են հարմարվել հաջորդ հնչյունին ըստ ձայնային հատկանիշի, օրինակ՝ բազկաթոռ, վազ, մզկիթ, Հազկերտ, ազրեստ (հմմտ. азерб. азерб.) և այլն:

Բ—Ռ

Հայերենում բ-ն և ռ-ն, ի տարբերություն մի շարք օտար լեզուների, հանդես են գալիս որպես առանձին հնչյուններ, հակադրվելով բառամիջում (օր.՝ առու—արու) և բառավերջում (լուր—լուռ, ապար—ապառ, ոլոր—որոռ, վար—վառ): Բառասկիզբը բ-ի համար թույլ դիրք է, որովհետև այդ դիրքում նա գրեթե հանդես չի գալիս:

Բառամիջում, մի շարք բառերում, թեև գրվում է բ, բայց արտասանվում է զգալիորեն կոշտ, ու-ին հասնող մի հնչյուն, ինչպես՝ խարույկ, երեսուն, բարբառ, երկբարբառ, մամուռ, սարսուռ, մարմար, թրթուր, կաթկառել, մարտ (ամիս), պարտ, առջ, բարձ, վերջ, կարգալ, մարդ, լյարդ, փնտրել, որդ, առժաթ, ամպրոպ, առծիվ,

⁸⁴ Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում (օրինակ՝ Նոր Բայազետի, Կոտայքի) աղվես-ը արտասանվում է աղվեզ:

բեռդ, կրծել, ուրց, կարն, կրճատել, քրջել, դարդ, երդում, ֆուրդ, ուրդի և այլն, մեծ մասամբ առաջին շարքի խուլ և շնչեղ խուլ հնչյուններից առաջ: Սակայն այսպիսի արտասանությունը, որը բնորոշ է խոսակցական լեզվին, պարտադիր և հաստատուն բնույթ չի կրում, այդ պատճառով, անշուշտ, չի կարելի [ռ]-ով հնչումը համարել կանոնական և հանձնարարելի: Խոսակցական լեզվում երբեմն ռ-ն կարող է հնչվել [ր], օրինակ՝ պառկել—պար[ր]կել և այլն:

Հ-Ի ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հ հնչույթը հանդես է գալիս հայերենում և՛ բառակզբում, և՛ բառամիջում և բառավերջում (հայ, մահիճ, ահ): Հ-ն իր բնույթով շունչ է, հագագ և որպես այդպիսին կարող է հեշտությամբ ավելանալ և ընկնել որոշ դիրքերում: Այդ երևույթը առանձնապես տարածված է բարբառներում (հմմտ. ընկեր—[հ]ըն[գ]եր, ուսում—[հ]ուսում, առաջ—[հ]առաջ, ելնել—[հ]ելնել և հակառակը՝ հոնք—ոնք և այլն):

Ժամանակակից գրական հայերենին հատուկ է միայն ի հնչյունի անկման երևույթը, որը ավանդական արտասանություն է և հանդես է գալիս մի շարք բառերում (հատկապես Ի-ից հետո), ինչպես՝ ճանապարհ, աշխարհ, շնորհակալ, շնորհ, արհամարհել, անշնորհակալ, խոնարհ, խոնարհել, խոնարհում, ընդհակառակը, անընդհատ, խորհուրդ, ընդհանուր, աշխարհագրություն, ընդհարում, շնորհիվ, շնորհքով, Հովհաննես և այս արմատներով ու բառերով կազմված այլ բարդություններում:

Հ-ի անկում նկատվում է և կապակցություններում, օրինակ՝ տաս հատ, կարող է արտասանվել [տատատ], ութ հատ—[ութատ], չորս հարյուր—[չորսարյուր], ինձ համար—[ինցամար], յոթ հոգով—[յոթօքով] և այլն: Սակայն այսպիսի արտասանությունը գրական չէ, դրսևորվում է բացառապես խոսակցական լեզվում արագախոսության ժամանակ:

Ներկայումս, ի տարբերություն ավանդական հնչման, որը դեռևս ուժեղ է խոսակցական լեզվում, հ-ի արտասանության մեջ դիտվում է որոշ տեղաշարժ: Նկատելի է, որ այժմ խնամքով արտասանված խոսքում, մասնավորապես ընթերցման ժամանակ, հ-ն հաճախ պահպանվում է: Օրինակ՝ ավանդական՝ հ-ի անկումով շնորհել, շնորհում, շնորհվել, շնորհալի, ընդհատել, ընդհարում,

ընդհուպ, նաճապարհորդական, նաճապարհորդություն և այլն բառեր այժմ հաճախ արտասանվում են հ-ի պահպանությամբ: Այստեղ նորվյակես, անշուշտ, մեծ դեր է կատարում գրային արտասանության ընդհանուր միտումը: Այդ պատճառով հ-ի արտասանությունը համապատասխան բառերում նորմավորելիս՝ կանգնում ենք հաճախ մեծ դժվարությունների առաջ:

Հ-ի անկումով արտասանությունը առավել հաստատուն է աշխարհ, նաճապարհ և շնորհք բառերում, բայց ոչ այդ բառերով կազմված բոլոր բարդ և ածանցավոր, ինչպես և թեքված ձևերում: Օրինակ՝ նաճապարհորդ, նաճապարհորդական, նաճապարհորդություն, շնորհալի բառերում հ-ն որոշակիորեն արտասանվում է:

Այսպիսով, հ-ի անկումով արտասանությունը վերոհիշյալ կարգի բառերում ներկա փուլում չի կրում հասարակայնորեն պարտադիր բնույթ (բացառությամբ աշխարհ, նաճապարհ, շնորհք բառերի) և ունի տարբերակային նշանակություն:

Հ-ն պարտադիր կերպով արտասանվում է, երբ արմատի սկզբնատառ է, օրինակ՝ աճնատ, աճնասանելի, օճնասկան, վերհիշել, ներհասել, ոսկեհյուս և այլն, բացառությամբ ընդ նախդիրով կազմված բառերի, ինչպես՝ ընդհատել, ընդհատ, ընդհանուր, ընդհարում, ընդհատակյա և այլն, որոնցում հ-ի արտասանությունը նույնպես տատանվում է: Գերադասելի է գրային արտասանությունը:

Պ, Տ, Կ, Ծ, Ճ ԽՈՒՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Ն, Մ, Ր ԶԱՅՆՈՐԿՆԵՐԻՅ ՀԵՏՈ

Ն, մ, ր ձայնորդ հնչյուններից հետո պ, տ, կ, ծ, ն խուլերը, որպես կանոն, առանց բացառության, պետք է արտասանել ըստ գրության և ոչ ձայնեղ՝ [բ], [գ], [դ], [ձ], [ջ], ինչպես մի քանի տասնամյակ առաջ ընդունված էր գրական արտասանության մեջ որպես արտասանական ազատ տարբերակ, օրինակ՝ ճանճ—ճան[ջ], ամպ—ամ[բ], երկիր—եր[գ]իր, ընկեր—ըն[գ]եր, ընծա—ըն[ձ]ա, վանկ—վան[գ] և այլն: Այսպիսի երկակի արտասանության պահպանմանը նպաստում էին ուղղագրական երկգրությունները, որոնք 20-ական թվականներին մեծ թիվ էին կազմում: Ուղղագրության կանոնավորման հիման վրա աստիճանաբար կանոնավորվեց և գրեթե միօրինակ դարձավ այս կարգի բառերի նաև արտասանությունը:

Ներկայումս ձայնեղացած արտասանությունը, առանց բացատրության, պետք է դիտել ուղղախոսական շեղում (օր.՝ ըն[գ]նել, եր[գ]ար և այլն):

Այնպիսի բառեր, ինչպես՝ բնկեր, բնկերական, բնկեել, բանտ, բանտապան, միջանկյալ, անկելանոց, բնտիր, բնծայել, նաննասպան, խունկ, խնկարկել, ծունկ, ծնկաշոք, կոունկ, ցանկապատ, կննիթ, կննիռ, ցնծալ, ցնծություն, կենտրոն, կենտրոնական, նանկ, նանկել, թունկ, տնկել, բնտանիք, նենն, ամպամած, բմպել, երկար, երկարացնել, հարկավոր, չորսհարկանի, բարկանալ, որտեղ, որտեղից և այլն, ըստ գրական արտասանական նորմայի պահանջվում է հնչել գրությունը համապատասխան:

Հայերենում ն, մ, ր ձայնորդներից հետո կարող են լինել և՛ խուլեր (պ, տ, կ, ծ, ն), և՛ ձայնեղներ (բ, դ, գ, ձ, ջ): Երկու դեպքում էլ հնչումը ըստ գրության է, ինչպես, օրինակ՝ ումպ, ամպ, բնծա, կննիթ, ցանկ, և՛ թումբ, խումբ, գունդ, գանգ, հանգ, բնծուլտ, խնջույք:

ՈՒՅԺ, ՈՒՅՇ, ՈՒՅԾ ՎԵՐՋԱՅՈՂ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից գրական հայերենում այսպիսի բառավերջ ունեն ոչ մեծ թվով բառեր, ինչպես՝ աշխույժ, զգույշ, տույժ, գույժ. հույժ, վիրաբույժ, անասնաբույժ (և բույժ-ով վերջացող մի շարք այլ բառեր), անդամալույժ, բանջարաբույժ, մեղվաբույժ, անասնաբույժ և այլն⁸⁵, որոնք ժողովրդական արտասանության աղդեցությունը հնչվում են նաև առանց յ-ի: Դա հատկապես ակնհայտ է աշխույժ, զգույշ, տույժ բառերում: Խոսակցական լեզվից այդպիսի արտասանությունը հաճախ թափանցում է և գրական լեզվի մեջ, հանդես գալով որպես տարբերակ: Նախապատվությունը տալով յ-ով արտասանությանը, որը պահպանվում է բարձր ուճում, ուսուցման ժամանակ և այլն, նշված բառերի առանց յ-ի [զգուշ], [տուժ], [աշխուժ] արտասանությունը հանդես է գալիս որպես գրական արտասանական ազատ տարբերակ:

⁸⁵ Ոչ հեռավոր անցյալում այս խմբի մեջ էին մտնում նաև անույշ, ույժ բառերը, որոնք ըստ արտասանության գրվեցին առանց յ-ի:

Մ, Ն ՌՆԳԱՅԻՆՆԵՐԻ ԱՐՏԱՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ Բ, Պ, Փ, Դ, Տ, Ք
ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Հայերենում, որպես կանոն, բ, պ, փ շրթնայիններից առաջ կարող է լինել մ և դ, տ, ք առամնային պայթականներից առաջ՝ ն:

Բացառություն են կազմում աճ նախածանցով կազմված և այն բարդ բառերը, որոնցում երկու ձևությունների սահմանագծում կարող են հանդիպել նաև ն և շրթնային բ, պ, փ, ինչպես՝ աճբիծ, աճպեմ, աճփոխարինելի, աճպատասխան, աճբան, աճբասիր աճփույթ, բանբեր, դոճբաց, դոճփակ, ձեռնբաց, ֆինպլան և հակառակը՝ համետն և այլն:

Շրթնայնությունը և առամնայնությունը ոնգային մ, ն հրնայնների համար այն միակ տարբերակիչ հատկանիշն է, որով նրանք տարբերվում են մեկը մյուսից, հակադրվելով մի շարք դիրքերում, բացառությամբ այն դիրքի, երբ նրանք գտնվում են բ, պ, փ և դ, տ, ք պայթականներից առաջ: Այս դիրքը մ-ի և ն-ի համար թույլ հնչյունադիրք է, քանի որ այստեղ մ-ն և ն-ն չեն հակադրվում ըստ արտասանության տեղի և չեն տարբերակվում, գտնվելով համապատասխան առամնային և շրթնային պայթականներից առաջ: Այդ պատճառով բ, պ, փ-ից առաջ հանդիպում է միայն մ և դ, տ, ք-ից առաջ՝ ն, օրինակ՝ սմբակ, բամբակ, Սմբատ, շամբուտ, շամբ, կշտամբել, ամբողջ, ամբոխ, ըմբռնել, գմբեթ, պատշգամբ, համբակ, դամբարան, ամբար, ամբարձիչ, ամբարիշտ, ամբարտավան, ակումբ, ամբիոն, ամպ, համբուրել, ըմպել, ումպ, ամպրոպ, թումբ, թամբ, բամբասել, ամբաստանել, ամփոփել, գամփո, համփա, համբար, կաղամբ, ծծումբ, ռումբ և մյուս կողմից՝ անդամ, անդադարձ, հանդ, հանդիպել, անդոր, կաղանդ, Անդրանիկ, անդունդ, անդուլ, անթեղ, հանդարտ և այլն⁸⁶:

Ռուսերենում (եվրոպական այլ լեզուներում ևս) որպես կանոն կարող են լինել միայն մբ, մպ, նտ, նդ զուգորդումներ, այդ պատճառով փոխառչալ բառերը հայերենում նույնպես այդ օրինակափոխությամբ են հանդես գալիս, ինչպես, օրինակ՝ ամպեր, կոմ-

86 Այս օրինակափոխությունը հայերենում աչքի են հասնում և և այնքան ուժեղ է արտահայտվել, որ դեռևս պարսկերենից կատարված մի շարք փոփոխություններում, ինչպես՝ ամբոխ, ամբար, ամբարիշտ, ամբարտավան, խմբակ, սմբակ, սմբուլ, գամբուլ, բմբուլ և այլն, պարսկերենի բ-ին նախորդող ն-ն հայերենում վեր է ածվել մ-ի: Հիշեցնենք նաև, որ գործիականի մբ վերջավորությունը այդ սկզբունքով առաջացել է նբ-ից, օրինակ՝ աշուն—աշամբ: Համեմատոր նաև՝ ընդունել, ըմբռնել, Ամբերգ, Ամբերդ և այլն:

պոտ, տամպոն, ամպուլա, լամպ, շիմպանզե, իմպորտ, էմբլեմա, շամպայն, կոմպլեքս, կոմբայն և՛ ագենտ, անտագոնիզմ, անտե-նա, սնտրակտ, դեսանտ, ստենդ, բանդա, բլինդաժ, արոնեմենտ և այլն: Կան փոքրաթիվ բացառություններ, օրինակ՝ էֆապրոմտ, Դուշաբե:

Այսպիսով, ատամնային և շրթնային պայթեցականներից առաջ (դ, տ, բ, բ, պ, փ) տեղի է տնենում ռնգային մ, և հնչույթների շեղորացում, որն արտահայտվում է մեկ ընդհանուր թույլ հնչույթով: Դա շրթնայինից առաջ արտահայտվում է մ-ով, ատամնա-յինից առաջ՝ ն-ով:

Այն բառերում, որոնցում բառակազմության պատճառով երկու ձևույթների սահմանում իրար են հանդիպում և և բ, պ, փ, լեզվի ներքին օրինաչափությամբ, այսինքն՝ շրթնայինից առաջ շրթնա-յին արտասանելու ներքին մղումով, և-ն մոտենում է մ-ին, ինչ-պես՝ անբիծ, անպետք, անփորձ, անպարտելի, անպայման, նաև՝ Մոնբլան, մոնպաս(իե), Մենփիս և այլն:

Այսպիսով, եթե հայերեն գրական լեզվի համար օրինաչափա-կան է պայթական ատամնայիններից (դ, տ, թ) առաջ ռնգային ատամնայինի և շրթնայիններից (բ, պ, փ) առաջ շրթնայինի ար-տասանությունը, ապա ժողովրդախոսակցական լեզվում տարնմա-նության պատճառով տարածված է նաև շրթնայիններից առաջ և ատամնայինի հնչումը: Այս երևույթի առաջացման հիմնական պատճառը այն է, որ շրթնային պայթականներից առաջ (բ, պ, փ) մ, և ռնգայինների շրթնայնության և ատամնայնության հատկա-նիշները էական չեն, այսինքն՝ հնչույթաբանական տեսակետից տվյալ դիրքում այդ հատկանիշները որևէ դեր չեն կատարում (ի-մաստազատիչ նշանակություն չունեն), այդ պատճառով հաճախ խոսակցական լեզվում տեղի է ունենում տարնմանում ըստ հնչյուն-ների արտաբերման տեղի, ինչպես, օրինակ՝ Սմբատ—Ս[ն]բատ, շամբուտ—շա[ն]բուտ, ամբողջ—ա[ն]բողջ, բամբակ—բա[ն]-բակ, ամփոփել—ա[ն]փոփել, ճամբար—ճա[ն]բար, խումբ—խու[ն]բ, ամբիղն—ա[ն]բիղն և այլն: Այս երևույթը առկա է և օտար բառերում, օրինակ՝ լամպ—լա[ն]պ, ջեմպեր—ջե[ն]պեր, կոմպոտ—կո[ն]պոտ, կոմբայն—կո[ն]բայն, կոմբիկորմ—կո[ն]-բիկորմ, Տամբուլ—Տա[ն]բուլ և այլն⁸⁷:

87 Տարնմանությամբ պայմանավորված՝ արտասանական այսպիսի շեղումները բավականաչափ տարածված են և ուղղագրական սխալների մեջ զգալի տեղ են զը-րավում, երբեմն սպրդելով նաև գրականության մեջ:

Հետաքրքրական է այս իմաստով անբիծ բառի գրություն պատմությունը, որտեղ շատ լավ դրսևորվում է շրթնայինների՝ ռնգային մ և ն հնչյունների հետ ունեցած փոխհարաբերությունը։ Այս բառը սկզբում ունեցել է անբիծ գրությունը՝ հիմնված կաղմության վրա։ Այնուհետև, շրթնային պայթականից առաջ շրթնային ռնգական ունենալու օրինաչափությունից մղված՝ բառը արտասանվել է ամբիծ, որն իր արտացոլումն է գտել նաև ուղղագրության մեջ դեռևս գրաբարի հին ձեռագրերում։ Երկար ժամանակ, մինչև 20-րդ դարի սկզբները, կիրառվում էին այս բառի գրության երկու տարբերակները՝ անբիծ և ամբիծ՝ ըստ կաղմության և ըստ արտասանության։ Այնուհետև ամբիծ ձևը տարնմանության հետեւանքով նորից դառնում է անբիծ, ինչպես այժմ ընդունված է գրել, սակայն բ-ից առաջ մ արտասանելու լեզվի ներքին մղմամբ՝ հաճախ նորից հնչվում է ամբիծ։

Ն-ի և մ-ի որոշ չեզոքացում է դիտվում նաև շրթնատամային վ և ֆ հնչյուններից առաջ (այս զուգորդումները հանդիպում են գերազանցապես օտարազգի բառերում), որը ավելի ցայտուն է խոսակցական լեզվում։ Մվ-ն և մֆ-ն տարնմանությամբ հաճախ հնչվում են [նվ] և [նֆ], օրինակ՝ Սամվել—Սա[ն]վել, տրամվայ—տրա[ն]վայ, սիմֆոնիա—սի[ն]ֆոնիա, ամֆիթատրոն—ա[ն]ֆիթատրոն և հակառակը՝ նվ, նֆ-ն [մվ], [մֆ], օրինակ՝ Պանֆիլով—Պա[մ]ֆիլով, անֆաս—ա[մ]ֆաս, կոնֆիսկացիա—կո[մ]ֆիսկացիա, կոնվեյեր—կո[մ]վեյեր, ինվերսիա—ի[մ]վերսիա և այլն։

ԶԱՅՆԵՂ ԵՎ ԽՈՒԼ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ս-ԻՅ, Շ-ԻՅ ԱՌԱՋ ԵՎ ՀԵԶՅՈՒՆԱԿԱՆ ԱՅԼ

ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենում ձայնեղ և խուլ պայթականները ս, շ խուլ շփականներից առաջ արտասանվում են որպես շնչեղ խուլեր։

Իս, գս, դս զուգորդումները հայերենում հանդիպում են օտարազգի բառերում, բացառությամբ ս ձևույթով կաղմված մեկ-երկու բառի, ինչպես՝ ճոգս, զուգս, որոնք ենթարկվելով նույն օրինաչափությանը, հնչվում են հո[բ]ս, զո[բ]ս։ Եթե այս բառերի արտասանությունը վերագրենք ձայնավորներից հետո գ-ի կրած փոփոխությանը (օր.՝ հոգալ—հո[բ]ալ, հազուստ—հա[բ]ուստ և այլն), ինչպես սովորաբար արվում է, ապա կմնան միայն օտար

բառերը (կամ արմատները), որոնցում բս, գս, դս զուգորդումները հնչվում են մոտավորապես [փս], [քս], [թս]: Բերենք այդպիսի բառերի և հատուկ անունների մի շարք օրինակներ:

Բս զուգորդությամբ՝ արսուրդ, արստրակտ, արստրահել, արստրահում, օբսերվատորիա, արսենտ, արսիդ, արսցես, արսուլ-յուտիզմ, Իրսեն, Հոքս, Հաբսբուրգ, Վիսեբսկ, Գոբսեկ և այլն, որոնցում բ-ն ա-ից առաջ գտնվելով, խլանում է և հնչվում [փ], կամ [փի]-ին մոտ մի հնչյուն:

Դս զուգորդությամբ՝ Բրիգս, Ֆրինգստոն, զագս (հմատ նաև՝ հոգս, զուգս): Այս դիրքում, ա-ից առաջ, գ-ն հնչվում է [ք]:

Դս զուգորդության մեջ դ-ն կից ա-ի ազդեցությամբ արտասանվում է [թ], կամ [թի]-ին մոտ մի հնչյուն, օրինակ՝ Հուլսոն, Լինդսեյ, Լիդս: Դս-ն վերածվելով [թս]-ի, հաջորդող բաղաձայնի առկայության դեպքում կարող է հնչվել [ց], ինչպես՝ Բրոդսկի—Բրո[ց]կի, Կիսլովոգսկ—Կիսլովո[ց]կ, Ժելեզնովոգսկ—Ժելեզնովո[ց]կ և այլն: Այս նույն հիմունքով է, որ քս հնչյունները վաքսոն, ուքսոն բառերում արտասանվում են [ց]՝ վա[ց]ոն, ու[ց]ոն⁸⁸:

Բս, գս, դս հնչյուններին երրորդ բաղաձայնը հաջորդելու դեպքում, որպես անկապակցելի հնչյուններ, հիշյալ զուգորդումները կամ պետք է հնչվեն զաղտնավանկով՝ Հաբ[ը]սբուրգ, Ֆրինգ[ը]ստոն, Կիսլովոգ[ը]սկ և այլն, կամ բ, գ, դ հնչյունների՝ շնչեղ խուլ արտասանությամբ, որը հնարավոր է դարձնում ա-ի հետ կապակցված արտասանությունը:

Պս, կս, տս հնչյունազուգորդումները արտասանվում են պ, կ, տ-ի շնչեղացմամբ՝ [փս], [քս], [թս], որոնք դարձյալ հանդիպում են օտար բառերում, ինչպես՝ պսիխոզ, ռապսոդիա, սոլիսիզմ, կապսուլ, էլիպս, էլիպսաձև, գիպս, գիպսից, Կուպսկայա, Թուպսոն, Մոկս, Ակսելրոդ, Ակսակով, Բեսսի և այլն⁸⁹: Սպորտսմեն, Յակուտսկ, Իրկուտսկ, «Սովետսկի Սոյուզ» և օտարազգի այլ բառերում տս-ն արտասանվում է [ց], որը նույնպես բացատրվում է կից հնչյունների փոխադարձաբար հարմարվելու

88 Թս-ի [ց] հնչյունը պարտադիր բնույթ չի կրում, օրինակ՝ կաքսա բառում բս-ն փոփոխության չի ենթարկվում:

89 Պ-ն և տ-ն ա-ից առաջ ապստամբություն, պատսպարվել բառերում շնչեղանում, որովհետև պս, տս հնչյունների միջև արտասանվում է ք՝ ապ[ը]ստամբություն, պատ[ը]սպարվել: Եթե այս բառերը փորձենք արտասանել առանց զաղտնավանկի, ապա պ-ն և տ-ն պետք է անպայմանորեն շնչեղացնենք:

հանգամանքով: Այս դեպքում պայթականների (տ, ք) դարձը (քե-կուրսիան) փոխարինվում է շփականի (ս) ելքով (էքսկուրսիա), որից ստացվում է կիսապայթական [ց]⁹⁰:

Ս-ից առաջ կ-ի [բ] հնչումը այնքան տրոշակի է տւ պարզ, որ այդ, որպես ընդհանուր կանոն, պետք է տարածել բոլոր նման դեպքերի վրա: Այդ պատճառով օտար բառերի x-ն և ks-ն հայերեն կանոնավորապես տառադարձվում են fu-ով՝ էփսուրսիա, ֆոստրոտ, էփալրոմտ, տաֆսի, էփտրակտ, մաֆսիմում, Մեֆսիկա, Շեֆսպիր, Ֆելիֆա, Մաբֆա, կեֆա, կոֆա և այլն:

Հայերենին առհասարակ հատուկ չեն պայթականի և ս-ի գուգորդումները՝ քս, գս, դս, պս, կս, տս, փս, ֆս, քս: Քս-ն հանդիպում է բառավերջում միջին և նոր շրջանի փոխառություններում (մետաքս, ստամոքս, փուքս, դուքս և այլն):

Պայթականների և շ-ի գուգորդումները ավելի հազվադեպ են: Հայերեն բառերում դրանք մեծ մասամբ հանդիպում են հնչյունի սղոմով կազմված ձևերում, երկու ձևույթների սահմանագծում (բարդության և ածանցման ժամանակ) և հապավումներում, օրինակ՝ բմբշամարտ, աբբշիո, պագշոտ, ապշել, պատշան, հինգշաբթի, բնակչիկնոպ և այլն, որոնցում պայթականները (ձայնեղները վերածվելով խուլի) շ-ից առաջ հնչվում են զգալիորեն շնչեղացած: Նույն ձևով են հնչվում և օտար բառերը, ինչպես՝ լապշա, փկշա, Հյուբշման: Այդ հիմունքով, օրինակ, նախապես բ-ով գրվող խաբշիկ բառը այժմ ըստ հնչման գրվում է խափշիկ:

Զգալիորեն շնչեղացած են հնչվում կ-ն և պ-ն տ-ից առաջ, օրինակ՝ ակտ, տրակտոր, ակտավորել, էլեկտրական, կոմպլեկտ, բակտերիա, էփտրակտ, նեկտար, հուպ տալ, ապտակ, սեպտեմբեր, կապապվուն, բապտիստ և այլն:

S-ի որոշ շնչեղացում է նկատվում կ-ից առաջ, ինչպես՝ պատկեր, պատկոմ, պատկերավոր, պատկանել, պատկանելություն, պատկառանք, պատկառել, սատկել, սատկած, շտկել, գտկատեղ, հատկացնել, հատկություն, ծակառկեն, մարտկոց և այլն:

90 Ս-ից առաջ պայթականների շնչեղացումը հայերենին չէ միայն հատուկ, այլ վերաբերում է նաև որիշ լեզուների, օրինակ, ռուս. абсурд, Аксаков, Алексей, советский և այլն, բայց հայերենում այդպիսի հնչումը ավելի որոշակի է, քանի որ հայերենում փ, բ, ք-ն հանդես են գալիս որպես հնչույթներ: Այդ հիմունքով Каутский ազգանունը ըստ հնչման հայերեն տառադարձվում է Կաուցկի, որ մյուս նմանատիպ բառերի և ազգանունների մեջ բացառություն է (հմտ. Վիսառսկի, Ռեֆորմատսկի, Բոգոսկի, սպորտսմեն, «Սովետսկի Սոյուզ»): Նպատակահարմար է պահպանել միասնական գրություն ըստ սկզբնաղբյուր լեզվի:

Կ-ից առաջ նկատվում է նաև ձայնեղների խլացում և շնչեղացում, օրինակ՝ հնդկահավ, հնդկական (հմմտ. հնդկ), ծննդկան, գեղջկական, գեղջիումի (հմմտ. ծնունդ, գեղջուկ), խաբկանք (խաբկանք օրինակը տիպական չէ, որովհետև կա խա[փ]ել ձևը), Առաքկիւր, բմբկահաւ, անձկալի (հմմտ. թմբուկ, անձուկ), նաև օտար բառերում, օրինակ՝ կիրկենխտ, յուրկա: Վերոհիշյալ բառերում շնչեղացման պատճառը երկու տարօրգան պայթականների հանդիպման ժամանակ նախորդող հնչյունի արտաբերության թուլացումն է, որը և պատճառ է դառնում որոշ շնչի հավելման: Բայց գե՛ն անձնանունը արտասանվում է [Բափկէն], որտեղ Կ-ի վերածված Գ-ից առաջ Բ-ն շնչեղանալով հնչվում է [փ]:

Արտասանական շղթայում կից հնչյունները իրար հարմարվելու պատճառով ձեռք են բերում արտասանական նոր առանձնահատկություններ կամ հնչական նոր որակ: Հնչյունների փոխազդեցության դեպքերը ավելի շատ դիտվում են խոսակցական լեզվում, հատկապես ազատ, անփույթ և արագ արտասանության ժամանակ, մինչդեռ դանդաղ, խնամքով արտասանված խոսքում այդպիսի ազդեցությունները ավելի քիչ են դրսևորվում: Խոսակցական լեզվից հնչյունական փոխազդեցության որոշ երևույթներ թափանցում են գրական լեզվի մեջ և վերածվում արտասանական նորմայի:

Հնչյունների փոխազդեցությունների մեջ ամենից ավելի տարածված է առնմանության երևույթը, ընդ որում՝ հաջորդ հնչյունների ազդեցությունը նախորդի վրա, այսինքն՝ ետընթաց առնմանումը:

Այդպիսի ազդեցության հետևանք է, օրինակ, Ղ-ի կրած փոփոխությունը խուլ պայթականներից և կիսապայթականներից առաջ (օր.՝ պղտոր—պ[խ]տոր, հղկել—հ[խ]կել և այլն), կամ Վ-ի խլացած արտասանությունը ճավթ, հավկիթ, հեֆ, հավֆ, ավշային բառերում:

Հայերենում սովորաբար ձայնեղ հնչյուններին հաջորդում են ձայնեղներ և խուլներին՝ խուլ կամ շնչեղ խուլ հնչյուններ, այն դեպքերում, երբ երկու բաղաձայնների միջև որևէ ձայնավոր չի սղվել կամ բաղաձայնները չեն հանդիպել բառաբարդման կամ ածանցման պատճառով, օրինակ՝ ազգ, ազդ, զգաստ, զգույշ, ածղահա, նծղեհ, նշտար, սկիզբ, զբաղվել, զգեստ և իշխել, աշխարհ, թշնամի, սկսել, աշխույժ, սպիտակ, շտապ, ախտ, հասկ, հաստ, աստղ

և այլն⁹¹։ Բացառություն են կազմում նշդարենի, նշգրիտ / և պատշգամբ⁹² բառերը, ընդ որում՝ սրանք երբեմն արտասանվում են նշ[տ]արենի, ճ[ժ]գրիտ, պատ[ժ]գամբ։

Այն դեպքում, երբ ձայնավորի սղման, բառաբարդման վաստանցման պատճառով առաջանում է խուլ և ձայնեղ բաղաձայների զուգորդում, ապա դրանք հաճախ հարմարվում են մեկը մյուսին, ընդ որում, ինչպես նշվեց, մեծ մասամբ հաջորդ հնչյունն է ազդում նախորդի վրա և նմանեցնում իրեն։ Օրինակ՝ հետզհետե, վզկապ, համոզկեր, մարգպան, մարզկոմ, պարտիզպան, բազկատարած, բազկաթոռ, հուժկու, ժուժկալ, վազֆ, ֆաջֆ, հալֆ, շուրջպար, դժխեմ, դժկամ, գաբժիլ, ձգետել, գժետել, օժետել բառերում հաջորդ հնչյունների առնմանությունը նախորդ հնչյունը զգալիորեն խլանում է, և մենք այս բառերն արտասանում ենք մոտավորապես հետ[ս]հետե, պ[ս]կապ, համո[ս]կեր, մար[ս]պան, մար[ս]կոմ, պարտի[ս]պան, բա[ս]կատարած, բա[ս]կաթոռ, հու[շ]կու, ժու[շ]կալ, վա[ս]ք, փա[շ]ք, հա[ֆ]ք, շուր[շ]պար, դ[շ]խեմ, դ[շ]կամ, գա[փ]ժիլ, գ[շ]տել, օ[շ]տել, ծ[ք]տել⁹³։ Համեմատիր նաև՝ շրջսովետ, շրջկենտրոն, որոնցում ջ-ն խլանում է և՛ շրջան, շրջվել, շրջմուխկ և այլն, տրտեղ ջ-ն չի փոխվում, կամ՝ կեսբերան, կեսգիշեր, որոնք կարող են արտասանվել կե[զ]բերան, կե[զ]գիշեր և այլն։

Այդ հիմունքով է, որ գրաբարյան զ նախդիրը խուլ բաղաձայններից առաջ վերածվել է ս-ի, օրինակ՝ սփռել, սփռվել և այլն։

Օտար բառերը ևս հայերենում ենթարկվում են այդ օրինաչափությանը։ Հազկեռո, ֆիզկուլտուրա բառերում կ-ի ազդեցությանը նախորդ զ-ն արտասանվում է [ս], կամ [ս]-ին մոտ մի հնչյուն՝ Հա[ս]կերտ, ֆի[ս]կուլտուրա. արխազ, արխազերեն, Արխազիա՝ արտասանվում են ա[փ]խազ, ա[փ]խազերեն, Ա[փ]խազիա. էկզեմա, էկզեկուցիա, էկզոտիկա, ասքեստ, ֆոսքեն, մզկիթ, Բեկզադյան, Սապոժկով. Դուգոմիժսկի, հեկզամետր, ավ-

91 Տե՛ս Ա. Այտրեյան, նշվ. աշխ., էջ 343; Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը, էջ 15—16 և այլն։

92 Պատշգամբ բառը հայ մատենագրության մեջ ավանդված է մի քանի գրություններով, ինչպես՝ պատշգամ, պատշկամ, պատշգամբ, պատշկամբ, պաշտգամ, պաշտկամբ (Հ. Աճառյան, Լիակառնար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 629)։

93 Դժխեմ և դշխո բառերի գրությունը ներկայումս հակասական է, թեև պատմականորեն հիշատակվում է։

տո, թերապետ, էվկալիպտ, նոկդաուն, Յան ժիժկա, Քյոնիգսբերգ բառերը և հատուկ անունները դարձյալ ետրոսթաց առնմանությամբ հնչվում են է[զ]զեմա, է[զ]զեկուցիա, է[զ]զոտիկա, ա[զ]բեստ⁹⁴, Ֆո[զ]զեն, մ[ս]կիթ, Բե[զ]զադյան, Սապո[շ]կով, Դորգոմի[շ]-սկի, հե[զ]զամետր, ա[ֆ]տո, թերապե[ֆ]տ, է[ֆ]կալիպտ, նո[զ]դաուն, Յան ժի[շ]կա, Քյոնիգ[զ]բերգ և այլն:

Ձայնային հատկանիշով հակադիր հնչյունների զուգորդումը հայերենին առհասարակ հատուկ չէ, և այդպիսի հանդիպումներ, ինչպես ասացինք, առաջացել են ձայնավորի սղման, բառաբարդման, ածանցման ժամանակ: Բացի այդ, այս հարցում որոշ դեր է կատարում նաև գաղտնավանկային [ը]-ն, որն անմիջապես տեղ է գտնում այն զուգորդումներում, որտեղ հնչական խոչընդոտ կամ դժվարություն կա: Օրինակ՝ ըմբշամառա բառում շ-ին նախորդող ք-ն եթե շնչեղ խուլ չի արտասանվում, ապա քշ հնչյունների միջև հնչվում է ը՝ ըմբ[ը]շամառա:

Հնչյունների այս կարգի փոխազդեցությունը երբեմն դրսևորվում է բառակապակցության մեջ, այսինքն, երբ հաջորդ բառի առաջին հնչյունի ազդեցությամբ նախորդ բառի վերջին հնչյունը ենթարկվում է առնմանության, օրինակ՝ ուժ տալ արտասանվում է ու[շ] տալ, բայց՝ ուժը պակաս՝ ու[ժ]ը պակաս: Ձայնավորից առաջ բաղաձայններն իրենց հատկությունները պահպանում են:

Սակայն ձայնեղների և խուլերի առնմանությունները հայերենում կանոնական բնույթ չեն կրում⁹⁵, այնպես, ինչպես, ասենք, դա արտահայտվում է ուսերենում: Ռուսերենում, որպես կանոն, նախորդող ձայնեղ և խուլ հնչյունները հաջորդող հնչյունների ազդեցությամբ (ետադարձ առնմանությամբ) ըստ ձայնեղության կամ խլության նմանվում են (օր.՝ лодка արտասանվում է лот[т]ка, сделать — [з]делать և այլն):

Հնչյունների փոխազդեցությունները որոշ չափով պայմանավորված են և բառի ձևաբանական կազմով: Օրինակ, նկատելի է, որ երկու ձևույթների (մանավանդ՝ հիմնական) սահմանագծում դրանք ավելի թույլ են արտահայտվում, քան ձևույթի ներսում:

Հնչյունների փոխազդեցությունը ըստ ձայնային հատկանիշի հայերենում կարիք չունի հանգամանալից ուսումնասիրության:

94 Այժմ գրվում է ազբեստ:

95 Հմմտ. երկաթբետոն, մե[շ]բերում, չախջախել, պատժել, պողաբեր և այլն, որոնցում հնչյունների փոխազդեցություն տեղի չի ունենում:

Ժամանակակից գրական հայերենում բաղաձայնների անկում տեղի է ունենում շատ հազվագեղ, ինչպես հայերեն, այնպես էլ օտար բառերում: Բաղաձայնը հայերենում կարող է ընկնել այն բացառիկ դեպքերում, երբ բառաբարդման, ձայնավորների սղման կամ հապավման պատճառով առաջանում են այնպիսի հնչյունազուգորդումներ, որոնց կից արտասանությունը տվյալ հնչյունների արտասանական առանձնահատկությունների պատճառով խիստ դժվարանում է:

Այդ դժվարությունը առաջանում է, հատկապես, երբ իրար են հանդիպում լծորդ կամ արտասանության նույն տեղն ունեցող հնչյուններ: Օրինակ, ռալեսզի բառը, որտեղ ա-ն և զ-ն արտաբերության միևնույն տեղն ունեն, զ-ի անկումով արտասանվում է [վօրպէսի], կամ զ-ի անկումով՝ [վօրպէզի]: Կա նաև զ-ի տեական արտասանությամբ [վօրպէզզի] տարբերակը: [վօրպէզի] ձևը ներկայումս մեծ տարածում է ստացել, ավելի ցայտուն կերպով տարբերակվելով ռալիսի բառից, որը և պետք է կանոնական համարել: Նրափշտություն բառը կամ ծ-ի անկումով արտասանվում է երա[շ]տություն, կամ ժշ՝ նույնօրգան հնչյունների միջև կազմվում է գաղտնավանկ՝ երաժ[ը]շտություն: Արտասանական նորմային համապատասխանում է վերջինը. [յէրաշտություն] հնչումը հատուկ է ավելի շատ խոսակցական լեզվին:

Աշխղեկ հապավված բառում իրար են զուգորդում շխղ հընչյունները: Շխ-ն թեև բառավերջում կապակցելի է, օրինակ՝ լուսաշխ, պետաշխ, ճամբրաշխ, աննոդաբաշխ, բայց բառամիջում՝ վանկավերջում, շխ-ն հանդես է գալիս որպես անկապակցելի զուգորդություն: Մյուս կողմից՝ նույնօրգան խ և ղ հնչյունների կից արտասանությունն է դժվարանում, որը և պատճառ է դառնում խ-ի անկման, և բառն արտասանվում է [աշղէկ]:

Դժվարությամբ են արտասանվում, օրինակ, վաթթաւ, պատնեն, պատճառ, մատչելի, Մկրտչյան, անպատճառ, այդտեղ բառերում տթ, տն, տշ, դտ [տտ] կից հնչյունները, որոնցում ա-ի խիստ թուլացման պատճառով արագախոսության կամ անփութ արտասանության ժամանակ այն կարող է չարտասանվել: Հատկապես անպատճառ բառում այդ ակնհայտ է: Աստծո բառաձևը հաճախ

⁹⁶ Հ-ի անկման մասին խոսվել է առանձին:

հնչվում է [ասծօ], ա-ն արտասանվելու դեպքում տ-ի և ծ-ի միջև կազմվում է գաղտնավանկ՝ աստ[ը]ծո⁹⁷:

Օտարազգի բառերում հնչյունի անկում է տեղի ունենում բաղաձայնական այն կուտակումներում, որոնք արտասանվում են առանց գաղտնավանկի: Դրանք մեծ մասամբ հատուկ անուններ են: Օրինակ, Ֆիտցջերալդ անձնանունը արտասանվում է տ-ի անկումով՝ Ֆիցջերալդ: Եթե տ-ն չգցենք, ապա ստիպված պետք է տ-ի և ց-ի միջև ը արտասանենք, որով օտար բառի հնչումը շատ կաղավաղվի:

Մասշտաբ բառն արտասանվում է ա-ի անկումով՝ [մաշտաբ], քանի որ ա-ն և շ-ն անկապակցելի հնչյուններ են: Ս-ի պահպանումով բառը կհնչվի մաս[ը]շտաբ, որը անբարեհունչ է և հանձնարարելի չէ:

Մի շարք օտարազգի բառեր երբեմն արտասանվում են հրնչյունի անկումով, օրինակ՝ ցենտներ—[ցէննէր], ռեստգեն—[ռէնգէն], որը շեղում է նորմայից:

Որոշ բառերում, խոսակցական լեզվում ընկնում է ր հնչյունը, օրինակ՝ գոլորշի—գոլոշի, քարշ տալ—քաշ տալ, քարշ գալ—քաշ գալ: Նույն հիմունքով է, որ քաշել-ը դարձել է քաշել, խաշել-ը՝ խաշել, ձեռք բերելով նորմատիվություն⁹⁸:

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԿՈՇՏ ԵՎ ՓԱՓՈՒԿ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերեն՝ գրական լեզվում չկա փափուկ և կոշտ հնչյունների տարբերակում հնչույթային նշանակությամբ, մի երևույթ, որը ռուսաց լեզվի հնչյունական համակարգի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն է:

Հայերենի բաղաձայնները մեծ մասամբ կոշտ են արտասանվում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք գտնվում են յ կիսաձայնից առաջ, օրինակ՝ առյան, մատյան, կյանք, անկյուն, գյուղ, բյուրակն, վաղորդյան, արդյունք, Ռաշիդյան, կաթյոք, լիություն, Դավթյան, սյուն, ալյուր և այլն: Այս բառերում տ, կ, Գ, Բ, Դ, Ծ, Ք, Ս, Լ բաղաձայնները գտնվելով միջնալեզվային յ կի-

97 Ժողովրդական լեզվում գործածվում է նաև «ասսու սիրուն» արտահայտությունը, որտեղ տ-ն ընկել է, ծ-ն վերածվել ա-ի:

98 Հնչյունի անկման դեպքերը ավելի շատ երևան են գալիս ժողովրդախոսակցական լեզվում, օրինակ՝ դուրս արի—[դուա արի], բարձրացա—[բարցացա], էս կողմ արի—[էս կոմ արի] և այլն:

սաճայնից առաջ, մյուս դիրքերի համեմատությամբ զգալիորեն փափուկ են արտասանվում և հանդես են գալիս որպես դիրքային տարբերակներ: Լ հնչյունի փափկությունը, օրինակ, ալլուր, ալլակ բառերում, անմիջապես բացահայտ է դառնում, երբ այն համեմատում ենք լուր, կլուր, լամպ բառերում արտասանվող լ-ի հետ: Լ հնչյունը մասամբ փափուկ է արտասանվում նաև առաջին շարքի [է], ի ձայնավորներից առաջ, ինչպես՝ ալիք, ելեք, լեզու (համատ. լար, լույս, լպիրշ և այլն):

Լ բաղաձայնը համեմատաբար փափուկ է արտասանվում նաև յ կիսաձայնից և ե, ի ձայնավորներից հետո բառավերջում, օրինակ՝ ֆայլ, ծույլ, բույլ, փաթիլ, կաթիլ, ֆայլել, նայել, սածիլ և այլն: Եթե բառավերջում յ-ից հետո որոշ փափկությամբ արտասանվող լ-ին բառի աճման ժամանակ հաջորդում է ա, ապա լ-ն ընկնելով հաջորդող վանկի սկիզբը և նախորդելով ա-ին, դարձյալ արտասանվում է կոշտ, օրինակ՝ ֆայլ, բայց՝ ֆայլ-լամպուր, զայլ, բայց՝ զայլ-լաբարո⁹⁹:

Հայերենի լ հնչույթը բնութագրվում է որպես առաջնալեզվային շփական հնչյուն, որի արտասանության ժամանակ լեզվի ծայրը հպվում է վերին ատամնաշարին, բայց դուրս մղվող օդը պայթյուն չի առաջացնում, այլ դուրս է գալիս լեզվի երկու կողմերից:

Հայերենի լ-ն միջին տեղ է գրավում ռուսերենի կոշտ և փափուկ լ-երի միջև: Եթե կոշտ լ-ի արտասանության ժամանակ ռուսերենում լեզվամեջքի ետին մասը ակտիվ կերպով մասնակցում է արտաբերությանը, բարձրանալով դեպի փափուկ քիմքը (օր.՝ лошадь, улыбка), ապա հայերենի լ-ի արտաբերության ժամանակ լեզվամեջքը պասիվ է մնում և մեծ մասամբ իջած է կամ բարձրացած աննշան կերպով:

Քանի որ հայերենում չկա փափուկ և կոշտ հնչյունների տարբերակում հնչույթային նշանակությամբ, այսինքն՝ լ-ի կոշտ և փափուկ արտասանությունը իմաստազատիչ, էական հատկանիշ չէ, և այդ հատկանիշով բառեր չեն տարբերվում, ուստի հայերենում առանձնապես չի ընդգծվում և չի էլ գիտակցվում լ-ի կոշտ և փափուկ արտասանությունը, ինչպես, ասենք, այդ կատարվում է ռուսերենում (համատ. дал «տվեց» և даль «հեռավորություն», полк և полька):

⁹⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը, էջ 13:

Հայերենում յ-ից առաջ գտնվող բաղաձայնների արտասանությունը էապես տարբերվում է ռուսերենի փափուկ բաղաձայնների արտասանությունից: Ռուսերենում փափուկ բաղաձայնների արտաբերության ժամանակ լեզուն գտնվում է այն դիրքում, ինչ դիրքում որ նա գտնվում է ի կամ յ հնչյունների արտաբերության դեպքում, այսինքն՝ լեզվամեջքի միջին մասը մեծ չափով բարձրանում է դեպի կոշտ քիմքը, այսինչ նույն հնչյունների կոշտ արտաբերության ժամանակ լեզվամեջքի միջին մասը իջած է: Ռուսերենում а, у, о ձայնավորներից առաջ բաղաձայնների փափուկությունը արտահայտվում է я, ю, ё տառերով: Օրինակ՝ КЛЮКВА, ПОЛЮС բառերը հնչվում են К[л'у]КВА, ПО[л'у]С, այսինքն՝ փափուկ л' + у: Հատկանշական է այն, որ ռուսերենում բաղաձայնների փափուկ արտասանության ժամանակ այս դեպքում առկա չէ յ (յոտ) հնչյունը, մինչդեռ հայերենում, ի տարբերություն ռուսերենի, բաղաձայնների փափուկությունը արտահայտվում է բաղաձայն + յ + ձայնավոր հնչյունների զուգորդության դեպքում: Այսինքն՝ ոչ թե տվյալ բաղաձայնի արտաբերության ժամանակ է լեզվի միջին մասը բարձրանում դեպի կոշտ քիմքը (ինչպես դա կատարվում է ռուսերենում), այլ բարձրացումը հաջորդում է բաղաձայնին, նրանից հետո արտասանվող յ հնչյունի պատճառով: Այդ տարբերությունը մենք անմիջապես կզգանք, եթե համեմատենք, օրինակ, ПОЛЮС և а́лчу́ր բառերում յ-ի արտասանությունը: Այդպես են արտասանվում ալյակ, Աբեյյան, դյուրին, գոդյան, առավոտյան, ատյան, գյուղ, կյանք, ձյուն բառերում լ, դ, տ, գ, կ, ձ բաղաձայնները, որոնց փափուկ արտասանությունը, ինչպես ասացինք վերևում, դիրքային նշանակություն ունի միայն: Ռուսերենին լավ շտիրապետող անձանց մոտ ռուսերեն я, ю, կամ ё տառերով բառերն արտասանելիս՝ տարբերությունն անմիջապես զգացվում է: Օրինակ՝ Алёша անունը ռուսն արտասանում է А[л'о]ША, իսկ հայերեն եղանակով այն հնչվում է Ալյոշա, այսինքն՝ մոտավորապես այնպես, ինչպես արտասանվում են ռուսերենում л-ից հետո անջատման փափուկ նշան ունեցող բառերը, օրինակ՝ Толъя́тти: Վիլնյուս, Վոլոդյա, ալյումին, սալյուտ, շլյապա, շլյուզ, բուցելյոզ բառերը ռուսերենում հնչվում են փափուկ ն, դ, լ հնչյունների ու հաջորդող ձայնավորների զուգորդությամբ (առանց յ «յոտ» հնչյունի), մինչդեռ հայերենի արտասանությամբ այդ հնչյուններից հետո արտասանվում է յ և այնուհետև հաջորդող

ձայնավորները, եթե, իհարկե, այս բառերը չեն հնչվում ուսերենի ընդօրինակմամբ, այնպես, ինչպես այդ լեզվում են հնչվում:

Հայերենին հատուկ չէ ի ձայնավորից առաջ դ, տ, ք պայթականների փափկացում, օրինակ՝ դիակ, բարդի, արդիական, տիեզերք, մատիտ, Ավետիք, Տիգրան, տիտան, մարտիկ, տիտանական, դաստիարակել, բիրենդ, թիակ և այլն:

Զգալիորեն քմայնացած է արտասանվում վերջին շրջանում շատ տարածված և կենսունակ -ություն ածանցի ք հնչյունը և առհասարակ ք-ն յ-ից առաջ նաև այլ բառերում, օրինակ՝ խոսակցություն, հասկացություն, լուրթյուն, բարձրություն, Դավթյան, արգյոֆ—ար[թ']յոֆ և այլն:

Այս դիրքում ք-ն արտասանվում է որպես ց-ին շատ մոտ մի հնչյուն, ընդ որում՝ յ-ն կլանվում է ք-ի մեջ և գրեթե չի հնչում: Այսպիսի արտասանությունը տիրապետող է ոչ միայն խոսակցական լեզվում, այլև բարձր ոճում, բացառությամբ այն դեպքերի, երբ բառն արտասանողը գիտակցաբար աշխատում է այն «ճիշտ» արտասանել: Բայց «ճիշտը» և «սխալը» հարաբերական հասկացություններ են, մասնավորապես տվյալ դեպքի և ընդհանուր առմամբ ուղղախոսական նորմայի տեսակետից: Այստեղ լեզվի արտասանական նորմայում տեղաշարժ է վատարվել, և մենք չենք կարող աչք փակել դրա առաջ և շտեմնել արդեն իսկ խոր արմատներ ձգած նոր երևույթը մեր լեզվում:

Ներկայումս նկատելի է, որ քյ հնչյունազուգորդումը ավանդական արտասանությամբ հնչելու տեղդրությամբ որոշ աշխատանք է տարվում: Հատկապես ռադիոյի և հեռուստատեսության հաղորդավարներից ոմանց և դերասանների (գարձյալ ոմանց) մոտ նրկատվում է ձգտում ք-ն արտասանել առանց քմայնացման:

Նկատի ունենալով արդեն իսկ արմատավորված երևույթը, քյ հնչյունազուգորդության ուժեղ քմայնացումով արտասանությունը զրական արտասանության շրջանակներում պետք է համարել արտասանական ազատ տարբերակ, հատուկ՝ խոսակցական լեզվին: Արտասանական բարձր ոճում, հաղորդավարական, ուսուցողական (դպրոցում), մասամբ բեմական խոսքում նախապատվելի է ավանդական քյ արտասանությունը:

ՇԵՇՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արդի գրական հայերենին հատուկ է ուժգնության շեշտը, որը որպես կանոն դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա: Հայերեն-

նի շեշտը իր բնույթով կայուն շարժական է և բառի աճման ժամանակ տեղափոխվում է վերջին վանկի վրա, շատ դեպքերում հնչյունափոխության կամ ձայնավորի սղման պատճառ դառնալով. օրինակ՝ հեռագիր, հեռագրական, և ձայնավորը գրական հայերենում շեշտ չի կրում՝ քաղց[ը]ր, ուսանողը:

Եթե բառը վերջանում է գաղտնավանկով, ապա շեշտը դրվում է գաղտնավանկին նախորդող ձայնավորի վրա, օրինակ՝ ա՛րկ[ը]ղ, անուշա՛ղ[ը]ր: Բառում այլ ձայնավոր չլինելու դեպքում, շեշտը կարող է դրվել նաև ը-ի վրա: Դա պատահում է բնաձայնական, բարբառային և օտար բառերում, օրինակ՝ չըռչը՛ռ, ջըրը՛մ ա (ջրում է), Գըզըլը՛ք:

Հայերենում բոլոր բառերն ունեն բառային շեշտ, բացառությամբ միավանկ սպասարկու բառերի, որոնք լինելով վերջահար կամ նախահար, արտասանական ամբողջություն են կազմում նախորդ կամ հաջորդ բառի հետ, օրինակ՝ ըստ էության, առ այսօր, այնպե՛ս որ, ամեն ինչ, ընդ որո՛ւմ և այլն: Սովորաբար շեշտ չի կրում և օժանդակ բայը, եթե ժխտական չէ, օրինակ՝ գն՛ում եմ, բայց՝ չե՛մ գնում: Շեշտ չի կրում նաև հարադրավոր բայերի բայական բաղադրիչը, օրինակ՝ լո՛ւյս տալ, սի՛րտ տալ, պա՛ր գալ և այլն:

Բացի բառային շեշտից, որն արտահայտվում է ձայնի ուժգնությամբ, հայերենին, ինչպես և շատ լեզուների, հատուկ է տրամաբանական շեշտը, որով նախադասության որևէ անդամ հատուկ երանգով և բառային շեշտի առավել ուժգնությամբ է արտասանվում, իմաստային երանգավորում տալով նախադասությանը՝ օրինակ՝ Ես տարա գի՛րքը (և ոչ տետրը) և Ես տարա գիրքը (և ոչ մեկ ուրիշը) և այլն: Տրամաբանական շեշտը խոսքին հաղորդում է հասկանություն և կենդանություն:

Հայերենին հատուկ է և քերականական շեշտ, որը դրվելով որոշ բառ-մասնիկների վրա արտահայտում է քերականական իմաստ: Օրինակ՝ Մի կարդա՛ այդ նամակը և Մի՛ կարդա այդ նամակը: Շեշտը այստեղ քերականական իմաստ է արտահայտում, քանի որ դրվելով մի բառ-մասնիկի վրա, փոխում է նախադասության իմաստը¹⁰⁰:

Հայերենը մասնակի կերպով օգտագործում է նաև երաժշտական շեշտ, որով հարցման, հիացմունքի, զարմանքի բնույթ է տրվում նախադասությանը:

100 Տե՛ս է. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 275:

Արդի հայերենի խոսքի արտահայտչականության հարցում, անշուշտ, մեծ դեր են կատարում զանազան հուզական ելևէջները (ինտոնացիաները), որոնք խոսքին հաղորդում են տարբեր երանգներ:

Հայերենում նշվում են յոթ գլխավոր ելևէջներ, ինչպես՝ հասարակ շեշտ, սուր շեշտ, հարցական շեշտ, բարձրացող շեշտ, իջնող շեշտ, իջնող բարձրացող շեշտ և բարձրացող իջնող շեշտ¹⁰¹:

Հատկանշական է այն, որ բարբառային շեշտները և ինտոնացիաները, որոնք տիրապետող էին մի քանի տասնամյակ առաջ և դեռևս մի շարք դեպքերում իրենց զգացնել են տալիս գրական կենդանի լեզվում մինչև այսօր էլ, մեծ չափով նվազել են: Ամբարադվել և կայունացել է վերջադիր շեշտադրությունը:

Գրական արտասանության տեսակետից մի շարք դեպքերում թերևս սխալ չպետք է համարել կոչականների ոչ վերջադիր շեշտադրությունը, երբ կոչական բառերում և անձնանուններում շեշտը վերջին վանկի փոխարեն դրվում է մյուս վանկերի վրա, մեծ մասամբ՝ վերջընթեր, ինչպես՝ Անահիտ, շատ ես ուշանում: Ռո՛ւբիկ, կարգա դասդ: Արա՛միկ, շարունակիր: Արտո՛ւրիկ, քեզ կարգին պահիր, մի՛ խոսիր, բայց և՛ Արտուրի՛կ, այդ դո՛ւ ես այդպես բարձր կարդում և այլն¹⁰²: Այս հիմունքով շեշտը կառող է դրվել և Ը-ի վրա, օրինակ՝ Հ[ը՛]րայր, Տ[ը՛]րդատ և այլն: Այսպիսի հնչումը, ինչպես ցույց են տալիս և բերված օրինակները, հատուկ է խոսակցական լեզվին:

Կոչական բառերի և անունների ոչ կայուն շեշտադրության մասին նշել են Այտընյանը, Աճառյանը, Աբեղյանը և ուրիշներ¹⁰³:

Ներկայումս բանավոր խոսքում շատ տարածված է հարցական մի շարք նախադասություններում ձայնի բարձրացումը օժանդակ բայի վրա, եթե նախադասության մեջ հարցական բառ չկա, օրինակ՝ Հիմա ե՞ք գնում: Դուրսը անձրև է՞: Հիմա իջնում ե՞ք: Տուն ե՞ս գնում, Դու էի՞ր զանգահարում: Կարծում եք հեշտ է՞ նրա հետ աշխատելը: Այսպիսի շեշտադրությունը, որը բնորոշ է խոսակցական լեզվին, անշուշտ, կանոնական չէ: Հանձնարարե-

101 Նույն տեղում, էջ 283:

102 Այս օրինակները գրի են առնվել դասի ժամանակ, 5-րդ դասարանի լեզվի և գրականության ուսուցչի կենդանի խոսքից:

103 Ա. Այաբեկյան, նշվ. աշխ., էջ 362: Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 20: Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, է. 338:

լի է հետևյալ հնչումը. Կարծում եք հե՞շտ է: Հիմա՞ եք գնում և այլն, որը ավելի շատ դրսևորվում է բարձր ոճում, բարձրաձայն ընթերցման ժամանակ և այլն:

Մի խումբ բառերում, որոնք գերազանցապես կցական բարդություններ են, բառային շեշտը վերջին վանկի վրա չի դրվում, ինչպես՝ նո՛ւյնիսկ, նո՛ւյնպես, նո՛ւյնչափ, մի՛գուցե, ա՛յսպես, որպե՛սզի, ո՛րևէ, ի՛նչևէ, ե՛րբևէ, ո՛րևիցե, ե՛րբևիցե, ի՛նչևիցե, նա՛մանավանդ, ո՛րտեղ, ի՛նչպես, ո՛րպիսի, ի՛նչպիսի, ո՛րքան, դա՛րձյալ, գո՛նե, իհա՛րկե, մի՛միայն, ահա՛վասիկ, մա՛նավանդ, նախքան, հի՛մա, իսկո՛ւյնեթ, թեկո՛ւզե, թեպե՛տե և այլն: Մական հայերենի վերջադիր շեշտի ազդեցությամբ այս բառերից շատերը ներկայումս արտասանվում են նաև վերջադիր շեշտով: Օրինակ՝ Նախֆան ձեր գալը ամեն ինչ վերջացել էր նախադասության մեջ շեշտը կարող է նախֆան բառում և՛ առաջին վանկի վրա դրվել, և՛ երկրորդ:

Նույնը կարելի է ասել նաև, օրինակ, բացի, գուցե, ուստի, գոնե, գրեթե, երբևէ, ինչևէ, դարձյալ, նույնիսկ, նույնպես, այսչափ, առնասաբակ, հատկապես, մանավանդ, մամանավանդ, հիմա, անավասիկ բառերի մասին, որոնք մի քանի տասնամյակ առաջ ունեցել են հաստատուն առաջադիր շեշտադրություն: Թվարկելիս միշտ շեշտվում է այս բառերի վերջին վանկը:

Շեշտի տեղը հաստատուն չէ մի շարք հարցական բառերում: Օրինակ՝ Ո՞րտեղ է ձեր գլխարկը և Որտե՞ղ է ձեր գլխարկը, Ի՞նչպես կարողացաք անել այդ բանը և Ինչպե՞ս կարողացաք անել այդ բանը, կամ՝ Ի՞նչ իմանաս, տխրությու՞նը ո՞րտեղից է գալիս և Ի՞նչ իմանաս, տխրությու՞նը ուրտեղի՞ց է գալիս և այլն:

Տատանումներ կան երո՞րդ վերջածանցով պարզ և բարդ թվականների և դերանունների շեշտադրության մեջ: Այս բառերում վերջնավանկի փոխարեն հաճախ շեշտը դրվում է թվական արմատի (եթե բարդ է՝ երկրորդ), կամ դերանվանական արմատի վրա: Օրինակ՝ հի՛մգերոդ, վե՛ցերոդ, տա՛սերոդ, քաճո՛ւթերոդ, քաճասուճո՛թերոդ, ինչպե՛ս և՛ քաճի՛երոդ, ո՛րերոդ և այլն: Վերջին երկու բառում շեշտի տեղը հաստատուն է: Այս բառերի թե՛ք ձևերը տունն վերջադիր շեշտադրություն, ինչպես՝ հի՛մգերոդի՛, վեցերոդի՛ց և այլն: Երկրո՛րդ, երրո՛րդ, չորրո՛րդ թվականներում վերջին վանկի շեշտումը հաստատուն է:

Մեր լեզվաբաններից ոմանք, հատկապես Մ. Աբեղյանը, ընդգծել են, որ հայերեն գրական լեզուն և բարբառների մի մասը ու-

ինն թույլ շեշտադրութուն՝ վերջին վանկի վրա: Արարատյան բարբառը համեմատաբար ավելի թույլ շեշտ ունի, քան մյուս բարբառները, բայց ավելի ուժեղ է, քան գրական լեզուն: Արդի գրական հայերենի բառային շեշտը այժմ ավելի ուժեղ է արտահայտվում, որի հիմնական պատճառը պետք է համարել բարբառի, հատկապես մայր Արարատյան բարբառի շեշտադրության ազդեցությունը:

Այնուհետև, ներկայումս բավականաչափ ակնառու է հետևյալ երևույթը: Հայերենի երեք և ավելի վանկերից կազմված բառերը, հատկապես բարդերը, մեծ մասամբ արտասանվում են երկու շեշտով, որոնցից դիտարկումը սովորաբար դրվում է վերջնավանկի վրա (չհաշվելով գաղտնավանկը) կամ այլ վանկի վրա, եթե օտար բառ է, իսկ երկրորդականը՝ նախավանկի կամ բառի առաջին բաղադրիչի վերջին վանկի վրա: Օրինակ՝ վե՛րամիավորո՛ւմ, ա՛նդրօվիանոսյա՛ն, ո՛ւտրամանիշակագո՛ւյն, հե՛տպատերազմյա՛ն, նախագծայի՛ն, հա՛մադպրոցակա՛ն, արտադրա՛տեսակնե՛ր, մի՛ջգործարանայի՛ն, մի՛ջտովխոզայի՛ն, մե՛րձմեռակովյա՛ն, ջե՛րմաէլեկտրակայա՛ն, հա՛կամարքսիստակա՛ն, շի՛նվերանորոգմա՛ն, ա՛տտրոֆի՛զիկա, ա՛երոդինա՛միկա, ռա՛դիոակտի՛վ, օտա՛րերկրյա՛յ՝ և այլն: Ամենաբաղադրիչով կազմված բառերում, ինչպես՝ ամենաառաջավագ, ամենաուշադիւր, ամենաառաջավոր, ամենաֆիմար, ամենաթույլ և այլն, ընդգծելու նպատակով, համեմատության ժամանակ հաճախ ուժեղ կերպով շեշտվում է առաջին ձայնավորը, ինչպես՝ ա՛մենաուշադի՛ւր, ա՛մենաառաջա՛վոր և այլն (օր.՝ Սուրիկը ա՛մենաթո՛ւյլ աշակերտն է դասարանում): Այս դեպքում առաջին վանկը կարող է ավելի ուժեղ շեշտվել, քան վերջինը: Այսպիսի շեշտադրությունը ունի արտահայտչական, ոճական նշանակություն:

Կրկնակի շեշտ ունեն այնպիսի կցական բարդություններ, ինչպես՝ ընկո՛ւյզկոտրի՛չ, կաղի՛նկոտրի՛չ, սի՛րտանոթայի՛ն, թո՛ւյլալիոհուլայի՛ն, ձո՛ւյլարծաթ, ձո՛ւյլարծաթայի՛ն, ձո՛ւյլերկաթ, թո՛ւյլանդամ, մի՛սկոմբինա՛տ, մա՛նրապրանքայի՛ն, մա՛նրբուրժուակա՛ն, բա՛րձրարտադրողակա՛ն, քառո՛րդեզրափակի՛չ և այլն, և այդ պատճառով է, որ հնչյունափոխության ենթակա առաջին բաղադրիչի ձայնավորը կամ երկհնչյունը այս կարգի բառերում հնչյունափոխության չի ենթարկվում:

Օտար բառերի շեշտադրության մասին հայտնվել են իրարամերժ կարծիքներ: Լեզվաբանների մեծ մասը գտնում է, որ օտար բառերի շեշտադրությունը պետք է պահպանվի միայն ուղիղ ձևերում, այն էլ զգալի սահմանափակությամբ:

Տերմինաբանական կոմիտեն քննության առաջ այս հարցը և հիմք ընդունելով հայերենի շեշտադրական կանոնները, միաձայն որոշումով մերժեց փոխառյալ բառերի նախաձայնի շեշտի պահպանումը հայերենում և թույլատրելի համարեց այդպիսի շեշտի օգտագործումը միայն ուղիղ ձևերում, այն էլ բացառիկ դեպքերում, ինչպես՝ Պոֆֆին, Լեմոնտով, օպերա և այլն: Թեքված ձևերում փոխառյալ բառերը անհրաժեշտորեն վերստանում են հայերենի վերջադիր շեշտը, ինչպես՝ Պոֆֆինի, Լեմոնտովի, օպերայի, ինչպես և՝ օպերաներ, դիսերտացիաներ և այլն¹⁰⁴:

Մի շարք բառեր, հատկապես ռուսերենից փոխառյալ իա-ով վերջավորվող, ուղիղ ձևերում սովորաբար պահպանում են ռուսերենի շեշտը, օրինակ՝ պարտիա, դիսկոնիա, դիսերտացիա, տելեպատիա, Ֆրանսիա, էրուդիցիա, կոնտրիբյուցիա, ատեստացիա և այլն:

Օտարազգի բառերի շեշտադրության հարցում շատ հետաքրքրական է Ա. Այտրնյանի հայտնած կարծիքը: Նա գրում է. «Օտար անուններն, որ չեն հայացած (այսինքն՝ որ առանց տառադարձության կը գրվին), իրենց բնական ազգային շեշտը կը պահեն, ինչպես՝ Փարմա, Պերլին, Միլան, Մանչեսթեր, Վյուրթենպերկ, Մոնթելեոնե և այլն: Բայց սխալ կը համարվի հայաձև անվանց վրա օտար շեշտ, ինչպես՝ Անգղիա, Հոմմալու երկիր (փխկ. Անգղիա, Հոմմալ երկիր): Վասնզի այսպիսիները հայերեն կանոնով բխյալ են կամ հայերեն շեշտյալ՝ Բրաբիոն, Եպիսկոպոս, սավան, ռստրե և այլն»¹⁰⁵:

Օտարազգի բառերի շեշտադրության մեջ ներկայումս անկրնհայտ է այն փաստը, որ հայերենի վերջադիր շեշտադրությունը մեծ թվով փոխառյալ բառերում ընդհանրացել է և դարձել հաստատուն: Այդ բանը կասկած չի հարուցում լայն տարածում ստացած և ժողովրդի սեփականություն դարձած բառերում, օրինակ՝ տրակտոր, կոմպրեսոր, օպերատոր, ֆիլոլոգ, անալիզ, նորմա, տոննա, ավտոբուս, տրոլեյբուս, լոգոնկ, միտինգ, սինթեզ, տրանսպորտ, պլենում, մարշալ, կամերա, ատոմ, պարագրաֆ, մոդա, ռադիո, տերմին, ռեկտոր, թերմոս, պրոֆեսոր, թենիս, կորպուս, կաբե՛լ, սիլոս, անգինա, մաուզե՛ր, սիմվոլ՝, ռեզլամենտ, նիկե՛լ, դոլլա՛ր, օրգա՛ն, ռեզոնատո՛ր, կոմպոզիտո՛ր, ռաջիոնալիզատո՛ր, կոնգենսատո՛ր, ագլիտատո՛ր, կոնստ-

¹⁰⁴ Նախադիժը կաղմել է Ա. Ղարիբյանը: Հաստատվել է տերմինաբանական կոմիտեի 1957 թ. դեկտեմբերի նիստում:

¹⁰⁵ Ա. Այտրնյան, նշվ. աշխ., էջ 362:

րուկտոր, ռակետա՛, մուկեկո՛ւ, շախմատ և այլն, որոնք շեշտվում են հայերենի վերջադիր շեշտադրությամբ:

Տարածված օտարազգի հատուկ անունները հայերենում նույնպես ունեն վերջադիր շեշտադրություն, օրինակ՝ Համլե՛տ, Թելմա՛ն, Նելսո՛ն, Մարտի՛ն, Աստրախա՛ն, Սևաստոպոլ՛ և այլն:

Օտարազգի այն բառերը, որոնք ներմուծվելով հայերենի մեջ գործածվում են համեմատաբար նեղ միջավայրում, որպես նորաբանություն, ուղիղ ձևերում նախապես պահպանում են օտար շեշտադրությունը: Դա հատկապես վերաբերում է գիտատեխնիկական նեղ մասնագիտական տերմիններին և հատուկ անուններին: Բայց հենց որ բառը ստանում է լայն կիրառություն, կորցնում է իր ոչ հայկական հնչումը և սկսում է ենթարկվել լեզվի օրենքներին:

Մի շարք դեպքերում, փոխառյալ բառերի ոչ վերջադիր շեշտադրությունը ոչ թե ուսերենի ազդեցության արդյունք է, ինչպես ոմանք կարծում են, այլ բարբառի: Օրինակ՝ կուսակցական կոմիտեն, կուսակցական բյուրոն, քաղբյուրոն, կամ՝ Մո՛սկվա է գնում և այլն, այն դեպքում, երբ ուսերենում նշված բառերի վերջին վանկն է շեշտվում (հմմտ. комитет, бюро, политбюро, Москва).

Օտարազգի նորամուտ բառերի ուղիղ ձևերի, նամանավանդ հատուկ անունների համար, սկզբնապես կարելի է թույլատրելի համարել երկու տարբերակով արտասանություն՝ հայերենի շեշտադրությամբ և օտար շեշտադրությամբ: Ոչ վերջադիր շեշտադրությունը տարածվող և համաժողովրդական ընդգրկում ստացող բառերի համար մեծ մասամբ ժամանակավոր բնույթ է կրում, մինչև կայունանում է հայերենի շեշտը. օրինակ՝ միտի՛նգ, տրակտո՛ր, անալի՛զ և այլն: Մի շարք բառեր, ինչպես՝ օպերա, կուլտուրա, ռեպլիկա և այլն, չունեն հաստատուն շեշտադրություն. շեշտվում են և՛ հայերենի, և՛ ուսերենի շեշտադրությամբ: Պետք է ասել, որ այս հարցում հայերենի վիճակը բացառիկ չէ: Այլ լեզուներում էլ, ինչպես նաև ուսերենում, մի շարք փոխառյալ բառերի շեշտադրությունը կայունացած և համընդհանուր բնույթ չի կրում:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերեն գրական լեզվում միջազգային կապերի ուժեղացման հետևանքով ամեն օր ներմուծվում են մեծ թվով օտարազգի բառեր: 20-ական թվականներից սկսած օտար բառերը հայոց լեզվի

մեջ գերազանցապես մուտք են գործում ռուսերենի միջոցով: Փոխառյալ բառերը մտնելով տրե՛է լեզվի բառապաշարի մեջ, սովորաբար ենթարկվում են տվյալ լեզվի արտասանական օրինաչափություններին, երբ մերվում են այդ լեզվին, լայն տարածում ստանում և դառնում նրա սեփականությունը: Բայց երբ օտար բառ լինելը որոշակի է և հստակորեն գիտակցվում է, ապա մի շարք դեպքերում այդ կարգի բառերը կարող են պահպանել փոխատու լեզվի արտասանական տրոշ օրինաչափություններ: Այդպիսի դեպքերում օտար բառը կամ հատուկ անունը փոխառու լեզվի արտասանությամբ հնչելը կարող է ստացվել շատ արհեստական (համտ. օրինակ՝ ս[ը]խեմա, Տո[ը]ստոյ, Ռեֆորմատ[ը]սկի, Իրկուտ[ը]սկ և այլն)¹⁰⁶:

Հայերենի արտասանական օրինաչափություններից մեծ մասամբ շեղվում են օտարազգի հատուկ անունները: Հատկապես դժբախդ են, որ չեն ենթարկվում մեր լեզվի ինչպես վանկակազմության, այնպես էլ հնչական օրինաչափություններին և շատ դեպքերում հնչվում են փոխատու լեզվի նմանողությամբ:

Եթե փոխառյալ բառերը մուտք են գործում մերձավոր շփման մեջ գտնվող որևէ լեզվից, ապա դրանք կարող են յուրացվել արտասանական այնպիսի առանձնահատկություններով, որոնք հատուկ չեն փոխառու լեզվին: Արտասանական այդպիսի երևույթները մի շարք դեպքերում ազդակի դեր են կատարում և խթան են հանդիսանում հնչական որևէ երևույթի տարածման համար, եթե տվյալ լեզվում փոփոխության համար բարենպաստ պայմաններ և հիմքեր կան, կամ լեզվի ներքին օրինաչափությունները չեն հակասում արտասանական այդ նոր առանձնահատկության տարածմանը և ընդլայնմանը:

Կարելի է բերել թեկուզ ստ, սկ, սպ, շտ և նման հնչյունազուգորդություններով սկսվող բառերի օրինակը: Այդ բառերը վերջին շրջանում, հակառակ ավանդական արտասանության, ավելի հաճախ արտասանվում են առանց նախահոսնչ ը-ի (ստանալ, սկիզբ և այլն): Այս երևույթի տարածման համար ազդակի դեր են կատարել, անշուշտ, այն բազմաթիվ փոխառյալ բառերը, որոնք ռուսերենում արտասանվում են առանց ը-ի՝ սպիրտ, սպորտ,

¹⁰⁶ Ռուսերենում ընդունելի չի համարվում, օրինակ, Шопен, Декарт, Золя, ноктиурн, термин անունները և բառերը ըստ ռուսերենի արտասանական կանոնների [Шапен], [Д'икарт], [Заля], [нактиурн], [т'ермин] հնչելը:

շտաբ, սկլեռոգ, Սպարտակ և այլն: Այս հարցում որոշ չափով նշանակություն է ունեցել, անկասկած, նաև գրային արտասանության ուժեղ միտումը: Բայց այս հանգամանքները թերևս որևէ դեր չկատարեին, եթե լեզվում իսկ նախապես գոյություն չունենար այդ կարգի բառերը Բ-ով և առանց Բ-ի արտասանելու որոշ ազատություն (տե՛ս այս մասին էջ 143):

Օտար բառերի մեծ մասն իր արտասանությամբ ոչնչով չի տարբերվում հայերեն բառերի արտասանությունից, մի զգալի մասն էլ ենթարկվում է հայերենի արտասանական կանոններին: Սակայն, որոշ դեպքերում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է լինում պահպանել կամ ընդօրինակել փոխատու լեզվի հնչումը: Այդպիսի մասնավոր շեղումները հայերենի համար էական նշանակություն չունեն, ինչպես կտեսնենք ստորև, և որևէ չափով չեն փոխում հայերենի հնչական կերպարանքը:

Օտարազգի բառերում, հատկապես հատուկ անուններում, հանդիպում են այնպիսի հնչյունակապակցություններ, որոնք հայերենի համար անսովոր են: Հայտնի է, որ հայերենը ունի բառասկզբում, բառավերջում և բառամիջում հանդիպող հնչյունական զուգորդությունների արտասանության ուրույն կանոններ, որոնց օտարազգի բառերը հաճախ չեն ենթարկվում: Մի շարք դեպքերում օտարազգի բառերում հանդիպող հայերենի տեսակետից անկապակցելի և գաղտնավանկի միջոցով արտասանվող բաղաձայնական զուգորդումները, չենթարկվելով գաղտնավանկերի կազմության հայերենի կանոններին, արտասանվում են առանց Բ-ի: Օտար բառերում բառասկզբում, բառավերջում և բառամիջում երբեմն հանդիպում են վանկերի՝ հայերենի համար անսովոր տիպեր, հայերենին խորթ հնչյունակապակցություններ կամ բաղաձայնական ու ձայնավորական հանդիպումներ, որոնք գրական լեզվում պահպանում են փոխատու լեզվի հնչումը: Օրինակ՝ պլաշչ, տոբֆ, Ստեֆանորդ, Սկրյաբին, սֆինքս, գոլֆատրիմ, գունգստաբլ, Բլուֆիլդս, Բրադֆորդ, Սապֆո, Հուսեռլ, Նիցշե, էռնստ, Յակուտսկ և այլն:

Այս հարցում, անշուշտ, էական նշանակություն ունի փոխատու լեզվի իմացությունը և նրա արտասանական առանձնահատկություններին ընտելացած ու վարժված լինելը: Այս տեսակետից և՛ ուսանողների, և՛ օտար լեզուների իմացությունը վճռական դեր է կատարում:

Միայն օտար բառերում հանդիպող հայերենին անսովոր հընչ-

յունական զուգորդումները բազմազանութուն են մտցնում հայերենի վանկային կառուցվածքների տիպերում:

**ԲԱՌԱՍԿԶԲԻ ԵՎ ՎԱՆԿԱՍԿԶԲԻ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ
ՉՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ակ, սպ, ստ, շտ, շպ և առհասարակ շփականի ու պայթականի կապակցությամբ սկսվող օտարազգի բառերը գերադասելի է արտասանել առանց նախահունչ ք-ի, օրինակ՝ սկաֆանդր, սկեպտիկ, սկիպիդար, սպորտ, սպիրտ, սպեկտր, սպեկուլյացիա, սպիրոմետր, ստադիա, ստադիոն, ստաժոր, ստրեպտոցիդ, ստարտ, ստեռլինգ, ստերեոսկոպ, ստրատոսֆերա, ստոիկ, ստոիցիզմ, ստոլիպինյան, շտատ, շտաբ, շպիոնաժ, շտամպ, շտատիվ, Շտուտգարդ, Շպիցբերգեն, Սպարտակ, Ստենֆորդ, Սպինոզա, Սկանդինավիա, Ստոկհոլմ, նաև՝ սցենար, սլավոնական և այլն:

Բառակզբի վերոհիշյալ հնչյունները կարելի է արտասանել առանց ք-ի նաև այն դեպքում, եթե սկ, ստ, սպ և նման հնչյուններին հաջորդում է ևս մեկ կամ նույնիսկ երկու այլ բաղաձայն, ինչպես՝ ստրելեց, շպրից, ստրատեգիա, շտրեյկբրեյներ, շպրոտ, Ստրավինսկի, Ստրասբուրգ, Ստրուվե, Ստյուարտ, Շտրաուս, Շկվարկին, Շկլովսկի, Ստրժիգովսկի, Սկլյանսկի, Սկրյաբին և այլն: Նկատենք, որ այս կարգի բառերում բառակզբի ստ, սկ, շպ և նման հնչյուններին զուգորդող երրորդ (նաև՝ չորրորդ) հընչյունը սովորաբար ձայնորդ է՝ ր, երբեմն նաև յ կամ լ, որը հեշտացնում է հնչումը:

Նշված հնչյուններով սկսվող բազմաթիվ օտարազգի հատուկ անունների ենք հանդիպում ամենօրյա մամուլում և թարգմանական գրականության մեջ:

Օտար բառերում բաղաձայնի և ք-ի զուգորդությունը բառակզբում սահուն կերպով արտասանվում է առանց բաղաձայնից հետո հնչվող գաղտնավանկի: Այս դիրքում ք-ին կարող են նախորդել զրեթե բոլոր բաղաձայնները, ինչպես՝ Բրազիլիա, Բրեստ, Բրամս, Բրաունինգ, գրիպ, գրիմ, գրամ, գրանիտ, գրամոֆոն, գրոսմայսեր, Գրիգ, Գրիգորի, դրամա, դրեմաժ, դրեյֆ, Դրեզդեն, Թրեյլեր, Թրակիա, խռնիկա, խռնոմետր, կրոս, կրիտերիում, Կրոնշտադտ, Շլեզվիգ, շրիֆտ, Շումպֆ, «Պրավդա», Պրոմեթևս, Վրանգել, տրամվայ, տրիբուն, տրիլիոն, տրիո, տրակտոր, տրոլեյբուս, տրիումֆ, տրիոլետ, տրեսա, Տրոյա, Տրոբեցկոյ, Փոյու-

գիա, Բրեստովստիա, Քրիստոֆեր, Ֆրանսիա, Փրագմենտ, Փրանկ և այլն¹⁰⁷։

Օտար բառերի սկզբում երկու այլ բաղաձայնների զուգորդությունը նույնպես մեծ մասամբ արտասանվում է առանց գաղտնավանկի, թեև այս դեպքում զգալի է արտասանական որոշ դժվարություն, որը պայմանավորված է հայերենում բառասկզբի արտասանության առանձնահատկություններով։ Օրինակ՝ սիեմա, սիուլաստիկ, Դվորժակ, կլիենտ, գլոբուս, բլոկ, Շուրս, Շեբրա, Շեպկին, Սմիտ, Քսերֆես, գվարդիա, Գվինեսա, Շվեյցարիա, Վլադիմիր, պֆենինգ և ոչ՝ ս[ը]խեմա, ս[ը]խուլաստիկ, Շ[ը]չորս, Ք[ը]սերքսես և այլն¹⁰⁸։ Որոշ դեպքերում բառասկզբի գաղտնավանկը ակնբախ է, օրինակ՝ Թ[ը]բիլիսի, Գ[ը]դանսկ, Տ[ը]կվիբուլի և այլն, այսինքն, երբ բառասկզբում զուգորդում են երկու պայթական։ Այդպիսի զուգորդումները օտար բառերում շատ սակավաթիվ են։

Բառասկզբի երեք բաղաձայնը կամ երկու նույնական շփականը օտարազգի բառերում կարող է արտասանվել և առանց ընդգծված գաղտնավանկի, օրինակ՝ Վլտավա, Վվեդենսկի և այլն։

Օտարազգի բառերում սովորական է յ կիսաձայնի զուգորդությամբ երկու և երեք բաղաձայնների արտասանությունը բառասկզբում, օրինակ՝ սյուրե, ժյուրի, շյապա, շյուզ, գլյուկոզա, տոյուֆել, կոյուշոն, պյուս, ֆյուս, Գոյունվալդ, Զվյագինցև, Բոյուսով, Բոյուսել, Բլյումինգ, Կյուև, Սկյութա և այլն։

Վերևում նշված հնչյունակապակցությունները վանկասկզբի կանոնով կարող են արտասանվել առանց ք-ի և բառամիջում։

Օտարազգի բառերում և հատուկ անուններում շտ, շպ, ստ, սկ, սպ և նման հնչյունակապակցություններից առաջ, հակառակ

107 Ժամանակակից հայ բանաստեղծները բանաստեղծության չափում օտար այս կարգի բառերը ըստ կարիքի, այսինքն՝ ըստ բանաստեղծության ռիթմի պահանջի, հնչում են գաղտնավանկով կամ առանց գաղտնավանկի։ Օրինակ՝ Իմ մանկությունը ունի ա՛յլ ձայնեք; | Ո՛չ Որոտանն է, ո՛չ Արփաշայր; | Զնգում է այնտեղ՝ Աբովյանն ի վեր | Հաղթորեն անցնող նոր տրամվայր [տրամվայր] (Ս. Կապուտիկյան)։ Նույն բանաստեղծության մեկ այլ տողում տրոխյբուս բառը ըստ բանաստեղծության չափի հնչվում է առանց ք-ի՝ Տրոխյբուսները ծանր շորորում, | Ասես իրենք են քաղաքի տերը։

108 Երկու բաղաձայնով սկսվող օտար բառերը թեև հնչվում են առանց գաղտնավանկի, օրինակ՝ բլոկ, սպորտ, կրոս և այլն, սակայն այս տիպի հայերեն բառերի համաբանությամբ հոգնակին կազմում են ոչ թե -ներ վերջավորությամբ (որպես միավանկներ), այլ -ներ՝ բլոկներ, սպորտներ, կրոսներ, շուտներ և այլն։

հայերենի արտասանական օրինաչափության, բառամիջում և չի արտասանվում այն դեպքերում, երբ նշված հնչյուններին նախորդում է բաղաձայն, օրինակ՝ սուբստիտուցիա (ոչ՝ սուբ[ը]ստիտուցիա), գոլֆստրիմ (գոլֆշտրիմ), գանգստեր, Կրոնշտադտ, Ուինստոն, Վեբստեր, Ուոլ-ստրիտ, Բեռնշտայն, էյնշտեյն (կամ Այնշտեյն), Բիֆշտեքս, Դարմստեր, Կրուպսկայա, Վոլսոփստրոյ, Հոլշտայն և այլն:

Սլավոնական ծագման ազգանունների սկի վերջավորություններից առաջ, որին սովորաբար նախորդում է որևէ բաղաձայն, նույնպես և չպետք է արտասանել, օրինակ՝ Ռակասովսկի, Ջերժինսկի, Վիշնևսկի, Ուբրանսկի, Գեմբաուսկի, Վրոնսկի, Ռանսկի, Բալկոնսկի, Կոլոսովսկի, Իսակովսկի, Պաուստովսկի և ոչ՝ Ռակասով[ը]սկի, Ռան[ը]սկի, Ջերժին[ը]սկի և այլն:

Այն տեղանուններում, որոնցում ստան ածանցին նախորդում է բաղաձայն, ստ-ից առաջ ավանդական արտասանությամբ հընչվում է և, ինչպես՝ Հաբեշ[ը]ստան, Ղազախ[ը]ստան, Բելուշ[ը]ստան, Աֆղան[ը]ստան, Դաղ[ը]ստան, Ուզբեկ[ը]ստան և այլն:

Օտար բառերում բաղաձայնի և ձայնորդի, մանավանդ Ե-ի զուգորդությունը բառամիջում՝ վանկասկզբում կապակցելի է և արտասանվում է առանց Ե-ի, օրինակ՝ սին/կրետիզմ, կոն/տրակտ, կոն/գրես, տրանս/կրիպցիա, բուտեր/բրոդ, ան/տրակտ, Գոտ/ֆրիդ, Բել/գրադ, կոն/ֆլիկտ, կոմ/պլիմենտ, կոմ/պլեկտ, հեմո/գլոբին, Ան/գլիա, Ախ/վլեդիանի, Լիբ/կնեխտ, էքս/պրես, էքս/պրոմտ, ֆոքս/տրոտ, ան/տրացիտ, դիս/կրիմինացիա, Սո/կրատ, Պետրո/գրադ, բյուրո/կրատ, արս/տրակտ, Կառ/գրեն, Ելմ/սլե, ա/գրեգատ, ա/գրարային, մեմ/բրան, էքս/պրո/պրիացիա և այլն:

Օտար բառերում արտասանական սերտ միասնությամբ է հնչվում մեկ բաղաձայնի և յ-ի կամ երկու բաղաձայնի և յ-ի կապակցությունը բառամիջում՝ վանկասկզբում, օրինակ՝ պար/ֆյունմերիա, ին/ֆլյացիա, ժոն/գլյոր, ա/լյումին, պարա/լյուտ, Ար/ալյոմով, Ակ/ալյոբինսկ, տրանս/լյացիա, կուր/ֆյուրստ, դել/ֆյան, Բար/բյուա և այլն:

**ԲԱՌԱՎԵՐՋԻ ԵՎ ՎԱՆԿԱՎԵՐՋԻ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ
ՉՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Օտար բառերի բառավերջը բնութագրվում է բազմապիսի հնչյունակապակցություններով, որոնք հայերեն ոչ փոխառյալ բա-

սերում չեն հանդիպում, ինչպես՝ մֆ, պֆ, բֆ, յֆ, յխ, բվ, քւ, նս, նգ, նշ, նխ, նտ, կտ, աշ, շշ, պտ և այլն, օրինակ՝ տրիումֆ, ծիպֆ, Շվարցկոպֆ, տոբֆ, շաբֆ, ամորֆ, Ուորֆ, Բենկենդորֆ, դրեյֆ, շլեյֆ, ռայխ, ներվ, կոնսերվ, ռեզերվ, լոգարիթմ, ռիթմ, շանս, բաշանս, փոնֆերանս, նյուանս, Հանս, Ջոնս, ցենզ, բրոնզ, Ջոռնզ, ռեվանշ, ասպիրանտ, դիպլոմատ, տակտ, էֆեկտ, օբյեկտ, ակտ, մատշ, պլաշշ, բորշշ (արտասանվում է շ-ի անկումով), էվկալիպտ և այլն։ Զգալիորեն դժվար է բառավերջի աշ հնչյունների կապակցված արտասանությունը։ Այսպիսի փոխառյալ բառերը բացառիկ են և արտասանվում են տ-ի միայն հպման փուլով (առանց վերջին պայթման փուլի), որը տ-ի հնչումը դարձնում է բավականաչափ անորոշ։ Օտար բառերում, բառավերջում հաճախակի է հանդիպում ֆս կապակցությունը, ինչպես՝ սֆինքս, կոմպլեֆս, բոֆս, ֆլոֆս, Մարֆս, կեֆս, ֆիֆս և այլն։

Քս հնչյունների կից արտասանությունը բառավերջում եթե որևէ դժվարություն չի հարուցում, ապա բառամիջում՝ վանկավերջում քս-ի հնչումը առանց միջանկյալ ք-ի իրացվում է փոքր խոչընդոտով, որն իր դրսևորումն է գտնում խոսակցական լեզվում գաղտնավանկի արտասանությամբ, օրինակ՝ էքստենս—էք[ը]ստենս, տեքստիլ—տեք[ը]ստիլ, էքստրակտ—էք[ը]ստրակտ, էքսպանսիա—էք[ը]սպանսիա, Շեքսպիր—Շեք[ը]սպիր և այլն։

Ռն բառավերջը հայերեն ոչ փոխառյալ բառերում արտասանվում է գաղտնավանկով, օրինակ՝ դառ[ը]ն, առձեռ[ը]ն, բուռ[ը]ն, հախուռ[ը]ն, միջդեռ օտար բառերի վերջին ռն-ն հնչվում է առանց ք-ի, ինչպես՝ նոկոյուռն, կոմինտերն (արտասանվում է կոմինտեռ[ը]ն), մոդեռն, ցիստեռն, էքստեռն, կոնցեռն, Մակհոռն, վերհառն, Բեռն, Կլիբեռն, Միլբուռն, (ժյուռ) Վեռն, Հոռն և այլն։

Առանց գաղտնավանկի է արտասանվում օտարազգի բառերի ոլ (րլ) կապակցությունը բառավերջում, օրինակ՝ Շառլ, Կարլ [ոլ], Հուսեռլ և այլն։

Օտար բառերում, բառավերջում բաղաձայնի և լ-ի գուգորդություն միջև, որպես կանոն, արտասանվում է ք, օրինակ՝ դիրիժաբ[ը]լ, բիթ[ը]լ, անսամբ[ը]լ, Կրեմ[ը]լ, մյուզիկ[ը]լ, ցիկ[ը]լ, Մայք[ը]լ, Նյուքաս[ը]լ, Յարոսլավ[ը]լ, Պրանտ[ը]լ, Լիթ[ը]լ, Նշենք, որ բառավերջի այս հնչյունազուգորդումը հանդիպում է միայն օտար բառերում։ Երբ լ, ն, ր հնչյունները բառամիջում գտնվում են երկու բաղաձայնների միջև, ապա դրանցից առաջ,

որպես կանոն, նույնպես արտասանվում է ը, օրինակ՝ ջենտ[ը]լմեն, Հեկ[ը]լբերի, Սինգ[ը]լտոն, մյուզիկ[ը]լհոլ, Կոր[ը]նթոս, Տոր[ը]նդայկ, Տր[ը]նկա, Անդ[ը]րվուդ, Հայդ[ը]նվալդ, Չատ[ը]րջի և այլն:

Այնպես, ինչպես հայերենում, գաղտնավանկով է արտասանվում օտար բառերում նաև բաղաձայնի ու Ե-ի կամ Ճ-ի զուգորդությունը բառավերջում, ինչպես՝ մետ[ը]ր, կադ[ը]ր, լիտ[ը]ր, ալ[ը]ր, սկաֆանդ[ը]ր, կալիբ[ը]ր, մագիստ[ը]ր, բուրգոմիստ[ը]ր, մինիստ[ը]ր, սպեկտ[ը]ր, Սարտ[ը]ր, Ալեքսանդ[ը]ր, Մանչեստ[ը]ր, Հավ[ը]ր, Ժան[ը]ր, Լուվ[ը]ր, Հայդ[ը]ն և այլն:

Այս բառերի և հատուկ անունների թեքված, ածանցված կամ բարդված ձևերում, երբ բառավերջի հնչյունին հաջորդում է ձայնավոր, դարձյալ այնպես, ինչպես հայերենում, Ը-ն ընկնում է. օրինակ՝ մետ[ը]ր—մետրի—մետրած, լիտ[ը]ր—լիտրի—լիտրաշափ, մինիստ[ը]ր—մինիստրի—մինիստրություն, Լուվրի, Հավրի և այլն:

Լ+բաղաձայն կապակցությունը, որը հանդիպում է միմիայն օտար բառերում, արտասանվում է Լ-ի զգալի փափկացումով, ինչպես՝ ռելս, վալս, մուլս, ֆիլմ, գոլֆ, վոլտ, Ուելս, Ռուդոլֆ, Առնոլդ, Վոլֆ, Բուխենվալդ, Գրյունվալդ, Հելմհոլց, Ստոկհոլմ և այլն¹⁰⁹:

